ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԳԵԱՆ

ԲՈՂՈՔԸ

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Հրատարակութիւն
Հ. Ը. Դ.

1914
ՀԱԼԷՊ


ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ

ԲՈՂՈՔԸ

ՆՈՐԱԳՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հրատարակութիւն
Հ. Ց. Դ.

1911
ԺԸՆԵՎ





Ֆրեդերիկ Ա



Գաբրիել



Մ ա ր ա

ՆԱԽԱԲԱՆ

Բողոքը նորագոյն պատմութեան մէջ...

Գծել այդ բողոքի ելևէջները — ասել է պատմել մարդկային էւօլիւցիայի ամենավսեմ, ամենահոյակապ դրւագները, ասել է ցուցադրել այն ամենը, ինչ որ զարդն ու պարծանքն է այդ նորագոյն պատմութեան, այն ամենը, ինչ որ պերճախօս, անկապտելի գրաւական է գալոց հսկայ յեղաշրջուածների, մարդկային անվերջ զարգացման ու կատարելագործման։

Բողոքը նորագոյն պատմութեան մէջ... Դա յեղափոխութեան գաղափարն է իր շղթայազերծ ու „կործանարար" հեղեղատներուն, իր հզօր ու րիթմային ծփանքներով, պարբերական վերելքներով ու վարէջքներով, իր պանծալի յաղթանակներով և ցաւագին պարտութիւններով։

Քանի՞ էջ կը բաւէ այդ ծաւալուն նիւթը պարփակելու համար. Հարիւրաւոր հատորներ են գրել այլ և այլ լեզուներով և տակաւին չեն սպառած հսկայական դրամայի բոլոր արարուածները։ Հազարաւոր ուղեղներ են տանջւել, իւրաքանչիւրը այդ բողոքի մի դրւագը քննելով ու հետազօտելով. ուրիշ հազարաւորներ տնքում են շարունակ — պատմափիլիսոփայական աշխա-

տանքի վրայ—ձգտելով լուսաբանել, ի ցոյց դնել ներքին խորունկ պատճառները, որ ծնունդ են տւել հասարակական բողոքի խօլական թռիչքներին։

Ներկայ գրքոյկի նպատակը հասկատ է, սահմանափակուելով ուրուագծել բողոքի պատմութիւնը, հասարօտակի, Ֆրանսիական Մեծ յեղափոխութեան օրերից իվեր — 18-րդ դարավերջից — պատկերացնել ամենախոշոր գծերով երկու մեծ շարժուձեերի, քաղաքական ու սոցիալական, ղուգահեռական ընթացքը մեզակի ու հրաշագործ դարաշրջանում, ի ցոյց դնել պատմական վերիվայրումների գլխաւոր պատճառները ու ազդակները և ապա քաղել էւոլիւցիայից անհրաժեշտ հրահանգները — ահա այդ նպատակը։

Բողոքը՝ յանուն քաղաքական - սահմանադրական ազատութեան, և բողոքը՝ յանուն սոցիալական կամ ընկերական հաւասարութեան — ահաւասիկ այն երկու մեծ առանցքը, որոնց շուրջը պտոյտ է գալիս ամբողջ մարդկային պատմութիւնը, մասնաւորապէս նորագոյնը։ Քաղաքական շարժուձների մէջ մտնում են ազգային-ազատագրական շարժումները, ստրուկ ու ճորտ ժողովուրդների հերոսական ըմբոստացումները՝ ընդդէմ օտար ու բռնաւոր լծերի...

Ըլկայ աւելի յուզիչ և աւելի հրապուրիչ նիւթ։ Տարաբախտաբար, մեր արկածաւոր իրականութիւնը թոյլ չի տալիս երկարօրէն կանգ առնելու այդօրինակ նիւթերի վրայ։ Այսօր գեռ կայ նրանց համար մի յատուկ հետաքրքրութիւն. իսկ վաղը, ո՞վ գիտէ, մեր ազգային բարօրութեան չարաբաստիկ ալիքը կարող է վերստին գահավիժել դէպի խորհրդաւոր Անյայտը և վերստին շեղել ուշադրութիւնները նմանօրինակ մարզանքներից...

Հարկ է, այնուամենայնիւ, ներկայացնել հայ ընթերցողին գէթ վերջին հարիւրամեակի պատմութիւնը, գէթ

թռուցիկ գծերով։ Գուցե նոյնիսկ տագնապի վայրկեաններում պատմութեան ծանօթութիւնը մի գերազանց դարման լինի մեր վշտերին ու վէրքերին, գուցե համամարդկային արիւնազանգ ու ագեշունչ բողբի ուսումնասիրութիւնը ընդունակ լինի փարատելու մեր հայկական հօրիզոններում պարբերաբար կուտակուող յուսահատութեան մառախուղը, վտանգաւոր տակուսանքներն ու մոհաւիթ լքումները...

Մ. Վ.

ԺՔՆԵՎ, մարտ 1911.

I

ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Յեղափոխութեան նախերգանքը. — Պատճառներ. — Երրորդ դասակարգի պատմական վերելքը. — Ազնւականութիւն եւ կղեր. — «ստատուծոյին» միապետութիւն. — Սոցիօլօգիական ակնարկ. — Տնտեսական պատճառներ եւ «իդէօլօգիան». — Սահմանադիր ժողով. — Մարդկային Իրաւունքների Յայտարարութիւն.—ժողովրդի գրոհը եւ Բաստիլի խորտակումը.— Ապստամբութիւն գիւղերում. — Առանձնաշնորհեալների գաղթը. — Թագաւորի փախուստը. — Օրէնսդիր ժողով. — Ռէակցիա.—Դաշնադիր ժողով. — Մօնտայն եւ ժիրոնդ. — Թագաւորի դատը եւ գլխատումը. — Վանդէա եւ արտաքին արշաւանք. — Տերror. — Ռօբեսպիէռի դիմաստորութիւնը. — Դահավիժում. — Ռէակցիան յաղթական. — Բօնապարտ.— Ի՞նչ տւեց Մեծ Յեղափոխութիւնը.—

Ce fut une commotion immense, profonde, comme un tremblement de terr...

Michelet

Դա մի նսկայ եւ խորունկ սասանումն էր— որպէս երկրաշարժ...

ՄԻՇԼԷ

Արդարեւ էթէ մարդկային կեանքի ովկիանը իր ալեծուփ անհունութեան մէջ արտադրել է մի քանի աշխարհատասան ցնցումներ ու կատաստրոֆներ — 1789 — 93-*ի*

ցնցուժը, անտարակոյս, ամենամեծն է, ամենաահարկուն, ամենախօլականն ու տիեզերականը։

Եթէ հասարակական էւօլիւցիայի երկարաձիգ հոսանքում կայ լեռնացած և փրփրադէզ մի ալիք, որ իր խօլ գահավիժումներով յիշեցնում է բնութեան ահեղ սասանումները, երկրաշարժն ու հրաբխային ժայթքումները,—դա Ֆրանսիական յեղափոխութիւնն է, իր տիտանեան ոստիւններով և իր մուայլ, դժոխային տեսարաններով։

Նմանը չը կայ պատմութեան մէջ։ Ոչ տագնապի ահագնութեամբ և ոչ մանաւանդ արգասաւորութեամբ։ Ոչ մի հարուած չի ունեցել այնքան ուժեղ հակահարուածներ, ոչ մի շեփոր ազատութեան՝ չի ունեցել այնքան հզօր ու ծաւալուն արձագանքներ։

Ազատութեան շեփորները հնչել էին դրանից առաջ Անգլիայում ու Ամերիկայում, ստեղծել էին նոյնիսկ ազատ, սահմանադրական իրաւակարգ, բայց ոչ մէկը չ'ունեցաւ Ֆրանսիականի թռիչքը, համաշխարհային արժէքը և հմայքը։

Ոչ մէկը չը թողեց այնքան խորունկ հետքեր, այնքան հարուստ ու տևական հետևանքներ բովանդակ երկրագնդի, ամբողջ կուռող ու տառապող մարդկութեան համար։

Ֆրանսիական յեղափոխութիւնը կանգնած է պատմութեան մէջ մեծ-մեծնակ, կղզիացած, որպէս մի հսկայ ողբերգութիւն, որի թատերավայրն է ամբողջ Եւրոպան, ամբողջ աշխարհը։

Կղզիացած, անզուգական — և նրա կրող ժողովուրդը... Մի օր յանկարծ նա ծառացաւ իր դարաւոր Ոսոխի դէմ—մի ձեռքում բռնած սուրը, միւս ձեռքում „մարդկային իրաւունքները“—և սասանեցրեց ոչ միայն իր, այլ և ամբողջ Եւրոպայի. հին աշխարհի

ոճրանիւթ կառուցւածքը։ Խիզախ, օրհասական գալա-
րումներով նա կամեցաւ երջանկացնել բովանդակ մարդ-
կութիւնը և ծանուցեց ազգերին մի նոր կրօն, մ ա ր դ-
կ ա յ ն ու թ ե ա ն կրօնը, Իրաւունքի ու Բանականութեան
տիեզերական աւետարանը։ Բռնութեան դէմ սլանալով,
նա կամեցաւ հեղբուլեսեան մի հարուածով միանգամ ընդ-
միշտ ջախջախել հ ի դ ր ա յ ի ճիւղաւորւած և թունար-
ձակ գանգերը։ Նետեց իր ձեռնոցը թէ աշխարհիկ և
թէ կղերական բռնակալութեան և հրաւիրեց երկրա-
գնդի բոլոր ազգերին դէպի կռիւ, ըմբոստացում, դէպի
ազատութիւն ու եղբայրութիւն... Իր հոյակապ բարձ-
րութիւնից նա ազա՛տ ու հաւասար հռչակեց մարդ-
կութեան բոլոր հատւածները, քաղաքակիրթ, վայրենի
ու բարբարոս, բոլոր մարդկանց ու ժողովուրդներին,
առանց ցեղի և կրօնի, առանց մորթու և գոյնի տարբե-
րութեան, խտրութեան։ Ա յ դ տեղ — նրա տիեզերական
բնոյթը, նրա պարծանքը...

— Վե՛ր բարձրացէք, շղթայակապ ժողովուրդներ և
դողացէ՛ք բռնաւորներ... Հնչում էր դէպի աշխարհի
չորս կողմերը՝ „Մարսէլիէզի“ գոռ, ցնցող, փոթորկա-
շունչ ղօղանջը. և աշխարհը ալէկոծւում էր, և ազատու-
ն գիտակից մարդկութիւնը, բռնւած մի վիթխարի անակն-
կալով, ուղղում էր հայեացքները դէպի Պարիզ, դէպի
ահեղ հրաբխային կենտրօնը, ուսկից հազարաձայն ար-
ձագանքով տարածւում էր աւետաբեր, աշխարհադղրդ
որոտը. ցնծում էին ամենուրեք և ուժգին ու հպարտ
տրոփում էին սրտերը, մարդ-էակի արժանիքը բարձ-
րանում էր իր աչքում, խանդավառութեան տենդը
համակում էր բոլորին, պարիզեան ուրագանի ախոր-
ժալուր երաժշտութեան ձայնակցում էին ամենուրեք
կարօտագին ողջոյններով. ձայնակցում էր գրողների,
գիտունների, բանաստեղծների աշխարհը, որ արդէն

մշակւած էր վ.օլտերի ու Ռուսսոյի խարտազանող գրիչ-
ներով. ձայնակցում էր կեօնիգսբերգի մեծ Ծերունին,
անզուգական փիլիսոփան, Կ ա ն տ ը, որ իր անգորը,
չնաշխարհիկ կացարանից նշմարում էր բերկրանքով իր
պաշտամունք - Ք ա ն ա կ ա ն ո ւ թ ե ա ն մեծաշուա՜
յաղթանակը, ձայնակցում էին յուզւած՝ Գէօթէները
ու Շիլլերները, գերմանական վերածնութեան տաղան-
դաւոր երգիչները. նրանցից ոմանք գահավէժ սլանում
են դէպի Պարիզ, ականատես լինելու հրաբխային վի-
ժումներին. ձայնակցում էին, վերջապէս, և Թշւառ,
գետնատարած ամբոխները, ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը՝ հալա-
ծական, կիսակենդան. զառանցում էր, երկրպագում
ողջ լուսաւոր երկրագունդը — և Բերլինում, Հռօմում,
Մադրիդում, Վիեննայում ու Վարշաւայում, անգամ
Հեռու, „տիեզերական Բաստիլ“ — պ ե տ ե ր բ ու ր-
գ ո ւ մ՝ ռուսներ, գերմանացիք, լեհեր, դանիացիք. հօլ-
լանդացիք փողոցներում վազում էին իրարու դէմ,
շնորհաւորում, լալիս, ողջագուրւում ու համբուրւում...
Ռոնակալութեան հանդիսաւոր թաղումն էր. ասես ամ-
բողջ աշխարհը դրւում էր գլխիվայր. ասես ամբողջ
մարդկութիւնը մէկէն իւրաքանչիւր ազատւում էր մի ահռելի,
մի ահաբեր կօշմարից...

Ա՛հա թէ ինչ էր Ֆրանսիական Յեղափոխութիւնը
Եւ—զարմանալի ճակատագիր ունակ է այդ ժողո-
վրդի դիրքը քաղաքակրթ ազգերի հաւասարեղութեան
մէջ. նա յայտնւում է, որպէս մի տեսակ տիեզերական
պատգամախօս, որ ներշնչում է, թելադրում, ուղղու-
թիւն տալիս բոլոր ազգերին. նա դառնում է յաւեր-
ժական և անսպառ մի աղբիւր, ուսկից սնունդ են
առնում ռամկավարութեան ու ազատութեան բոլոր
գետերն ու առուները. Պարի՛զը մի վիթխարի հրեղէն
կաթսայ, որ արձակում է իր ճառագայթները ամբողջ

մտածող տիեզերքի վրայ: Պարի՛զը — մի հսկայական նետարդախուրձ, որ ամեհի ջլաձգութիւններով թափահարում է ողջ երկրագունդը... Եւ Ֆրանսիական պատմութեան մեծ շրջանները — դառնում են շրջաններ ամբողջ նորագոյն հասարակութեան, ամբողջ լուսաւոր մարդկութեան:

Այո — բացառիկ ճակատագիր: Տնտեսական և մտաւոր առաջադիմութիւնը միակ պատճառը չէ այդ առեղծուածի: Ժողովրդի հոգեբանութիւնը, նրա ինքնատիպ խառնուածքը մեծ տեղ ունին տիեզերական այդ փրկարար առաքելութեան մէջ... 18-րդ դարավերջում ամբողջ եւրոպական ցամաքն էր հնձում ֆէօդալական, աւատապետական լծի տակ, և նոյնիսկ աւելի ծանր էին ճնշումներն ու կեղեքումները դրացի երկրներում: Ճորտութիւն — ամենուրեք, գիւղացիական զանգւածները — դաժան, անարգ գերութեան մէջ: Զքաւորութիւնը և սովը — համատարած: Աղքատութիւն ու մարդկայնութիւն — հալածական, ոտնահարուած՝ միապետութեան, կղերի, արիւնականութեան ցանցերում: Բողոքի ու խմորումի նոյն էական պատճառները կային բոլոր երկրներում, բայց Ֆրանսիան էր, որ պարզեց ապստամբութեան դրօշը, մինչդեռ միւս ժողովուրդները դեռ այնուհետև էլ՝ տասնեակ տարիներ մնացին լուռ, համակերպող, ստրկական մրափի մէջ: Ֆրանսիան նետեց կայծը դէպի բոլոր հօրիզոնները, բայց այդ կայծը իսկոյն և եթ չը բռնկեց հարևան երկրներում, այնտեղ տապալին թաց էր վառօդը... Իսկ Ֆրանսիայի մէջ՝ նա վերածուեց անմիջապէս — հրդեհի:

Ո՞րտեղից եկան կայծն ու հրդեհը... „Մեծ Ցեղափոխութեան“ պատճառների և ազդակների խնդիրն է, որ տրուում է այդ հարցումով: Անհագին խնդիր, որի վրայ սակայն չենք կարող երկար կանգ

առնել։ Ո՞րտեղից են առաջացել բոլոր նման յեղափոխությունները. ի՞նչ է աստառը բողոքի այդ ամբողջ արիւնալի ու արհաւրալի պատմութեան, որ մարդկութիւնը կրում է դարերից ի վեր։ Գրեթէ ամեն տեղ— նոյնը։ Կեղեքման ու հարստահարման պատուհասը։ Ժողովրդային զանգւածների աղաղակող թշւառութիւնը։ Թշւառութիւն՝ տնտեսական, մտաւոր ու հոգեկան։ Սարկացում՝ մարմնի, մտքի, սրտերի։ Առանձնաշնորհում՝ մի կողմից,—իրաւազրկութիւն՝ միւս կողմից, պերճանքի ու վայելքի խրախճաններ՝ մի կողմից — յուսահատութեան հառաչանքներ՝ միւս կողմից։ Փոքրաթիւ արիւակեր դասակարգերի տիրապետութիւն՝ հսկայական աշխատաւոր մեծամասնութեան վրայ։ Դրա հետ շաղկապւած՝ սանձարձակ կամայականութիւն, գեղծումներ ու ոճիրներ։ Նոր կենսունակ դասակարգի բարձրացում, հնի ու նորի անհաշտելի մաքառում, արդիւնագործութեան նոր ձևերի ընդհարում՝ սեփականութեան հին ձևերի հետ ևայլն ևայլն։

Ւրկարատև մի պրօցես էր Յեղափոխութեան նախորգանքը։ Առաջ քան 1789-ը՝ կատարւել էր ահագին նախապատրաստական աշխատանք, կատարւել էր էւօլիւցիա։ Էւօլիւցիա՝ մի կողմից փաստերի, իրողութիւնների, միւս կողմից՝ մտքերի, գիտակցութիւնների մէջ։ Ինչպէս որ բնութեան ծոցում գահավիժւող հրաբխային մի կատաստրօֆ, մի երկրաշարժ կամ ծովաշարժ պահանջում է նախնական երկար ու յամրընթաց գործունէութիւն, գազերի ու պայթուցիկ զանգւածների աստիճանական մթերում,—նոյնպէս և հասարակական կեանքի մի փոթորկոտ վերիվայրում պահանջում է նախապէս խաղաղ, անտրիւն կերպարանափոխութիւնների, „մթերումների“ մի շրջան։

Այդ շրջանը երբ է սկսւել Ֆրանսիայում... Ճշգրիտ

ձևով պատասխանել դժուար է: Ոմանք իջնում են մինչև 14-րդ դարը և նոյնիսկ աւելի առաջ: Ինչպէս Անգլիայի, այնպէս և Ֆրանսիայի ու ամբողջ արևմտեան Եւրոպայի համար ծանրակշիռ պատմական կարևորութիւն ունին այն վաղեմի ժամանակները, երբ ծնւում ու կերպարանաւորւում էին բ ա զ ա քա յ ի ն հ ա մ ա յ ն ք ն ե ր ը՝ նախրւած առևտրի ու արդիւնաբերութեան, յենւած իրենց ներքին համքարական կազմակերպութիւնների վրայ՝ նրանք կարողացան հետզհետէ խլել միջնադարեան աւատապետական ռէժիմից մի շարք իրաւունքներ և բարձրանալ աստիճանաբար հասարակական արժէքների սանդուխով, որպէս մի նոր, ուրոյն դասակարգ, իր յատուկ պաշտօնավարութեամբ և իր յատուկ շահերով: Դա հոչակաւոր բ ո ւ ր ժ ո ւ ա զ ի ա ն դասակարգն էր, այժմեան բառաւոր՝ բ ո ւ ր ժ ո ւ ա զ ի ա ն: Դա դրամի, առևտրի ու արդիւնագործութեան դասակարգն էր: Անգլիայում նա միացած — դեռ 13-րդ դարից — ֆէօդալ ազնւականութեան հետ՝ ըմբոստացաւ միապետական իշխանութեան դէմ և վաղաժամ նւաճեց քաղաքական մի յայտնի ազատութիւն: Ֆրանսիայում, ընդհակառակը, երկար ժամանակ նոյն դասակարգը թև տւած միապետական իշխանութեանը՝ կռիւ էր մղում ֆէօդալիզմի, աւատապետութեան դէմ: Իսկ երբ վերջինը յաղթահարւեց, երբ նա ևնթարկւեց միահեծան թագաւորին, այն ժամանակ բուրժուազիան մղեց դէպի նոր կռիւ — ը ն դ դ է մ բ ա ց ա ր ձ ա կ մ ի ա պ ե տ ու թ ե ա ն:

Փողի դասակարգը, 16-րդ դարից ի վեր, աճում է ու առաջադիմում հսկայական քայլերով, իր ձեռքն է առնում երկրի ամբողջ տնտեսական կեանքը. կապիտալը, հնչուն դրամը, առնում է իր ցանցերի մէջ բոլոր միւս դասա

տարածում է իր կախարդիչ հմայքը ֆէօդալական ու արքայական փառաշուք պալատների վրայ, նուաճում է և գիւղական հօրիզոնները, բուն է դնում խոպան, լայնարձակ ասատական կալւածներում։ Ամեն բան հպատակւում, ստորադրւում է կապիտալին, ամեն ոք երկրպագում է նրա ամենակարող զօրութեան... Դրամը այնուհետև իրական հրամանատարն է բոլոր երկրաւոր ուժերի, որովհետև դրամով կարելի է ձեռք բերել ամեն տեսակ հարստութիւն, նաև պատիւ, ժեծարանք։ Եւ այդ իրական ուժը ձգտում է այնուհետև դառնալ իրաւական, սրբագործւել օրէնքներով, օժտւել իշխանութեան ստորոգելիներով։

Ներկայացուցիչ աշխատանքի ու նիւթական հարստութեան՝ երրորդ դասակարգը միանգամայն ներկայացուցիչ էր և մտքի, արւեստի, գրականութեան, փիլիսոփայութեան։ Ընտեսապէս բարգաւաճ, մտաւորապէս հասունացած՝ նա պատրաստ էր իր ձեռքն առնելու հայրենիքի, հասարակութեան ղեկը։ Այն օրից, երբ նա սկսեց այդքան խոշոր, ծանրակշիռ դեր խաղալ կեանքի մէջ, — մի աճաւոր հակադրութիւն միաժամանակ կրծել սկսեց Ֆրանսիայի հասարակական օրգանիզմը։ Բուրժուազիան, լինելով հանդերձ երկրի ուղը, ներկայացնելով աշխատաւոր, գործօն և ստւար մեծամասնութիւնը *), բուրժուազիան, այդքան հզօր ու ազդեցիկ լինելով հանդերձ

*) Աշնւականութիւնից և կղերից յետոյ եկող երրորդ դասակարգը կամ բուրժուազիան այն ժամանակւայ հասկացողութեամբ ձուլւում էր իր մէջ ողջ ժողովուրդը։ „Երրորդ դասակարգը“, սեփականազուրկ աշխատաւորութիւնը, այժմեան բառբառով, պրօլետարիատը, կար, ի հարկէ այն ժամանակւայ Ֆրանսիայում, բայց լուծւած բնդհանրութեան մէջ, առանց շատ մեծ նշմարելի սահմանագծի և տակաւին ղեկի դասակարգային ուրոյն շահերի պետականութիւնից։

իր տնտեսական ու ժառուր կարողութեամբ, զուրկ էր վիանգամայն քաղաքական իրաւունքներից։ Նա ամեն բան էր — և ոչինչ։ Նրա ձայնը զերօ էր հայրենիքի ճակատագիրը տնօրինելու գործում և նրա վրայ ընկնում էր տուրքերի ահագին ծանրութիւնը.. Մինչդեռ երկու միւս առանձնաշնորհեալ դասակարգերը — ազնուականութիւն և կղեր — ազատ էին տուրքերից և չ՝աշխատելով ու չ՝արտաբերելով հանդերձ՝ վայելում էին իրաւունք ու ազդեցութիւն, արքայական առատաձեռն „շնորհներ“, և որ ամենից սարսափելին է, այդ երկու ձրիակեր ու կեղեքիչ դասակարգերը — մի բուռն փոքրամասնութիւն — ունէին իրենց ձեռքում երկրի հողային տարածութեան գրեթէ կէսը... Ահա այդ մեծ հակասութիւնն էր, որ առաջ բերեց 18-րդ դարավերջի հսկայական բաղխումը... Փոքր ինչ աւելի կանգ առնենք պատճառների ու ազդակների վրայ։

Ֆրանսիան միապետութիւն էր, բացարձակ, միահեծան, ինչպէս այսօր Ռուսաստանը, ինչպէս երէկ Թիւրքիան։ Միահեծան ուժիմը յենւած էր երկու դասակարգ-սիւների վրայ — ազնուականութեան ու կղերի — դարձեալ նման Ռուսաստանին։ Միապետը իշխում էր դարերից իվեր սերնդէ-սերունդ, աստուածային սկզբունքի զօրութեամբ և իր ծագումը նա բերում էր Աստուծուց... Ֆրանսիան, ուրեմն, աստուածապետութիւն էր, *théocratie*, ինչպէս այսօր Ռուսաստանը և մասամբ նաև Թիւրքիան։ Թէ աստուածային սկզբունքը և թէ աստուածային ծագման դօգմը գալիս էին պատմութեան, գուցէ նոյնիսկ նախապատմութեան, խորքերից *)։

---

*) Այդ երևոյթները ընթերցողին շատ թէ քիչ պարզ կացուցանելու համար, մի թուղթիկ ակնարկ նետենք հասարա-

Բացարձակ, կենտրոնացած աստուածպետութիւն՝ ուր ամեն ուժ, իշխանութիւն գլխում էր թագաւորից։ Ոչ մի կօնտրօլ, հսկողութիւն թագաւորի գործերի վրայ։ Ոչ մի կօնտրօլ՝ քանի որ նա իշխում էր աստուածային

կապիտական էւօլիւցիայի վրայ։ Նախնական ժամանակներում, ինչպես յայտնի է, պետութիւն ունէին մարդկային համայնքների մէջ կառավարութեան շատ թէ քիչ դեմօկրատիկ, ամկավար ձևեր, երբեմն յուզիչ իրենց նահապետական պարզութեան մէջ։ Ամենակարևոր, կենսական խնդիրները — տեղափոխութիւն մէկ վայրից միւսը, հաւաքական պաշտպանութիւն թշնամու հանդէպ, վրիժառութիւն, հաւաքական յարձակում և այլն—վճռում էին ժողովրդական համագումարներում, ձայների մեծամասնութեամբ։ Անշուշտ, այդ նախնական համայնքների մէջ արդէն եղել է մի յայտնի պատգամաւորում, շերտաւորում։ Եղել է առաւելապէս խելահաս մի փոքրամասնութիւն, որ դեկավարող ու վճռական դեր է ունեցել վիճաբանութիւնների մէջ։ Եղել է ամենուրեք նաև այդ ընտիր փոքրամասնութեան մէջ որևէ ուժեղ, հեղինակաւոր անհատ—մի ծեր որսորդ, հոչակաւոր մի ռազմիկ կամ մի հմուտ կախարդ—որի աղդեցութիւնը յաճախ գերակշռել է և կամքը հարկադրել ամբողջ համայնքին... Հասարակական էւօլիւցիան առաջ ընթանալով, ծնունդ է տալ որոշ, յատուկ, ձևաւորուած դասակարգերին։ Ընորհիւ մի շարք առաջնակարգ պատճառների — պատերազմի, աշխատանքի գործիքների աշակման, մասնաւոր սեփականութեան ծագման, ապրանքնակչական շարժուածների ու աճելութեան և այլն—ծնունդ են առել այսպէս անուանուած „հասարակական սիստեմները“. նախ — գերութիւնը, ապա ճիշտ ստրկութիւնը։ Մի սիստեմ, ուր կանոնաւոր էր մի կողմից ստրուկների ահագին մեծամասնութիւնը, զուրկ ամեն իրաւական անձնաւորութիւնից, հարկադրուած ամբողջ կեանքը աշխատելու և տքալու. միւս կողմից՝ իշխող ու կառավարող փոքրամասնութիւնը—ասպարեզ ռազմական առաջնորդը իր թիկնապահների լեգեոնով—որ վայելում էր ստրուկների վաստակ-արդիւնքներն և ապրում էր գլխաւորապէս պատերազմական արկածներով։

Ստրկութեան սիստեմին յաջորդում է ճորտութիւնը։

իրաւունքով, քանի որ նա պարտաւոր էր հաշիւ տալ միայն — Աստուծուն։ Օրէնքը — թագաւորի կամքը։ Եւ ամբողջ ազգի ճակատագիրը — ենթակայ այդ միահեծան կամքին. նա ծախսում էր պետութեան եկամուտ-

---

Պատերազմը, նւաճողական արշաւանքները այդտեղ ևս խաղայել են առաջնակարգ դեր։ Ճորտական, աւատապետական սիստեմը — որ գոյութիւն է ունեցել աշխարհի գրեթէ բոլոր անկիւններում — սկիզբ է առել ըստ Սպենսերի, հողային ընդարձակ բռնագրաւումներով։ Նւաճել են ամբողջ համայնքներ և բռնի միացել յաղթողի համայնքին։ Մարդիկ այլ ևս չէին պոկւում իրենց ծննդավայրից ինչպէս զերութեան դաժան ժամանակներում, այլ մնում էին իրենց նւաճած հայրենիքի մէջ, իբրև օրինաւոր հպատակներ և որոշ տուրք էին վճարում նւաճողներին։ Դարձեալ ստրկութիւն էր, այն զգալի տարբերութեամբ՝ որ աշխատաւոր մեծամասնութիւնը արդէն վայելում էր մի քանի իրաւունքներ. ժարդկանց այլ ևս չէին կարող սպանել ուզած ժամանակ, կամ անվերջ աշխատեցնել մտրակով ու դաժանակով։

Նւաճողները կազմում էին դինւորական մի կաստա և հողային տարածութիւնները իրարու մէջ բաժանելով, պահանջում էին հողի մշակողից բերքերի մի յայտնի մաս։ Տրամադրելի ստրուկների թիւը ժարդկանց ձեռքում չափանիշ էր ոչ միայն ուժի ու հարստութեան, այլ և „աղնւականութեան“։ Ըստ այնմ հասարակութիւնը բաժանւում էր՝ աղնւականների և պարզ, սովորական մահկանացուների։

Անհաւասարութիւնը դասակարգերի մէջ միշտ աւելի և աւելի աճում է, քանի որ նրա շնորհիւ իսկ՝ իշխողը, բարձր դիրք ունեցողը միջոցներ է ձեռք բերում պահպանելու իր հմայքը և ամեցնելու իր յարձակողական ու պաշտպանողական ուժերը։ Հասարակական դիրքի անհաւասարութիւնը առաջ է բերում ֆիզիկական տարբերութիւններ. ապրելու տարբեր եղանակները արտադրում են մտաւոր ու հոգեկան-զգայողական տարբերութիւններ...

Այդպէս է առաջացել „ընտիրների“ այն հմայուտարած դասակարգը, որ ամենուրեք „ազնւական“ տիտղոսն է կրում

ներըը, ինչպես իրեն հաճելի էր, նա կարող էր յայտարարել պատերազմ, կնքել խաղաղութիւն ու կռել դաշինքները, իր անձնական հայեցողութեամբ։ „Այսպէ՛ս եմ ես կամենում,—*sic volo!*—այսպէ՛ս եմ ես հրամայում“,

---

(*noblesse, Adel*), որ ամենուրեք յաւակնում է իշխել հրամայել, ժորակել...

Ո՞վքեր են, ուրեմն, նրա նախահայրերը։ — Բիրտ, գռեհիկ հրոսակապետներ, աւազակներ, աւարառուներ... „Դիպուածը“ այդտեղ ևս խաղացել է իր դերը, ինչպես մարդկային էւօլիւցիայի ուրիշ աշխարհներում։ Նախապատմութեան անդրադոյն, անյիշատակ շրջաններում՝ որևէ տեղ, որևէ ժամանակ, որևէ դիպուածով կամ թէ շնորհիւ իր ուժի ու խելքի, ճարպկութեան, /ր հնարած լաւագոյն գործիքների՝ մի անհատ տէր է դարձել համեմատաբար մեծ գոյքերի, արդիւնքների, կենսական պիտոյքների։ Մի մասը գործածել է անհատապէս, միւս մասը, աւելորդը, բաշխել է ուրիշներին և բաշխել է ոչ ձրիաբար, այլ որոշ աշխատանքի ու ծառայութեան փոխարէն։ Ահա նա—„տէր“, շահագործող, հարստահարիչ։

Աւելի յաճախ եղել է այն՝ որ մի յանդուգն արկածախնդիր, մի աւազակ, հրոսակապետ, մի բուռն կարիճներ հետն առնելով, արշաւել է ալ ու ձախ, նետուել թոյլ, անպաշտպան մարդկային համախմբումների վրայ, ջարդել է, զաւթել ու գերեվարել և ապա յաղթողն ու յաղթուողների միջև կապել է մի տեսակ դաշինք, որով գոհերին կեանք է պարգևել, պայմանով՝ որ նրանք ժառնեն տիրոջ, յաղթողի հպատակութեան, ծառայութեան մէջ և աշխատեն ու արդիւնաբերեն նրա համար, իբրև ստրուկ, ստանալով իրենք այնքան, որքան անհրաժեշտ է՝ մի գրաստային կեանք քարշ տալու համար։ Այդքանն էլ „վաստակ“ էր, քանի որ աւելի առաջները, հատարակական էւօլիւցիայի աւելի ստորին աստիճանի վրայ՝ յաղթողները սովորաբար մորթում էին գերի բռնուածներին, ոչնչացնում կամ լափում...

Ստրուկները գործի դիմելով, ազատում են յաղթող տէրերին ֆիզիկական ևս աշխատանքից. այդ բիրտ, գռեհիկ աւազակապետներն ու թագաւորները, հողերի ու ստրուկ-

ահա բռնապետական բանաձևը աշխարհի բոլոր ծայրերում, պատմության բոլոր շրջաններում։

Ի՞նչ խօսք՝ որ ամենատանձն, ասիական կ ա մ ա յ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը անխուսափելիօրէն կապուած է այդ

ներին նւաճողները այդ վայրկեանից ի վեր „ազնւանում են“, բարձրանում, առանձնաշնորհեալ գիրքեր գրաւում. նրանք դնում են „արիստօկրատիայի“, ազնւականութեան հիմքերը և նրանցից սերնդէ-սերունդ առաջանում են մեգաւորների, իշխանազունների և ամեն տեսակ „ազնիւների“ տոհմերն ու գերդաստանները, աշխարհի բոլոր ծայրերում, գրեթէ բոլոր մարդկային հաւայնքների մէջ։

„Ազնիւների“ դասակարգն է, նրա „վսեմաշուք“ միրապետութիւնն է, որ խորտակեց միանգամ ընդմիշտ Ֆրանսիական յեղափոխութեան յնցուածների մէջ, ազդարարելով նոյն անհրաժեշտ, անխուսափելի վախճանը ռուսական, գերմանական, անգլիական, մաջառական, թաթարական, քրդական ու այլ բոլոր ազնւականութիւնների...

Չենք խօսում միւս իշխող դասակարգի, կղերի ծագման ու էւօլիւցիայի մասին։ Նրա սկիզբը թաղուած է նախապատմութեան մշուշի մէջ և սերտ կապուած կրօնական գաղափարի առաջին ցոլքերի հետ։ կ ա խ ա ր դ ն ե ր ը, որոնց մասին քիչ առաջ յիշատակեցինք՝ խեղճ ու խոպան մարդկութեան առաջին բահանաներն էին, կոչուած միջնորդ լինելու մարդկանց և աստուածների, խորհրդաւոր ու երևակայական ֆէտիշների միջև։ Ինչպէս որ — ասցիօլոգիական նախախնամութեան մի չարաշուք քմահաճոյքով, պատմական երկաթէ օրէնքների անօրինութեամբ — ծնունդ առաւ „բռնակալների“ կամ „ազնիւների“ դասակարգը՝ աչքառուր ժողովրդի ցաւատանջ մ ա ր մ ի ն ը կեղեքելու նպատակով, նմանապէս ծնունդ առաւ ու կազմակերպուեց ժամանակի ամենաճին արգանդում, գարերի մռայլ ու համատարած գիշերի մէջ՝ կ ղ ե ր ա կ ա ն դ ա ս ա կ ա ր գ ը, ծնունդ առաւ՝ շահագործելու մարդ-էակի հ ո գ ի ն ու թանձրամած ապիտութիւնը, շահագործելու այն երկիւղը, որով համակուում էին մարդիկ՝ բնութեան ահեղ ու խորհրդաւոր ուժերի հանդէպ...

տեսակ մի սիստեմի հետ։ Թագաւորը տէր ու տնօրէնն է ժողովրդի գոյքերի, պատւի, ազատութեան. նա կարող էր քմահաճօրէն յափշտակել, կամ ինչպէս ասում են, յարբունիս գրաւել մասնաւոր անձերի ստացուածքը. նա

քաղաքական էւօլիւցիան առաջ գնաց։ Պատերազմների ու նւաճումների շնորհիւ, մանր ու ցիրցան համայնքները հետզհետէ ձուլւեցին ու կազմեցին մեծ ու բարդ հասարակութիւններ։ Էւօլիւցիան, մարդկային առաջադիմութիւնը վնտրում էին միշտ աւելի լայնարձակ հորիզոններ։ Քաղաքակրթութեան Ասածուն հաճելի էր, որ մանր, ահմանափակ ցեղերն ու համայնքները իրենց նահապետական, թէկուզ և ռամկավար, կառավարութիւններով, տեղի տային վաղ թէ ուշ աւելի մեծ, լայնածաւալ, թէկուզ և բռնաւոր, պետութիւններին ու կառավարութիւններին։ Եւ աշխարհագրական մի յայտնի միջավայրում հաստատուած մանր-մունը, ցիր ու ցան գինւորական հրամանատարները, անհամար սեփականատէրճորտատէրերը կամայ կամայ միացան մի ընդհանուր յարկի տակ, կազմեցին մի ահագին պետական ու վարչական մեխանիզմ, որին գլուխ էր կանգնած բացարձակ լիազօրութիւններով մի շէֆ, թագաւոր։

Ահա և—բացարձակ միապետութիւնը, աւտօլիւտիզմը։ Նա կատարեց իր որոշ դրական դերը պատմութեան մէջ։ Իրողութիւնները վկայում են, որ մարդկանց, բազմաձիւ մարդկանց հպատակումը բռնակալ վեհապետներին՝ վաղեմի ժամանակներում ընդհանրապէս նպաստել է քաղաքակրթութեան առաջադիմութեանը։ „Հասարակութիւնների գոյութեան կռւում, ասում է Սպենսեր, հաւասար պայմանների մէջ յաղթող եղել են նրանք, որոնք են թարկւած են եղել ամենից խիստ ստորադասութեան, սուբօրդինացիայի, հնազանդութեան (*subordination*) իրենց շէֆերին, թագաւորներին"։ Ուստի և նւաճող հասարակութիւնները երկար ժամանակ ճնացել են բռնակալ ռէժիմի ներքոյ։

Միահեծան բռնապետութիւնը կամ, ուրիշ խօսքով, բացարձակ անձնիշխանութիւնը իր զարգացման ընթացքում անցել է մի քանի շրջան։ Սկզբներում՝

հրամանատարն էր անգամ մարդկանց մտքերի ու զգացումների և ցեղզօրական ահարկու հաստատութեամբ բռնանում էր ժամուլի, գրականութեան, մտքի բոլոր արտայայտութիւնների վրայ։ Այսպէս է, հակիրճ խօս-

---

շէֆերը, մարդկանց հրամանատարները, հիմնում էին իրենց ազդեցութիւնը իրենց անձնական արժանաւորութիւնների վրայ,—ֆիզիկական ուժի, արիութեան, փորձառութեան, կամ թէ մտաւոր կարողութիւնների վրայ։ Դա այսպէս ասած՝ բնական գերազանցութիւն էր, որ նախամարդու աչքում մարմնանում էր հերոսը, ռազմիկը։

Բայց կար և մի ուրիշ „գերազանցութիւն“—արդէն գերբնական — որի արտայայտիչ հանդիսանում էր կախարդը։ Այդ երկու գերազանցութիւնները, յաճախ միանալով միևնոյն շէֆի անձնաւորութեան մէջ, դարձնում էին նրան կարող ու ազդեցիկ, սակայն լուկ դրանց վրայ հիմնուած իշխանութիւնն ու հեղինակութիւնը ժամանակաւոր էր, անցողական—նա գադարում էր շէֆի մահուան հետ։

Պէտք էր մի այլ գործօն՝ այդ հեղինակութիւնը, այսպէս ասած յաւերժացնելու համար։ Պէտք էր ժառանգականութեան սկզբունքը, առնական գծով։ Վերջինս երևան է գալիս քաղաքակրթութեան ասպարէզի համեմատաբար բարձր աստիճանների վրայ, հայրական իրաւունքի տիրապետութեամբ։

Պատրիարխատի կամ հայրական իշխանութեան ամրապնդումը սերտ կապ է հաստատում գերդաստանի մէջ. զարկ է տալիս հպատակութեան ըէժիմին, զարդացնում է դիսցիպլինը, կարգապահութիւնը նոյն համայնքի և պետութեան մէջ։ Բացարձակ վերհսկողը կտակում է իշխանութիւնը իր յաջորդներին—առնական գծով—որոնք շարունակում են վարել պետական գործերը նոյն բացարձակ ու բռնաւոր եղանակով։ Կառավարութեան այդ միատեսակ ձևը ժառանգելով սերնդէ սերունդ, կրկնողութեան շնորհիւ, միշտ աւելի և աւելի ամրապնդում է, ուժեղանում։

Մի ուրիշ ազդակ ևս գալիս է ժամանակի ընթացքում աւելի հմայք և ուժ հաղորդելու բռնաւորի անձնաւորութեան։ Դա նրա աստուածային ծագումն

քերով, համաշխարհային բռնապետության էութիւնը, որ դեռ ունի իր շահախնդիր կողմնակիցները ժամանակակից մարդկութեան մէջ...

Շռայլութիւնը անտահման էր արքայական պալա-

հանգամանքն է, որի բայատրութիւնը փնտրելու է կրօնական վաղեմի հասկացողութիւնների և մանաւանդ պահանջների մէջ։

Բոլոր նախնի ժողովուրդները ունեցել են այդ սովորութիւնը — մեծարել պաշտել հարազատ մեռելներին, որոնց դամբարանների շուրջը այլ և այլ ծէսեր են կատարել, զոհեր են մատուցել։ Դա կրօնական էւօլիւցիայի սկզբնական շրջանն է, ուր մարդկային միտքը իր խղճուկ, տարտամ ըմբռնումի մէջ՝ առարկայական գոյութիւն էր հաղորդում ամեն տեսակ ոգիների ու հոգիների, որոնք իբր թէ օժտուած էին բարիք ու չարիք գործելու հսկայական կարողութիւններով։ Ժամանակի ընթացքում՝ այդ մեռելները ստացել են աստուածային առաքելութիւններ. նրանց մէջ ամանք իրենց արտակարգ յատկութիւններով՝ դերիշխող դիրք են գրաւել ոչ միայն գերդաստանում, այլ և հասարակական ընդարձակ զանգուածի՝ տոհմի, ցեղի մէջ։

Երկիւղը մի հզօր ռազմիկի, մի հերոս հրամանատարի գերեզմանի առջև՝ մղել է մարդկանց դէպի ապօթէոզ, ստիպել է նրանց աստուածացնել այդ հզօրին, յաճախ նրան սիրաշահելու, գնահատի անելու նպատակով։

Երբ պատերազմների ու նուաճումների շնորհիւ ցիր ու ցան մարդկային զանգուածները համախմբելով իմ են ձուլել՝ հերոս աստուծոյ պաշտամունքն էլ ընդհանրացել է և աւանդաբար անցել սերունդներին։ Այդտեղից — երկու հետևանք։ Մէկ՝ որ հզօր հրամանատարի յաջորդը, որ գահակալում է հօր մահից յետոյ՝ հռչակւում է իբրև հ ա պ ո ր դ ա կ ի ց հ օ ր ա ս տ ւ ա ծ ա յ ի ն բ ն ո ւ թ ե ա ն. մէկ էլ՝ որ նա իր գոհաբերութիւններով հայր-աստուծոյ աջակցութիւնն է վայելում։

Ւր ա հա — անտահման լիազօրութիւններ։ Քաղաքական շէֆը, իբրև Աստուծոյ առաջնորդ կամ ուղղակի նախախնամութիւնից առհմանուած՝ դառնում է տեսականապէս և

տուժ. Թագաւոր և Թագուհի մրցում էին Գրանթիայի հարստութիւնները վատնելու մէջ։ „Պալատը — դ'ար-

---

իւրականութեան մէջ բացարձակ անվականատէր էր բոլոր հպատակների և նրանց գրաւած բոլոր հողերի։

Երբ այդպիսով, երկրի հրամանատարը առանձնում է միահեծան, անսահման իշխանութիւն, երբ հպատակները հլու հնազանդութեամբ խոնարհւում են նրա գահի առջև, ենթարկւում են նրա կապրիզներին, ապտւինում են նրա դէմ թեան, երբ այդ իշխանութիւնը համարում է սրբազան ու անբռնաբարելի և ամեն մի ձգտում նրա դէմ՝ բացարձակ սրբապղծութիւն. երբ միահեծան պետը և՛ առաջադ է և՛ հրամանատար, այն ժամանակ նա բնականաբար միանում է իր անձի մէջ իշխանութեան բոլոր ձևերը, այն ժամանակ նա դառնում է և գերագոյն դատաւոր և եկեղեցու պետ։ Թագաւորը կ ե ն տ ր օ ն է հանդիսանում հասարակական բովանդակ կազմի, նրա բովանդակ պաշտօնավարութեան։

Այդ է ինքնակալ բռնապետութիւնը կամ աբսոլուտիզմը, իր լիակատար զարգացման մէջ։

Թագաւորը իշխում է տիրականօրէն, բայց կառավարում է, հարկաւ, ոչ միայն ինքը։ Ընդարձակ պետութեան գործերը հոգալու համար՝ նա պէտք ունի օգնականների, նշանակովի մինիստրների, վերջիններս, գլուխ կանգնելով այլ և այլ դեպարտամենտների, վարում են գործերը շատ մէ քիչ ինքնագլուխ և իրար ամրապնդում են միահեծանի կամքն ու լիազօրութիւնները։ Թագաւորի կապը պետական ամբողջ մեխանիզմի հետ դառնալով միշտ աւելի և աւելի ա ն ո ւ զ ղ ա կ ի՝ հասնում է մի վայրկեան, երբ նրա իշխանութիւնը դառնում է անւանական—*le roi règne, mais ne gouverne pas* — երբ նա հանդիսանում է լոկ խաղալիք իր առաջին մինիստրի կամ ամբողջ կամարիլլայի ձեռքում. մի առօրեայ, որ դատապարտւած է գործադրելու իր խակ առեղծած գործակալների, ագենտների կամքը։

Այդպէս է եղել յաճախ պատմութեան մէջ. այսպէս էր երէկ Պօրտուգալիայում, այդպէս է այսօր Սպանիայում և Ռուսաստանում։ Այդ վիճակում է եղել յաճախ և—Ֆրանսիական միապետութիւնը։

ժանսօնի շեշտակի սրտայայտութեամբ — գերեզմանն էր ազգի“։ Արքայատոհմը իր ընդարձակ ճիւղաւորութիւններով, պալատականների, պաշտօնեաների, ծառաների լեգէօններով կառչած էր, հազարաճանկ տզրուկի պէս, ժողովրդի օրգանիզմին և անյագ ծծում էր նրա կենսական հիւթերը։

Հապա երկու առանձնաշնորհեալ դասակարգե՞րը։

Ասացինք արդէն, որ կղերը և ազնուականութիւն ունէին իրենց ձեռքում ֆրանսիական հողերի գրեթէ կէսը։ Այս հրէշային փաստն ինքնին գաղափար է տալիս նրանց հարստութեան ու նրանց նիւթած հարստահարութեան ծաւալի մասին։ Երկու դասակարգերը միասին հաշւում էին հազիւ 300,000 հոգի։ Եւ այդ չնչին փոքրամասնութիւնը ունէր նոյնքան, որքան 25 միլիօն ժողովուրդը։ Եւ այդ բոլորի հետ միասին՝ երկու բարձրագոյն կաստաները ազատ էին աւելն տեսակ տուրքերից։ Բուրժուազիայի և ժողովրդային ընդհանրութեան վրայ էր ծանրանում տուրքերի ահագին բեռը։

Անհաւասիկ դասակարգային մեծ, ճչացող կօնտրաստը, հակադրութիւնը։ Անասելի էր գիւղացիական զանգւածների տառապանքը երեք դարերի ճիրաններում։ Եւ զարմանալի չէ, որ հէնց որ հնչեց յեղափոխութեան առաջին որոտը, գիւղերը շարժեցին ըմբոստացման կրակով բռնւած, գրոհ տւին իրենց դարաւոր կեղեքիչների դէմ և ամենուրեք հրդեհեցին ու աւերեցին։ Որքա՜ն թոյն ու ատելութիւն էր մթերւել այդ իներտ զանգւածների մէջ...

Եկեղեցին, կաթոլիկ անհամբերող եկեղեցին, անհաշտ թշնամի բոլոր նորագոյն գաղափարների, ջերմ ու մոլեռանդ երկրպագու միջնադարեան սխոլաստիկայի, հնադարեան բոլոր կուռքերի, դաւանանքների՝ եկեղեցին

ոչ պակաս ահաւոր խարազան էր աշխատաւոր ժողովրդի գլխին Միանգամայն աստուածպետութիւն և ազնւականութիւն՝ ժխացնելով իր ծոցում հոգևոր և աշխարհիկ գործօնները, տիրանալով նիւթական ահռելի գանձերի, հիմնելով իր երկրաւոր ախորժակներն ու յաւակնութիւնները իր „սրբազան բնաւորութեան“, իր „աստուածատուր իրաւունքի“ վրայ՝ նա սանձարձակ շահագործում էր թէ մաքի և թէ հարստութեան աղբիւրները և յարուցանում էր խոր, անհաշտ ատելութիւն առաւելապէս գիտակից տարրերի, դարձեալ նոյն երրորդ դասակարգի, բուրժուազիայի մէջ, որը փարել էր բացարձակապէս ազատամտութեան ու աթէիզմի դրօշակին... (Մենք կը տեսանենք, թէ ինչպէս յետագայում, կացութեան տէր դառնալով, այդ վերջինը միանգամայն փոխեց ֆրօնտը)։

Բուրժուազիան, այդպիսով, իբրև ամենից շահագրգռուած հասարակական վերիվայրումով, իբրև ամենից աւելի գիտակից տիրապետող չարիքների, իբրև ամենից աւելի լուսաւոր, աւելի գործօն և ազդեցիկ կոչուած էր միանգամայն գլուխ անցնելու սկսուող շարժման և նա քարշեց իր ետևից ժողովրդային ընդհանրութիւնը...

Այս տնտեսական պատճառը, դասակարգային հակամարտութիւնը մեծ, ահագին տեղ ունի ֆրանսիական յեղափոխութեան ծագման մէջ և նոյնիսկ այդ յեղափոխութեան ամենամօտաւոր պատճառը, կամ ուրիշ խօսքով, աւելի թը դարձեալ գուտ տնտեսական մի փաստ էլ — պետական բիւդջէի՞ ահաւոր բացը, դէֆիցիտը... Սակայն, կրկնում ենք, այդ տնտեսական պատճառներն ու դասակարգային հակադրութիւնները չեն միայն, որ առաջացրին 18-րդ դարի համաշխարհային մեծագոյն վերիվայրումը, ինչ-

պէս որ նոյն դասակարգային հակադրութիւնները չեն մի այն, որ յարուցել են պատմութեան ուրիշ շարժուձեները, առաջ են ձղել մարդկային քաղաքակրթութիւնը և փոփոխել, յեղաշրջել են աստիճանաբար երկրագնդի պատկերը։ Տնտեսական պատճառները, ընդհանուր առմամբ, եթէ կուզէք, ճնշուն, յատկեանական խարիսխն են պատմական բոլոր վերիվայրումների. չէ՞ մարդը ևս կենդանի է, որին ամենից առաջ պէտք է ապրել, յարատևել, պէտք է սնուել, ճմել, զարգանալ և ապա միայն „փիլիսոփայել“։ *Primum vivere deinde philosopharis...* Բայց եթէ Թիւրքիան, Պարսկաստանը, նրանցից առաջ ուրիշ յետամնաց երկիրներ, սպասէին — իրենց քաղաքական յեղափոխութիւնը կատարելու համար — մինչև որ պարզուէր „դասակարգային հակամարտութեան“ դրօշը, մինչև որ ծնուէր արդիւնաբերող բուրժուազիան՝ կղերի ու բիւրօկրատիայի ամենազօր պատնէշները խորտակելու համար... պէտք էր չափազա՛նց երկար սպասէին։

Բայց կան, բարեբախտաբար, ուրիշ ուժեր, որ գալիս են փոթորկելու արևելեան անշարժութեան ճահիճը, որ գալիս են ստեղծելու նոր կարիքներ ու պահանջներ, աւելի ճիշտ, գրգռելու, հրահրելու այդ կարիքները — ազատութեան, արդարութեան, մարդավայել կացութեան — որոնք արդէն բնազդային ու մրափուն վիճակում գոյութիւն ունին այդ յետամնաց ժողովուրդների խոպան ու տանջահար գիտակցութեան մէջ և որոնց արժէքը նրանք գիտեն գնահատել միայն յետոյ, այդ թանկագին նւաճումները ճաշակելիս...

Կան ուրիշ կարգի խթաններ, ազդակներ. կայ ինքը մարդ-ան հ՞ատը, նրա գիտակցութիւնն ու կամքը, որ առանձնապէս ցոլում է մեծ մարդկանց ու գործիչների և խիզախ ու անվեհեր փոքրամասնութիւնների մէջ։ Կայ

գաղափարը-ուժը, սուբ'եկտիվ, ինքնակայական ազդակը, որ չափազանց նեմմացուում է „տնտեսական մատերիալիզմի“ մոլեռանդ դաւանողների կողմից, որ սակայն, նոյնպէս ունի իր պատկառելի դերը հասարակական-քաղաքական ու այլ տեսակ շարժումների, վերափոխումների մէջ։ Ձեզնք մտնի պարապ հարցի քննութեան մէջ, թէ ո՞րն է գերակշռողը երկու մեծ ազդակներից և ո՞րն է առաջնագոյնը — նիւթակա՞նը, թէ գաղափարականը... Գիտենք միայն, որ անյիշատակ դարերից իվեր հասարակական էւոլիւցիայի հոսանքում՝ երկուսը գործակցել են յարաժամ, փոխադարձաբար ազդել, հակազդել, կերպարանաւորել, ստեղծել... Գաղափարական, իդէական կամ իդէոլոգիական գործօնը ինքը մարդն է, գերազանցապէս բարդ ու հարուստ մի էակ, օժտուած կամքով, նեարդերով ու կրքերով, բանականութեամբ, գիտակցութեամբ և այդպիսին, նա ինքն է ստեղծում իր պատմութիւնը... Յաճախ, անշո՜ւշտ, շատ յաճախ նա ստանում է ժողովները արտաքին միջավայրից, նիւթական ազդակներից, բայց նա ունի հսկայական ու հրաշագործ կարողութիւն հակազդելու այդ արտաքին միջավայրի, այդ նիւթական ազդակների դէմ, նա ունի — որ գլխաւորն է — ընդունակութիւն՝ բարձրանալու իր վրայ ազդող միջավայրից, գերապանցելու զինքը ծնող հասարակութեան և գնահատելու իրերն ու երևոյթները, գնահատելու հասարակական էւոլիւցիայի բովանդակութիւնը՝ այն չափերի, նպատակների ու սկզբունքների տեսակէտից, որ նա ինքն իրեն է առաջադրում՝ իր վերլուծող ու համադրող իմացականութեամբ։

Եւ համաձայն այդ գնահատութեան արդիւնքի՝ մարդու, կամքոտ ու գիտակից էակի նպատակաւոր գործունէութիւնը կարող է ընդունել այս կամ այն

ձևն ու ուղղութիւնը, կարող է իր հերթին ազդել հզօրապէս շրջապատող միջավայրի վրայ և ուղղել մտքերը դէպի այս կամ այն հորիզոնը։ Այդպէս են վարուել հռչակաւոր „պատմական փոքրամասնութիւնները“ ու մեծ, կորովի, բացառիկ անհատները, որ այլևայլ ժամանակ կոչուած են եղել գործելու — որոշ, ազատարար նպատակի ուղղութեամբ — վերին աստիճանի աննպաստ, մեռած, դիակնացած միջավայրում... Նրանք կամ ընկճուել ու խորտակուել են իրենցից աւելի ուժեղ միջավայրի հարուածների տակ, կամ թէ անդուլ ու յուսահատ մաքառումով վերջ ի վերջոյ յաղթանակել են և իրենց պողպատեայ կամքերի ու բազուկների հակահարուածներով ճեղքել են միջավայրի դժնդակ սառուցը ու կեանք են ցանել ամայի մէնոլորտում։

Գնահատել երևոյթները, գնահատել հասարակական էւոլիւցիայի ուղղութիւնը, ծափահարել կամ դատապարտել, հալածել կամ քաջալերել, փութացնել իրերի ընթացքը դէպի բաղձալի նպատակակէտը — այդ բոլորը տրուած է — նաև անկախ տնտեսական, օբ՛եկտիվ էւոլիւցիայի հրամայականներից — իւրաքանչիւր գիտակից, քննադատօրէն խորհող ու գործող անհատի, որը մարքսեան արտայայտութեամբ իւկ, ազատագրւում է հետզհետէ „անհրաժեշտութեան“, ճակատագրականութեան թագաւորութիւնից, բարձրանում է, իբրև արդէն ազատ մարդ, իր տափակ միջավայրից, ընդգրկում է կեանքի բովանդակ ամբողջութիւնը, ըմբռնում է նրա ընթացքը...

Եթէ մարդկութեան մի պատկառելի մասը նորագոյն ժամանակներում է միայն ազատագրւում այդ „անհրաժեշտութեան“ աշխարհից, եթէ — սոցիոլօգիայի, հասարակագիտութեան ծնունդի շնորհիւ, այսօր ենք միայն սկսել թօթափել հասարակական ուժերի բռնաւոր տիրապետութիւնը, մերկացնելով նրանց ընթացքն

ու օրէնքները և ազդելով փոխադարձաբար նրանց վրայ—այդ դեռ, հարկաւ, չի նշանակում, թէ նախկին ժամանակներում, „անգիտակցութեան" շրջաններում բացակայել են նման „ազատագրուած" անհատները... Նրանք միշտ էլ եղել են—գէթ պատմութեան հորիզոններում—իբրև ազդարար, նախապատրաստող գալոց մարդկութեան և միշտ էլ թողել են իրենց անհատական դրոշմը անցքերի վրայ, այլ և այլ երկրներում կամ թէ ամբողջ համաշխարհային պատմութեան մէջ։

Անգին է մարդ-անհատի ու գաղափարական գործօնների ուժն ու ազդեցութիւնը պատմական պրօցէսի մէջ։ Անգին է այդ ազդեցութիւնը նաև Ֆրանսիական Յեղափոխութեան նախօրեակին։ Միմիայն տնտեսական խթաններն էին թատերավայրում, միմիայն իրաւազուրկ բուրժուազիայի դասակարգային ախորժակները չէին, որ բռնկեցրին շղթայազերծ Մրրիկը, այլ և 18-րդ դարի վերապանծ իդէօլօգիան,— գերազանցապէս մարդկայնական, ազատաշունչ—այլ և բանապաշտ, բացիօնալիստ փիլիսոփայութիւնը, Էնցիկլօպեդիստները, Մօնտեսկիօները, Ռուսսօները ու Վօլտերները։ Անշո՛ւշտ, դարձեալ, նրանք ևս ծնունդ էին իրենց միջավայրի։ Անշո՛ւշտ, նրանք հանդէպ էին գնում նոր բարձրացող դասակարգին, թարգմանում էին նրա իղձերն ու տենչանքները։ Բայց և, անտարակոյս, առանց այդ Ռուսսօների ու Վօլտերների, առանց այդ հսկայ, անօրինակ „մտաւորականութեան" քարոզների, առանց նրանց մշակած պրօբլեմների, իդեալների՝ նոր, փողային դասակարգը չէր անի ինքնաբերաբար այն ահարկու թռիչքները, չէր ձևակերպի այն ընդարձակ, արմատական, սօցիալական ռէֆօրմները, չէր յօրինի, մանաւանդ, համաշխարհային, համամարդկային այն լօզունգները, նշանաբանները, որոնցով անմահացաւ Ֆրանսիական Յեղափոխութիւնը և

որոնցով նա հասաւ տիտանեան, անհասանելի բարձունքներին։ Չէր արձակի այդպիսի մեծ, համամարդկային նշանաբաններ—ո՛ւր առաւել—և պրօլետարիատը, իրաւազուրկ ու գոյքազուրկ չորրորդ դասակարգը, որ ինչպէս ասացինք, Մեծ Յեղափոխութեան օրերում մի խաւար, անկերպարան զանգուած էր, որ շարժւում էր բնազդօրէն, զուրկ դասակարգային գիտակցութիւնից և մտքի այն լայն հօրիզոններից, որոնք այսօրուան գիտակից պրօլետարիատի սեփականութիւնն են։

Ոչ ոչ երրորդ և ոչ չորրորդ դասակարգը չէին կարող ինքնաբերաբար այնպիսի վիթխարի նպատակներ առաջադրել և յանուն նրանց՝ նիւթել այնպիսի վերիվայրուածներ։ Այդ անողները՝ „իդէօլօգները“ էին, մտքի ընտիր ներկայացուցիչները։ Իրրև հզօր իմացականութիւններ, զինուած արտակարգ հոտառութեամբ, նրանք ըմբռնեցին ժամանակի ոգին, ժողովրդային ընդհանրութեան ազօտ, տարտամ տենչանքները, լայց և հուժկու մի թռիչքով գերազանցեցին նրանց, անհամեմատ լայնացրին, ընդարձակեցին բուրժուազական բաղձանքների սահմանները և իրենց հանճարեղ ու բոցաշունչ գրիչներով փողահարեցին դէպի աշխարհի չորս բոլորը...

Որքա՜ն զօրաւոր է այդ գրիչների դերը՝ հէնց փոթորիկը նախապատրաստելու և շղթայազերծելու գործի մէջ... Ի՜նչ ահարկու շանթեր, խարազանուածներ էնցիկլօպեդիստների, հանրագէտների կողմից Մինչդեռ Մօնտեսկիօն, „Օրէնքների ոգի“-ի հանճարեղ հեղինակը գիտնականի պաղ, անխռով հանդարտութեամբ արծարծում էր անգլիական սահմանադրութեան գաղափարները և շեշտում նրանց կիրառման անհրաժեշտութիւնը իր հայրենիքում, մինչդեռ Վօլտերը, նոյնպէս չափաւոր իր քաղաքական համոզում-

նելի մէջ, բայց անողոք տիրող կարգերի վերաբերմամբ, իր թունաւոր հեգնութեամբ, իր լափող, աննման երգիծական գրւածքներով, նշաւակում էր իշխանութեան գեղծումները, առանձնաշնորհեալ կաստաների — կղերի, ազնւականութեան — խորարմատ մոլութիւնները, մինչդեռ նա իր ահեղ ոճով մտրակում էր հոգիների ու մտքերի վրայ ծանրացած նախապաշարումների հսկայ լեռը,—ժան-ժակ Ռուսսօն, Ցեղափոխութեան փոթորկաշունչ մարգարէն, քարոզում էր աւեր ու փլատակ դարձնել գոյութիւն ունեցող ամբողջ պետական կառուցւածքը, *tabula rasa*-ի —մերկ տախտակի — վերածել այն և հիմնարկել հասարակապետութիւն, *բէս-պուբլիկա*. „Հեղհապետութիւնը, ասում էր նա, պէտք է վերադառնայ ամբողջապէս ժողովրդին“, ինչպէս երբեմն էր, նախապատմական ժամանակներում „Ամեն բան—ժողովրդի միջոցով և ժողովրդի համար“...

Եւ ժան ժակի ձայնն էր, որ ամենից հուժկու որոտաց յեղափոխական Ֆրանսիայի ականջներին, նրա ոգին էր, որ մի քանի տարի շարունակ սաւառնում էր խօլական թափօրների արիւնաներկ կրկէսի վրայ, բոցավառում էր ու թև տալիս դաժանադէմ ժակօբիններին, Ռօբեսպիէռներին ու Դանտօններին, նախագահում էր և նորաստեղծ հանրապետութեան արմատական որոշումներին, սոցիալական ընդարձակ ռէֆօրմների ծրագիրներին և այլն։

***

Մի ապստամբ վարդապետութիւն և մի ապստամբ ժողովուրդ։

Ի՞նչ արեց նա։ Ինչպէ՞ս սկսեց...

Գումարուեց 1789-ի ամառը Ազգային Սահմանադիր Ժողովը և մի քանի նիստերուէ, գրչի մոլեգնոտ հարուածով, ոչնչացրեց Ֆէօդալական-բռնապետական գրեթէ բոլոր իրաւունքները։ Յեղափոխութիւնը դրանով արդէն կատարուած էր — խաղաղ, անարիւն յեղափոխութիւնը։ Եւ կատարուած էր պատմական այն անմոռանալի վայրկեանից, երբ Թագաւորի սենեկապետը, կրկնելով իր տիրոջ հրամանը Ժողովը ցրելու մասին՝ Միրաբօն ուղղեց նրան — ամբողջ յեղափոխական Ֆրանսիայի անունից — իր շանթոտ պատասխանը. „Գնացէ՛ք ասէք ձեզ ղրկողներին, որ մենք այստեղ գումարուած ենք ժողովրդի կամքով և մեզ կարող են հեռացնել միայն սուիններով“։

Սուիններըչ՛երևացին։ Ջօրքն ևս „միշկուած“ էր բողոքի գաղափարով։ Յեղափոխութեան մեծ ակտը իրագործուեց. Ազգային Ժողովը վերածուեց Սահմանադիր Ժողովի (*Assemblée constituante*)։ Այդ վայրկեանից այլ ևս չէր կար բացարձակ միապետութիւնը։ Թագաւորը համակերպեց... ատամները կրճտացնելով։ Բայց արեան Մոլորը չէր կարող հանդուրժել այդպիսի խաղաղ, հանդարտիկ վերիվայրում... Եւ նոյն միջոցին, երբ Սահմանադիր Ժողովը ցնծութեան մէջ տօնում էր իր պանծալի յաղթանակները, նոյն միջոցին, երբ նա ի լուր տիեզերքի յայտարարում էր „մարդկային իրաւունքների“ աւետաբեր հաւատամքը,—դաւը, նենգ, արիւնըռուշտ, նիւթուում էր գաղտագողի յեղափոխական Ֆրանսիայի դէմ, և հորիզոնում նշմարուում էին գալոց փոթորկի զարգանդեցուցիչ նախանշանները։ Մեր նպատակից դուրս է նկարագրել անցքերը իրենց յուզիչ ու արիւնոտ մանրամասնների մէջ։

Ֆրանսիան յայտարարուած էր սահմանադրական միապետութիւն։ Հռչակուած էր ժողովրդական գերիշխա-

նութեան սկզբունքը և ջնջած էին իրաւապէս առանձ. նաշնորհեալ դասակարգերը։

Մի վսեմ ու թովիչ հանդիսաւորութեամբ հնչում էր 1789-ի այդ պատմական օրերում Մարդկային իրաւունքների լուսապայծառ հաւատամքը *) — որ անուանել են իրաւամբ „նոր ժամանակների աւետարան“։ 18-րդ դարի հոյակապ փիլիսոփայութեան արդիւնքները իւրացնելով ու խտացնելով՝ Ֆրանսիական Յեղափոխութիւնը պատգամում էր.

Որ „մարդիկ ծնւում և մնում են ազատ ու հաւասար՝ իրաւունքի մէջ։

Որ ամեն մի քաղաքական կազմակերպութեան նպատակն է՝ պահպանել մարդու բնական, անկապտելի իրաւունքները։

Որ վեհապետութեան (*souveraineté*) սկզբունքը գտնւում է ազգի մէջ։

Որ օրէնքը թարգման-արտայայտիչ է ընդհանրական կամքի։

Որ մարդիկ, քաղաքացիները, ազատ են դաւանելու այլևայլ կարծիքներ և որ ոչ ոքի չի կարելի անհանգիստ անել անգամ իր կրօնական դաւանանքների համար, միայն թէ նրանց արտայայտութեան եղանակը չը խռովէ օրէնքով սահմանուած հանրային կարգը“։

Եւ այլն և այլն։

Երկար է „Մարդկային իրաւունքների Ծանուցումը“ — „*Déclaration des droits de l'homme et du citoyen*“ — մենք կը բաւականանանք այս էական կէտերով։

Ահա այդտեղ է, այդ եզակի ծանուցման մէջ՝ աղբիւրը Յեղափոխութեան մշտադալար հմայքի, պատ-

---

*) Քւէարկւած և ընդունւած 1789-ի օգոստ. 27-ին։

ճառը նրա հեռաւոր ազդեցութեան ու տիեզերական շառաչուվիւ

Մի ազգի հանդիսաւոր երդումն էր դա,—խմբագըրուած մի չքնաղ, ներդաշնակ բառքաւով, այնքան թովիչ ու դիւրամարս մի ձևով, որ պիտի հնչէր, այնուհետև յաջորդաբար, „Մարսէլիէզի“ գոռ, մարտաշունչ յանկերգի մէջ, երկրագնդի ամենախուլ վայրերում, արևմուտքից դէպի հարաւ ու հիւսիս, դէպի արևելք, մինչև Նեվայի և Վիսլայի եզերքները, աւելի հեռուն, մինչև եապօնական ծովը, մինչև հայկական և իրանեան լեռնադաշտը:

Մարդիկ ազատ ու հաւասար են իրաւունքի մէջ, հեռո՛ւ բոլոր առանձնաշնորհումները—այս ճիչը բարձրանում էր մեր տառապեալ մոլորակի վրայ մի այնպիսի ժամանակում, երբ գրեթէ ամբողջ Եւրոպան—դեռ չենք խօսում մարդկութեան այլ հատուածների մասին—թաւալւում էր ֆէօդալական ամենաքստմնելի առանձնաշնորհումների ճահճի մէջ, ամենաանարգ ստրկութեան շղթաների տակ:

Վերհապետը — ինքը ժողովուրդն է, հեռո՛ւ բոլոր „աստուածառաք“ իշխանութիւններն ու միահեծան բռնաւորները.. Հնչում էր մի խաւար, արհաւրալի ժամանակում, երբ ժողովուրդները դիտւում էին, իբր հլու, երկոտանի նախիրներ, որոնց քշում էին մարակով ու դագանակով դէպի ծառայութիւն, դէպի ստրկական սև ու զազիր աշխատանք...

Մարդիկ ազատ են—բոլո՛ր մարդիկ, առանց խտրութեան: Ազատ ու հաւասար են և բոլոր մարդկային համայնքները, անկախ ժամանակի ու տարածութեան պայմաններից, կաշւի գոյնից ու գանգային ձուլւածքներից. իւրաքանչիւրը բացարձակ, միահեծան տէր է իր ճակատագրի—ամենափոքրիկը, ինչպէս և ամենամեծը...

Tout peuple est maître chez lui; il est légitimement égal du plus grand։

Ա՛ա մի նոր աշխարհահայեացք էր. հասարակագիտական, փիլիսոփայական նոր, ճշգրիտ ու ազատարար մի ըմբռնում ազգային գաղափարի ու ժողովրդական վեհապետութեան։ Ազգանուէրի սկզբունքը, դարերի յուսահատ ու տանջալի թափառումներից յետոյ, սրբագործւում էր վերջապէս Ցեղափոխութեան ու ժարդկայնութեան մեծ հեղեղի աւազանում...

Առաջ գնանք թագաւորը, ասացինք, համակերպեց Աւերևոյթս նա հաշտւեց ստեղծած կացութեան հետ, երդւեց նոյնիսկ հանդիսաւորապէս՝ ճնալ հաւատարիմ սահմանադրութեան, բայց և տակից շարունակեց ինտրիգները, դաւերը։ Երկչոտ ու անուղեղ—ինչպէս դեսպօտների մեծագոյն մասը — բայց և թոյլ, ողբալի մի հոգմաղաց, մի խաղալիկ թագուհու և շրջապատող կամարիլլայի ձեռքերում՝ Լուդովիկոս XVI-ը պատրաստ էր դիմելու ամեն տեսակ ոճիրների, պետական հարւածների՝ իր երերուն գահը և իր „աստւածային“ տիտղոսները փրկելու համար։

Ժողովուրդը զգում էր այդ և նա չուզեց սպասել։ Ցուզեց ծայրէծայր հրաբխային մայրաքաղաքը, յուզեին պարիզեան արուարձանները. սկսեց մի տենդային ագիտացիա, կազմակերպւեցին հռչակաւոր կլուբները, ձուլւեցին մարտնչող կամաւորների լէգիոններ. թափօրներով նրանք անցան փողոցներից, զանգակների սրտայոյզ ղօղանջի ուղեկցութեամբ, ներս խուժեցին տէրունական զինարանները, թալանեցին, զինւեցին և... տիրացան փողոցին։

Դա մի նոր ուժ էր, որ բարձրանում էր Ցեղափոխութեան կրկէսում, հանդէպ դրուժան թագաւորի և

փոքր ինչ վարանոտ Ազգային Ժողովին։ Դա մեծ համրն էր, ժողովուրդն էր։ Զարքաշ, տառապող, աշխատասեր զանգուածն էր դա։ Նա է, որ այնուհետև պիտի դեկավարէ Յեղափոխութիւնը։ Նա է, որ մերթ ընդ մերթ սպառազէն ներս կը խուժէ Սահմանադիր Ժողովի նիստերի մէջ և կը թելադրէ իր կամքը, կը պահանջէ՝ լինել արի ու համարձակ, լինել ըմբոստ ու վճռական։ Նա է, որ այնուհետև պիտի դնէ իր հուժկու և հարազատ դրոշմը Յեղափոխութեան մրրկայոյզ դրուագներուն, նրա յօրինած ուէֆօրմներուն, բարենորոգումներուն ճակատին։ Ճանապա՛րհ — ժողովուրդը բեմ է նետուած... գուռացին փոթորկաձայն Դանտոնները...

Տեսարան էր 1789-ի յուլիս 14-ի օրը։ Բաստիլի խորտակումն էր։ Մարդկային պատմութեան ոչ մի վայրկեան, ոչ մի անցք չունի այդ օրուայ չքնաղութիւնը, նրա դիւթիչ հմայքը և նրա ցնցող, աշխարհասան արձագանքը։ Ժողովուրդը այդ պատմական օրուայ հերոսն էր. յանկարծակի, ինքնաբերաբար, տարերային մի թափով գրոհ տուեց նա միջնադարեան այդ ոճրանիւթ, արիւնազանգ դղեակի վրայ և պաշարեց... Շուրս ժամ կռիւ — և Բաստիլը անձնատուր եղաւ։ Մօտ 200 զոհ մեռած ու վիրաւոր — ժողովրդի կողմից... Բայց ի՞նչ էր այդ զոհողութիւնը, հսկայական վայրկեանի մէջ, երբ Բաստիլի աւերակների վրայ լուսաճաճանչ բարձրանում էր համաշխարհային ազատութեան Արևը։ Ի՞նչ էր այդ դղեակը։ Դա ինքը համաշխարհային բռնութեան որջն էր, նրա յաւերժական խորհրդանշանը։ Այդտեղ փակուում ու տանջուում էին քաղաքական կալանաւորները։ Այդտեղ, մահաբոյր խուցերի մէջ, չարչարանքի անարգ գործիքների տակ հողը դարերով ոռոգուած էր բանտարկեալների արիւնով ու աղի արցունքներով։ Այդ-

տեղ, այդ դաժան գերեզմանոցում, Ֆրանսիական ժողովրդի ամենաազնիւ զաւակները շարան-շարան գոհաբերուել են արքայական անկշտում Մողոքին... Բաստիլն ընկա՛ւ և փլատակների ճարճատիւնը լսուեց ահեղ ու ռազմաշունչ որոտումով Ֆրանսիայի բոլոր կէտերում, աշխարհի բոլոր ծայրերում։ Բաստիլն ընկա՛ւ և կծկուեցին, սահմռկեցին Եւրոպայի բոլոր տիրաններըւ Ա՜հ ու դողով նշմարեցին նրանք ապագայի հեռապատկերի մէջ իրենց սեփական բաստիլների փլատակումը, իրենց սեփական Արևի խաւարումը։

Ի՜նչ սրտագրաւ յուշեր և ի՜նչ ցաւատիպ հանմատուելիւն... պատմութիւնը կրկնւում է յաճախ երբէք նոյն տեսարանների շարանն էր մեզ մօտ — Ռուսաստանում նո՞յն... ոչ բոլորովին։ Մի բան միայն բացակայում էր — ամենաէականը։ Այդտեղ էլ տեսանք Ազգային ժողովի գումարում, թագաւորի հաւակերպում ու հանդիսաւոր ծանուցումներ Սահմանադրութեան, ազատութեան։ Այդտեղ էլ — փոթորկալից նիստեր, պերճախօս ու շանթարձակ Միրաբոներ, համատարած բերկրանք ու գինովութիւն։ Բայց այդ մոլեգին պերճախօսութիւնից ու այդ խանդավառ ցոյցերից՝ Պետրօ-Պավլովսկը բնաւ չը դղրդաց, Ռօմանովեան գահը չը սասանուեց, ընդհակառակը, կարողացաւ շատ շուտ տեղալ յաղթական հակահարուածը... որովհետև հրապարակի վրայ չ'երևաց գլխաւոր ազդակը, ս պ ա ռ ա զ է ն ժ ո ղ ո վ ո ւ ր դ ը, որ Ֆրանսիայի բոլոր յեղափոխութիւնների միջոցին տէր էր դառնում փողոցներին ու հրապարակներին և թելադրում տիրականօրէն իր կամքը...

Բաստիլն ընկա՛ւ — և գաւառը անմիջապէս արձագանք տուեց։ Միւս քաղաքները, ընդօրինակեցին Պարիզին, կազմակերպեցին իրենց սեփական կառավարութիւնը, գինուեցին ու ըմբոստացան։ Կազմակերպուեց հոչակաւոր

և Հոյակապ „Դաշնակցութիւնը“։ Ամեն մի գիւղ ու քաղաք օժտուեց իր սեփական վարչութեամբ և բոլորը միացան եղբայրական, դաշնակցական կապերով, ուխտեցին աջակցել իրարու և ընդհանուր ուժերով պաշտպանել նորանուաճ Ազատութիւնը։

„Հայրենասէրների դաշնակցութիւն“ —*la Fédération des patriotes*— դա ինքը նոր Ֆրանսիան էր, դա նորաստեղծ ֆրանսիական Ազգն էր, որ գալիս էր փոխարինելու թագաւորների և իշխանների օգոստափառ վոհմակին...

Դրա հետ միասին փոթորիկը բռնեց դաշտերը։ Բոլբոնեց գիւղացիական մի համաճարակ ապստամբութիւն, որ յայտնի է պատմութեան մէջ „*Jacquerie*“ անունով։ Գիւղացիները շարժուում էին ահագին զանգուածներով աւատապետական դղեակների, պալատների, վանքերի վրայ և աւերում ու հրդեհում։ (Նման շարժում, աւելի փոքր ծաւալով, բռնկւել էր Ռուսաստանում, 5—6 տարի սրանից առաջ)։

Տարերային մի գրոհ էր դա, որ ուզում էր ոչ միայն ոչնչացնել ֆէօդալական տուրքերի, տասանորդի սիստեմը, այլ և պարզապէս իր ձեռքն առնել հողերը։ Մի տեսակ *ագրարային կոմմունիզմի* շարժում էր դա, գիւղացիները *փաստօրէն*, իրականութեան մէջ կիրառում էին այն, ինչ որ տեսականապէս ձևակերպւած էր թղթի վրայ, Սահմանադիր ժողովի ծանուցումներում. „բոլոր մարդիկ ազատ են ու հաւասար“... Դա հաւասարութեան մեծ հեղեղն էր, որ գալիս էր լրացնելու „ազատութեան“ հոսանքը։ Եւ այդտեղ է ֆրանսիական յեղափոխութեան ամենախոշոր, առանձնայատուկ գծերից մինը, որով նա խորապէս տարբերւում է անգլիականից։ (Վերջինը, ինչպէս յայտնի է, միահեծան բռնակալութիւնը տապալելուց յետոյ, թողեց լիակատար ուժի մէջ միջնադարեան

ֆէօդալիզմը, լօրդական հսկայ կալուածատիրութեան սիստեմը, որ այսօր տակաւին կապարի պէս ծանրացած է այդ երկրի աշխատաւոր ընդհանրութեան վրայ, որպէս ռանձնաշնորհման ու անարդարութեան մի հրէշային, աղաղակող փաստ)։ Այնտեղ, Անգլիայում, չը տեսանք Յեղափոխութեան շրջանում (1648—1657) գիւղացիների այդպիսի համաճարակ ըմբոստացումներ, այնտեղ „եօթրորդ դասակարգը“ չը կարողացաւ հաստատել իր ուրոյն դասակարգային տիրապետութիւնը. ազգային գերիշխանութեան սկզբունքը յաժանուեց հողային ազնւականութեան (լօրդերի) ու բուրժուազիայի միջև։

Ծողովրդական այդ մրրիկը գիւղերում ու քաղաքներում, ջախջախելով միապետական ուրւականը, ունեցաւ և ուրիշ տեսակ նշանակալի անդրադարձում։ Նա մտածել տւեց երրորդ դասակարգին, բուրժուազիային... Աշխատաւոր ընդհանրութեան այդ մոլեգին յորձանքների դիմաց՝ վերջինն զգաց այն ժամանակ արդէն, թէ ինչ ահաւոր մրցակից ունի իդէմն այդ կոտորող ու կոտորուող զանգւածների, որոնք գրոհ էին տալիս Սեփականութիւն-կուռքի դէմ, — մի կուռք, որ այդ երրորդ դասակարգը հռչակել էր, իր հաւատամքի մէջ, իբրև սրբազան ու անձեռնմխելի։ Սօցիալիզմի հոտն, ի հարկէ, դեռ չը կար այն ժամանակ, բայց դրամի ու հարստութեան դասակարգը աղօտ կերպով ընդունմարում էր իր ապագայ ախոյեանին — բուն տանջուող, աշխատաւոր ժողովուրդը՝ կամ չորրորդ դասակարգը։ Պարզւում էր — թէև երկչոտ ու տարտամ ձևերով — դասակարգային նոր, ահեղ հակամարտութեան դրօշը, որի թատերաբեմը պիտի դառնար մօտեցող 19-րդ դարը և որի ուշագրաւ էւօլիւցիային մենք կը հետևենք յաջորդ գլուխներում։

*

Օգոստոսի 4-ը։ Մի այլ պատմական թուական։ Երկրորդը — Բաստիլից յետոյ, Գիւղացիական յուզումները պահանջում էին նեիրագործում։ Պէտք էր կօնկրետ և իրական պարունակութիւն հաղորդել „հաւասարութիւն“ տարտամ, առաձգական գաղափարին։ Պէտք էր պարզել, մասնաւորել այն։ Երկրագործը հո՛ղ էր ուզում, ազա՛տ ամեն տասանորդից, ֆէօդալական „իրաւունքներից“։ Եւ Սահմանադիր ժողովը շտապեց արձագանք տալ։ Մի գիշեր, օգոստոսի 4-ի գիշերը (1789 թ.) նիւթեց հողային, „սոցիալական“ խնդրին։ Եւ մի գիշերում վերացան աւատապետական բազմաթիւ առանձնաշնորհումները... Գիւղացին արձակեց սրտի խորքից ազատութեան հառաչանքը։ Դարձեալ տեսարա՞ն էր... Աննկարագրելի բերկրանք ժողովրդական պատգամաւորների շարքերում, ուրախութեան արցունքներ, ծափեր ու փոխադարձ ողջագուրումներ։ Հաւասարութեան գաղափարը մարմին էր առնում։ Սոցիալական յեղափոխութիւնը գալիս էր լրացնելու քաղաքականը։ Նա միանգամայն, հարկաւ, չը լրացրեց, բայց կատարուածը հսկայական մի փաստ էր, թեև ամենածանրակշիռը Ֆրանսիական Յեղափոխութեան մէջ։ Քիչ յետոյ, նոյեմբերի 2-ի հրովարտակով, կղերի հսկայական գոյքը հռչակուեց հ ա մ ա յ ն ա զ գ ի ս ե փ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն...

Բաստիլի անկումից յետոյ՝ բուրբօնեան տիրապետութեան արևը մարած էր արդէն։ Ի՞նչ էր ճնում անել Լուդովիկոս XVI-ին։ Ազդելու բոլոր միջոցները սպառուել էին։ Ի դերև ելան բոլոր դաւերը, „պետական հարուածի“ բոլոր ծրագիրները։ Կացութեան տէրն էր ժողովուրդը, նրա ամենածայրայեղ տարրերը։ Եւ թագաւորը մտածեց իր անձի ու ընտանիքի փրկութեան մասին. նա փախա՛ւ (1791 թ. յունիսի 20)։ Այն-

տեղ, օտար, ազատ հողի վրայ թերևս դեռ կարողանար ընթացք տալ իր ազատասպան ծրագիրներին. արդէն իսկ շշուկ կար, թէ նա մտել էր գաղտագողի յարաբերութեան մէջ դրսի բռնաւոր ուժերի հետ, որոնց գինւած օգնութիւնն էր հայցում, բռնապետութիւնը վերականգնելու համար *):

Փախան թագաւորի հետ և դեռ նրանից շատ առաջ, Ֆրանսիայի նախկին առանձնաշնորհեալ տէրերը, փախչում էին գահավէժ ֆէօդալ-ազնւականները դէպի օտար հօրիզոններ, առնելով իրենց հետ ինչ որ կարելի էր առնել: Գաղթականների պատմական հոսանքն էր դա, որ առանձնապէս սաստկացաւ Բաստիլի անպատիւ խորտակումից յետոյ: Ինչպէ՞ս ճնալ այլևս „ժակօբինների“, „անիշխանականների“ հայրենիքում, ուր անգամ կանայք, սպառազինուած արշաւում էին դէպի վերսայլ, արքայական պալատների դէմ:

Ազնւականները փախան, իսկ թագաւորը չը կարողացաւ փախչել նա էլ փորձեց, բայց չ'աջողեց: Մի գիշեր նրա կառքը կանգնեցրին վարենն կոչուած կայանում.. Եւ տեսան նրան, թագաւոր-խրտուիլակին, ծառայի զգեստաւորութեամբ, շրջապատուած իրայիններով... Ցետ բերին ու ամբողջ ընտանիքով փակեցին:

Սարսափելի էր ժողովրդի ցասումը: Բոլոր հրէշային

---

*) Ցետագայում անհերքելի փաստաթղթերով հաստատուեց, որ հէնց նոյն օրը, երբ Լուդովիկոս XVI-ը երդւում էր հաւատարիմ մնալ Սահմանադրութեան (1791 թ. սեպտեմբեր 4),—նոյն օրը նա դաշտագողի նամակ էր գրկում աւստրիական թագաւորին... Գրում է նամակներ և թագուհին, այդ ճարպիկ և անխիղճ ինտրիգանը, գրում են բոլոր արտաքին „բարեկամներին“, աղերսում, յորդորում, կանչում են նրանց, տալիս են մանրամասն ծրագիր „արշաւանքի“, հրահրում են կատարել յեղափոխականներին և ազատել բռնապետական գահն ու թագը...

հզուկները արքայական դաւերի մասին — արդարանում էին այդ անարգ փախուստից յետոյ։ Եւ բոլոր բերանները վրէ՛ժ էին աղաղակում թագաւորի ճակատագիրը այնուհետև որոշուած էր արդէն... Երես դարձրին նրանից անգամ անկեղծ միապետականներից շատերը. թագը կորցրեց այդ օրից իր հմայքի ճնացուդը և Ֆրանսիան ուղղուեց գահավէժ դէպի հանրապետութիւն։ Կազմակերպուեց ու բեմ եկաւ պաշտօնապէս հանրապետական կուսակցութիւնը։ Կլուբները կրկնապատկեցին իրենց եռանդը. յանուն ժողովրդի՝ պահանջեցին ստեղծել նոր սահմանադիր և գործադիր իշխանութիւն և գատի կոչել երդումնադրուժ միապետին։

1791-ի սեպտեմբերի 30-ին Ազգային Սահմանադիր ժողովը հրատարակեց փակուած և Ֆրանսիայի ճակատագրի ղեկավարութիւնն անցաւ նոր, Օրէնսդիր ժողովի ձեռքը (*Assemblée Législative*)։

Նոր օրեր եկան, միշտ աւելի փոթորկոտ, միշտ աւելի կրիտիկական ու ահաւոր։ Յեղափոխութեան յաղթանակը դեռ փխրուն էր, երերուն, ապատութեան ու հաւասարութեան կառուցուածքը՝ հրաբխի վրայ։ Դաւը — ներսում և դրսում.. „Վանդէան“ — բռնկուած, և պատերազմի ուրուականը—դռներում։ Ֆրանսիական գաւառի ամենայետադէմ վայրերը, թաղուած տգիտութեան ու կրօնական ամենաբիրտ նախապաշարումների մէջ, ըմբոստացան նոր կարգերի դէմ։ Գիւղացիների մի մասը, լարուած կաթոլիկ կղերի սադրանքներով՝ կազմակերպեց երկարատև ու յամառ դիմադրութիւն սահմանադրական քաղաքացիների ու բանակի դէմ.. Մինչդեռ Պարիզից ինքը արքայական գերդաստանը, գլուխ ունենալով թագուհուն, Մարի Անտուանետտին, շարունակում էր իր գաղտագողի յարաբերութիւնները օտար միապետների

հետ, շարունակում էր նրանցից օգնություն հայցել՝ ներսի կարմիր ուրուականը խեղդելու համար։

Պատում էին և գաղթականները։ Հաստատված օտար երկրներում՝ նրանք ամեն ճիգ գործ էին դնում, որպես զի յարուցանեն արտաքին զինված միջամտություն՝ հանգցնելու համար այն համաճարակ հըրդեհը, որ սպառնում էր ծաւալել ամբողջ Եւրոպայում, այրել բոլոր վեհապետներին։

Այդքան դաւեր ապարդիւն չ'անցան։ Արտաքին միջամտությունը վրայ հասաւ շուտով. պատերազմի Մողոքը եկաւ ծառացաւ յեղափոխական Ֆրանսիայի դէմ։ Աւստրիան, Պրուսսիան — դաշնակցած։ Ռուսաստանը — գաղտնի թև տալիս։ Ի՛նչ ահաւոր և սրաժիկ վայրկեան... Յեղափոխական ժողովուրդը, սակայն, չը վհատեց։ Արիաբար նա կուրծք տւեց վտանգին, ծածանեցրեց քաղաքային տան ճակատին մի ահագին գրօշ, որի վրայ գրւած էր. *La patrie en danger* — հայրենիքը վտանգի մէջ. — լեգիոններով բարձրացան գիւղեր ու քաղաքներ, Պարիզում հաստատւեց քաղաքային տան մէջ՝ ապստամբ կոմմունան, որ կոչւած էր ահագին դեր խաղալու յետագայում, իբրև զուտ ժողովրդային մի մարմին, դաշնակից ժնտանեաների, ներշնչող, երբեմն նոյնիսկ հրամանատար պարլամենտի, Դաշնաժողովի, իբրև, վերջապէս, կազմակերպող ժողովրդային պարբերական ցոյցերի ու ապստամբութիւններիւ Դա մի տեսակ ժամանակաւոր կառավարութիւն էր, որ իր ձեռքն առաւ ազգային զինւորագրութեան ու պաշտպանութեան գործը այդ ալէծուփ վայրկեանում. Նրա հոգին էր — Դանտօն։

Կազմակերպւեց շտապ-շտապ կամաւորների հսկայական մի բանակ և նետւեց թշնամու վրայ։ Եւ այդ անմարզ, զինւորական արհեստին անծանօթ ժողովուրդը,

սակաւաթիւ զօրքի հետ միացած *), քաջութեան ու ճարպիկութեան հրաշքներ գործեց. նա տեց մի շարք ահեղ, վճռական ճակատամարտներ և յետ մղեց թշնամուն: Նրան վառում, հրահրում էր այդ քաջաւիկ վարկեաններում Դանտօնի էլեքտրական մարտակոչը. „Յանդգնութի՛ւն, յանդգնութի՛ւն և դարձեալ յանդգնութիւն — ահա թէ ինչով մենք կարող ենք յաղթահարել հարեւ հայրենիքի թշնամիներին“ **)... Հայրենասիրական խանդավառութիւնը սահման չուներ: „Մարսէլիէզի“ ամպրոպագոռ յանկերգը „*Aux armes, citoyens, formez vos bataillons*“!—ուղեկցում էր այդ յաղթական պատերազմներին. „Մարսէլիէզը“ այդ օրերից է վեր դարձաւ Ֆրանսիայի ազգային, սրբազնագոյն հիմնը: Նա դարձաւ հիմնը բոլոր յեղափոխական ժողովուրդների...

Աւա՜ղ. ժողովուրդը իր հոյակապ ու վեհանձն թռիչքներին միացնում է երբեմնապէս փոքրոգի ժեստեր ու բռնկումներ և մանակի ստեր գցում ցեղափոխութեան լուսապայծառ Արեւի վրայ: Եղան այդպիսի անցանկալի բռնկումներ և Ֆրանսիական ցեղափոխութեան միջոցին: Եւ առաջինը—սեպտեմբերի կոտորածն էր (1792 թ.): Իբրեւ կանխիչ մի միջոց, պատերազմի ժամանակ յեղա-

---

*) Ֆրանսիական կանգուն բանակը այն ժամանակ ընդամենը 130,000 հր:

**) „*Pour vaincre les ennemis de la Patrie, il nous faut de l'audace et encore de l'audace et toujours de l'audace!*“—Այս հռչակաւոր, անմոռանալի խօսքերը դուք կը տեսնէք արձանագրուած Պարիզի *Boulevard St. Germain*-ի մի անկիւնում (Դանտօնի նախկին բնակարանի տեղը) բարձրացող հոյակապ արձանի վրայ: Ձեռքի և գլխի խիստ իական ժեստը, որ մի եզակի վեհութիւն է հաղորդում Դանտօնի այդ յուշարձանին, միանգամայն համապատասխանում է այդ պատմական խօսքերի ոգուն...

փոխական կառավարութիւնը կալանաւորել էր Պարիզում բոլոր „կասկածելիներին, բոլոր նրանց, որոնք կարող էին սատար, աջակից լինել ուխտադրուժ Թագաւորի հայրենադաւ ծրագիրներին։ Եւ նախ քան հայրենադաւների բանակը կը մեկնէր դիպի պատերազմի դաշտ, ժողովուրդը որոշեց ջնջել մի հարուածով „ներքին թշնամիներին“, յարձակուեց լեցուն բանտերի վրայ և նիւթեց սոսկալի բաղանիքներ. Հազարի չափ կալանաւորներ ընկան այդ զարհուրելի հեկատոմբի մէջ։ Այդ մոլեգնոտ հարուածի ներշնչումը, յիրաւի, թէ յանիրաւի, վերագրում են հռչակաւոր ժողովրդական ագիտատոր Մարատին, որ յետոյ զոհ գնաց մի օրիորդի, Շարլօտ Կօրդէի դաշոյնին, որ կարծում էր միամտօրէն իր այդ դժբախտ թուիչքով ազատագրել հայրենիքը...

Հարկ կա՞յ, սակայն աւելացնելու, որ այդ և նման ժողովրդային բռնկումները միանգամայն բնական ու հասկանալի են—եթէ ոչ արդարանալի—մի այնպիսի դժոխային վայրկեանում, կասկածի ու դաւերի մի այնպիսի մթնոլորտում, ուր ներսի և դրսի բոլոր սև ուժերը միացել էին Յեղափոխութեան, Ազատութեան ու ժողովրդի դէմ։ Չափազանց, այո, հասկանալի են այդ արիւնոտ հեկատոմբները, երբ, մանաւանդ, մտաբերէք նախընթաց պարագաները։ Դրանից քիչ առաջ ժողովուրդը, յարձակուելով Tuillerie-ի արքայական պալատի վրայ և ամեն բան տակնուվրայ անելով, գտել էր բազմաթիւ ու պերճախօս ապացոյցներ Թագաւորի դաւաճանութեան. գտել էր փաստաթղթեր, որոնք վկայում են, որ Լուդովիկոս XVI-ը, յիրաւի, գաղտագողի յարաբերութեան մէջ է եղել գաղթական յետադէմների շէֆերի հետ և դրամ է ժատակարարել նրանց բանակին... Իսկ այդ բանակը գալիս էր դրսից— տխրահռչակ Բրունսվիկի ժանիֆէստով բոցավառւած —

խեղդելու արեան մէջ բոլոր նրանց, որոնք ըմբոստացել էին արքայի ու միապետութեան դէմ.. Ահա այդ ծանր ու ցնցող յայտնութեան վրայ էր՝ որ պարիզեան ւօմժունան, իբրև Թարգման ժողովրդական զայրոյթի, սկսեց մի ահարկու որսախուճապ ընդդէմ բոլոր „կասկածելիների“, որոնցով նա լցրեց բանտերը։ Եւ ահա այդ հալածուող բանտարկեալներն էին, որ ջարդուեցին սեպտեմբերին։ Ժողովուրդը իր ահեղ բարկութեան մէջ և օրհասի վայրկեաններու մ՝ յաճախ չի էլ զանազանում մեղաւորին անմեղից... Չորս օր ու չորս գիշեր տևեցին ջարդի դժոխային արարողութիւնները...

Վերջացաւ և Օրէնադիր ժողովը, մօտ մի ամեայ պաշտօնավարութիւնից յետոյ—և 1792 թ. սեպտեմբերի 21-ին բացուեց Յեղափոխութեան ամենաալեծուփ շրջանը, *Convention*-ը (Դաշնաժողով)։ Մօտ 750 հոգուց բաղկացած մի նոր պարլամենտ, աւելի շեշտուած ռամկավարական պատկերով, ընտրուած գրեթէ ընդհանուր ձայնատուութեան սկզբունքով։ Առաջին նիստերից իսկ նա միաձայն հռչակեց միապետութեան ջնջումը և հասատատումը հանրապետութեան։ Բայց և առաջին նիստերից իսկ՝ ծայր տուեց սուր ու ցայտուն հակադրութիւնը կուսակցութիւնների ու հոսանքների միջև։ Երկու խոշոր հոսանքներ մրցում էին կատաղօրէն։ Մէկը — էափաւոր, միւսը — արմատական։ Մէկը—խոհեմ, զգուշաւոր բուրժուազիայի ներկայացուցիչ, միւսը՝ Թարգման յեղափոխական ժողովրդի, ռամկավարական տեսանքների։ Մէկի անունը — Ժ ի ր օ ն դ էր, միւսի անունը՝ Մ օ ն տ ա յ ն։ Առաջինը ներկայացնում էր գլխաւորապէս գ ա ւ ա ռ ը, երկրորդը — գլխաւորապէս Պ ա ր ի զ ը։

Ժիրոնդիստները, էափաւոր կամ բուրժուական հոսանքի կողմնակիցները, գերակշռում էին իրենց

թուով։ Կային նրանց շարքերում ազնիւ ու ատաջադէմ հոգիներ, ռամկավարական և բանապաշտ ոգով կրթուած հեղինակաւոր քաղաքացիներ, բայց խոշոր մեծամասնութիւնը մտնում էր պահպանողական, երբեմն նոյնիսկ յետախաղաց ձգտումներ, ընդհանրապէս՝ խիստ չափաւոր, պատեհապաշտ մտայնութիւն։ Նրանք գտնում էին, որ յեղափոխութիւնը կատարուած է արդէն, քանի որ կայ հանրապետութիւն, քանի որ արդէն յայտարարուած է քաղաքացիների „ազատութիւնը“ և բոլորի „հաւասարութիւնը“ օրէնքի առաջ։ Եւ նրանք ձգտում էին լռեցնել ժողովրդական բողոքի ձայնը, նրանք ուզում էին միանգամ ընդմիշտ վերջ տալ ամբոխային յուզումներին։ „Նուրբ, բարեկիրթ“, բուրժուաներ՝ նրանք իրենց սրտի խորքում—շատ շատերը նրանցից—մի գերագոյն արհամարհանք ունէին դէպի ամբոխը, ժողովուրդը, դէպի սեւ ու չարքաշ աշխատանքի բանակը, նրա անհաշիւ, տարերային ընդվզումները, նրա արմատական, „հասարակական“ պահանջները։

Եւ այդ չափաւոր հատուածի դէմ ծառացած էին մօնտանեարները, Ռոբեսպիէռի, Դանտօնի, Մարայի ու Սէն-Ժիւստի առաջնորդութեամբ։ Վիտակից սոցիալիստներ, ընկերավարականներ չէին դրանք, բայց նրանց բերնով խօսում էր շարունակ հաւասարութեան նշանաբանը. նրանց ձգտումն էր՝ հասցնել յեղափոխութիւնը իր տրամաբանական վախճանին, վերածել հաւասարութեան իրաւունքը կենդանի իրականութեան, սրբել իսպառ Ֆրանսիայի երեսից ֆէօդալականութեան բոլոր հետքերը, ոչնչացնել խոշոր կալուածատիրութիւնը, հողը բաժնել հաւասարապէս բոլորին, անգամ տնանկ, էքսուր մշակողներին... Դա տակաւին սոցիալիզմ չէր, կոմմունիզմ չէր, բայց դա հարթում էր ճանապարհը դէպի սոցիալիզմ, կոմմունիզմ։ Նրանք

ուզում էին—այդ ըմբոստ ու ահեղ Մօնտանեարները—որ Յեղափոխութիւնը տակից-գլուխ և ծայրէ-ծայր կերպարանափոխէր հայրենիքը, նրա բարքերն ու սովորութիւնները, նրանք ուզում էին, որ Հողը — բոլոր հարստութիւնների մայր-աղբիւրը—պատկանէր միմիայն իր մշակողին, որ գիւղացիութիւնը, $^{3}/_{4}$-ը բովանդակ ազգաբնակութեան, դուրս կերէր միանգամ ընդմիշտ կեղեքման ու թշուառութեան անդունդներից, վաշխառութեան, կղերի, աղնւականութեան ճիրաններից. նրանք ուզում էին, այդ պատճառով, որ յեղափոխութիւնը շարունակուէր, որ ժողովուրդը վար չը դնէր իր զէնքը, չը խաբուէր, չը գայթակղուէր իր բազմապիսի ոսոխներից...

Հակամարտ էին երկու մեծ կուսակցութիւնները՝ նաև թագաւորի ճակատագիրը անօրինելու հարցում: Ժողովրդական կուսակցութիւնը վաղուց արդէն պահանջում էր դատել Լուդովիկոս XVI-ին: Ժիրոնդիստները հակառակ էին և ամեն միջոց ի գործ դրին՝ փրկելու թագաւորի անձը: Փաստերը, սակայն, չափազանց խօսուն էին միապետի մեղսակցութեան, դաւաճանութեան համար: Վատը, ի վերջոյ տեղի ունեցաւ, պարիզեան Կոմմունայի, յեղափոխական բանակների ճնշման ներքոյ և հակառակ Ժիրոնդի դիմադրութեան ու անվերջ ձգձգումներին:

Վայրկեա՜ն էր... Դահակին հզօր ու գուռզ կամայականը, որ Աստուծոյ և բոլոր սրբերի անունով փառցնում էր իր Բաստիլներում երկրի ամենաազնիւ ուժերը, դուրս քաշուեց ժողովրդի ատեանի առաջ, իբրև ոճրագործ, դաւաճան իր ազգին ու հայրենիքին: „Կեղծ թագաւորը եկաւ—Դաշնաժողովի մի անդամի արտայայտութեամբ—հաշիւ տալու իսկական թագաւորին, ժ ո ղ ո վ ր դ ի ն“...

Պէտք էր դատել—և դատել ոչ միայն ա ն հ ա տ ը, այլ և հ ա ս ա ա տ ո ւ թ ի ւ ն ը: Պէտք էր մերկացնել

է ցոյց դնել, իտես ամբողջ աշխարհի, նրա ներքին փտախտը, նրա բովանդակ գարշանքը։ Պէտք էր մերկացնել միապետական կրօնի այն ապուշ, ծիծաղաշարժ առեղծուածը, այն չարագործ պատրանքը, որի շնորհիւ դարերի ընթացքում ամբողջ ժողովրդի խաստութիւնը կենտրօնացել է մի խեղճ, տխմար ուղեղում, մի փայլուն, ոսկեզօծ կուռքի մէջ, որ ներքուստ լեցուն է որդերով...

Ողբալի էր մեղադրեալի բռնած դիրքը դատի ընթացքում։ Ինքզինքը արդարացնելու համար, նա շարունակ ստում էր, գիտակցաբար խեղաթիւրում ամենաակնյայտ փաստերը և աւելի ևս ամբեցնում իր անձի դէմ՝ ընդհանուր ցասումն ու արհամարհանքը։

Պարիզը ծփում էր խոր, ահաւոր ալէկոծութեան մէջ. ամբողջ Եւրոպան սրտատրոփ սպասում էր այդ անօրինակ դատավարութեան վախճանին։

Մօտ 10 օր տևեց պատը. փայլուն ու պերճախօս փաստաբաններ պաշտպանեցին մեղադրեալին։ Ապարդի՞ւն... ժողովրդի և պարլամենտի համոզումը գոյացած էր արդէն—անսասան և անագորոյն։ Լուդովիկոս XVI դատապարտուեց մահուան։ Գիլյոտինը բարձրացաւ լայնածաւալ հրապարակում, այժմեան Place de la Concorde-ի վրայ, և 1793 թ. յունուարի 21-ին առաւօտեան ժամը 10-ին, զօրքի ու հալարաւոր բազմութեան ներկայութեամբ՝ ֆրանսիական թագաւորը գլխատուեց...

Բոլո՛ր ապգերի „խոհեմները“, չափաւորները ու փարիսեցիները, բոլոր յեղափոխ և սողացող, ժողովրդադաւեաց ասպետները, բոլոր նրանք, որոնց համար այնքա՜ն նօրմալ ու տանելի են ժողովրդային զանգւածների ծովածաւալ սուգն ու արիւնը և որոնց համար սարսափելի է, անհանդուրժելի մի հզօրի, մի թագաւորի, մի դահճի գողգոթան, նահատակումը, բոլոր նրանք,

որ հակւած են — մի սիմպլիստ, պարզունակ և միա-
միտ ըմբռնումով — այնքա՛ն դիւրին և անարիւն լուծումն
տալ պատմութեան խորախորհուրդ, բազմակնճիռ հան-
գոյցներին, առանց բնաւ մտնելու անհատական ու
զանգւածային հոգեբանութեան խորքերը, առանց բնաւ
չափելու ժողովրդային յուսահատութեան ու զայրագ-
նութեան անդունդը, նրա դարաւոր ու հսկայական
մթերումը, նրա դարաւոր ու եռացող հրաբուխը, —
բոլոր նրանք, գիտուններ և տգէտներ, փիլիսոփաներ ու
սովորական մահկանացուներ, մինչև օրս էլ ցասումով
ու գարշանքով ապտակում են 1793 թւականի յուն-
ւարեան „ոճրի“ դէմ, թափում են բարեպաշտ, աղիո-
ղորմ արցունքներ, խարանում են, նշաւակում այդ
„ոճրի“ հեղինակներին, „արիւնածարաւ ժակոբիններին“,
„հայրենադաւ սոցիալիստներին“, „աշխարհաւեր անար-
շիստներին“, Ռոբեսպիէռներին ու Դանտոններին... Ա՛հ,
և սակայն, պատմութիւնը ընթանում է, անխռով ու
անդրդւելի, իր գծած ճանապարհով, նա ոռոգում է իր
մեծ ուղին արեան հսկայ շատրւաններով, առանց խըտ-
րութիւն սահմանելու այդ արիւնի որակի մէջ, առանց
հաշւի առնելու բարեպաշտների „սրբազան ընդվզում-
ները“ և փարիսեցիների կոկորդիլոսեան արցունքները։

1793-ի յունւարեան գիւօտինը սպանում էր ոչ միայն Լուդովիկոս XVI-ին, այլ և սպանում էր յանձին նրա՝ այն չարաշուք ու մարդաջինջ ս կ զ բ ո ւ ն ք ը, կրօնական, պատգամներով սրբագործւած այն դրօշը, որի բուռն ու ժոլեռանդ կրողներ են աշխարհի բոլոր Լու-դովիկոսները...

***

Թագաւորի գլխատման լուրը անօրինակ շառաչումով անցաւ Եւրոպայի վրայից և նետեց կարմիր սարսափը

բոլոր թագակիր գլուխների վրայ։ Ամբողջ Եւրոպան— պանիկի տակ։ Հակահարուածը յեղափոխական Ֆրանսիայի դէմ պայթեց այս անգամ աւելի ուժով ու կատաղութեամբ։ Բոլոր մեծ պետութիւնները միացան „ընդհանուր վտանգի“ հանդէպ։ կազմակերպեց մի վիթխարի, չը տեսնւած կօալիսիօն, նիզակակցութիւն, որի մէջ մտան Աւստրիա, Պրուսսիա, Ռուսաստան, Անգլիա, Սպանիա, Հօլանդիա։ Բարձրացաւ ահեղօրէն և ներքին թշնամին — դաժան ու քստմնելի վանդէան, մօտ 100,000 գիւղացիները, բուռթ, անգիտակից, հակայեղափոխական, „մշակւած“ նոյն կղերի ու ազնւականութեան երկարատև սադրանքներով։

Վայրկեանը կրիտիկական էր։ կեանքի ու մահուան խնդիր էր դրւած Ֆրանսիայի առջև։ Յեղափոխական պարլամենտը, սակայն, չ'ընկճւեց։ Պարի՛զը, չը նայած երկար ու անդադրում մաքառումներին, ներքին ծանր պատակտումներին ու յօշոտումներին, չը նայած արքայադաւաճանի պատճառած արհաւիրքներին ու դառնագէտ յուսախաբութիւններին — պարի՛զը դեռ կանգուն էր, իր ապստամբ ժողովրդով, իր պաշտելի արւարձաններով, որպէս հրեղէն մի տիտան, որ կոչւած էր միշտ իբրև առաջապահիկ, երբեմն գրեթէ մեն-մենակ կուրծք տալու այդքան ահաւոր, արտաքին ու ներքին ոսոխներին, պաշտպանելու հայրենիքի ազատութիւնը, փրկելու Յեղափոխութեան պատիւը։

Եւ հնչեց նորէն „Մարսէլիէզի“ որոտընդոստ յանկերգը — և նորէն ռազմական աարսուռ անցաւ դիւցազնական երկրի վրայից.

Amour sacré de la patrie,
Soutiens, conduis nos bras vengeurs;
Liberté, liberté chérie
Combats avec tes défenseurs!...

Հայրենիքի սրբազան սէ՛ր
Ղեկավարի՛ր, եղիր նեցուկ
Մեր վրիժառու բազուկներին.
Ազատութի՛ւն սիրական,
Ուղեկցիր քո պաշտպաններին։

Յեղափոխական Դաշնաժողովը հրահանգեց անվիչապէս (*մարտ* 1793 *թ.*).

1. Ջէնքի կոչել 300,000-ի բանակ։

2. Կազմակերպել Ընդհանուր Ապահովութեան կոմիտէ՝ փնտրելու համար կասկածելիներին, վտանգաւորներին։

3. Կազմակերպել Յեղափոխական Ատեան (*Tribunal Révolutionnaire*)՝ այդ վերջիններին պատժելու համար։

4. Ստեղծել, վերջապէս, Ազգային Պաշտպանութեան Մարմին (*Comité de Salut Public*), որ պիտի ձեռք առնէր բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու հայրենիքը ներսի ու դրսի թշնամիների դէմ։ Նա պիտի հրահանգէր և մահուան պատիժ „գաղթականների“ ու հայրենադաւ կղերականների դէմ։

Այդ վերջին մարմնի պարագլուխն եղաւ—Դանտօն։

Սկսաւ մի վիթխարի զօրաշարժ։ Ամբողջ Ֆրանսիան էր զինւորագրւում, համախմբւում ազատագրութեան դրօշակի տակ։ Մարդկային ովկիանը շարժւում էր մինչև իր անդունդները։

Եւ այդ ցնցող, անօրինակ ճգնաժամին, տեղի էր ունենում զանգւածային զօրաշարժի հետ թատրօնական մի եզակի, բացօդեայ ներկայացում Պարիզի մէջ, — հռոմէական պօլօսէում մի օրերից ի վեր նմանը չէր տեսնւած մի գրանդիօզ տեսարան։ Պարլամենտի, Դաշնադիր ժողովի հրաւէրով՝ գումարւել էին Պարիզում (օգոստոս, 1793 *թ.*) Ֆրանսիական բոլոր նահանգների պատգամաւորները. եկել էին այդտեղ, յեղափոխական

ժայրաքաղաքում հանդիսաւոր դաշն կռելու հայրենիքի դաւաճանների ու արտաքին թշնամու դէմ, եկել էին այդտեղից իրենց ժողովին պատասխանն ուղղելու համրողջ սպառնացող տիեզերքին։

Տեղի էր ունենում *Fédération*-ի, Դաշնակցութեան անմոռանալի տօնը միլիօնաւոր ժողովրդի մասնակցութեամբ — տօն Միութեան ու Համերաշխութեան, տօն Ազատութեան և Եղբայրութեան։ Ի՛նչ համեմատութիւն հռոմէական կօլօսէումի տօների հետ... Այնտեղ կեսարները էին սանձարձակ զբարճանում ստրուկների, ժողովրդի աղեխարշ մարտիրոսութեան հանդէպ, այստեղ ժողովուրդն էր տօնում իր Միութիւնը՝ հանդէպ գլխատուած ու դեռ կանգուն կեսարների...

Աննման էր Դաշնակցութեան այդ պատմական հանդէսը, այդ հսկայ, անվերջանալի թափօրը, որ սկսուեց Պարիզում 1793-ի, օգոստ. 10-ին և որ անցաւ հինգ խոշոր հանգրուաններ, ամեն մէկում կատարելով օրւան պատշաճ արարողութիւններ — սրբապան, երդումնակուռ... Խաչ ու խաչվառ չ'երևացին այդ տարամերժ արարողութիւնների մէջ։ Աստուծոյ և աստուածների, կղերի և փարաջայի հետքը էլ կար։ Կրօնական հանդէս էր դա, այլ մարդկային — աղատական։ Աստուծոյ օրհնութիւնը չէր աղերսում՝ այդ միլիօնաւոր բազմութիւնը, որ տօնում էր թշնամու թնդանօթների հարւածների տակ, կատարում էր թափօրը արտաքին արշաւանքի ժխորի մէջ։ Եւ նա, սակայն, պիտի աջողէր շատ շուտով, յաղթականօրէն յետ մղել այդ քստմնելի արշաւանքը, որ եկել էր օձւած, „աստուածատաք“ կայսրների հրամանով՝ խեղդելու Ֆրանսիայի ազատատենչ ժողովուրդը։

Ոչ հին կրօնական էմբլէմների, հոգեկան ստրկութեան խորհրդանշանների ստւերն անգամ չէր երևում այդ էքնաղ թափօրի մէջ. նա գնում էր ծնրադրելու

մի ուրիշ աստուածութեան — Բ ն ո ւ թ ե ա ն։ Նոր ժողովրդութիւն — և նոր Աստուած։ Նոր ժողովրդութիւն, ազատագրուած հինաւուրց ու չարանիւթ պաշտամունքներից, ներշնչուած 18-րդ դարի բանապաշտ, բացիօնալիստ փիլիսոփայութեամբ։

Թափօրը շարժւում է հանդարտ ու վեհապանծ — ժողովրդի, պարլամենտի, նահանգական պատգամաւորների, զօրքի, պաշտօնէութեան, կլուբների ու կօմիտէների յաջորդական ու երփներանգ շարանով — անցնում է Բաստիլի աւերակներից, Յեղափոխութեան Հրապարակից, Ինվալիդներից, հասնում է *Champ-de-Mars*, ուր կառուցուած է հսկայական ամփիթատր — Հ ա յ ր ե ն ի ք ի Ս ե ղ ա ն ը։ Տխլագին ու յուզիչ հանդիսաւորութեամբ մեծարւում է ընկածների, նահատակների յիշատակը։ Ապա — ե ր գ ո ւ մ ու ժպիթանք։ Երգւում է մայրաքաղաքը, երգւում են գաւառները, յանձին իրենց պատւիրակների։ Հնչում է ազատութեան հիմնը և ծովացած բազմութիւնը երկրպագում է նոր Աստուծուն... Պարլամենտի նախագահը ընդհանուր ու խորունկ լռութեան մէջ, ձօն է կարդում — Բ ն ո ւ թ ե ա ն։

„Ո՛վ դու, որ միահեծան տէր ես վայրենի և լուսաւոր ազգերի,— այս հսկայ ժողովուրդը, որ հաւաքւած է քո առջև, Արևի առաջին ճաճանչների տակ, միանգամայն արժանի է քեզ,— նա ազատ է։ Քո ծոցի մէջ, քո սրբազան աղբիւրներում է, որ նա գանձել է իր իրաւունքները և վերածնւել։ Մոլորութեան և տրկութեան այնքան դարեր անցնելուց յետոյ՝ պէտք էր մտնել քո սիրած պարզութեան մէջ, գտնելու համար ազատութիւն ու հաւասարութիւն։ Ո՛վ բնութիւն, ընդունիր ֆրանսիացիների յաւիտենական սիրոյ ու հնազանդութեան զգացումը դէպի քո օրէնքները և թո՛ղ այդ արգաւանդ ջրերը, որ ցայտում են քո ստինքներից, թող

այդ ջինջ լիմպելիքը, որ արբեցրել է առաջին ֆրանսիացիներին, թո՞ղ նրանք եղբայրության ու հաւասարության այս բաժակի վէջ նւիրագործեն այն երդումը, որ ուղղում է քեզ Ֆրանսիան այսօր, այս հրաշալի օրը, որպիսին դեռ չի լուսաւորել Արեգակը այն ժամանակից, ինչ նա կախուած է երկնքի անհունութեան մէջ"...

Ժան Ժակ Ռուսսօի ստւերը դարձեալ ներկայ էր այդտեղ, այդ անզուգական, աշխարհանուաճ թափօրին..

Ււ շարան-շարան—այդ չնաշխարհիկ երդումից յետոյ—ժողովրդական պատգամաւորները, ծերունազարդ, պատկառելի դէմքեր, մօտեցան նախագահին, առան նրա ձեռքից եղբայրության ու հաւասարության սուրբ բաժակը, մօտեցրին իրենց շրթներին և հոլովեցին բարձրաձայն կոչեր, բաղձանքներ, մարգարէութիւններ...

„Մէկ ոտս արդէն գերեզմանումն է — ասում է մէկը—բայց սեղմելով այս բաժակը շրթունքներիս, ինձ թւում է, թէ ինձ հետ միասին վերածնւում է ամբողջ մարդկային ցեղը"։

Մի ուրիշը.

„Քանի՜ գարուններ են սահել իմ գլուխս վրայից.. Գոհութի՜ւն քեզ, ո՜վ Բնութիւն, որ պահպանեցիր իմ կեանքը մինչև այս պանծալի օրը"։

Մի երրորդը, բաժակը բռնած դիմում է ողջ տիեզերքին.

„Ո՜վ մարդիկ, եղբայրնե՛ր էք դուք բոլորդ. ո՜վ ժողովուրդներ, նախանձեցէք մեր երջանկութեան և թող նա լինի ձեզ օրինակ *)...

***

*) Նոր դարագլուխ էր պատմութեան համար, մարդկու-

Անլուր տագնապի մէջտեղ ևս շարունակեց ներքին պայքարը ժիրօնդիստների ու մոնտաններ-ների մէջև։ վերջիններըը, իրենց հզօր նեցուկ ունե-նալով պարիզեան կոմմունան և ժողովուրդը, միշտ աւելի գերակշռեցին, տիրեցին։ Մի գեղեցիկ օր (1793-ի յունիս 2) կոմմունան պաշարեց պարլամենտը և ջարդի սպառնալիքով պահանջեց բազմաթիւ ժիրօնդիստ-պատ-գամաւորների հրաժարականը։ Ժիրօնդը անձնատուր եղաւ — և այնուհետև յեղափոխական մոնտաններըը տէր դարձան Ազգային ժողովի...

Պարիզը կողմնակից էր ամենախիստ, ամենակտրուկ, յեղափոխական միջոցների — Տայրենիքը և Յեղափոխու-թիւնը փրկելու համար — բայց այդպէս չէր տրամա-դրւած գաւառը։ Նրա համակրանքը՝ չափաւոր ժի-րօնտի կողմն էր և նա խիստ կասկածոտ աչք ուներ

թեան համար... Բնութեան կրօնն է թագաւորում միահե-ծան, դուրս մղելով բոլոր միւս, հեթանոսական կրօնները։ Հեթանոսական են նրանք բոլորը, քանի որ չեն հիմնւած մարդկային ազատութեան ու հաւասարութեան պաշտա-մունքի վրայ։ Հեթանոսական է և քրիստոնէութիւնը... քանի որ նա բնաւ չը ձգտեց վերացնելու այս աշխարհից տառապանքն ու գերութիւնը, — ընդհակառակը, աւելի ևս խրախուսեց նրանց... քարոզելով հնազանդութիւն տիրող օրէնքներին, արքայորժելով բռնապետների թագն ու գահը։ Թո՛ղ յետ նահանջէ և նա — այդ հինաւուրց, հակամարդ-կային կառավարութիւնը... Այսպէս որոտայ Յեղափոխու-թեան նոր Աստւածը։ Քրիստոնէութեան բոլոր հնոցքերը պիտի վերանան մարդկային ազատ հանրապետութիւնից, պիտի վերանայ անգամ տօմարը, քրիստոնէական տա-րեգրութեան սիստեմը... Եւ Յեղափոխութիւնը հաստատեց մի նոր Տօմար, որ սկսւում է տարեգրութիւնը ոչ թէ Քրիստոսի ծննդից, այլ Ֆրանսիական Հանրապետութեան սկզբնաւորութիւնից, 1792 թւականից։ Փոխւեց ամեն բան, փոխւեցին և ամիսների անունները։

դէպի պարիզը։ Սարսափելի և չարաշուք հակադրութիւն... Եւ նա քիչ չը նպաստեց այն յետագայ զարհուրելի թափօրներին, այն խենթ, կարմիր, համաճարակ ժոլեգնութեան, որ այդ անօրինակ թւականներից ի վեր յաւերժացել է համաշխարհային պատմութեան մէջ, մի կարճ ու ցնցող անունով — Տերրօր։ Թշնամիների հսկայական լէգէոնները՝ սահմաններում և հակայեղափոխական փոթորիկը՝ ներսում... Դիքտատօրութիւնը այդպիսի ճգնաժամային վայրկեաններին դառնում է անխուսափելի և Տերրօրը — նրա գերագոյն համադարմանը։

Եւ Ֆրանսիան գահավիժեց դիքտատօրութեան ու Տերրօրի խորխորատը... Երկար ժամանակ նրան ճարակեցին ու յօշոտեցին։ Երկար ժամանակ նա գալարուում էր մի կողմից արտաքին նւաճողական արշաւանքների, միւս կողմից ներքին ահարկու պատուհասի, Տերրօրի ճիրաններում։ Յեղափոխական կառավարութիւնը չունէր էլ ազդեցութեան ուրիշ միջոց։ Նա նեղլիշնէաած էր ամենավսեմ իղձերով։ Նա ուզում էր տերրօրի, ահաբեկման ճանապարհով զինաթափ անել յեղափոխութեան ու հանրապետութեան ներքին թշնամիներին և կազմակերպել ու մղել ամբողջ երկիրը դէպի պատերազմ ընդդէմ արտաքին թշնամիների, որոնք եկել պաշարել էին հանրապետութիւնը բոլոր կողմերից։ Սակայն, երկարատև դիքտատօրութիւնը թեթ, սայթաքուն ճանապարհով հասցնում է իւ վերջոյ այլանդակ ծայրայեղութեան։ Նրա մէջ ընկան ժնտանեարների պարագլուխները, նրա մէջ նետուեց իր բոլոր էութեամբ և իր անօրինակ, աշխարհասատան խառնուածքի ուժով, մանաւանդ մէկը հոչակաւոր յեղափոխականներից — Մաքսիմիլեան Ռօբեսպիէռը...

Տերրօրը իշխեց Թևատարած ամենութեբ։ Մասսային կալանաւորումներ և մասսային գլխատումներ։ Յեղափոխական Ատեանը առաքում էր ամեն օր մահապարտների ամբողջ խմբեր դէպի գիլօտին։ Ոչնչացում էին անխնայ բոլոր նրանք, որոնք դիտում էին, իբրև յեղափոխական, հակայեղափոխական։ Բաւական էր լոկ մի կասկած, մի մատնութիւն։ Ոչնչացում էին մի առանձին ժոլեգնութեամբ արքայականներն ու կղերականները. Թագուհու, Մարիա Անտուանետտայի գլուխն ևս ճնաց գիլօտինի տակ։ Չէին խնայում և հոչակաւոր գրողներն ու գիտնականները։ Լաւուազիէ, Անդրէ Շենիէ և բազմաթիւ ուրիշներ բարձրացան կատափնաբեմ կամ հիւծեցին ու մեռան բանտերում։ Գիլօտինը գործում էր անդուլ, անդադրում. բորբոքել էր արեան անյագ մի ծարաւ յեղափոխական շրջաններում։ Ֆրանսիան դարձաւ մարդկային մի վիթխարի սպանդանոց։ 1793-ի ապրիլի 17-ից մինչև 1794-ի յուլիսի 27-ը, այսինքն 16 ամսւայ ընթացքում գլխատեցին 3958 մարդ։ Ամբողջ Ֆրանսիայի մէջ նոյն ժամանակամիջոցում գիլօտինի զոհերի թիւն էր մօտ 12,000, որի կէսը հակայեղափոխական գիւղացիներ ու բանուորներ էին։

Առանձնապէս սարսափելի էր Տերրօրը „վանդէականների“ դէմ։ Այնտեղ, արևմտեան յետադէմ գաւառի մէջ մի կատարեալ բնաջնջումն էր բոլոր „կասկածելիների“։ Այնտեղ յեղափոխականների անգթութիւնը սահման չունէր... Բայց նրանք պատասխանում էին գազանութեամբ՝ արդէն եղած գազանութիւններին։ Ինչե՞ր չէին նրանք վանդէականները *) յեղափոխական գինուորների ու քաղաքացիների դէմ։ Խուճապ, ջարդ, դժո-

*) „Վանդէա“, „վանդէական“ բառը այն պատմական օրերից է վեր դարձել են համաշխարհային և սրակիչ են ամեն տեսակ հակայեղափոխական, ապստամբական շարժումների։

խային չարչարանքներ։ Կղերը խրոխտ պարզել էր իր սև դրօշը և անցել հակայեղափոխական շարժման գլուխ... Եւ այդ այն միջոցին, երբ անգլիական զօրքը գալիս էր նոյն արևմտեան սահմաններով հարուածելու Ֆրանսիային։ „Վանդէան“, կղերի և ամբողջ արքայական բանակի առաջնորդութեամբ. այդպիսով ձև էր տալիս հարեւնիքի թշնամիներին։ Խուճապը պարհուրելի էր։ Յեղափոխական զինուորներին անխնայ ջարդում էին վանդէականները, ջարդելուց առաջ՝ ենթարկում աննկարագրելի տանջանքների։ Մարդկանց — յեղափոխական ճանապարհներին—ողջ-ողջ թաղում էին, կամ թէ խեղդում Լուարը գետում, նետում էին ջրհորները, կամ տապակում փուռերի մէջ։ Սմբովին հրացանի էին բռնում նրանց, քարի, փայտի հարուածներով ջարդում էին մարմինները, հոգևարք զինուորների աչքերը ծակոտում էին ասեղներով *)... Աբդիւլ-Համիդեան երևակայութիւնն անգամ թերևս նսեմանայ վանդէական այդ սոսկալի յղացումների առջև...

Եւ կղերը իր հարիւրաւոր քահանաներով, նախագահում էր այդ դիւային տանջանքներին...

Ի՞նչ զարմանք, որ Յեղափոխութեան հակահարուածն ևս տեղի ունեցաւ անպատմելի զարհուրանքներով։ Ի՞նչ զարմանք՝ որ յեղափոխական վրէժխնդիր բանակն ևս հեռու մնաց գթութեան ու մարդկայնութեան արտայայտութիւններից.. Բաւական է յիշել միայն, որ այդ բանակը իր յաղթութեան առաջին օրը գետը նետեց 80 քահանայ Լոց, ողբոս, սիրտ կտրատող բառաչում — բայց ապարդիւն։ Կաթոլիկ կիւրէների մարմինները, մին մեսի ետևից, պտոյտներ էին գործում օդի մէջ և ապահանգստանում Լուարի յորձանուտ կոհակներում...

---

*) *Michelet: Histoire de la Révolution Française.*

Յեղափոխական ցասումի ամենաահեղ պոռթկումները ուղղեցին կղերի դէմ։ Բայց յաղթական բանակը անողոք գտնեց և միանների հանդէպ։ Ջարդի ու խեղդումի գերեզմանային արարողութիւնը տևեց երկար... Սարսափելի „Վանդէան“ խորտակեց, թէև այնուհետև նա արեց դեռ մի քանի փոքրիկ թռիչքներ։

Գիյօտինը դադար չունէր Պարիզում ու գաւառներում։ Յերկրում, մի ամեհի, հազարագլխեան վիշապի պէս, հնձում էր Ֆրանսիայի անհամար ու կենսալի ուժերը և տարածում ամենուրեք լաց, արիւն ու յուսահատութիւն։

Շուտով նա դարձաւ իր դաժան ախոյեաններին, իր խանդավառ կողմնակիցների դէմ։ Շուտով այդ ահեղ երկասրի սուրը — անխուսափելի, ճակատագրական դիմադարձութեամբ — բարձրացաւ ամենակատաղի, ամենավհշ ու ժողովրդական յեղափոխականների գլխին։ Երկպառակութեան որոմը բուն էր դրել հանրապետական բանակի մէջ և տանում էր նրան անդարձ դէպի խորխորատ։ Դասակարգային ներհակութիւնների հետ՝ անձնական մրցակցութիւնը, նախանձը, փառքի ու տիրապետութեան տենչանքները, ի շարս այլ գործօնների, խաղացին իրենց դերը այդ ախուր, ճակատագրական պառակտումի մէջ... Անխուսափելի՛ սուերներ մարդկային այդօրինակ խօլական դրամաներում... Միւս կողմից՝ ինքը մեծ ժողովուրդը յոգնում էր արդէն մի շարք կարմիր թւականների արիւնազանգ սասանումներից, ինքը մեծ Յեղափոխականը կշտանում էր արեան խեղդող գոլորշիներից, զէնքի անդուլ շառաչիւնից, նա ձգտում էր հանգստութեան, նա ծարա՛ւ էր կարգի, օրինականութեան, խաղաղութեան։

Եւ այդ հոգեբանութիւնն անդրադառնում էր կու-

սակցութիւնների ճակատագրի վրայ։ Ամենակարմիր, ամենամոլեգին հատուածի մէջ իսկ — մօնտանեարների ծոցում — ծայր տուեց տարտափելի պառակտումը։ Մի մասը, աւելի չափաւոր, տրամադիր էր վերջ տալ արեան ու վրէժի թափօրներին։ Այդտեղ իբրև պարագլուխ, կանգնած էր Դ ա ն տ օ ն ը, Ֆրանսիական Յեղափոխութեան մեծագոյն դէմքերից մինը։ Նրա հետ էր համբաւաւոր Լ ա մ ի լ Դ ե մ ո ւ լ է ն։ Միւս մասը գտնում էր, որ խաղաղութեան ժամը դեռ չի հնչել և որ գիլօտինը դեռ պէտք է շարունակէ իր ազատարար, մաքրագործող աշխատանքը։ Այդտեղ կանգնած էր Յեղափոխութեան զարհուրելի հրեշտակապետը, իր թունաւոր ատամների կրճտոցով, իր ահեղ, կայծակնարձակ աչքերով — Ռ օ բ ե ս պ ի է ռ ը։

Ո՞րն էր սակայն իրաւացին և ո՞րը — անիրաւը... Ահա մեծ, չարատանջ պրօբլեմը։ Նրա շուրջը դեռ այսօր էլ բորբոքւում են կրքերը, նրա առթիւ անհամար նիշտակներ են ջարդում Ֆրանսիայի և տիեզերքի հեղինակաւոր պատմագիրները։

Ռօբեսպիէռին սովորաբար հռչակում են որպէս անհաշտ, արիւնածարաւ, աղանդամոլ մի ոգի, մի գուռզ ու բռնակալ դիքտատօր, որ նիւթում էր մարդկային հեկատօմբներ՝ լոկ իր բնազդին ու իր անսանձ փառամոլութեան գոհացում տալու համար։ Այդպէս են ներկայացնում սովորաբար բուրժուազիայի և բոլոր չափաւոր, պահպանողական տարրերի իդէօլօգները։

Իրականութիւնը, պատմական ճշմարտութիւնը միանգամայն չի համապատասխանում այդ անողոք գնահատութեան։ Մի Միշլէ — ժողովրդի ու ազգավարութեան խանդավառ իդէօլօգը, մի Թօրէս — պրօլետարիատի, աշխատաւորութեան անզուգական պատմա-

գիրը,—այդ տեսակ ակնոցներով չեն նայում Ռօբեսպիէռի զարզանդեցուցիչ պատկերի վրայ։ Շեշտելով հանդերձ սուերային, բացասական կողմերը, նրանք չեն զլանում անժխտելի իրողութիւններով հաստատելու Ռօբեսպիէռի մեծութիւնը, հաստատելու, որ Ցեղափոխութեան սասանեցուցիչ յորձանքներում՝ նա անխռով, գործօն ու հեռատես նաւավարն էր, որ բիւրաւոր փորձութիւնների միջից անյողդողդ ձգտում էր ափին հասցնել Հանրապետութեան ու Ռամկավարութեան նաւը։ Նրա ձգտումն էր սկզբից ի վեր՝ կազմակերպել մի ա ձ ո յ լ ու ն ե ր դ ա շ ն ա կ ժողովրդական ու յեղափոխական բանակը, կենտրօնացնել բոլոր գործօն ուժերը, որպէս զի հնարաւոր լինէր կուրծք տալ յաղթանակով արտաքին և ներքին այնքան հզօր թշնամիներին։ Սակայն, հակառակորդների, ժիրօնդիստների, պատեհապաշտ չափաւորների շարունակական ինտրիգներն ու վարանումները ամեն մի քայլափոխում անյաղթելի արգելք էին լինում այդ փրկարար ձգտումին։ Ինտրիգն ու վարանումը շարունակուեցին և այն ժամանակ, երբ հայրենիքը կանգնած էր կորստեան վիհի ծայրին և երբ պէտք էր վճռական մի ոստիւն՝ օրհասից ճողոպրելու համար։

Այդ վճռական ոստիւնն էր ուզում կազմակերպել Ռօբեսպիէռը։ Նա խանդավառ ռամկավարական էր, բնաւորութեամբ պարզ, շիտակ, անկաշառ.. Յատկութիւններ, որ միացած նրա ուժեղ խմացականութեան և վարչական ու հռետօրական ձիրքերին՝ ստեղծել էին այն անսովոր ժողովրդականութիւնը, որ վայելում էր Ռօբեսպիէռը մի քանի տարի շարունակ, այն տիրական ազդեցութիւնը, որ նա բանեցնում էր Ազգային Ժողովի վրայ։ Նա ուզում էր ծառայեցնել Ցեղափոխութիւնը ժողովրդին և նրա խորունկ համոզումով Հանրապետու-

Թիւնն ու երկիրը կարող էին փրկւել միայն ուժեղ ու պճռական կառավարութեան ձեռքով, որ պիտի ունենար իր կենտրօնատեղին Պարիզում և այնտեղից շանթահարէր անողորմաբար Ֆրանսիայի բոլոր յետադէմներին, դաւադիրներին։ Ժողովրդի պաշտամունքն ունէր Ռօբեսպիէռը, բայց և գիտէր, որ ժողովուրդը տագնապի վայրկեաններին ընդունակ չէ ինքզինքը կառավարելու, որ նոտ պէտք ունի յանդուգն ու խելահաս առաջնորդութեան։ Թո՞ղ լինի այդ առաջնորդը՝ թէկուզ մի չնչին փոքրամասնութիւն, բաղկացած ուժեղ, կորովի և վճռական անհատներից և յենւած դաշնաժողովի, պարլամենտի վրայ։

Անհատական ռօբեսպիէռեան պատճառաբանութիւնը և գործունէութեան ծրագիրը։ Նա տանում էր սրարշաւ դէպի դիքտատօրութիւն։ Եւ նա անսասան առաջ գնաց այդ ծրագրով, իրեն նեցուկ ունենալով մի խումբ իր պէս անվեհեր ու անձնուրաց յեղափոխականներ, որոնցից նշանաւորներն են — Մարայի մահից յետոյ — Սէն Ժիւստ և Կուտօն *)։ Նրա առջև ծառացան ահարկու խոչընդոտներ։ Վարանումը և չափաւորութեան տենդը մտել էին նոյնիսկ յեղափոխական լաւագոյն շրջաններըւ Նրանցով համակւել էր և Դանտօն։ Նա չէր բաժանում ոչ Ռօբեսպիէռի համոզումները, ոչ նրա խառնւածքը. չունէր և նրա վճռականութիւնն ու կորովի յարատեւութիւնը։ Դեռ պատերազմը չէր վերջացած, դեռ Ֆրանսիան բռնւած արտաքին ու ներքին համաճարակ հրդեհով դեռ սոսկալի վանդէի, յետադիմական գաւերի ուրւականը ցցւած Յեղափոխութեան հորիզոնում՝ Դանտօնը մէկէն ի մէկ

*) Յեղափոխութեան գլխաւոր առաջնորդները — Ռօբեսպիէռ, Դանտօն, Մարա, Սէն-Ժիւստ և այլն — երիտասարդ մարդիկ են, 34—38 տարեկանի մէջ։

փոխեց ֆրօնտը և սկսեց քարոզել չափաւորութիւն, գթութիւն, ներքին թշնամիների վերաբերմամբ, թելադրեց կանգնեցրել Տերրօրի խարազանը, կազմակերպեց այդ նպատակով յատուկ լիգ, միութիւն...

Յցւեց մի այլ մեծ խոչընդոտ Ռօբեսպիէռի յեղափոխական ճանապարհին։ Նրևան էր եկել—իր „կարմիր“, անիշխանական շոհատակութիւններով—հռչակաւոր *enragé*-ների, „կատղածների“ խումբը, Հեբերտի առաջնորդութեամբ։ Ի՞նչ էր քարոզում նա։ Կռի՛ր բոլոր միջոցներով ընդդէմ կրօնի, եկեղեցու, ընդդէմ ծէսի ու պաշտամունքի։ „Անրաժէնները“ յորդորում էին քարուքանդ անել եկեղեցիները, թալանել, սրբապղծել։ Վէնչացնե՛լ քրիստոնէութեան ու կաթոլիկութեան ամեն մի հետք, պոկել մարդկանց գիտակցութիւնից նրանց բոլոր արմատները — պոկել ամենաբիրտ, ամենավայրագ միջոցներով։ Եւ նրանք խմբերով արշաւում էին Պարիզում ու գաւառներում, բռնի ուժով դադարեցնում ժամերգութիւնը, ծէսերը, հալածում քահանաներին...

Դարձեալ — որքա՛ն բնական ու հասկանալի էին՝ անգամ այդ գռեհիկ ամբոխային բռնկումները մի այնպիսի խելայեղ, զարհուրելի մթնոլորտում... Կղե՛րը դիտւում էր, իբրև ահեղ, անյաղթելի մի պատուհաս. եկեղեցի՛ն — իբրև պատւար, միջնաբերդ վանդէական շարժումների։ Կղե՛րն էր առաջնորդում հակայեղափոխական խումբերին Վանդէի, Բրետանի և ուրիշ գաւառներում։ Կղե՛րն էր, որ միացած հարուստների և բոլոր բռնաւորների հետ, ծածանեցնում էր ռէակցիայի անարգ դրօշը Լիոնում, Տուլօնում, Մարսէլում։ Կղերը — ամենուրեք... Պատերա՛զմ կղերին, եկեղեցուն, Աստուծուն, պատերա՛զմ այդ բոլոր ֆէտիշներին, սրբապան անօթներին, խաչերին ու խաչվառներին, որոնք մի մի

խորհրդանշան-սիմբօլներ են կղերական ժարդախոշոշ բռնակալութեան...

Այդպէս էր գոռում „կատղածներու“ վրէժխնդիր ու մոլեռանդ բանակը։

Եկեղեցին դարձել էր Ազատութեան ժողովարան, եկեղեցու ամբիոնից ժողովուրդը լսում էր յեղափոխական քարոզիչների խանդավառ ճառերը — ի՞նչպէս թոյլ տալ, որ նոյն այդ եկեղեցին դառնայ օճախ ամենաքստմնելի դաւերի՝ ընդդէմ նոյն Ազատութեան, ընդդէմ նոյն Յեղափոխութեան... Չա՛րկ այդ մռայլ պատերին ու պճնազարդ կամարներին, քանդեցէ՛ք այդ սիւներն ու սեղանները, կարդեցէ՛ք այդ ջահերն ու անօթները, սկիհներն ու զանգակները, որոնք մի մի գէնքեր են ռէակցիայի, յետադիմութեան, ձուլեցէ՛ք նրանցից գէնք՝ Ազատութեան կուի համար։ Աւերեցէ՛ք, պղծեցէք ի տես երկրի ու երկնքի— և թո՛ղ այն սին ու դատարկ երկնային Ուրուականը, որի առջև յիմարաբար ծունկ է չոքում այդ բթացած, խաւարակուռ վոհմակը, թո՛ղ նա պատժէ „չարագործներին“, թող նա բռնէ նրանց աւերող ու սրբապղծող բազուկները...

Այսպէս էին որոտում այդ դժնդակ *enragé*-ները, „հէբերտիստները“։ Կրօնը մեռցնե՛լ ժողովրդի գիտակցութեան մէջ... ոչ թէ խօսքով, քարոզներով, համոզուժով — դա կը պահանջէ երկար դարեր — այլ կացնի հարուածներով, վանդալական արշաւներով... Եւ նրանց գործը համաձայնւում էր խօսքի հետ, նրանք խիզախ ու գոհավէժ թուիչքներով ձգտում էին իրագործել „կրօնազերծման“ արմատական ծրագիրը և այդ „փրկարար“ ճանապարհի վրայ զարնում էին իրենց բազմադիմի հակառակորդներին, թէ դանտօնին, որ իր ամրողջ էութեամբ հակառակ էր այդ տեսակ բռնկումների, թէ Ռօբեսպիէռին, որ նոյնպէս ճանաչւած էր

հեբերտիստների կողմից, իբրև չափաւոր, պատեհապաշտ, քանի որ նա, Ռոբեսպիէռը, հռչակել էր քրիստոնէական Աստուծոյ տեղ մի նոր, ուրոյն կռապաշտութիւն—Գ ե ր ա գ ո յ ն Է ա կ ի պաշտամունքը, *Culte de l'Etre Suprême*...

Ի՞նչ խօսք՝ որ հեբերտիզմը մի նոր կազմալուծող հոսանք էր ցեղափոխութեան յորձանուտ աւազանում Ռոբեսպիէռը որոշեց կուել—և նրա դէմ։

Քանի՜ հակառակորդ... Մի կողմից՝ եւրոպական բռնակալների կօալիսիօնը իր հսկայ, ազատասպան բանակով հայրենիքի դռներում. միւս կողմից՝ ներքին ռէակցիայի հազարագլխեան հիդրան—վանդէ, կղերը, ազնուականութիւն — միւս կողմից՝ բուրժուազական չափաւոր ժիրօնդը, որ յաւրաժամ դաւում էր և ձգտում պատնէշ դնել ցեղափոխութեան ընթացքի առաջ, միւս կողմից՝ Դանտօնը, որ այդ ահեղ ու մահառիթ ճգնաժամին սկսել էր ներողամտութիւն քարոզել ցեղափոխութեան հայրենադրուժ ոսոխների հանդէպ և այդպիսով անուղղակի սատար լինել այդ ոսոխներին, միւս կողմից, վերջապէս, հեբերտիստների, „կատղածների“ խուժանը, որ արագաքայլ տանում էր ցեղափոխութիւնը դէպի գռեհիկ ու բարբարոս վանդալիզմ և դէպի անխուսափելի կազմալուծում...

Ցեղափոխութեան դատը կորա՜ծ էր, եթէ չը վերանար այդ ներքին ազէտալի պատակտումը և եթէ ամբողջ յեղափոխական Ֆրանսիան չը կանգնէր իբրև մէկ մարդ և չը սլանար ազատասպան ուրագանի դէմ։

Այդպէս մտածեց Ռոբեսպիէռը — ցեղափոխութեան արթուն ու տանջահար ոգին—և որոշեց դիմել կտրուկ, ծայրայեղ միջոցներու։ Նրա համար միակ ելքն էր.. Նա դեռ ունէր ժողովրդականութիւն, նա դեռ հոգին ու պարագլուխն էր ցեղափոխական Ատեանի

(*Tribunal Révolutionnaire*), նրա խօսքը դեռ ուժեղ էր, նրա հմայքը դեռ տիրական՝ ժակօբիններէ մըրկակոծ սրահներում և նոյնիսկ Ազգային պարլամենտում։

Դաւն ու կասկածը մութի մէջ գործում էին Ռօբեսպիէռի դէմ, մինչդորտը տոգորուած էր ամենահրէշաւոր գաղտասուքներով։ Ո՞ւմ չէին կասկածում յեռատիմաական դաւերի մէջ—այդ դժոխային օրերում։ Ի վերջոյ սկսեցին իրար կասկածել — նոյնիսկ պարագլուխները... Ամենից եռանդով աշխատում էր այդ ուղղութեամբ Հէբեր՝ իր „կատղածների“ լէգէոնով։ Նա գաղտասուքներ ու կասկածներ էր տարածում թէ Ռօբեսպիէռի և թէ Դանտօնի վերաբերմամբ, երկուսին էլ տապալել ձգտելով... Իսկ Ռօսբեսպիէռը շարունակում էր յուսահատ կռիւը դէպի միութիւն, համերաշխութիւն. և մի օր նա, Հէբերտի ներկայութեամբ դիմեց Դանտօնին, որի մէջ նոյնպէս բուն էր դրել մռայլ կասկածը.

— „Դու չը գիտե՞ս միթէ, Դանտօն, որ բաւական է լինել հայրենասէր՝ որպէս զի բամբասիս, ամբաստանուիս։ Դու միթէ՞ չը գիտես, որ հէնց քեզ էլ ամբաստանում են—ասեմ, թէ ինչում... Դու ձգել ես պարիզը, որպէս զի գաղթես և դնես ինքզինքդ հակայեղափոխականների տրամադրութեան տակ։ Դու այդ չը գիտէիր. իմացիր ուրեմն. այդ առասպելները տարածողները նորեկներն են Յեղափոխութեան մէջ (ակնարկ Հէբերտի վրայ...), որոնք, երևի, աւելի կարող ու ընդունակ են, քան դու և ես“...

Ապարդիւն անցան Ռօբեսպիէռի բոլոր ջանքերը։ Պառակտիչ ոգին շարունակեց իր դաւերն ու շահատակութիւնները, Դանտօն և իրայիններն ևս ականջ չը դրին ռօբեսպիէռական յուսահատ հաւատրին, այլ միայն ձըգտեցին ամեն կերպ վարկաբեկել Ռօբեսպիէռին և ջուր ածել յեռատէսների, արքայականների ջրաղա-

ցին, Մեղադրում էին Ռոբեսպիէռին բռնակալութեան, դիքտատօրական ձգտումների մէջ...

Ֆրանսիան դողում էր, երերում այդ նեղքին եղբայրադաւ պայքարներից, վայրկեանը գերազանցապէս կրիտիկական էր։ Դիքտատօրութեան ուրուականն արդէն ծայր էր տալիս հօրիզօնում...

Ռոբեսպիէռը վճռեց „ժաքրել" հրապարակը։ Եւ սկսեց պատերազմը՝ երկու տարբեր ֆրօնտի վրայ։ Զարնեց աջ և ահեակ, — դանտօնիստներին և հէբերտիստներին։ Քարշեց իր եաևից „Ազգային փրկութեան կօմիտէն" *(Comité du Salut Public)*, նրա ստւար մեծամասնութիւնը։

Պէտք էր, սակայն, նախ քան դիմել զարդերի, հանգստացնել ժողովուրդը, յոյս ու հաւատ ներշնչել նրան, հասկացնել, որ մահու դաժան տիրապետութիւնը չէ նպատակը Յեղափոխութեան, որ այդ վերջինը իրօք ձգտում է հայրենիքի երջանկութեան, ժողովրդի լայն, տառապող զանգւածների բարօրութեան։ Դրա համար և Ռոբեսպիէռը, Սէն-Ժիւստի միջոցով հրապարակ նետեց կառավարական հռչակաւոր մանիֆէստը, որով ծանուցւում ու արդարացւում էր ռոբեսպիէռական տակտիկը և հռչակւում գալոց մեծ ռէֆօրմների մի նախագիծ։

Ազգային փրկութեան կօմիտէի անունից մանիֆէստը նախ բողոքում էր դանտօնեաններին հռչակած կեղծ գթութեան, *ներողամտութեան դէմ*, որ համազօր է զինաթափութեան՝ հանդէպ թշնամու ներողամտութիւնը անհնարին է, ասում է նա, բոլոր այն մարդկանց վերաբերմամբ, որ պաշտպանում են ամենաանգութ բռնաւորների դատը...

„Դուք ուզում էք հանրապետութիւն, իսկ նրա անհրաժեշտ պայմանն է՝ լիակատար ոչնչացում այն բոլոր

խոչընդոտների, որ ծառանում են նրա դէմ։ Գանգատում են յեղափոխական խիստ միջոցների մասին։ Բայց մենք չափաւորնե՞ր ենք, համեմատած բոլոր կառավարութիւնների հետ։ 1788-ին Լուդովիկոս XVI մորթել տւեց ութ հազար մարդ, ամեն սեռի ու հասակի, հէնց այստեղ Պարիզում, նոր կամուրջի վրայ։ Պալատը վերարտադրեց նոյն տեսարանները Շան դը Մարսում։ Պալատը կախում էր իր զոհերին բանտերի մէջ, նետում էր և Սէնի ալիքները։ Կային չորս հարիւր հազար կալանաւորներ։ Ամեն տարի կախում էին 15 հազար մաքսանենգ „յանցաւորներ“։ Պարիզի մէջ այն ժամանակ կային աւելի բանտարկեալներ, քան այսօր։ Սովի տարիներում զօրքերը արշաւում էին ժողովրդի դէմ։ Անցէ՛ք ուրիշ երկրներ, ամբողջ Եւրոպայում կան չորս միլիօն կալանաւորներ, որոնց ճիչերը դուք չէք լսում... Ցիմարնե՛ր ենք մենք... Թագաւորները, մեզնից հազար անգամ աւելի անգութ, հանգիստ քնած են ոճրի գրկում։ Քաղաքացինե՛ր, ի՞նչ պատրանքով կը հաւատցնեն ձեզ, որ դուք տմարդի էք։ Ձեր ցեղափոխական Ատեանը մի տարուց ի վեր ժահացրել է ընդամենը երեք հարիւր չարագործ։ Իսկ Սպանիոյ կղերական ինկվիզիցիան — որքա՜ն աւելի։ Իսկ Բենդերը, որ տապակում էր Բելջիկայի զաւակներին։ Իսկ Գերմանիոյ մեռյալ բանտերը, ուր թաղւած է ժողովուրդը... Դրանց մասին ձեզ չեն պատմում։ Խօսո՞ւմ են արդեօք ներողամտութեան մասին Եւրոպայի թագաւորները։ Ո՛չ։ Մի՛ մեղկացէք, ուրեմն“։

Ապա խրոխտ մանիֆէստի մէջ հնչում է թունոտ մի ակնարկ Դանտօնի և իր տակտիկի մասին։

...„Տարակոյս չը կայ, որ կայ մէկը, որ ներքուստ դաւ է նիւթում՝ մղելու մեզ դէպի ուէակցիա, դէպի յետ“...

եւ շարունակում է ռօբեսպիէռեան մանիֆէստը.

„Բոլոր օրէնքներից առաջնագոյնը — Հանրապետութեան պահպանումն է։ Կայ մի աղանդ Ֆրանսիայում, որ... կուզէր երջանիկ լինել ու վայելել... և դրա համար է, որ պահանջում են բաց անել բանտերի դռները... Դրա համար կուզեն նաև ժողովրդի խեղճութիւնն ու նւաստացումը, կը բաղձան նոր վանդէներ“...

Ռօբեսպիէռ և Սէն-Ժիւստ ըմբոստանում են բուրժուազական, պատեհապաշտ, հակաժողովրդային այդ ընթացքի դէմ և փաստաբանում խեղճերի, աշխատաւոր զանգւածների դատը, հռչակում սոցիալական ընդարձակ բարեկարգումների անհրաժեշտութիւնը։ Նրանք որոտում են հարուստների, խոշոր հողային սեփականութիւնների, կապիտալի ու ժառանգութեան դէմ, պաշտպանում են հաւասարութեան, ժողովրդային հաժառարած բարօրութեան սկզբունքը, հասկացնում են, որ ցեղափոխութիւնը անդունդ կերթայ, եթէ նա կանգառնէ կէս ճանապարհին, եթէ նա չը սահմանէ բաղձալի ներդաշնակութիւն ռամկավարական իրաւակարգի և տնտեսական սիստեմի միջև, եթէ նա չը հարթէ դասակարգերի խորունկ տարբերութիւնները, եթէ նա չը բառնայ գոյքի, ստացւածքի աղաղակող անհաւասարութիւնը։ Պէտք է խլել, բռնագրաւել ոչ միայն ֆէօդալիզմի, ազնւականութեան, կղերի գոյքերը, այլ և ամեն ուրիշ խոշոր հողային ու փողային սեփականութիւն և բաշխել ըստ կարելւոյն հաւասարօրէն բոլոր Ֆրանսիացի քաղաքացիների մէջ։

„Նրանք, որոնք կիսատ են անում յեղափոխութիւնը, նրանք միայն գերեզման են փորում իրենց համար։ Յեղափոխութիւնը թեւլադրում է մեզ՝ հասկանալ մի սկզբունք. բոլոր նրանք, որ թշնամի են հանդիսացել

իրենց երկրի, չեն կարող լինել սեփականատէր այդ երկրում...

„Մի՛թէ՞ այդ բռնաւորներին վայելք հայթայթելու համար է, որ ժողովուրդը իր արիւնն է թափում սահմանների վրայ և բոլոր ընտանիքները սուգ են հագել իրենց զաւակների համար... Միմիայն նրանք կարող են ունենալ իրաւունքներ մեր հայրենիքում, որոնք գործակցել են նրա ազատագրմանն

„Վերացրէ՛ք մուրացկանութիւնը, որ անարգանք է մի ազատ պետութեան համար... Չը պէտք է լինին ոչ հարուստներ և ոչ աղքատներ... Չը պէտք է լինեն անգործներ ու ձրիակերներ... Դժբախտները, չքաւորները երկրի մեծ ուժերն են կազմում, նրանք կարող են միրականօրէն խօսել իրենց արհամարհող կառավարութիւնների հետ... Ազգային գոյքերը պէտք է բաժնուին թշուառներին ու տնանկներին... Պէտք է ապահովել ընդհանուրի, ամբողջ ժողովրդի բարեկեցութիւնը...

„Ճեղափոխութիւնը կատարել է կառավարութեան մէջ. նա չի անցել հասարակական (անտեսական) յարաբերութիւնների մէջ: Կառավարութիւնը հիմնուած է ազատութեան վրայ. իսկ հասարակական յարաբերութիւնները— ազնւականութեան վրայ“...

Ահա թէ ինչպիսի մտքեր էին ծանուցւում ռօբեսպիէռեան մանիֆէստի մէջ: Եւ նա ունեցաւ ահագին շառաչում: Տպաւորութիւնը ժողովրդային ընդարձակ խաւերի վրայ՝ վերին աստիճանի նպաստաւոր էր: Յամակավարական ռէֆօրմների հեռապատկերը նոր թափ հաղորդեց ժողովրդին, ածեց նրա վստահութիւնը դէպի Ռօբեսպիէռը: Եւ վերջինս քաջալերուած հանրային տրա-

մադրու.թեան այդ վերելքից, շտապեց յախուռն հարւածներով վերջ տալ հակառակորդ հաւաճների գոյութեան։

Հագաւ դիքտատօրի կարմրավառ շապիկը և հնձեց ու հնձեց...

Գիյօտինի տակ նետուեցին Հէբերտ ու իր համախոհները, „կատղածները“. ապա հերթը հասաւ Դանտօնին և իր բազմաթիւ կողմնակիցներին (1794 թ. ապրիլ 5)...

Կիրքը՝ հզօր ու ժոլեգին, յարաճուն ու յարաբորբոք՝ միշտ աւելի կուրացրեց ժողովրդական առաջնորդին... Ընկե՞լ էր նա մի ահարկու և չարաշուք գառիվայր, ուսկից թափով ու գահավէժ սլանում էր, ժահւան անարգ գործիքը շալակած... Ռօբեսպիէռը, մի վայրենի ատելութեամբ համակուելով – ատելութիւն դէպի ժողովրդի ու ցեղափոխութեան բոլոր յայտնի և անյայտ, իրական ու երեւակայական ոսոխները — Ռօբեսպիէռը կորցնում էր օր աւուր իր սոցիկեան համբերութիւնը, իր երբեմնի պաղ, զգաստ, հաւասարակշիռ ընթացքը, նա հետզհետէ տարւում էր մի զարհուրելի, աշխարհասասան վրէժխնդրութեամբ, նա հետզհետէ արբում էր իր կուսակցական և անձնական հակառակորդների արիւնով, նա սրարշաւ նետուում էր դէպի կարմիր, անհաշիւ և խելագար ոճիրների անդունդը... Ա.յդտեղ լծաղուեց և նրա համբքը, այդտեղ մարեց մէկէն ի մէկ նրա աստղը...

Գիյօտինը գործում էր գործում... Բայց միաժամանակ նա և փորում էր իր մեծագոյն սատարի, դիքտատօրի գերեզմանը, Դժգոհութիւնն ու ցասումը աճում էին Ռօբեսպիէռի դէմ՝ թէ ժողովրդի և թէ Ազգային ժողովի, *Convention*-ի մէջ, Անիծում էին, բայց և ակամայ հետևում Ատում էին ներքուստ, բայց և խոնարհւում, համակերպւում նրա դիւային հմայքը բռնակալօրեն տիրել էր բոլորին, Մի հմայք, որ հիւսւած

էր նաև դրական յատկութիւններից. Ռոբեսպիէռը, ինչպէս ասացինք, ահագին ժողովրդականութիւն էր նւաճել թէ իր խելքի ու խօսքի ուժով, թէ յեղափոխականմարտական ոեմպերամենտով և թէ բնաւորութեան անկաշառութեամբ, շիտակութեամբ ու պարզութեամբ։ Բայց բացասական, աշխարհաւեր յատկութիւնները օրըստօրէ գերակշռեցին, շեշտեցին և դրա դէմ բորբոքեց զօրաւոր ու անողոք հակազդեցութիւնը...

Խուլ, անվստահ որոտում էր ժողովրդական ցասումը, որ ի վերջոյ յորձանք տւեց և խեղդեց դաժան կամայապետին։ Ազգային ժողովը, վերջապէս, խլրտաց, հրապարակ իջան նաև Դանտօնի ու Հէբերտի կողմնակիցները և կազմակերպւեց դաւադրական մի խիտ ցանց յեղափոխական-քրմապետի դէմ։

Դաշնաժողովի զօրքերը մի օր պաշարեցին Ռոբեսպիէռի ու իրայիններրի միջնաբերդը և նոյն օրը - 1794 թ. յուլիս 28-ին—նրանց բոլորին էլ յանձնեցին գիլօտինին։ Հարիւրից աւելի ռոբեսպիէռականներ գլխատւեցին նոյն օրերում։

Դիքտատօրութիւնը խեղդւեց իր իսկ շղթայազերծած արեան հեղեղում։ Այդ սարսափելի տեսարանի առջև ամենից բուռն ծափ զարկողները „չափաւորներն“ էին, յետադէմները, միապետականները, բուրժուազական Թիրօնդը... Վերջինի յաւիտենական դաւերն էին, որ անդունդ գլորեցին Ցեղափոխութիւնը։ Դասակարգային անհաշտելի հակադրութիւններն էին, որ առաջ բերին միապետական ռէակցիան... Նա կը գար և այն դէպքում, եթէ չը լինէին Տերրօրի այդ բոլոր աւերածները, նա պիտի գար վաղ թէ ուշ, քանի որ ժողովուրդը, բուն աշխատաւոր ժողովուրդը, որի մոլեռանդ դրօշակակիրն էր Ռոբեսպիէռի կուսակցութիւնը, տակաւին հեռու էր ինքնաճանաչութիւնից՝ մանաւանդ Ֆրանսիայի

գաւառներում. իր ընդարձակ զանգուածներով նա չէր տակաւին հասունացած սոցիալական խորունկ բարեհնոդման պահանջների համար և դեռ դիւրութեամբ ենթարկւում էր հին կուռքերի ներշնչումներին։

Վերջացա՛ւ... Վարագոյրն իջաւ պատմութեան ամենամեծ, ամենաւսեմ դրամայի վրայ և սկսեցին նրա եռևում—այլ արարածներ... Ցորձանքը փոխեց իր ուղղութիւնը և ոլոր-մոլոր պտոյտներով, գահավիժումներով մօտեցաւ իր ակունքին, իր չուկէտին։

Ֆրանսիան նետուեց միապետական բէակցիայի գիրկը։ Բուրժուազիան, երրորդ դասակարգը, թերկրանքով դիմաւորեց այդ ռէակցիային, իսկ ժողովուրդը—յոգնած, ուժասպառ, արիւնաքամ — այլ ևս չը հակազդեց, չը դիմադրեց։

Միապետը դեռ չը կար, բայց բուրժուազիան—նախկին Թիրօնդի դասակարգը — այժմ արդէն միապետական էր։ Դարձաւ նա միապետական իր դասակարգային շահերից մղւած։ Փարեց նա ռէակցիային՝ իր յատուկ „իրաւունքները“ պաշտպանելու, ամրապնդելու նպատակով։

Ո՞րն էին այդ իրաւունքները։ Ա ե փ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը—նախ և առաջ։ Մասնաւոր սեփականութիւնը հողերի ու փողերի, շարժուն և անշարժ կալւածների, հարստութիւնների վրայ... Նա տեսաւ Յեղափոխութեան շրջանում, թէ որպիսի վտանգ էր սպառնում այդ „սրբազան“ իրաւունքներին։ Տեսաւ, թէ ինչպէս „հաւասարականները“, արմատական կարմիրները ուզում էին բռնագրաւել այդ բոլոր հարստութիւնները — ամենից առաջ հ ո ղ ը—և բաժանել հաւասարապէս աշխատաւոր ժողովրդին։ Բուրժուազիան չէր կարող տանել այդպիսի „ոտնձգութիւնները“, նա իր ամբողջ դասակարգային

էութեամբ դէմ էր հաւասարութեան, թէպէտ և այդ բառը նա ունէր միշտ իր շրթնեերի վրայ, թէպէտ և բարձրաձայն յայտարարել էր „հաւասարութի՛ւն, եղբայրութիւն“... Զարհուրած կոմմունիզմի ուրուականից՝ նա շտապեց ապաւինել „կարգի“ ու խաղաղութեան դրօշակին—թէկուզ նոյնիսկ միապետութեան հովանու տակ—հարկաւ, այնպիսի միապետութեան, որ կը յենուէր գլխաւորապէս բուրժուազիայի վրայ, որ այլ ևս չէր ոտնահարի նրա տարրական իրաւունքները, նրա ազատ, անկաշկանդ զարգացումն ու բարգաւաճումը, ինչպէս անում էր նախկին աւատական - կղերական բռնապետութիւնը։

Երրորդ դասակարգը միահեծան տէր դարձաւ հրապարակին, մինչ չորրորդը — աշխատաւորութիւնը — վերստին խորասուզուեց կրածութեան, թշուառութեան անդունդներում..

Եւ դերերը փոխուեցին։ Ցերրօրի խարազանը ուղղուեց այժմ իր նախկին հրամանատարների, յեղափոխականների դէմ։ Փիյօտինը սկսեց գործել — այժմ արդէն ռեակցիայի ձեռքում.. Ի՛նչ ահարկու վրիժառութիւն։ Սկսեց մի կատարեալ որսախուճապ։ Փակուեցին բոլոր կլուբները, դատի կոչուեցին ու գլխատուեցին բոլոր նախկին „տերրօրիստները“, ոչնչացան բոլոր գաղտնի ընկերութիւնները։

Քաջալերուեց և արթնացաւ արքայական կուսակցութիւնը, որ սկսեց իր կողմից ևս՝ որսալ ժակօբիններին, „պատրիօտներին“։ Զինուորագրուեց այդ կուսակցութեան շարքերի մէջ բուրժուածագում, „ոսկեզօծ“ երիտասարդութիւնը—„*la jeunesse dorée*“... Եւ արդէն 1795-ի աշնան օրերում Պարիզի պատերի վրայ փակցուում էին „ազդեր“, որոնց մէջ հնչում էր արքայականների մարտահրաւէրը. „Ֆրանսիական ժողո-

վո՞ւրդ, վերադարձիր քո կրօնին, ընդունիր վերստին քո թագաւորին, և այն ժամանակ դու կունենաս խաղաղութիւն և հաց“...

Ազգային Դաշնաժողովը դեռ արտաքուստ հանրապետական էր, դեռ պաշտօնապէս մաքառում էր արքայական հովերի դէմ, բայց ներքուստ արդէն „մշակւած“ էր միապետական որոմով։ 1795-ի հոկտեմբեր 26-ին, նա վերջ դրեց իր գոյութեան, տեղի տալով նոր Ազգային ժողովի (*Directoire*), զուտ բուրժուական կազմ ու դրոշմով։ Դիրեկտուարը փոխանցման շրջան եղաւ հանրապետութիւնից — դէպի կայսրութիւն։

Ռեակցիայի ալիքը բարձրացաւ շարունակ։ Ժողովուրդը այնուհետև դեռ խլրտաց մերթ ընդ մերթ, Պարիզի արուարձանները մի քանի անգամ դեռ շարժւեցին՝ միապետական վտանգի և վերահաս սովի ու մասսային թշւառութեան վայրկեաններում. շարժւեցին, պահանջելով վերականգնել 1793-ի սահմանադրութիւնը, որ ապահովում էր տնանկների, թշւառների հ ա ց ը։ Բայց դրանք թոյլ, օրհասական երերումներ էին, գրեթէ հոգեվարքի ջղաձգութիւններ...

Ռեակցիան աստիճանաբար աճելով, յանգեց ի վերջոյ իր անխուսափելի, տրամաբանական վախճանին։ Դիրեկտուարը չորս տարւայ գործունէութիւնից յետոյ, մի գեղեցիկ օր (1799 թ. նոյեմբեր 9) յայտարարւեց փակւած... պետական մի հարւածով։ Այդ հարւածի նիւթողն էր երբեմն անյայտ մի զինւորական, որ առաջ գալով ամենահամեստ ծագումից, իր անսովոր յանդգնութեան և անսովոր ռազմական հմտութիւնների շնորհիւ, բարձրացել էր քայլ առ քայլ պատերազմների ու փայլուն յաղթութիւնների կրկէսում և վաստակել էր ահագին ժողովրդականութիւն բանակի մէջ։ Այդ վերջինի վրայ յենւած՝ նա կատարեց 1799-ի *coup d'état*-ն,

վերացրեց ժողովրդական ներկայացուցչությունը և հաստատեց քաղաքական կազմակերպության մի նոր ձև— կոնսուլատ—ուր նա դարձավ առաջին հրամանատարը, կոնսուլը: Նոյն բանակի վրայ յենւած և հետզհետէ նւաճելով բուրժուազիայի վստահութիւնը, նա մի քանի տարի յետոյ, 1904-ի մայիսին, նիւթեց մի նոր հարւած, հրատարակեց ինքզինքը... Թագաւոր-կայսր: Նրա անունն էր Նապոլէոն Բոնապարտ:

***

Ընկճեց նորէն դիւցազնական հայրենիքը միապետական խարազանի տակ, ճկեց նորէն իր հպարտ պարանոցը սև, բռնաւոր ուժերի առաջ. բացեց շուտով նապոլէոնեան պատերազմների արհաւրալի շրջանը, մի անսահման մարտադաշտ, մի վիթխարի, արիւնաներկ գերեզմանոց, ուր Ֆրանսիան թողեց գարձեալ հինգ միլիոն դիակ...

Ի՜նչ անողորմ փորձութիւն... Եւ տակաւին վերջինը չէր: Փորձութիւններ ու արհաւիրքներ դեռ շատ կրեց այդ եզակի ժողովուրդը. ամբողջ XIX դարը լցւեց նրա „հաւ՜րով" ու առնական թռիչքներով, յաղթութեան ու բերկրանքի ճիչերով, պարտութեան ու հոգեվարքի հռնդիւններով: Երեսուն տարի յետոյ նա նորէն պիտի թնդացնէր աշխարհը իր „Յուլիսեան հարւածով", և նորէն պիտի ընկճւէր Յուլիսեան միապետութեան տակ: Այնուհետև 18 տարի անց՝ նա նորէն պիտի թափ տար ռօբեսպիէռեան գլուխը և պիտի հաստատէր երկրորդ հանրապետութիւնը (1848 թ.): Բայց և շուտով վերստին պիտի տապալւէր ու պիտի տնքար քսան տարի շարունակ մի ուրիշ բռնաւորի, Նապոլէոն III-ի լծի տակ: Բայց քսան տարի ևս անց —

նա արդէն յաղթական էր, անպարտելի—թէկուզ և մի անլուր, օրհասական վայրկեանի մէջ, բիւամարկեան ձեռքերով բացուած խորխորատում—նա արդէն հաստատում էր բռնակալութեան փլատակների վրայ իր երրորդ հանրապետութիւնը (1871 թ.), որ այսօր 40 տարեայ շէն, բարգաւաճ կեանք ունի, որ ընթանում է կուռ ու անսասան՝ էւօլիւցիայի ու պայքարի ճանապարհով և որ ոչ մի ուժ չի կարող այլ ևս յաղթահարել, խորտակել:

Ա՛հ, էւօլիւցիայի ճանապարհը... Ամեն տեղ է նա տոգորուած արեան ու արտասուքի հեղեղներով, բայց կան մի քանի ժողովուրդներ, որոնք իրենց պատմական ճակատագրի զօրութեամբ՝ առանձնապէս մթերել ու խտացրել են իրենց ծոցում տիեզերական տառապանքը, քաժել են մինչև վերջ դառնութեան ու յուսահատութեան բաժակը...

Ֆրանսիական մեծ Յեղափոխութիւնը սայթաքեց և ընկաւ նապոլէօնեան բռնապետութեան գիրկը: Ասե՞լ արդեօք, որ նա ապարդիւն, անօգուտ եղաւ, — սոսկ աւերիչ հրաբխային մի կատակլիզմ, սոսկ մարդկային արիւնի մի խելագար շռայլում...

Ապարդի՞ւն — հերոսութեան ու անձնուրացութեան այդ տիտանեան թռիչքները:

Անօգո՞ւտ — մարդկային պայծառ ու ազատարար իմացականութեան այդ հոյակապ ժեստերը—Սահմանադիր ժողովի մէջ, Օրէնսդիր և Դաշնադիր ժողովի մէջ...

Այդպէս այսօր տրամաբանում է բուրժուազիական ամբոխը միայն, այդ „բարեկիրթ“, „աստուածավախ“ ու արիւնավախ ամբոխը, որ մի անհնարին գարշանք է տածում դէպի այն բոլոր յեղափոխութիւնները, որոնք գալիս են վտանգելու իր սրբազան շահերը: Այդպէս

այսօր տրամաբանում են — կղերական ու ազնւական իդէօլօգների հետ — նոյն բուրժուազիայի գիտնականներն ու փիլիսոփաները, որ նզովք ու անէծք են թափում Յեղափոխութեան վրայ, քարկոծում են ոչ միայն Ռօբեսպիէռներին ու Դանտոններին, այլ և նրանց հոգևոր վարիչներին, Ռուսսոներին։

Այդպէս, սակայն, չի տրամաբանում ազատ, շիտակ, աննախապաշար միտքը։ Ֆրանսիական Յեղափոխութիւնը, չը նայեած իր աղէտալի ծայրայեղութիւններին ու վրիպումներին, կը մնայ միշտ պատմութեան ամենահոյակապ, ամենապանծալի կոթողը։ Նա կը մնայ այդպիսին՝ իր ներքին պարունակութեամբ, իր ծանուցած սկզբունքներով, իր մշակած հասարակական ռէֆօրմների ծրագիրներով։

Որքա՜ն ճոխ ու այլազան պարունակութիւն։ Չը կայ մի հարց, որին այսպէս թէ այնպէս մօտեցած չը լինի յեղափոխական պարլամենտը։ Նորագոյն քաղաքական ու սոցիալական կեանքի գրեթէ բոլոր ծանրակշիռ ու ցաւոտ պրօբլեմները ծեծուել են նրանում, փոթորկոտ վիճաբանութիւնների մէջ՝ 1789—95-ի Ազգային ժողովների և մանաւանդ Դաշնաժողովի մէջ... Վէճեր, ծրագիրներ, սկզբունքային աղդարարութիւններ, որոնք այո՛, վրիժեցին ռէակցիայի մահաշունչ օրերում, բայց միանգամայն չ'անհետացան հօրիզօնից, այլ ապրեցին, յարատևեցին ամենավաւեր հասուածների գիտակցութեան մէջ և ունեցան անհաշիւ անդրադարձումներ յետագայում։ Յեղափոխութեան կրթիչ, դաստիարակիչ արժէքը հսկայական է։

Դեռ հնչում է իւրաքանչիւր Ֆրանսիացու — և մի՞թէ միայն Ֆրանսիացու — ականջներին՝ Մօնտայնի ահեղ մեղադրանքը, ուղղուած բուրժուական Ժիրօնդի հասցէին.

„Դուք ուզում էք ազատութիւն առանց հաւասարութեան, իսկ մենք պահանջում ենք այդ հաւասարութիւնը, որովհետև առանց նրան՝ մենք չենք կարող ըմբռնել ազատութիւն... Դուք պետական մարդիկ էք և ուզում էք կազմակերպել հանրապետութիւն հարուստների համար, իսկ մենք որ պետական մարդիկ չենք—մենք փնտրում ենք օրէնքներ, որոնք կարողանան դուրս բերել չքաւորին իր թշուառութիւնից և բերել բոլոր քաղաքացիներին երջանկութիւն, ընդհանուր դիւրակեցութիւն“ *)... Եւ ի պատասխան այդ բոլոր „պրօլետարական“, աշխատաւորական պահանջներին՝ Ժիրօնդը իր վեհափառ, բուրժուազական բարձրութիւնից հոլովում էր անփոփոխ նշանաբանը.

— „Սեփականութիւնը սուրբ է, անձեռնմխելի“։

Ընդհանուր դիւրակեցութիւն (*aisance universelle*)... Ա յդ բնորոշ արտայայտութիւնն է, որ կրկնւում է յաճախ այն ժամանակւայ արմատական շրջաններում. դեռ էլ կայ սոցիալիզմի, կոմմունիզմի տերմինօլոգիան, կեանքը դիւրին կացուցանել իւրաքանչիւր մարդ-էակի համար—այդ փոքր ինչ անորոշ դարձւածով էր ծանուցւում այն ժամանակւայ սոցիալիզմը, ընկերավարութիւնը։ Բայց իր բոլոր անորոշութեամբ՝ այդ դարձւածն ևս չափազանց պերճախօս է։ Յեղափոխութիւնից յետոյ, արդարև, երրորդ դասակարգը, բուրժուազիան, լողում էր ծովածաւալ հարստութեան ու շուքի մէջ, կապիտալները աճում էին, ամբարւում և նրանց հետ աճում էին սանձարձակ խրախճանքները... Մինչդեռ ժողովուրդը, որ տարել էր իր ուսերի վրայ շարժման ամբողջ ծանրութիւնը և տապակւել Յեղափոխութեան բուրայում,

---

*) *P. Kropotkine: La Grande Révolution*, եր. 473։

ժողովուրդը, որ անբաւ զոհեր էր մատուցել բռնապետական Մողոքին, խորասուզուած էր սև, անպատիւ թշուառութեան մէջ — թշուառութիւն, որ մի առանձին, ողբերգական բնոյթ էր առել ցեղափոխութեան տագնապալի թուականներուն, շնորհիւ սովի համաճարակին... Կղերի ու ազնուականութեան լայնածաւալ հողերը, ճիշտ է, խլուել էին և հռչակուել համազգային սեփականութիւն. պետութիւնը գրաւել էր նրանց, բայց և ծախել էր մեծագոյն մասը՝ նոյն բուրժուազիային, կապիտալիստներին...

Ա՛յո՛, դեռ հնչում է — սոցիալիստական մարտակոչի պէս — Ռօբեսպիէռի բացականչութիւնը բուրժուազական հանրապետութեան դէմ.

„Մի յեղափոխութիւն, որ նպատակ չունի խորապէս բարելաւելու ժողովրդի կացութիւնը, — ոճիր է, փոխարինող մի այլ ոճրի“...

Թագաւորին ոչնչացնելուց յետոյ, այդ յանդուգն ռամկավարականները ձգտում էին „հաւասարացնել գոյքերը“ (*niveller les fortunes* — դարձեալ այն ժամանակւայ մի բնորոշ արտայայտութիւն է), սանձ դնել կապիտալի, հարստութեան կենտրոնացման, ջնջել խոշոր հողային ու փողային սեփականութիւնները, իսպառ ջնջել ֆէօդալական ամեն տեսակ իրաւունքները և հողը վերադարձնել աշխատաւոր համայնքներին։ Սա ինքնին մի հոյակապ յղացումն է։

„Երկար ժամանակից ի վեր — խօսում էր մի այլ ձայն Դաշնաժողովի մրրկածուփ նիստերում, ժիրօնդի դժկամ ու զայրագնոտ ժեստերի մէջ — երկար ժամանակից ի վեր սպասւում է առիթը՝ օգնելու հասարակութեան մի սուր ու հետաքրքրական հատուածի։ Վերջին երեք տարւայ յեղափոխութիւնները ամեն բան արին ի նպաստ միւս դասակարգերի,

բայց դեռ ոչինչ չէր ձեռնարկւեց մի դասակարգի համար, որ թերևս անհրաժեշտագոյնն է, պրօլետար-քաղաքացիների համար, որոնց միակ սեփականութիւնը աշխատանքի մէջ է..

„Աւատականութիւնը ջնջւած է, բայց դա նրանց համար չէ—քանի որ նրանք ոչինչ չունին՝ ազատագրւած դաշտերում։

„Տուրքերը այժմ աւելի արդարութեամբ են բաշխւած, բայց նրանք իրենց էքսւորութեան պատճառով իսկ՝ գրեթէ անկարող են տուրք վճարել. թեթևացումը գրեթէ անզգալի է նրանց համար։

„Քաղաքացիական հաւասարութիւն է սահմանւած, բայց նրանց, այդ պրօլետարներին, պակասում է կրթութիւն ու գաստիարակութիւն։ Նրանք կրում են ամբողջ ծանրութիւնը քաղաքացու տիտղոսի, բայց ունի՞ն նրանք կարողութիւն արժանանալու քաղաքացիական պատիւներին“ *)...

Լեպելլետիէի նշանաւոր զեկուցումն էր դա, ներկայացւած Դաշնաժողովին Ռօբեսպիէռի բերանով, 1793 թ. յուլիս 13-ին։ Ահա պակաս ուշագրաւ են այդ ընդարձակ զեկուցման մեւս կէտերը, որ շօշափում են մի այլ ծանրակշիռ սօցիալական հարց—կրթութեան հարցը (նոյնպէս ընդունւած Դաշնաժողովում).

„Ես առաջարկում եմ հրովարտակել, որ մանուկները 5 տարեկանից մինչև 12 և աղջիկները 5-ից մինչև 11-ը—բոլոր երեխաները, առանց խտրութեան ու բացառութեան, կրթւին միատեղ, հանրապետութեան ծախքով, և որ բոլորն էլ,

*) *Jean Jaurès: Histoire Socialiste, la Convention*, եր. 1484։

հաւասարութեան մասին օրէնքի տակ, ստանան միևնոյն հպումն ու անունդը, միևնոյն կրթութիւնն ու խնամքը" *),

Եւ Լոպելլոիէ պահանջում էր այնպէս տեղաւորել կրթական տուրքի սխեմայի, որ գրեթէ ամբողջ ծանրութիւնը ընկնէր հարուստների վրայ:

„Այդպիսով դուք կը վաստակէք այն առաւելութիւնները, որ տալիս է պրօգրեսսիվ տուրքը. այդպիսով, առանց ցնցումի ու անիրաւութեան, դուք կը ջնջէք գոյքի ահագին տարբերութիւնները, որոնց գոյութիւնը մի հանրային ախտ է",

„Բոլոր երեխաները պիտի վայելեն հանրային կրթութեան բարիքները եօթ տարեայ ժամանակամիջոցում, 5-ից մինչև 12 տարեկան: Կեանքի այդ շրջանը իրօք վճռական է՝ մարդու ֆիզիկական ու բարոյական կազմաւորման համար.. Մինչև 5 տարեկանը—ծնողների խնամքի տակ: Այդ հասակում հայրենիքը պիտի ստանայ մանուկին բնութեան ձեռքից, և 12 տարեկանում պիտի յանձնէ այն—հասարակութեան:

Դպրո՛ցը — հանրապետութեան նիւրական ու գերագոյն տաճարը: Դպրո՛ցը — քաղաքացիական բոլոր վեհ առաքինութիւնների արծարծողն ու պատւաստողը... Եւ Լոպելլոիէ — ինքը մեծատան մի զաւակ, մեկը այն զդաստ և շիտակ հոգիներից, որ փոխարինը բռնելուն պէս աճապարեց ցեղափոխութեան բանակն անցնել և տեղի չնշտելու իրենց անիրաւ դասակարգային առանձնաշնորհումներըը—Լոպելլոիէ առաջարկում էր դպրոցական շէնքեր դարձնել ֆէօդալական փառահեղ ապա-

---

*) Նոյն դիրքը, եր. 1476:

րանքները, կրօնական միաբանութեանց ու գաղթական դաւաճանների սեփականութիւն-տները։

„Եւ ես կուզէի, որ առ իջգոյէ դպրոցական պատշաճ շէնքերի, աւատականութեան հինաւուրց բերդերը բացէին այդ հրապուրիչ առաքելութեան համար։ Բոլոր ծայրերից լսւում է տրտունջ ու բողոք՝ այդ դղեակների ու աշտարակների դէմ, որ քստմնելի յուշարձաններ են ճնշման, հարստահարութեան։ Չը քանդե՛նք նրանց, այլ տանք օգտակար գործադրութիւն նրանց հնադարեան կամարներին“ *)...

Տեսե՛ք դեռ, ինչ ահարկու մտքեր էին յայտարարում—նոյն մեծագործ, անմոռանալի Դաշնաժողովում—կրթութեան ընդհանուր խարիսխների, „Թէօրիայի“ մասին։ Ականջ դրէք Դիւկօին.

„Հանրային կրթութեան առաջին պայմանն է՝ աւանդել մ ի մ ի ա յ ն ճշմարտութիւնները—և սա մահուան դատավճիռ է կղերին“։

Դրանով պատերազմ էր հրատարակւում կրօնի բոլոր նախապաշարումներին ու հռչակւում էր ազատ միտքը, միահեծան գիտութիւնն ու բ ա ն ա կ ա ն ո ւ թ իւ ն ը։

Ականջ դրէք Դիւպօնին (մի այլ անգամ նոյն ազգային Դաշնաժողովի).

„Ի՛նչ. գահերը կործանուած են, արքայական գաւազանները փշրուած, թագաւորները հոգեվարքի մէջ, իսկ աստուածների սեղանները դեռ կանգո՞ւն... Այնտեղ, այդ սեղանների վրայ՝ ազգն անարգող տիրանները խունկ են ծխում ամպարիշտ (տրտունջներ մի քանի կղերականների կողմից, ծափահարութիւններ ժողովի ահագին մեծամասնութեան նստարաններից)... Աստուածը բանականութեան մի շունչ միայն բաւական է չքացնելու նրանց։

*) J. Jaurès, նոյն գիրքը, եր. 1476—79։

„Հայրենիքի՛ սեղաններ“ ու խորաններ, „Ազատութեա՛ն էմբլէմներ ու խորհրդանշաններ“ — ահա թէ ինչով պիտի ձգտել հիմնելու և ամրապնդելու Հանրապետութիւնը։ „Բնութիւն և բանականութիւն — ահա մարդու աստուածները, ահաւասիկ մեր աստուածները“ (*la nature et la raison, voilà les dieux de l'homme, voilà nos dieux*)...

Դիւպօնի բերնով խօսում էր XVIII դարի բնապաշտ ու բանապաշտ, բասիօնալիստ փիլիսոփայութիւնը։ Քիչ չէին լսում նման ճառերը Ազգային Պարլամենտում. ի՞նչ խօսք՝ որ նրանք հնչում էին ոմանց համար, որպէս անլուր գայթակղութիւն. սակաւաթիւ քահանաներն ու եպիսկոպոսները չէին հանդուրժում և ցուցաբար ձևով ու կատաղած դուրս էին փախչում ժողովից...

„Աքանչացէ՛ք բնութեամբ և մշակեցէք բանականութիւնը—շարունակում է Դիւպօն. և դուք, օրէնսդիրներ, եթէ ուզում էք, որ ֆրանսիական ժողովուրդը լինի երջանիկ, շտապեցէք տարածել այս սկզբունքները և աւանդել տալ ձեր նախանական դպրոցներում... Հասել է կատաստրոֆի վայրկեանը, բոլոր նախապաշարումները պիտի տապալուին մի ժամանակ. կամ պէ՛տք է խորտակել նրանց կամ թէ պէտք է մեռնք իններս խորտակուինք նրանց տակ։ Օգոստոս 10-ից մինչև յունուար առաջինը (1793 թ.) պիտի կըտրեն արիաբար և համարձակ մի քանի դարի տարածութիւն։ Ուզու Դանտօն ասում էր մեզ խղճալիօրէն անցեալ օր, թէ ժողովուրդը պէտք ունի քահանայի՝ իր վերջին շունչը աւանդելու համար... Ես պիտի խոստովանիմ Դաշնաժողովին, որ ես ինքս աթէիստ եմ (ժխոր. բազմաթիւ անդամներ գոչում են

հռետորին. „փո՛ղթ չէ, բառական է, որ ազնիւ մարդ էք“), և թո՛ղ Ֆրանսիայի 25 միլիօն անհատների կողմից մէկն ու մէկը կարողանայ ուղղել ինձ այդ առթիւ մի հիմնաւոր մեղադրանք“ *):

Քաղաքական ազատութեան հետ — մտաւոր և հոգևոր ազատութիւն... Մինը առանց միւսի թերի է, հաշմանդամ։ Երբ քաղաքացիների միտքն ու հոգին շղթայուած է բիւրատոր կրօնասուն նախապաշարումներով, նրանք չեն կարող բաղձալի կիրառուծի տալ իրենց քաղաքական իրաւունքներին, նրանք ազատ չեն։ Սակայն Դիւպօնների փրկարար դեղատոմսերը, տարրաբախտաբար, վաղաժամ եղան, մեծ զանգուածները — կորացած տակաւին ֆէտիշների, կուռքերի բռնակալ տիրապետութեան տակ — անպատրաստ էին որդեգրելու, մարսելու Ազատ Մտքի այդ խրոխտ պատգամները...

Այնուամենայնիւ, նրանց յայտարարուծն ևս ինքնին արդէն պատմական, անջնջելի մի կէտ էր։ Նրանց հանդիսաւոր արծարծումը Ազգային Ժողովում, այն պատկառոտ ուշադրութիւնը և այն որոտուն ծափերը, որով նրանք ընդունւում էին պատգամաւորների մեծամասնութեան կողմից — այդ բոլորը կազմում է ցեղախոհութեան անզուգական փառքը, և անցնելով ֆրանսիական երկրի սահմաններից, դառնում է ընդհանուր, համամարդկային սեփականութիւն։ Սերմե՛ր էին դրանք տիեզերական գալոց ազատութեան ու բարգաւաճման, որ հողմերը տարան այնուհետև սփռեցին աշխարհի բոլոր ծայրերում, և որ կամաց-կամաց հասունանալով, զարգանալով, պիտի ծնունդ տան իւ վերջոյ ճշմարիտ, իդէալական մարդկութեան...

Ահա և կլօդցը ամբիոնի վրայ։ Մի ուրիշ „հեղթ“

---

*) *J. Jaurès: La Convention*, եր. 1472։

մարգարէ, մի այլ «Էնաշխարհիկ» պատգամախօս նա կարդում է իր մանիֆէստը մարդկային ցեղի վեհապետութեան և երկրագնդի միօրինակ քաղաքական կազմակերպութեան մասին... Ձէ՞, Ցեղափոխութիւնը հռչակել էր բոլոր ապգերին, որպէս ազատ, իրաւահաւասար անդամներ, անբաժանելի օրգաններ նոյն մարդկութեան։ Անախարսիս Կլոդց թեպլադրում էր ձուլել բոլոր ժողովուրդներին իմի անբաժան Մարդկային Հանրապետութիւն, որի մէջ ներկայ ազգութիւնները պիտի կազմէին մի մի սէկցիօն, հատուած կամ նահանգ։

Արքա՛ն արտատոց, բարձրասլաց երազներ և ի՛նչ վսեմ յղացում... Եւ այդ՝ այն ժամանակ, երբ ամբողջ Եւրոպան, բոլոր քաղաքակրթ ազգութիւնները, իրենց պաշտօնական ներկայացուցիչների ու բանակների, մի կատաղի ատելութեամբ լցուած, գրոհ էին տալիս Ֆրանսիայի դէմ, խեղդելու, յօշոտելու ախորժակով...

Ազատ Դաշնակցութիւն—ազատ ու ինքնօրհ ժողովուրդների.. Ազատագրուած Ֆրանսիան իր մարդկային առիպողական պարտքն էր սեպում՝ ազատագրելու և բոլոր միւս ժողովուրդներին, որ հեծում էին թագաւորների ու ֆէօդալների լծի տակ։ Ստրկութեան ու թշուառութեան համատարած մառախուղի մէջ, ատելութեան շղթայազերծ բռնկումների և միջազգային արիւնահեղ բախումների վրայից՝ ազատ Ֆրանսիայի լուսապայծառ ու վեհանձն միտքը ընդնշմարում էր միասնական և ներդաշնակ Ցիեզերքը, տեսնում էր մարդկութիւնը, միացած, վերամկրտուած Սիրոյ և եղբայրութեան մաքրագործող աւազանում..

Սահմանները չքացա՛ծ ազգերի, ցեղերի մէջ, վերացա՛ծ կրօնական ու դաւանական խտրութիւնների աղջամուղջը, խորտակա՛ծ նախապաշարումների ու սնապաշ-

տութիւնների արիւնապանգ լեռը և մարդիկ — բոլո՛ր մարդիկ — և ազգերը — բոլո՛ր ազգերը — թև թևի, գրկախառնուած նոյն վեհափառ դրօշակի տակ, Բնութեան, Աշխատանքի և Խաղաղութեան սրբազնագոյն պաշտամունքի մէջ...

Ժամանակակից Սոցիալիզմի իդէալն է դա։ Եւ նա արդէն ծանուցուած էր դարձեալ նոյն Ֆրանսիական Յեղափոխութեան մրրկաշունչ օրերուն։

Ահա ընդհանուր գծերով — այդ մեծ „Կատաստրոֆի“ պատմական ու տիեզերական արժէքը, նրա ծաւալն ու հասցէները։ Ահա և պատասխանը այն յոռետես և աչառու քննադատներին, որոնք ուզում են սուեր ձգել պատմութեան այդ արիւնավառ դրւագի վրայ, նսեմացնել ու գռեհկացնել նրա գլխաւոր դերակատարներին ու առհվիրաններին։

Ահագին է մեծ Յեղափոխութեան դաստիարակիչ նշանակութիւնը։ Բայց մի՛միայն այդ չէ։ Կայ մի այլ բան։ Հանրապետութիւնը տապալելով և բռնապետեան միապետական ուժերը հաստատելով՝ միանգամայն չը վերականգնից հին, նախայեղափոխական կարգուսարքը։ Նա այլ ևս անհնարին էր, անվերականգնելի։ Անհնարին՝ որովհետև զգայի չեղաշրջումն էր կատարել ժողովրդի, աշխատաւոր զանգուածների հոգեբանութեան մէջ։ Նրանք հասել էին գիտակցութեան որոշ աստիճանի, ճաշակել էին յեղափոխական վերիվայրումների բարերար հետևանքները, վերացրել էին հօրիզոնից անկշռում ազրուկները, հողն արդէն անցել էր զանգուածների ձեռքը և նրանք այլ ևս դիւրութեամբ չէին հաշտւի Լուդովիկեան աստուածապետական իշխանութեան հետ, չէին հանդուրժի, որ ֆէօդալիզմը, աւատականութիւնը, կղերի հետ ձեռք ձեռքի տուած, վերադառնար

դէպի դաշտերը և վերսկսէր իր անգութ ու վայրենի շահատակութիւնները... Փոխուել էր աշխատաւոր գիւղացիութեան տնտեսական վիճակը, բարձրացել էր նրա արդիւնաբերութեան սլացքը և նրա նիւթական բարօրութեան մակարդակը։ Հունձն առա՜ծ դաշտերում, հողագործութեան ճանապարհները հարթուած, անտառները մաքրուած ու մշակուած, աշխատանքը՝ անկաշկանդ, եռուն, արդիւնաւոր... Այո՛ն, անշուշտ, դեռ իշխում էր մի քանի նահանգներում, բայց ընդհանուր առմամբ՝ Ֆրանսիան այլ ևս այն չէր, ինչ որ էր Յեղափոխութիւնից առաջ. և շատ չ՚անցած նա դարձաւ, իր արտադրելու կարողութեամբ, Եւրոպայի ամենահարուստ երկիրը, չը նայած իր ազէտալի ձախորդութիւններին և անընդհատ արիւնաւորումներին։ Չը լինէր այդ հանգամանքը, չը լինէր այդ համեմատական բարգաւաճումը՝ Ֆրանսիան չէր էլ կարող տանել իր ուսերի վրայ Յեղափոխութեան պատերազմների հսկայական բեռը և մանաւանդ այն պատերազմները, որ յետոյ շղթայազերծց Բօնապարտ։

Փոխուել էր տնտեսութիւնը, փոխուել էր մանաւանդ մասսային գիտակցութիւնը։ Ի՞նչ էր գիւղացին Յեղափոխութիւնից առաջ։ Թշուառ, խղճալի մի էակ, ստրկօրէն կորացած ֆէօդալների մարակի տակ։ Լքուած, հալածական, բոլոր մարդկային իրաւունքները ցինիկօրէն ոտնահարուած... Յիշեցէք միջնադարեան ճորտի պարտաւորութիւնները։ Յիշեցէք ֆէօդալ-բռնապետին, որ ստիպում էր իր ճորտերին գիշեր-ցերեկ դագանակներով ծեծել ջուրը իր շրջապատի ճահիճներում, որպէս զի գորտերը աղմուկ չը հանէին և չը խռովէին իր, ապնակա՜ն-աղայի քունն ու անդորրութիւնը արբայական իր դղեակում... Այդպէս էին բարքերը նախայեղափոխական Ֆրանսիայում. անպատմելի էին բազմամիլիոն գիւղա-

ցիւրեթեան զրկանքները, նրա նիւթական ու բարոյական թշուառութիւնը։

Պատկերը փոխւել էր այժմ։ Ի՜նչ. այնքան արիւնոտ և հոյակապ ըմբոստացումները ճնշին ապարդի՞ւն։ դղեակների ու վանքերի հրդեհում, ֆէօդալների ժամանակային խուճապ ու փախուստ, հողերի և բոլոր հարստութիւնների բռնագրաւում ու ազգայնացում — այդ բոլորը էէր կարող անցնել անհետ և անյուշ գիւղացիական գիտակցութեան մէջ։ Հողը այժմ իրաւապէս և իրապէս նրանն է և նա ուզում է պինդ պահել այն, նա այլևս ստրուկ չէ, այլ ըմբոստ իր վաղեմի կեղեքիչների հանդէպ, նրա կորացած իրանը այժմ արդէն շտկւել է, նրա պապանձւած լեզուն բացւել և նա համարձակ խօսում է, բողոքում...

Այո, անշուշտ, „հին ռէժիմը“ յաւէտ, անդարձ պատմութեան գիրկն էր անցել. աղնւականութեան տիրապետութիւնը միանգամ՝ ընդմիշտ խորտակւել էր. ոչ Բօնապարտը, ոչ էլ յետոյ Բուրբօնները կարողացան վերականգնել այն *)։

Պատարւել էր դասակարգային յարաբերութիւնների խորունկ յեղաշրջում։ Աղնւականութեան անկումից յետոյ, հրապարակին տիրել էր աւելի գործօն ու առաջադէմ՝ երրորդ դասակարգը, բուրժուազիան. և այդ փաստը ինքնին արդէն մի ահագին վաստակ էր, Յեղափոխութեան ամենագօրաւոր, արգասաւոր վաստակներից մինը։ Իշխանութեան այդ փոխադրումը մէկ դասակարգից դէպի միւսը՝

---

*) Ճորտութեան վերացումը Ֆրանսիական Յեղափոխութեան հարուածների ժողովով — վերացաւ հետզհետէ Իտալիայում, Սպանիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլուր։

կազմում է հէնց իւրաքանչիւր քաղաքական յեղափոխութեան էութիւնը։

Ահաւասիկ կապիտալիզմի — դրամատիրութեան — ազատ զարգացման շրջանը։ Խորտակելով ֆէօդալիզմի սահմանափակող, կաշկանդիչ կապանքները, բուրժուազիան լայն, անսովոր թռիչք հաղորդեց արդիւնագործութեան ու առևտրին, զարգացրեց հսկայական չափերով տեխնիկան, արհեստագիտութիւնը, զարգացրեց խոշոր մեքենային ճարտարարւեստը, ինդուստրիան, ծաւալացրեց նրա դրօշը ընդարձակ հօրիզոններում, միջազգային շուկաներում, միացրեց, ի մի ձուլեց երկրի տարբեր, միմեանց այն անջատ, կղզիացած հատւածները, ստեղծեց հնարաւորութիւնը նորագոյն պետական պետութիւնը, իր քաղաքական ազատութիւններով, պարլամենտական սիստեմով, մղում տւեց հանրային կրթութեան ու առաջադիմութեան, դուրս բերեց մի խօսքով հարիւրներիքը՝ միջնադարեան քաօսից ու խաւարից դէպի ազատ, քաղաքակիրթ նոր-դարը։

Այդտեղ — բուրժուազիայի և կապիտալիզմի դրական, աշխարհաշէն դերը։ Նրանք եղան ժամանակակից քաղաքակրթութեան զօրաւոր ահվիրաններ ու խթաններ — մի քաղաքակրթութեան, որ չը նայած իր խիտ ու ցաւատիպ տւեներին, անհունապէս բարձր է միջնադարից... Մարդիկ այլ ևս ստրուկներ չեն կամ ճորտեր, նրանք այլ ևս չեն կազմում ս ե փ ա կ ա ն ո ւ թ ի ւ ն այս կամ այն հզօրի, ֆէօդալի, կալւածատէր-ազգի. ստրկութեան ու ճորտութեան տեղ՝ թագաւորում է վ ա ր ձ ո ւ ա շ խ ա տ ա ն ք ի սիստեմը, որ դարձեալ անհունապէս բարձր է բոլոր նախորդ հասարակական սիստեմներից, ինչ տեսակէտով էլ որ նայինք — տնտեսական միջին բարեկեցութեա՞ն, մտաւոր ու հոգեկան

առաջադիմութեա՞ն, թէ ժարդկային տարրական արժանապատուութեան։

Մեծ յեղափոխութիւնը, վերջապէս, ծնունդ տուեց մի հոսանքի, որ դեռ շա՜տ թոյլ ու անորոշ յեղափոխութեան օրերում, պիտի աճէր այնուհետև անտիճան առ աստիճան, պիտի աճէր հէնց շնորհի կապիտալիզմի ու բուրժուազիայի անդադրում ու սրարշաւ առաջադիմութեան։ Դա սոցիալիզմի հոսանքն էր. դա պրօլետարիատի, սեփականազուրկ աշխատաւորութեան շարժումն էր։ Հակոտնեայ հոսանքն էր դա կապիտալիզմի, ինչպէս որ պրօլետարիատը հակոտնեայ կամ հակամարտ դասակարգն էր բուրժուազիայի։ Երկուսի բաղխումը արդէն տեսանք յեղափոխութեան շրջանում։ Մէկն արդէն—բուրժուազիան—վաղուց ի վեր կազմակերպուած ու պատրաստուած իր դասակարգային շահերի գիտակցութեամբ, իսկ միւսը դեռ նոր-նոր էր աշխարհ գալիս, իբրև ուրոյն դասակարգ, բայց նա իր խանձարուրի մէջ կրում էր արդէն ապագայ հսկայական փլթման սաղմերը։

Տեսնենք այժմ այդ նոր, ուրոյն հոսանքի—կօմմունիզմի կամ սոցիալիզմի—սկզբնաւորութիւնը, նախ քան անցնել ազգային և քաղաքական յեղափոխութիւնների շարանին, որ ալէկոծեց աւերակ դարը։

II

ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Առաջին սոցիալիստ բարոզիչները

Գրակիտուս Բաբեօֆ. — Դասակարգային պայքարի ազդարարումը. — «Հաւասարների» հրովարտակը. — Կոմմունիզմ եւ Terror. — Բարոզչի ճաճանչակութիւնը.—Մեծ ուտոպիստները. — Սէն-Սիմօն եւ իր դպրոցը. — Անճաճանչէն եւ Բազար. — Սոցիալիզմը իբրեւ ազանդ. — Շարլ Ֆուրիէ եւ ֆուրիէրիզմ. —

Դասակարգային ներհակութիւնները պատմութեան ամեն մի շրջանում՝ այս կամ այն ձեւով անդրադարձել են ժամանակի խորհող վերլուծող գլուխների մէջ։ Սկսած նախաքրիստոնէական ժամանակներից մինչեւ արդիւնաբերական զարգացման նորագոյն շրջանը՝ դասակարգերի անհաւասարութեան մեծ պրօբլեմը շարունակ զբաղեցրել է մարդկանց, եւ մեծ-նուն, պատկառելի դէմքեր — Պլատօն, Մարկ Օրէլիուս, Կամպանելլա, Թօմաս Մօօր, Ժան-Ժակ Ռուսսօ, Մօրելլի եւայլն — ամբողջ հասարակական սիստեմներ են յօրինել, որոնցով ձգտել են վերջ տալ աղաղակող անար-

գարուխիւններին, լուծել „երջանկութեան“ յաւիտենական առեղծուածը։

Սոցիալիզմը տասնեակ դարերի պատմութիւն ունի։ Բառը միշտ չը կար — գաղափարը միշտ կար։ Եւ այդ գաղափարի անունով վայրենի հալածանքներ են նիւթել, նահատակութեան խարոյկներ են բարձրացել...

Գաղափարական անհատները նահատակել են պատմութեան գոռ պայքարների ընթացքում՝ ժերթ հաւատի, կրօնի կամ խղճի ազատութեան համար, ժերթ քաղաքական, ժերթ սոցիալական հաւասարութեան համար։ Երեք կարգի գաղափարներին վիճակուած էր յաղթանակել աստիճանաբար, յաջորդաբար։ Խղճի ազատութիւնը—նախ և առաջ։ Քաղաքական ազատութեան պրօբլեմը յետոյ եկաւ — Մեծ Յեղափոխութեան գալարումների մէջ։ Տեսանք նրա կրած ճակատագիրը։ Տեսանք, որ քաղաքական հաւասարութիւնը դեռ շատ հեռու է իսկական հաւասարութիւնից։ Տեսանք, որ հաւասարութիւնը օրէնքի առաջ դեռ չէր դարձնում հաւասար՝ ստամոքսի անագորոյն պահանջի առաջ... Բիլտ, վայրենի աւատականութիւնը տապալեց — տապալեց և կղերը իր հսկայական ցանցերով ու սանձարձակ կեղեքումներով։ Սակայն կեղեքման, շահագործման սկզբունքը դեռ կանգուն էր. նա միայն փոքր ինչ ձևափոխել էր, քաղաքակրթել։ Արձու աշխատանքի սիստեմը դարձնում էր աշխատաւոր զանգուածներին՝ կապիտալի ստրադրեալ, նրա ամենազօր բռնակալութեան մշտնջենաւոր ծառայ։

Մենք տեսանք, որ այդ իրողութիւնը զգացուեց արդէն Յեղափոխութեան առաջին օրերում, երբ դասակարգերի հակամարտութիւնը բաւականաչափ շեշտուած էր, թէպէտ և այն ժամանակ, վայրկեանի տիրական պահանջի ստիպմամբ՝ ազգաբնակութեան լոլոր խաւերը, բոլոր

ազատասէր տարրերը գրեթէ ի մի ձուլուած, գրոհ էին տալիս ընդհանուր թշնամու, միապետական բռնապետութեան դէմ։

Այդ, Ռօբեսպիէռների և Դանտոնների բերնով ծաղուցած „հաւասարութիւն ու եղբայրութիւնը“ սիրուն ու ամուլ պատրանքներ էին, որ չէին կշտացնում քաղցածների լեգէոններին, չէին տաքացնում ազատութեան ծարաւի սրտերը.

Եւ այդ ճշմարտութիւնը առաջին անգամ մեծ դղրդիւնով ծանուցեց Ֆրանսիայի անվեհեր զաւակներից մինը, Դ ր ա կ խ ո ւ ս Բ ա բ ե ո ֆ, դեռ 1796-ին, Դիրեկտուարի տիրապետութեան տակ։ Մէկն էր անհամար „հիասթափուածներից“, որոնք անհուն կսկիծով տեսան Յեղափոխութեան վրիպումները, նրա անզօրութիւնը դասակարգային ցաւոտ և արիւնոտ խնդրի դիմաց։

Ծոգորւած 18-րդ դարի սոցիալական փիլիսոփայութեամբ, Ռուսսօի, Մաբլիի „հաւասարութեան“ քարոզներով, Բաբեօֆ *) եկել էր ազդարարելու բուն փրկարար յեղափոխութիւնը, որ իսպառ պիտի ջնջէր դասակարգային խտրութիւնները քաղաքակրթ հասարակութիւններից։ Նա առանձնապէս ծանրանում է ագրարային, հողային ուէֆօրմի վրայ կրկնելով Հռօմի Դրակխուս եղբայրներին, կատարելագործելով նրանց տեսութիւնը իր ընդարձակ ծանօթութիւններով և Ֆրանսիական Յեղափոխութեան կատարած փորձերով, նա բարձրաձայն յայտարարում էր, որ ոճիր է ընդդէմ ժողովրդի ու մարդկայնութեան դարձնել հողը — հարստութիւնների մայր-աղբիւրը — մասնաւոր սեփականութիւն .. Ոճրագործ է — ասել էր դեռ ծան ծուկ Ռուսսօ — ոճրագործ է

---

*) Ծնւած 1760 թ. Ֆրանսիայի Սէն կեանտէն քաղաքում, հեքսւոր ծնողներից։ Գլխատւած 1797-ին։

և բոլոր չարիքների սկզբնապատճառ այն առաջին մարդը, որ դնելով իր թաթը մի յայտնի հողաբաժնի վրայ, ասել է՝ „սա իմն է“.. Հողը պէտք է համայնական սեփականութիւն լինի, ինչպէս օդը և ջուրը։

Բնութիւնը հաւասար է ստեղծել մարդկանց, պէտք է վերադառնալ բնական վիճակին։

Յեղափոխութիւնը վրիպել է իր իսկական նպատակից. „ընդհանուր երջանկութիւնը“ չը կայ. մի բուռն փոքրամասնութիւն իր ձեռքն է առել ազգային հարստութիւնները, իսկ աճապին մեծամասնութիւնը — ազգի ամենաօգտակար և ամենաարգասաւոր հատուածը — դեգերում է քաղցի, տրկութեան ու թշուառութեան մէջ։

Les mortels sont égaux; ce n'est point la naissance,
C'est la seule vertu qui fait leur différence.

(Մահկանացուները հաւասար են. ծնունդը չէ, այլ սոսկ միայն առաքինութիւնը, որ դնում է խտրութիւն նրանց միջև)։

Բաբեօֆ նորէն հնչեցրեց Ֆրանսիական Յեղափոխութեան այդ ծանօթ նշանաբանը և եռանդով արծարծեց... դ ա ս ա կ ա ր գ ա յ ի ն պ ա յ ք ա ր ի գաղափարը։ Հիմնեց դրա համար իր սեփական օրգանը „*Le Tribun du Peuple*“։ Այդտեղ նա ցնցող, կրակոտ յօդուածների մէջ խունկ է ծխում „Սրբազան Հաւասարութեան“ և կատաղի ոճով խարանում է գոյքերի, վաթսքների հրէշային անհաւասարութիւնը։ Ո՛չ ոք չը պէտք է ունենայ չ ա փ ի ց դ ո ւ ր ս և ամե՛նքը պէտք է ունենան բ ա ւ ա կ ա ն ա չ ա փ։

Que tous aient assez, et qu'aucun n'ait trop!

Դասակարգերի հակամարտութիւնը ձևակերպում է յստակօրէն։ Դէմ յանդիման կանգնած են — ասում է Բաբեօֆ — պատրիկներն ու պլէբէյները, հարուստները և աղքատները։ Այդ կռիւը կազմում էր Ֆրանսիական

Ցեղափոխութեան ներքին խորհուրդը, նրա ամբողջ պատմունակութիւնը։

Մարդկանց մի փոքրիկ թիւ—շարունակում է Եւրոպայի առաջին սոցիալիստ քարոզիչը — մարդկանց մի փոքրիկ թիւ կռզմում է պետութեան մէջ մի տարամերժ կառավարութիւններ, յափշտակիչներ։ Այդ կաստի անդամները կ'ասեն ձեզ, որ օրէնքի ճանապարհով են գրկել, թալանել իրենց եղբայրների մեծամասնութեանը։ Սակայն, իրողութիւնն այն է՝ որ նրանք կատարել են այդ գաւթումը, շնորհիւ նոցկալի հաստատութիւնների, սրբագործուած կառավարութիւններից... Այդպիսով կառավարութիւնները յայտնւում են մեղսակից պարտիկների, յափշտակիչների։ Եւ այդպիսով օրէնքները և իրաւական կօդէքսները հանդիսանում են աւազակութեան պաշտպան, նւիրագործող... Օրէնքները մարդասպան են, կործանարար։ Պէ՞տք է ապստամբել նրանց դէմ *)...

Դասակարգերի կռիւը նոր չէ, ասում է Բաբեօֆ, նա սկսւում է նախնական ժամանակներից, երբ առաջին անգամը սահմանւեցին այնպիսի հաստատութիւններ, որոնց մէջ մարդկանց մի մասը իր ձեռքը գրաւեց ամեն ինչ, իսկ միւս մասին ոչինչ չը մնաց...

Մարդկային համախմբման նպատակը ուրիշ ոչինչ է, բայց եթէ նրա բոլոր անդամների երջանկութիւնը, Ռօբեսպիէռեան բառաւոր՝ ընդհանուր բարեկեցութիւնը (*aisance universelle*)։ 1789-ից ի վեր՝ բոլոր ճիգերը—հաւասարութիւնն ու երջանկութիւնը հաստատելու համար—խորտակւեցին և Գրակխուս Բաբեօֆ եկել էր վերջին ճիգն անելու, օրհասական և դիւցազնական ճիգը՝ փրկելու շղթաներից իր բազմատանջ հայրենիքը և ամբողջ թշւառ, հարստահարւած երկրագունդը...

---

*) *M. Albert Thomas, Baboeuf.*

Եւ դրա համար նա կազմակերպել էր „կօմմունիստների“, „հաւասարականների“ մի ընդարձակ դաւադրութիւն, մօտ 17,000 համախոհներով։ Նա պահանջում էր անյապաղօրէն դարձնել հողը համայնական սեփականութիւն, նա փափագում էր „ընդհանուր երջանկութիւն“ կօմմունիստական (համայնատիրական) կարգերի մէջ, և իր ծրագիրները իրագործելու համար քարոզում էր բռնի միջոցներ—սարսափ, տերրօր, ահաբեկում։

Տեսէ՛ք այդ սարսափելի դաւադիրների հռչակաւոր *Մանիֆեստը* (*le Manifeste des Egaux*)... Տեսէք այդ ահարկու մարտահրաւէրը, ուղղած Ֆրանսիայի ժողովրդին, հարստահարւած դասակարգերին.

„Ամեն տեղ և ամեն ժամանակ մարդկանց օրօրել են սիրուն բառերով. երբէք և ոչ մի տեղ նրանք չեն ստացել իրը բառի հետ (*la chose avec le mot*)։ Անյիշատակ ժամանակներից ի վեր կրկնում են մեզ կեղծաւորութեամբ, թէ մարդիկ հաւասար են. և անյիշատակ ժամանակներից ի վեր՝ ամենաանարդ, ամենահրէշաւոր անհաւասարութիւնը լկտիօրէն ծանրացած է մարդկային ցեղի վրայ...

„Ա՛րդ. մենք որոշած ենք այսու հետև ապրել ու մեռնել հաւասար։ կամ ճշմարիտ հաւասարութիւն կամ թէ մահ.—ահա թէ ինչ է մեզ պէտք այժմ։

„Եւ մենք ձեռք կը բերենք այդ ճշմարիտ հաւասարութիւնը, ինչ գնով էլ որ լինի։ Վա՛յ նրանց, որոնց կը հանդիպենք այդ հաւասարութեան և մեր միջև։ Վա՛յ նրանց, որ կը դիմադրեն այսպէս շեշտուած մի բաղձանքի։

Ֆրանսիական յեղափոխութիւնը նախակարապետն է մի ուրիշ յեղափոխութեան, շատ աւելի մեծ, շատ աւելի հանդիսաւոր—և նա կը լինի վերջինը։

„Ժողովուրդը քայլեց Թագաւորների և քահանաների վրայ, որ դաշնակցել էին իր դէմ։ Նոյնպէս կը վարուի նա՝ նոր տեսակի բռնակալների հետ, նոր քաղաքական տարտիւֆների, որ բռնել են հների տեղը։

„Ձը կա՛յ այլ եւս հողի մասնաւոր սեփականութիւն... Մենք պահանջում ենք, որ ամենքը հաւասարապէս վայելեն մայր-հողի արդիւնքները... Ձենք հանդուրժի այլ եւս, որ մարդկանց ահագին մեծամասնութիւնը աշխատի ու քրտնի ի հաճոյս մի չնչին փոքրամասնութեան։

„Անհետացէ՛ք, վերջապէս, ըմբոստացուցիչ խարուսիւններ հարստի և աղքատի, մեծի և փոքրի, տիրոջ և ծառայի, իշխողի և հպատակի։ Ա՛չ մի ուրիշ տարբերութիւն չը պէտք է լինի մարդկանց միջև, բացի սեռի և հասակի տարբերութիւնից։

„Մեր սուրբ ձեռնարկը միմիայն մէկ նպատակ ունի— վերջ դնել քաղաքացիական երկպառակութիւններին ու հանրային թշուառութեան... Աւելի հոյակապ մի ձեռնարկ երբէք էլ չի յղացել և չի գործադրել Հեռուէն հեռու, մի քանի հանճարներ, իմաստուններ խօսել են նրա մասին կամացուկ ու դողդոջուն ձայնով...

„Հասե՛լ է վայրկեանը, երբ պէտք է հիմնարկել հաւասարների հանրապետութիւնը. հեծկլտացող ընտանիքնե՛ր, եկէ՛ք բազմելու ընդհանրական սեղանի առջև, որ բնութիւնը պատրաստել է իր բոլոր զաւակների համար“։

Ահա „հաւասարների“ այդ սրտառուչ մանիֆեստը, կրճատուած և ամփոփուած հայերէնով, որ, ի հարկէ, չի կարող թարգմանել բնագրի ուժն ու վեհութիւնը։ Նա այլ կերպ ազդու և զօրաւոր է, քան Մարքս-Ինգելսեան մանիֆեստը, հրատարակուած կէս

դար յետոյ։ Իր միամիտ և անպաճոյճ ֆրազաբանութեամբ՝ բառուվիստների այդ մարտակոչը հաւատարիմ արձագանք էր այն բոլորի, ինչ որ թշուառ, հարստահարուած ժողովրդային ընդհանրութիւնը մտածում, զգում էր 18-րդ դարի վերջալոյսին... „Հաւասարները“, յիրաւի, ժողովրդի հոգուց էին խօսում, երբ ասում էին. „Ցեղա-



Գրաքխուս Բաբեօճ

փոխութիւնը յաղթանակ տանելով թագաւորների, ազնուականների ու կղերի վրայ՝ դեռ չէ վերջացած,—նա կը վերջանայ միայն այն ժամանակ, երբ աշխատանքի կազմակերպութեան ճանապարհով նա կ'ապահովէ արդիւնքների արդար բաշխումն, երբ նա ապրուստի և զարգացման միջոցներ կը տայ հաւասարութեան բոլոր անդամներին“։

Այդպէս էին մտածում բոլոր աշխատասէրն ու սեփականասէրն պարիանները և պէտք է ենթադրել, որ ժողովրդային թշտառութիւնը յիրաւի մեծ է եղել այն ժամանակներում, քանի որ բաբեօֆեան հատասարութեան սիմպլիստ, պարզունակ գաղափարը, „ահաբեկչական կոմունիզմը“ այնքան ուժեր էր գինուորագրել և այնքան տուն խանդավառութիւն յարուցել զանգուածների մէջ..

Խիզախ ծրագիրները շուտով մատնուեցին, կազմակերպութիւնը ենթարկուեց անողոք հալածանքի: Բաբեօֆ իր մի գաղափարակից ընկերոջ հետ կառավարական դահիճների ձեռքն ընկաւ և նրանց երիտասարդ գլուխները ևս դրեցին գիլօտինի տակ... Մահուան դատավճիռը լսելուն պէս՝ երկուսն էլ խրեցին դաշոյնը իրենց կուրծքերի մէջ. ինքնասպանութեան փորձը, սակայն, չ'աջողուեց և յաջորդ օրը նրանք գլխատուեցին:

***

Գաղափարը չը մեռաւ, սակայն: Ռէակցիայի ամենամռայլ շրջանն ապրեց նա և 19-րդ դարու քսանական թուականներին նորէն ծայր տուեց „Սրբազան Դաշնակցութեան“ ամրակուռ շղթաների տակ, մի մահաբոյր, ազատասպան մթնոլորտում, երբ, սակայն, տնտեսական կեանքը սկսում էր փթթուիլ, զարգանալ և երբ հրապարակ էր գալիս — Մեծ Ցեղափոխութեան Հայրենիքում — մի նոր մտաւորականութիւն, կրող այդ նոր հոսանքի:

Այժմ սոցիալիզմ էր նրա անունը:

Մեծ գաղափարները իրենց նւաճողական պրօցէսի մէջ անցնում են պէս-պէս աստիճաններ: Նախ քան տիրելը մարդկանց ուղեղին, բանականութեան՝ նրանք

տիրում են զգացումներին, երևակայութեան։ Նախ քան ձուլելը տրամաբանական կուռ սիստեմների մէջ՝ նրանք քարոզում են սիրուն, հոյակապ ուտոպիաների, երազների ձևով։

Այդպէս և Սոցիալիզմի գաղափարը։ Տասնեակ դարերի ընթացքում նա մի սոսկ իդէալ էր, մի վարդագոյն ու երազական հեռապատկեր, ուրիշ ոչինչ։ Պլատօն, Թօմաս Մօօր, Կամպանելլա, Մօրելլի, Մաբլի,— բոլորն էլ խանդավառ հաւատով նկարագրում էին այդ մշուշապատ իդէալը, որի հրապոյրներով և աշխատում էին ցնցել ու գերել մասսաների երևակայութիւնը, ինչպէս Մահմեդը իր չնաշխարհիկ դրախտով։

Այդ զգայապաշտ, սանտիմենտալ ոգին շեշտւում է մասամբ նաև 19-րդ դարու սկզբներում, նորագոյն սոցիալիզմի հոչակաւոր նախակարապետների— Սէն-Սիմօնի, Ֆուրիէի, Օվէնի—սիստեմներում։ Մարդասիրութեան հզօր շունչով տոգորուած, նրանք ցաւով, կսկիծով էին դիտում ժամանակակից թշուառութիւնը և քարոզում էին կերպարանափոխել հասարակական կարգ ու սարքը ի նպաստ աշխատաւոր ընդհանրութեան, չքաւոր, իրաւազուրկ դասակարգերի։ Եւ թւում էր նրանց, թէ այդ քարոզը ինքնին բաւական է՝ մարդկանց, իշխողներին գրաւելու, համոզելու համար, սոցիալական անիրաւութիւնները բառնալու համար։ Նրանք ուտոպիստ, երազող էին։

Պէտք է, սակայն, փոքր ինչ կանգ առնել այդ հեռատեսքերական գէմքերի վրայ, որոնց մօտ գտնում ենք ժամանակակից սոցիալիզմի գրեթէ բոլոր սաղմերը, բոլոր հիմնական պօստուլատները։ Ինքը Էնգելս գտնում է „հանճարեղ մտքերի սաղմեր, ցիր ու ցան այդ մեծ ուտոպիաների թէօրիաներում“։

„Բոլոր մարդիկ պէտք է աշխատեն“ — ահա մէկը այդ

սոցիալիստական պօստուլատներից, պահանջներից, որ Սէն-Սիմօն *) հնչեցրեց դեռ 19-րդ դարի սկզբներում, իր ժըլնէվեան նամակների մէջ։ Աշխատանքը նրա աչքում հանդիսանում էր ս ե փ ա կ ա ն ու թ ե ա ն միակ պայման։ Եւ համաձայն այդ սկզբունքի՝ նա թելադրում էր յեղաշրջել սեփականութեան ամբողջ սիստեմը, հասարակական բոլոր կարգերը։ „Ոսկէդարը“ պէտք է իրականանայ, ասում է հանճարեղ ուտօպիստը. այդ ոսկէ դարը „մեր ետևը չէ, ինչպէս ասում են բանաստեղծները, այլ մեր առջև, ապագայում“...

Սէն Սիմօն առաջինն էր, որ իր հզօր իմացականութեամբ ըմբռնեց „աշխատաւորական խնդրի“ էութիւնը, վերլուծեց էքս ա ւ ո ր ու թ ե ա ն համատարած երեւոյթը, քննեց կապիտալիզմի պատմական շրջանը, գնահատելով տ ն տ ե ս ա կ ա ն ա զ դ ա կ ն ե ր ի դերը պատմական էւոլիւսիօնի մէջ։ Եւ եզրակացրեց, որ մարդկութիւնը վերանորոգելու, նրան կրծող չարիքները բառնալու համար՝ անհրաժեշտ է կրօնական, բարոյական, քաղաքական և տնտեսական խորունկ յեղաշրջում։

Այդ յեղաշրջումը պիտի գայ վաղ թէ ուշ, նոյնիսկ իշխող դասակարգերի ջղակցութեամբ. Սէն-Սիմօն խորապէս հաւատում է դրան...

„Պատերազմը պէտք է տեղի տայ խաղաղութեան, քանդող, աւերիչ աշխատանքը՝ շինարար ու արդիւնաւոր գործունէութեան, վարձու աշխատանքը՝ ընկերակցութեան։ Մէրը պիտի գայ դուրս մղելու ատելութիւնը, համերաշխութեան զգացումը պիտի փոխարինէ թշնամութեան ու հակամարտութեան և ընդհանուրի բարօրութիւնը պիտի վաստէ փոքրաթիւ մարդկանց առանձնաշնորհումները“։ Կեցցէ՛ երջանկութիւնը, և թո՛ղ չքա-

---

*) *Saint-Simon (1760—1825).*

նայ քրիստոնէական ասկետիզմը, սպաշխարութեան ամուլ քարոզները, ճգնաւորական սին մաքսիմները...

Սէն-Սիմօն դպրոց ստեղծեց, մի փառահեղ պլէադ վեհանձն ու կարող մտածողների—Բազար, Անֆանտէն, Պիէռ Լեռուս, Բիւշէ, Բլանկի ևայլն — որոնք քիչ-շատ որոշապէս ձևակերպեցին արդէն սոցիալիզմի վարդապետութիւնը (անցեալ դարի 30-ական թուականներում)։ Դպրոցի ամենախոշոր ներկայացուցիչներն էին Բազարը և Անֆանտէն։ Ռոմանտիկ և խորհրդապաշտ (միստիկ) հոգիներ էին, որ լցուած անհաշտ ատելութեամբ ու զզուանքով դէպի բուրժուական կեանքի պրօզան, եսասիրութիւնն ու գռեհիկ տափակութիւնը՝ գրկել էին կրօնական երկիւղածութեամբ Սէն-Սիմօնի պարզած դրօշը, հիմնել էին սոցիալիստական մի ընկերութիւն, մի համայնք, աւելի ճիշտ՝ մի աղանդ, կազմակերպուած նման բոլոր կրօնական աղանդներին... Իր կենտրօնն ունենալով պարիզի *Menilmontant* թաղի մէջ։ Անֆանտէնը, աւելի միստիկ, քան բոլոր միւսները, ինքզինքը երևակայում էր աղանդի գերագոյն քահանայապետ, մի նոր Մեսսիա, մի նոր Յիսուս, որ կոչուած էր վերանորոգելու աշխարհը...

Աղանդը երկար տարիներ արծարծեց ուսուցչի մտքերը, քարոզեց մարդկութեան բովանդակ վերածնութիւնը, կանանց ու պրօլետարիատի ազատագրութիւնը ևայլն։ Մարդկութեան ղեկավարող ծաղիկը կամ ընտրեալների դասակարգը (*l'élite humaine*) պէտք է կազմեն արտիստները, արուեստագէտները, որոնք յուզում ու շարժում են մարդկանց, ապա գիտուները, որ զարգացնում, լուսաւորում են նրանց և ապա արդիւնաբերողները, որ ղեկավարում են նրանց նիւթական գործունէութիւնը։

Նրանք բոլորը պէտք է միանան մի ընդհանուր նպատակի շուրջ — բարձրացնել *ա մ ե ն ա բ ա զ մ ա թ իւ*

և ամենաչքաւոր դասակարգի հոգեկան ու ֆիզիկական վիճակը, մղել նրան դէպի գերագոյն բարօրութիւն։ Նրանք պիտի փոխեն սեփականութեան սիստեմը, պիտի փոխեն և ընտանիքի ձևը։ Սեփականութիւնը պիտի պատկանէ արժանաւորներին և ձրիակեր չը պէտք է լինի հասարակութեան մէջ։ Մարդիկ հաւասար են. բոլոր հարստութիւնները պէտք է ժառանգուին հասարակութեանը, ոչ ընտանիքին։ Ոչ մի ուրիշ անհաւասարութիւն՝ բացի նրանից, որ հիմնւած է ընդունակութիւնների վրայ։ Կինը, նոյնպէս վայելում է հաւասար իրաւունքներ։ Տղամարդու հետ նա կազմում է մի ամբողջութիւն. տղամարդու հետ նա միանում է կամ բաժանւում, երբ կամենում է։ Ոչ մի ճնշում, հասարակական և պետական ոչ մի կապանք՝ սիրոյ ազատութեան դէմ, ամուսնութեան և ապահարզանի դէմ...

Ժամանակակից սոցիալիզմի մտքերն են դրանք։ Դպրոցի համարձակ ներկայացուցիչները աւելի հեռու էին գնում իրենց քարոզների մէջ. նրանք ապդարարում էին պրօլետարիատի գալոց ցնցումները, գուշակում էին սոցիալական մեծ յեղափոխութիւնը...

„Մի՞թէ — բացականչում էր Անֆանտէն, դիմելով բուրժուաներին — մի՞թէ պրօլետարները չը գիտեն, որ դուք, բուրժուաներդ, դուք երբորդ դասակարգդ, ամբողջ յեղափոխութիւն էք արել, տապալել էք գահեր ու ատրուշաններ և դրանով ստիպել էք ձեր վաղեմի տէրերին ականջ դնել ձեր պահանջներին... Օգտւեցէ՛ք, ուրեմն, աղնւականութեան ու կղերի դասերից և դուք, որ նրանցից աւելի լուսաւոր ու բանիմաց էք, մի՛ մղէք նոր երրորդ դասակարգը դէպի այնպիսի մի կացութիւն, ուր նա ստիպւած լինի վայր գլորել ձեզ՝ գահից... Ես զգում եմ հէնց այս վայրկեանիս, որ փոթորիկը վրայ է

հասնում, ես տեսնում եմ կայծակները, լսում եմ որոտումները...

Հզոր, շանթալի սպառնալիքներ, որ սակայն թուլանում, նսեմանում են հէնց այն պատճառով, որ սոցիալիզմի այդ անդրանիկ թէօրետիկոսները, մի զարմանալի լաւատեսութեամբ, դեռ յոյս էին տածում իշխողների բարեացակամութեան վրայ, դեռ հնարաւոր էին կարծում սոցիալական մեծ յեղաշրջումը դրամատէր բուրժուազիայի ձեռքով։ Այդտեղ է՝ այդ թէօրիանների ցնորականութիւնը, ուտօպիզմը։

* * *

Ոչ պակաս պատկառելի և հմայիչ է Ֆուրիէի *) դէմքը։ Նա տուեց առաջին խոր վերլուծումը կապիտալիստական տնտեսութեան։ Առաջին անգամը նա անողորմ քննադատութեան ենթարկեց դասակարգային և դրամապաշտ քաղաքակրթութիւնը, ուր նրա խօսքով „ծայրայեղ աղքատութիւնը լղճում է հէնց ծայրայեղ առատութիւնից“...

Կատաղի խարազանումներ — և այդտեղ։ Ռուսսօյական մոլեգնոտ և յոռետես ճիչեր է արձակում Շարլ Ֆուրիէ՝ այդ դրամապաշտ քաղաքակրթութեան հասցէին։

25 դար է, ինչ գոյութիւն ունի դիտութիւնը և սակայն նա ոչինչ չի արել մարդկային երջանկութեան համար, նա միայն ամեցրել է մարդկանց խորամանկութիւնը, նենգութիւնը, բազմապրել է պատուհասները, չարիքները։

... Թուում է թէ ինքը Աստուածն է, ինքը նախախնամութիւնն է, որ պարունակում է իր մէջ մի չարագործ հան-

---

*) *Charles Fourier (1772—1837 թ.)։*

ճար... Թւում է թէ բնութիւնը ամեն կողմից կատաղաբար արշաւում է խեղճի դէմ, արդարի և թոյլի դէմ... Ամեն տեղ տեսնում էք բացակայութիւնը աստուածային նախախնամութեան, և կարծես իրաւացի է մեծ բանաստեղծ Ռասինի յուսահատ ճիչը.

Je ne sais de tout temps quelle injuste puissance
Laisse la paix au crime et poursuit l'innocence.
..... Autour de moi, si je jette les yeux
Je ne vois que malheurs qui condamnent les Dieux!...

(Ես չգիտեմ, թէ ինչ ուժ, ինչ անիրաւ իշխանութիւն
Պաշտպանում է միշտ ոճիրը և հալածում անմեղութիւն.
Չորս կողմս ամենուրեք հնչում են իմ ականջներին
Թշւառութիւն և տառապանք՝ դատապարտող Աստուածներին)...

Այսպէս երկար շարունակել չի կարող—ասում է Ֆուրիէ... „Քաղաքակրթութիւնը լողում է արեան մէջ՝ դրամատիրական, մերկանտիլ ախորժակներն ու մրցումները յագեցնելու համար“... Այդ քաղաքակրթութիւնը յաւիտենական չէ։ Նա արդէն անցել է մի քանի շրջաններ, հանգրուաններ. վայրենութեան շրջանը, նահապետական շրջանը և բարբարոսութեան շրջանը։ Ապա հասել է ներկայ հանգրուանին, որ նոյնպէս, հարկաւ, անցողական է։ Նա ևս պէտք է ջնջւի և տեղի տայ աւելի բարձր, աւելի բնական և աւելի լաւ կազմակերպւած մի հասարակակարգի։ Ներկայ շրջանը խաւոնակ է, շփոթ, քաօսային։ Արդիւնաբերութիւնը անկարգ է, անիշխանական, մարդկային ուժերը, կրքերն ու ախորժակները գործում են ցրիւ, անկապ ու իրար հակառակ։ Ահա այդ է, որ պէտք է փոխել, բարեշրջել։ Մարդկութեան վերանորոգութիւնը պիտի գայ ոչ թէ կրօնական, քաղաքական բարեշրջումներից, այլ տնտեսական։

Իզուր դուք, փիլիսոփաներ, կը կատակէք գրքեր ու դրա-
դարաններ, իզուր կը փնտրէք երջանկութիւնը, քան ի դեռ
չի ջնջւի հասարակական բոլոր դժբախտութիւնների ար-
մատը, այսինքն արդիւնաբերական, ճարտարարուեստական
քաոսը *) (*l'Incohérence industrielle*):

Քաոսը պիտի փոխարկւի հանուր, համատարած ներ-
դաշնակութեան... Բնական կարգը (*ordre naturel*)
գլխիվայր է դրած. պէտք է վերստին դնել այն՝ ոտքերի
վրայ: Մարդը է, ինչ որ է: Նրան միշտ պեկավարելու են
հաճոյքները, հարստութեան սէրը: Նրա կրքերը, տեն-
չանքները յուրաքանչիւր են և օրինաւոր: Պէտք է ազատ
թողչք հաղորդել այդ տենչանքներին: Պէտք է հետևել
բնութեան, չը խեղդել, չը սանձահարել հոգեկան ժղում-
ները, որոնք եթէ ընդունին ցանկալի ուղղութիւն, կա-
րող են միայն ծառայել ընդհանուր հասարակական
շահին, „տիեզերական ներդաշնակութեան“ (*harmonie universelle*):

Այսպէս է տրամաբանում Ֆուրիէ: Եւ նա առա-
ջարկում է իր պանացէումը, համադարմանը:
Յեղափոխութիւնն անհրաժեշտ չէ, հիմնեցէք միայն
պարզ, օրինակելի մի համայնք կամ ֆալանստեր
և նրա արդիւնքն այնքան մեծ կը լինի, այնքան հրա-
շագործ, որ ամբողջ երկրագունդը կը գրկէ, կ'ընդունի
նոր սիստեմը“:

Մասնաւոր սեփականութիւնը հողի, փողի վերաբեր-
մամբ՝ չի ջնջւում:

Թո՛ղ, ասում է, իւրաքանչիւր գիւղաւան միացնէ իր
բնակիչներին երկրագործական համայնքի, ընկերակցու-
թեան մէջ, թող միանան 2—300 ընտանիքներ, իւրա-

---

*) *Ch. Fourier. Théorie des Quatre Mouvements*, հրատ. 1808 թ. էջ 29:

քանչիւրը թափէ իր բաժին հողն ու դրամագլուխը և թող ամենքն էլ աշխատեն, մշակեն սիրով ու բարի մրցակցութեամբ, ամեն մէկը ստանայ իր թափած հողի ու դրամագլխի համեմատութեամբ: Թէ գիւղացու և թէ քաղաքացու ամենաուժեղ կիրքն է—վաստակը. երբ նրանք տեսնեն, որ միացած, համայնական ուժերով աւելի են վաստակում, քան միայնակ, բաժան-բաժան—այն ժամանակ, բնականաբար, կը մտնեն ֆալանգի մէջ: Մարդկային կրքերը դէմ չեն գնում համեմատութեան, ինչպէս ոմանք պնդում են. ընդհակառակը, նրանք ժղում են դէպի համերաշխութիւն: Էգոիզմը և ալտրուիզմը (եսասիրութիւն և այլասիրութիւն) միանգամայն կը հաշտուին բնական ու բարեկարգ հատուցութեան մէջ: Չէ՞ որ նրանք, այդ երկու առերևոյթ հակամարտ բնազդները, հրաշալիօրէն ներդաշնակում են տիեզերական հոյակապ շէնքի մէջ... Կայ ամենուրեք ձգողութիւն և վանողութիւն (*attraction, répulsion*), որ համապատասխանում են էգոիզմին ու ալտրուիզմին և որ է տեղի փոխադարձաբար ջնջելու, ընդհակառակը, լրացնում են փոխադարձաբար... Այդպէս են ուսուցանում Ֆուրիէն և Լայբնից *):

Կրքերը, ուրեմն, չպէտք է խեղդել, որովհետև դա կը նշանակէր խեղդել ու արհամարհել բնութեան ձայնը: Երբ այդ կրքերը չեն կանոնաւորուած—ինչպէս ներկայ բուրժուազական կարգերի մէջ—նրանք մի մի շղթայազերծ ու արիւնարբու վագրներ են: Բայց փորձեցէք կանոնաւորել—համայնական աշխատանքի, ֆալանգի մէջ—և նրանք կը դառնան նուրբ, արգասաւոր և հրաշագործ ազդակներ... Նրանք, հարկաւ, չեն փոխի իրենց բնութիւնն

---

*) Տես այդ „Տիեզերական ներդաշնակութեան" թէօրիայի մասին՝ մեր „Հատանքներ"ի մէջ:

ու նպատակը, չեն նեազեցնի և իրենց թափին ու ուժգնությունը, այլ կը փոխեն միայն իրենց ընթացքը, ուղղությունը։ Աշխատանքը ներկայ կապիտալիստական կարգերի մէջ մի բեռ է, տանջանք, ստրկություն. նա գրաստի զզեցուցիչ աշխատանքն է... Հապա Ֆուրիէի ծրագրած ֆալանստերներում՝ այդ աշխատանքը կը դառնայ մի գերագոյն հաճոյք ու հրապոյր... Ազա՜տ է կիրքը, տէ՛ք լիակատար ազատություն երկու սեռերի կրքերին էլ, տէ՛ք լիակատար գոհացում նրանց բոլոր ախորժակներին *)...

Որքա՜ն ժանաւանդ ստորացած է այդ դրամապաշտ, կապիտալիստական աշխարհի մէջ — կինը... Մի սոսկ ապրանք — ասում է Ֆուրիէ — վաճառքի հանւած շուկայի մէջ. և գնողը դարձնում է այն իր տարամերժ սեփականութիւնը... Շղթաների մէջ է գեղեցիկ սեռը, թէպէտ և „ծաղկից հիւսւած շղթաների“... Բռնի, „օրինական“ ամուսնութիւնները, յաճախ հակառակ կնոջ սրտին ու բաղձանքներին — դա անարգանք է ընդդէմ բնութեան, ասում է ընկերվարականութեան մեծ ուսուիրան, և նա շեշտում է, որ հասարակական պրօգրէսը, յառաջադիմութիւնը չի կարող կատարուել առանց կնոջ ազատագրութեան։

Կնոջ էութեան մասին Ֆուրիէն ունի ամենավեհ ըմբռնումներ։ Նա կատաղօրէն ըմբոստանում է տիրապետող մի շարք գռեհիկ նախապաշարումների դէմ և

---

*) Այս ծայրայեղ անհատապաշտութեան, ինդիվիդուալիզմի պահանջներով է՝ որ Շարլ Ֆուրիէն մօտենում է ժամանակակից անարխիզմին, անիշխանական վարդապետութեան (տես „Հոսանքներ“)։

աւելացնում է (ինքն ևս փոքր ինչ նախապաշարուած ռուս գիւղացու վերաբերմամբ).

„Դատել կանանց մասին այն արատաւոր գծերի համեմատ, որ նրանք մերկացնում են բուրժուական քաղաքակրթութեան մէջ,—միևնոյն է թէ դատել մարդկային բնութեան մասին ռուս գիւղացու բնութեան համեմատ, որ զուրկ է պատւի և ազատութեան ամեն գաղափարից“ *):

Ազա՛տ է անհատը։ Ֆալանստերի, „նոր հասարակի“ մէջ կեանքը պէտք է լինի այնպէս կազմակերպուած, որ իւրաքանչիւր մարդ ինքզինքն զգայ ազատ ու երջանիկ, որ անհատական երջանկութիւնը ներդաշնակ լինի ընդհանուր, հասարակական երջանկութեան հետ։ Բնակարանները և հանրային բոլոր հիմնարկութիւնները, կրթութիւնն ու դաստիարակութիւնը, աշխատանքը, ամբողջ տնտեսական, մտաւոր և հոգեկան կենցաղը այնպէս պիտի լինին կանոնաւորուած՝ որ մարդիկ, բո լո՛ր ը, հնարաւորութիւն ունենան վայելելու ամենաբազմազան հաճոյքներ։ Երկրագործական և ճարտարարուեստական կամաւոր բանակները կ'երթան աշխատանքի, ինչպէս հանդիսաւոր մի տօնի, կ'երթան հասարակական ուժերով մշակելու երկրագունդը, որը կ'արգասաւորի, կը կերպարանափոխուի... Աշխարհը, մի խօսքով, կը դառնայ „երկրաւոր դրախտ“։

Ֆուրիէն էլ ունեցաւ հարիւրաւոր աշակերտներ — նրանցից ամենայայտնին՝ Վիկտոր Կոնսիդէրան— որոնք Եւրոպայում և Ամերիկայում քարոզեցին տաղանդաւոր ուսուցչի գաղափարները և նոյնիսկ փորձ արին հիմնելու „հրաշագործ ֆ ա լ ա ն ս տ ե ր ն ե ր ը“։ Նրանց բոլորի հիմնական տեսչն էր՝ սկիզբ դնել մի նոր

---

*) *Théorie...* էջ 200։

քաղաքակրթութեան, հիմնուած աշխատանքի, խաղաղութեան ու արդարութեան վրայ, մի քաղաքակրթութիւն, ուր մարդ-անհատը հնարաւորութիւն ունենայ զարգացնելու իր բովանդակ էութիւնը, ուր կինն ևս իր երեխաների հետ ստանայ իրաւունքների հաւասարութիւն, ուր այսպէս ասած, յարութիւն առնէ, վերականգնէ, մարդկային կատարեալ, ինտեգրալ կեանքը, որ դարերի ընթացքում տրորել, ոտնահարել են՝ քրիստոնէական ճգնողութիւնը, ընտանեկան, բռնապետական, ֆէօդալական և իրաւական ամեն տեսակ ճշնշումները։

Կծու, սպանիչ քննադատութեան ենթարկելով բուրժուազական կեղծ, հիպօկրիտ բարոյականութիւնը՝ նրանք ջատագովում էին հաճոյապաշտ (*endémoniste*) և օգտապաշտ, ուտիլիտար մօրալը, որի հիմնական պահանջն է ա մ ե ն ա մ ե ծ բ ա ր ի ք ը ա մ ե ն ա մ ե ծ թիւ մարդկանց (*le plus grand bonheur du plus grand nombre*)։

Զ ա ն գ ո ա ծ ն ե ր ի կ ա ր ի ք ը — ահա նրանց նշանաբանը, ամեն բանի կրիտէրիումը, չափանիշը։ Եւ ֆուրիէրիզմը, տոգորուած խորին կարեկցութեամբ դէպի բոլոր թոյլերն ու տառապողները, ներքողում է ազատ վայելքի փիլիսոփայութիւնը, սրբագործում է նոյնիսկ ամենատարրական, „գռեհիկ“ կոչուած հաճոյքները, սեռական, ֆիզիկական ևայլն։ Ֆալանստերը գոհացում կը տայ բոլոր մարդկանց բոլոր պահանջներին։ „Ապրուստի, զգեստի և ամեն տեսակ վայելքների կողմից՝ պարզ մահկանացու-աշխատաւորը պիտի ունենայ արքայի վիճակ“։ Ծուժկալութեան ու զրկանքների տեղ՝ հրահանգւում է նոր զարկ ու թռիչք տալ մարդկանց ֆիզիկական կարողութիւններին, նրանց զարգացման, որպէս զի պատշաճ ներդաշնակութիւն լինի այդ

կարողութիւնների և գալոց ճարտարարուեստային արդիւնքների նրբութեան ու առատութեան միջև։

***

Վերանորոգչի մի չափազանց գրաւիչ տիպ է և Ռոբերտ Օուէն, անգլիացի*)։ Նա ևս կատաղօրէն արշաւում է բուրժուական կարգերի դէմ, և զուտ պրօլետարական չուկէտ ունենալով, քննադատում է կապիտալիստական տնտեսական սիստեմի տարկանոնութիւնները։ Մեքենական ուժերի անլուր աճումը բաւական կը լինէր, ասում է նա, գոհացում տալու երկրագնդի բովանդակ ազգաբնակութեան կարիքներին և սակայն մարդկանց ամենամեծ թիւը աշխատանքից ուժասպառ, հեծկլտում է թշուառութեան մէջ։

Ճարիքը բղխում է վարձու աշխատանքից (*salariat*), բայց նա առաջանում է և այն „յայտնագործուած կրօններից“, որոնք ճգնում են արդարացնել սոցիալական անիրաւութիւնները՝ անդրշիրիմեան սին ու պատիր խոստումներով։ Ռոբերտ Օուէն կառուցանում է սոցիալական-փիլիսոփայական մի սիստեմ, որի գլխաւոր տարերքները գտնում է 18-րդ դարու փիլիսոփայական աշխարհահայեցութեան մէջ։

Նա դետերմինիստ է **), համարում է մարդուն՝ արդիւնք կրթութեան ու շրջապատող միջավայրի։ Մարդը ի բնէ լաւ է, թարի է. նրա մոլութիւնները բղխում են թերի, ախտաւոր դաստիարակութիւնից և միջավայրից։ Փոխեցէք, ուրեմն, և՛ դաստիարակութիւնը և՛ միջա-

---

*) *Robert Owen (1771—1858 թ.)*։

**) *Déterminisme*—պատճառաբանութիւն։

վայրը, եթէ կուզէք իրականացած տեսնել բնական, ներդաշնակ ընկերակցութիւնը, հասարակութիւնը։ Ցոռի միջավայրն ու դաստիարակութիւնը արդիւնք են որոշ հասարակա-տնտեսական սիստեմի—կապիտալիզմի։ Պէտք է, ուրեմն, փոխել, վերացնել այդ սիստեմը։ Հեռո՛ւ կապիտալիստի ժասնաւոր շահը։ Մասնաւոր տնտեսութեան վրայ հիմնւած կազմակերպութիւնը պէտք է տեղի տայ համայնական, սոցիալիստական կազմակերպութեան, պէտք է հիմնւի մեծ, հոյակապ ընկերակցութիւնը, կոոպերատիվը, հաւաքական արդիւնագործութիւնը։ Այն ժամանակ միայն կը վերանայ թոյլերին ոտնահարող անարգ մրցումը և այն ժամանակ վաստակը, հասոյթը կը մտնէ արդէն բուն աշխատաւորների, ընկերակցութեան անդամների գրպանը։

Պէտք է կարգ մտցնել թագաւորող քաոսի մէջ։ Բայց ի՞նչ միջոցով։

— Բոլոր մարդկանց համաձայնութեամբ ու գործակցութեամբ։ „Պէտք է լուսաւորել մարդկանց, պէտք է քարոզել նոր սոցիալական կազմակերպութեան ճշմարտութիւնն ու գեղեցկութիւնը և այդպիսով գարգացնել նրանց մէջ ցանկութիւն տիրանալու այդ կազմակերպութեան“... Այստեղ է դարձեալ ուտոպիան, լաւատես ցնորքը։ Վեհանձն, բայց միամիտ մարդասէրը չէր էլ կասկածում, որ եթէ անգամ բոլոր մարդիկ բժգունէին սոցիալիստական իրաւակարգի գեղեցկութիւնը, նրանք այնուամենայնիւ կարող էին չը ցանկանալ այդ իրաւակարգի հաստատումը, քանի որ նիւթական, դասակարգային շահն է մարդկային մեծամասնութեան ցանկութիւնների գլխաւոր խթանը։

Օուէն փորձեց գործնականի մէջ իրականացնել իր գաղափարները։ Տեխնիկական մեծ ընդունակութիւններով օժտւած՝ նա հիմնեց և կառավարեց 1800 թւից

մինչև 1828 թ. նիւ Լանարկի (Շօթլանդիա) հռչակաւոր թղթի գործարանը, որի շուրջը հաւախմբեց մի փոքրիկ գաղութ, մօտ 2500 մարդ, չքաւոր դասակարգից—մեծ մասամբ բարոյապէս ընկած, փճացած տարրեր։ Իր նոր կրթական մեթօդի շնորհիւ՝ նա ստեղծեց մաքուր, օրինակելի մի հաւայնք, ուր արբեցութիւնը, ոստիկանութիւնը, բանտն ու դատարանը այլ ևս տեղ չունէին։ Մանկապարտէզները հիմնեց առաջին անգամը և երկու տարեկան հասակից արդէն դաստիարակում էր ապագայ քաղաքացիներին։ Բանուորական ժամը, որ ուրիշ գործարաններում 13—14 էր, Օուէն հասցրեց $10^1/_2$-ի, կանանց և երեխաների աշխատանքը կարճեց։

Գաղութը ծաղկեց, Օուէնի հռչակը տարածուեց ամբողջ Արևմուտքում։ Բայց լոկ մարդասիրութիւնը, թէկուզ ամենալաւ չափերով գործադրուած, դեռ բաւական չէր՝ դասակարգային խորունկ հակամարտութիւնը հարթելու համար։ Աշխատաւորը, այնուամենայնիւ, տրուկ էր ճնում, կախուած գործարանատէրից, նա չէր վայելում իր աշխատանքի լիակատար արդիւնքը, չէր կարող վայելել, քանի որ արդիւնաբերական գրոծիքներն ու միջոցները կապիտալիստի ձեռնաշնորհ-սեփականութիւնն էին. նրանք պէտք է տրէին գուն իսկ աշխատաւորների, արտադրողների տնօրինութեան տակ,—և այն ժամանակ միայն սրանք կը հնձէին իրենց կատարեալ վաստակը, այն ժամանակ միայն աշխատանքը, փոխանակ հարստացնելու առանձին անհատներին, փոխանակ արտադրելու մի կողմից պերճանքի մէջ լողացող կրեսոսներ, միւս կողմից զանգուածային համատարած թշուառութիւն՝ կը հարստացներ ամբողջ համայնքը և իրօք կը ծառայէր ընդհանրական բարեկեցութեան։

Եւ ահա Օուէն փորձեց աւելի հեռու գնալ. նա փորձեց քարոզել ընդդէմ մասնաւոր սեփականութեան և ուզեց հիմնել զուտ կօմմունիստական սկզբունքների վրայ նոր հաստատութիւններ։

Բայց այդ ճանապարհի վրայ նա արդէն հանդիպեց անյաղթելի խոչընդոտների. նրա դէմ ըմբոստացաւ ամբողջ հասարակութիւնը, ըմբոստացան իշխող դասակարգերը, որոնք վինչ այն՝ ժեծարում էին և ջատագովում մարդասէր Օուէնին։ Նրա վարկն ընկաւ, նրա բոլոր ճիգերը խորտակուեցին և նա իր բոլոր հարստութիւնները կորցնելով, մտանեց չքաւորութեան ու... մոռացութեան գիրկը։

Այդպիսով, բուրժուական կարգերի շրջանակներում նա մեծ գործ տեսաւ իր բարենորոգչական աշխատանքով. նա եղաւ, ի միջի այլոց, *coopération*-ի, ընկերակցական ձգտումների հարցը անգլիայում.—կօօպերատիոնի՝ որ մի տեսակ փոխանցական աստիճան է համարւում դէպի կօմմունիստական հասարակութիւնը և որ օգտակար է հէնց նրանով, որ իր պաշտօնները—արդիւնաբերող և սպառող—կատարում է ինքը աշխատաւոր տարրը, առանց գործատէրերի և միջնորդ վաճառականների մասնակցութեան։

Բայց հէնց որ մեծ վերանորոգիչը փորձեց դուրս գալ բուրժուազական սիստեմի շրջանակներից, հէնց որ կամեցաւ իր առանձնատուկ միջոցներով տապալել գոյութիւն ունեցող տնտեսական ռէժիմի հիմնական սիւները,—նրա բոլոր վսեմ յղացումները օդը ցնդեցին սապոնի փշտիկների պէս։

Այդպէս ցնդել են բոլոր ուտոպիական ծրագիրները, որ ձգտել են յեղաշրջել աշխարհը, լոկ հաւատով ու քարոզներով, լոկ „համոզելով“ ու յորդորելով, մարդ-

կանց „բարի կամքին“ կոչ անելով, դասակարգային կռիւը մերժելով և հարուստների ու հզօրների բարութիւնը հայցելով։ Այդպէս խորտակել են ամենահոյակապ վերանորոգիչների ճիգերը, որոնք տարուած մի անաղարտ իդէալիզմով՝ իդէալականացրել են մարդկային բնութիւնը, չեն գնահատել սոցիալական կեանքի իրական գործօնները, չեն ըմբռնել դասակարգային խոր ու անվերածելի անտագոնիզմը, համամարդկութիւնը։

III

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄՆԵՐ

Առաջին Բառապարեակ (1800—1830 թ.)

Նապոլէօն Բօնապարտ. — Վերելք եւ գահավիժում. — Ազգային-ազատագրական շարժումներ Գերմանիայում. — Կեօրներ եւ Ֆիխտէ. — Ընբռնացման ոգին ուրիշ երկիրներում. — «Սրբազան Դաշնակցութիւն». — Համաեւրոպական ժանդարմը. — Հալածանքը յեղափոխական Ֆրանսիայի դէմ.—Եւրոպան ռէակցիայի ճանկերում.—Ազատութեան թռիչքը Ամերիկում. — Յունաստանի ապստամբութիւնը. — Կուիներ եւ արտաքին միջամտութիւն. — «Սրբազան Դաշնակցութիւնը» խախտուած. — Պարիզը նորէն ապստամբ. — Յուլիսեան Յեղափոխութիւն եւ երկրորդ հանրապետութիւն. —

Ֆրանսիական Յեղափոխութիւնը դուրս վիժեց իր հրաբխային արգանդից կօրսիկացի տիտանին, որ ամբողջ 20 տարի լցրեց Եւրոպային պատմութիւնը իր արիւնոտ յաղթանակների շառաչով և իր ահեղ անձնաւորութեան վայելքով։

Նապօլէօն Բօնապարտը իր պերճախօս օրինակով ցոյց տւեց, թէ ինչ կարող է անել պատմութեան հոսանքի վէմ հզօր կամքով ու իմացականութեամբ օժտւած ան-

հատը, նա ցոյց տւեց, թէ ոքան սխալական են ա ն հ ա տ ն ե ր ի դերը մերժող, նսեմացնող թէօրիաները։

Մի հակայ, անզուսպ ու լափող փառասիրութիւն, մի անսովոր խելք, միացած հարուստ, հոյակապ երևակայութեան հետ՝ որ ձգտում է ամեն գնով հասնել իր փայփայած երազին, բարձրանալ մինչև փառքի ու համբաւի անմատչելի գագաթները, գերազանցել կեսարին, Մակեդօնացուն, հպատակեցնել իր կամքին արևմտեան ու արևելեան աշխարհները, դառնալ մարդկութեան գերագոյն հրամանատար։ Մի ահեղ և խօլական կիրք, ռազմական մի վիթխարի տեմպերամենտ, մի անօրինակ, տենդային աշխատասիրութիւն ու գործունէութիւն, մի չտեսնւած, սաստանեցուցիչ էպօպէա՝ որ տակաւին շարունակում է գրգռել սերունդների խորունկ հետաքրքրութիւնը, յարուցանելով մերթ ապշանք, հիացում ու երկրպագութիւն, մերթ անէծք, ատելութիւն ու գարշանք

Ահա նապօլէօնը։ Գուցէ ոչ մի ուրիշ աշխարհակալողի վերաբերմամբ այն աստիճան իրաւացի չէ նիչէի հռչակած „տիրապետութեան տենչը“, *der Wille zur Macht!...*

Եւ այդ „տենչը“ գրեթէ իրագործեց սիրէական հերոսը, պարզ, անյայտ զինուորականի աստիճանից բարձրացաւ հետզհետէ պիրամիդի գագաթները, թառեց այնտեղ ժամանակաւորապէս իր ահագնադղրդ շուքով ու շառաչով և ապա... վերստին գահավիժեց անէութեան խորխորատը։

Պայմանները, անշո՛ւշտ, հզօրապէս նպաստեցին այդ տիտանեան վերելքին։ Բայց Բօնապարտը, լինելով հանդերձ այդ պայմանների ծնունդը, չէր հանդիսանում, իբրև նրանց սոսկական համակերպող, „սպասաւոր“, ինչպէս կը պնդէր „տնտեսական մատերիալիզմի“ հաւատամքը, չէր էլ յայտնւում, իբրև սոսկ խաղալիկ

անցքերի ու պատահականութիւնների ձեռքին, ինչպէս ասում է Տօլստոյ իր „Պատերազմ և խաղաղութիւն“ գրուածքի մէջ։ Նա ձգտեց իր նպատակին, յենուելով ազգի հարուստ դասակարգի, խոշոր կապիտալիստների կամ բուրժուազիայի վրայ, որի գործօն աջակցութեան պէտք ունէր իր անբաւ ծախքերի, իր անդուլ պատերազմների համար. պահեց նրան, այդ բուրժուազիային, իր տիրական հմայքի տակ, ներշնչեց նրան, որ ինքն եկել է իբրև փրկիչ, իբրև Մեսիա, հայրենիքի գերագոյն տագնապի վայրկեաններում, որ ինքը հաւատարիմ զաւակն է Մեծ Յեղափոխութեան և անհաշտ հակառակորդ ամեն տեսակ „ծայրայեղութիւնների“։ Բուրժուազիայի վստահութիւնը գրաւեց Բօնապարտ, նրա միջոցով իր ձեռքն առաւ ամբողջ ազգը և դիմեց բայլ առ բայլ իր երազի իրականացման... Դարձաւ շուտով առաջին Կոնսիւլ, տէր եղաւ իշխանութեան և ի վերջոյ, 1804 թ. մայիս 18-ին պետական մի հարուածով հռչակեց ինքզինքը, որպէս բացարձակ, միահեծան թագաւոր-կայսր։

Ոչ մի դիմադրութիւն — ոչ պարիզում, ոչ էլ գաւառում։ Ո՞ւր էին 1789—1793-ի օրերը... Էլ չկային ժակօբինները, Ռոբեսպիէռներ ու Մարաններ... Սակաւաթիւ գաղափարական տարրերը չէին խիզախում հրապարակ գալ, ժողովուրդն էս, ինչպէս ասացինք, ուժասպառւել յոգնել էր շարունակական ապստամբութիւններից։ Եւ տիրանը, քաջալերուելով, միշտ աւելի առաջ գնաց, սահմանեց ամենաուժեղ կենտրօնացում, ամենախիստ անձնական ռէժիմ, սրի և կամայականութեան ռէժիմը, ջնջեց բոլոր ազատութիւնները — մամուլի, խօսքի, գումարումների — աւելի ևս ստեղծեց արշաւանքը հանրապետական գաղափարների դէմ... Դասակարգերի հակամարտութիւնից նպաստաւորւելով, բուրժուազիայի թևերի վրայ

բարձրարարով նա ինքզինքը դրեց շուտով դասակարգերից դուրս ու բարձր, և իր ահեղ ու ամբարտաւան բարձրութիւնից արհամարհեց նոյն այդ բուրժուազիային, դարձրեց նրան լոկ խաղալիք իր ձեռքում, ոչնչացրեց, անդամալուծեց դասակարգերի պայքարը, ստորադրեց ամեն ինչ իր բացարձակ, բռնապետական կամքին ու քմահաճոյքին։

Եւ ի՜նչ ահարկու ժղում տւեց պատերազմի համաճարակին.. միշտ նոյն անյագ և փառատենչ ախորժակներին սնունդ տալու նպատակով... Անհագին է այդ անասովոր անհատականութեան ազդեցութիւնը իր ամբողջ ժամանակաշրջանի վրայ։ Պատերազմների և սրարշաւ յաղթանակների շնորհիւ, Ֆրանսիայի տէրը կարճ միջոցում դարձաւ գրեթէ — Եւրոպայի տէր։ Կոյր բնազդը, փառասիրութեան լափող կիրքը մղեց նրան միշտ դէպի հեռուն, ուղղեց նրան դէպի ցարերի լայնածաւալ ու շլացուցիչ երկիրը (1812 թ.) և այդտեղ վերջապէս, անպարտելի տիտանը գտաւ իր հզօր և ահարկու ախոյեանը, որ պէտք է ժամներ նրան աղէտալի ու ողբերգական նահանջի... Ռուսական ձմեռը...

Դժգոհութիւնը — խոր ու լայնատարած — ածում էր դիւահանճար բռնաւորի դէմ, որ դարձրել էր Եւրոպան մի հսկայական ու արիւնալի ռազմադաշտ։ Դժգոհութիւն ամենուրեք, անգամ հայրենի բուրժուազիայի մէջ։ Եւ այդ ընդհանուր դժգոհութիւնը հիւսեց նրա մահապատանը։ Պայծակի արագութեամբ նա սլացաւ դէպի փառքի գագաթները և նոյնպիսի արագութեամբ գահավիժեց դէպի անդունդ։ Հսկայական զօրաշարժեր և բաղխումներ, մեծաշառաչ յաղթանակներ, որոնց պատմական անջնջելի անունները — Աուստերլից, Մարենգո, Ենա, Էյլաու, Ֆրիդլանդ, Վագրամ և այլն — արձանագրուած են այսօր Պարիզի *Aux Invalides*-ի եկե-

ղեցու մէջ, Նապոլէոնի փառահեղ դամբարանի շուրջը։

Ամբողջ արևմտեան և կենտրօնական Եւրոպան — Գերմանիա, Իտալիա, Սպանիա, Հօլլանդիա, Աւստրիայի ու Լիհաստանի մի մասը — պարձել էր ֆրանսիական երկիր, և հզօր աշխարհակալողը ամենուրեք բաշխում էր թագեր ու տիտղոսներ, բաժանում էր լայնածաւալ հողերը իր եղբայրների, փեսաների, ազգականների միջև։

Համատարած դժգոհութիւնը տիրանի դէմ արտայայտւում էր երբեմնապէս սուր, կատաղի վրէժխնդրութեան բռնկումներով. փորձեր եղան նրա կեանքի դէմ Պարիզի մէջ, բայց դաւադիր դժոխային մեքենաները միշտ վրիպեցին։ Մի ուրիշ փորձ տեղի ունեցաւ Աւստրիայում, Վիեննայի խաղաղութեան նախօրեակին (1809) գերմանացի մի ուսանող փորձեց դաշունազարկ անել Բօնապարտին, համոզւած, որ „այդ սպանութիւնը ամենամեծ ծառայութիւնը կը մատուցէր իր երկրին և ամբողջ Եւրոպային“։ Հայրենասիրութիւնը զարթնում էր ստրկացւած ազգերի մէջ և շուտով պիտի ծնունդ տար համաճարակ ու արիւնոտ ըմբոստացումների...

Ռուսական քնութիւնը իր ձմրան արհաւիրքներով միացած ռուս զօրքի դիմադրութեան ու կօզակների պարտիզանական արշաւներին՝ վճռական հարւածը տւին նապոլէոնեան հսկայ բանակին, որը չնայած Բօրօդինօի փայլուն յաղթութեան՝ յետ նահանջեց ցան ու ցրիւ, ողբալի վիճակի մէջ, ճարակւած մեծ մասամբ ցրտից ու անունդի պակասութիւնից։ Ու մինչ Մօսկւան, Ռուսաստանի հինաւուրց մայրաքաղաքը, ճարճատում էր կրակի բոցերի մէջ, մինչ աշխարհը սարսափած դիտում էր հսկայական մարտադաշտը հարիւր հազարաւոր դիակներով — փոքրամարմին տիտանը մի սալլի վրայ կծկւած, իր ցանցառ սպայակոյտով շրջապատւած, փախչում էր

դէպի սահմանը, դէպի Եւրոպա, փախչում էր մանաւանդ սոսկալի, անօրինակ տառնամանիքներից, շտապում էր դէպի Հայրենիք, ուր նոյնպէս դժգոհութիւնը եռում էր արդէն, ուր սպասում էին մի այդպիսի պարտութեան՝ ազէտաւոր բռնաւորին տապալելու համար։

Ռուսները գնացին եւս առաջ։ Ալէքսանդր I հերոսացաւ այդ պատմական օրերում. նա դարձաւ մի տեսակ համաեւրոպական պատարար, որի առջև խոնարհւում էին նապոլէոնեան լծին մատնուած ժողովուրդներն ու վեհապետները։ Վերջիններիս համախմբելով իր դրօշի տակ, Ռուսաստանի կայսրը հետապնդեց ահարկու զօրավարին, որ այնուհետև դարձեալ մի քանի անգամ նեղը ձգեց իր անհամար ոսոխներին, դարձեալ մի քանի անվեհեր, օրհասական թուիչքներ գործեց... և ապա, իբրև գերի, կալանաւոր, գնաց քաւելու Սէնտ-Էլէնի հեռաւոր և մեռնաւոր կղզիի վրայ Այնտեղ էլ մեռաւ (1821 թ.)։

„Ազատութեան“ անունով մղեց այդ կատաղի և վիթխարի արշաւանքը նապոլէոն Բոնապարտի դէմ։ Ազատութիւնը բառբառում էր իր երգեալ ոսոխների շրթունքներով իսկ Ալէքսանդր I և այլ բացարձակ, ապատաեաց միապետներ հրաւիրում էին ժողովուրդներին՝ ժարտնչելու յանուն իրենց անկախութեան... Եւ ուրագանի պէս շղթայազերծուեց ազատագրական շարժումը, ընդդէմ օտար տիրապետութեան, յանուն հայրենիքի անկախութեան և միութեան։ Նա մի առանձին վեհութիւն ստացաւ Գերմանիայում, ուր մտաւորական տարրերը բեմ նետուեցին առնական անձնուրացութեամբ, հայրենասիրական մի չքնաղ խանդավառութեամբ։

„Ազիր գերմանական հայրենիք, ազիր մեր դիակների վրայ“ — հնչեցրեց իր ազատաշունչ երգը բանաս-

տեղծ կեօրներ և ինքն անձամբ կուի դաշտ սլացաւ, ճակատամարտեց և նահատակուեց *):

Թէօդօր Կեօրների ջինջ պատկերը դարձաւ վսեմ, Հայրենասիրական պաշտամունքի առարկայ՝ ոչ միայն Գերմանիայում, այլ և ամեն տեղ, ուր ապրում էին ստրուկ ազգեր, ենթարկուած օտար լծի: „Նուաճել անկախ ու միացեալ Հայրենիք“ —նրա փայփայած իդէալն էր: Գերմանական Հայրենիքը, ինչպէս և իտալականը, ինչպէս և անթիւ ուրիշ Հայրենիքներ երկրագնդի վրայ, ընկած էր յօշոտուած, պառակտուն վիճակում, առանց կապի, միութեան և ազգային գիտակցութեան: Գէօթէի և Շիլլերի շքեղապանծ գրականութիւնը, Կանտի և Լայբնիցի անդնդախոր փիլիսոփայութիւնը, Բեթհօվէնի զմայլելի, աստուածային երաժշտութիւնը չէին գանում միացեալ և հարազատ մի օճախ, չէին գտնում մի կուռ, ինքնաճանաչ Հայրենիք, որ կրօնական պատկառոտ ջերմեռանդութեամբ հիւրընկալէր այդ պերճ մտքի ու երևակայութեան արգասիքը և որ սրտի համատարած ու ներդաշնակ տրոփիւնով արձագանք տար Հայրենական քնարի կախարդիչ դայլայլներին...

„*Ein Vaterland erkämpfen!*“, նուաճե՛լ պէտք է Հայրենիքը—գոչեց Կեօրներ ցասումով և մի սուրը առելութեամբ Համակուած և ինքն անձամբ օրինակ տուեց... Թողեց սիրած նշանածին ու ժոեիմներին, առաւ քնարը և խրոխտ, համարձակ նետուեց կամաւորների, գերմանական „Ֆէդայիների“ շարքերը: Գնաց Բրեսլաւ, որ կենտրօն-ժամադրավայրն էր ժարտատենչ երիտասարդութեան, և այդտեղ, սահմանագլխում ողջունեց Հայրենիքի պահապան Արծուին հետևեալ բառերով, որ

---

*) *Theodor Körner*, 1791—1813 թ.:

դեռ այսօր էլ ոգևորութեամբ են արտասանում գերմանացի հայրենասէրները.

Der freie Ross gehorcht dem Sklavenzügel,
Den Glanz der Raute seh ich welk verbleichen
Der Löwe krümmt sich unter fremden Streichen
Da nur erhebst mit neuem Muth die Flügel!...

Ազատ նժոյգն է ստրկական անարդ սանձին հնազանդում,
Խրախճանների շուք ու շռինդ դալկանում են և մարում,
Սէգ առիւծն է խոնարհւում բիրտ օտարի լծի տակ,
Շարժի՛ր, թա՛փ տուր թևերդ նորքաջութեամբ, համարձակ...

Հայրենիքի խորանին զոհաբերեց իր թանկագին արեւստը և իր անձը: Եւ ի՜նչ ահեղ, բոցաշունչ, որոտընդոստ ռազմերգեր... „*Leier und Schwert*“ (Քնար և Սուր) խորագրով... „Ցառա՛ջ, Սուրբ Գործը զոհեր է պահանջում, Ցառա՛ջ, վրէ՜ժ, դէպի սրբազան պատերա՛զմ, Ազատութի՛ւն կամ Մա՛հ“... նոյն կոչերն ու յորդորները, նոյն սրտառուչ նշանաբանները՝ որ այնուհետև տեսնում ենք բոլոր ազգային-ազատագրական կռիւների մէջ՝ Արևմուտքում թէ Արևելքում: Կամաւորների բանակը թնդաց շուտով այդ ազատաշունչ երգերով ու նշանաբաններով, ամբողջ զգայուն, գաղափարական երիտասարդութիւնը թևաւորւեց և ծառացաւ հայրենիքի թշնամիների դէմ: Եւ ինքը, գերմանական ազատամարտի մեծ երգիչը, ինքը բանաստեղծ-„Ֆիդային“ հրացանը ձեռին նետւեց կռւի ամենատաք կէտը, և պատերազմելով նահատակւեց: Մահից երկու օր առաջ հիւսեց իր կարապի երգը, „Սրի երգը“ (*das Schwertlied*): „Սի՛ լացէք — ասում էր նա — իմ մահից յետոյ, այլ նախանձեցէք իմ երջանկութեան“...

Ազատութեան պատերազմի դաշտ նետւեց — իբրև

հզօր, պերճախօս քարոզիչ — մի այլ գերման մտաւորական, հռչակաւոր փիլիսոփայ Ֆիխտէ։

Նրա սիրտն էլ արիւնում էր ի տես այն սոսկալի ջարդերի, խորունկ նւաստացումի ու անարգանքի, որ կրում էր գերմանական հայրենիքը Նապոլէօնի ոտքերի տակ։ Եւ մեղը օտարին չէր, ըստ Ֆիխտէի. մեղաւորը ինքը գերմանական ազգն էր, որ հանդուրժում ու պահպանում էր իր մէջ անվերջ երկպառակութիւնն ու բաժանումը, մանր-մունր պետութիւնների գձուձ, էգօիստ մրցումները և չէր կարողանում ստեղծել հայրենիքի միութիւն, զուրկ էր ճնում ազգային ինքնաճանաչողութեան զգացումից։ Ներքին թուլութիւնն է, որ պահպանում է օտարի լուծը... Եւ մեծ փիլիսոփան թողեց իր անձուկ առանձնասենեակը (դեռ 1806 թուից), մտաւ քաղաքական եռուն ագիտացիայի մէջ, գրաւեց հրապարակային ամբիոնը, ուսկից մի քանի տարի շարունակ արծարծում էր ազգայնութեան ու հայրենասիրութեան գաղափարները, կարդում էր իր „Ճառերը գերմանական ազգին“ *), ցոյց էր տալիս այդ ազգի խաղալիք առաջնակարգ դերը մարդկութեան պատմութեան մէջ, պարզում էր ներկայ ստրկական վիճակի արհաւիրքները և քարոզում էր ա պ ս տ ա մ բ ո ւ թ իւ ն գերմանական վերածնութեան այս միւս ռահվիրայի քարոզները եւս ահագին ազդեցութիւն ունեցան ժամանակի ազատագրական շարժումների վրայ։

***

Բօնապարտը յաղթահարեց—պէտք էր այժմ յաղթահարել Ֆրանսիային։ Պէտք էր վերստին սեղմել այն, վերածել իր նախկին աշխարհագրական մեծու-

*) *Fichte, „Reden an die deutsche Nation“.*

թեան։ Աւելի մեծ, ծանրակշիռ խնդիրը կար Ռուսաստանի և ամբողջ ներդաշնակ միապետական Եւրոպայի առջև.— պէտք էր յաղթել Ֆրանսիական յեղափոխութեան գաղափարները։ Պէտք էր ջնջել, արմատախիլ անել այն լմբոստ ու համաճարակ ոգին, այն ահաւոր, աշխարհադղրդ գաղափարները, որ քսանուհինգ տարուց իվեր արծարծում էր այդ երկիրը և որոնք դուրս էին նետւում կենտրօնական ԵՒոգից դէպի աշխարհի չորս բոլորը, տարուում էին նապօլէօնեան զօրագնդերի թևերի վրայ՝ դէպի բոլոր նւաճւած երկիրները։

Ալ. մեծ բռնակալ-աշխարհակալողը, իր կամքի դէմ, Ֆրանսիական յեղափոխութեան ջահն էր կրում Եւրոպայի բոլոր ծայրերում, Ֆրանսիական հայրենասիրութեան ու ազատասիրութեան գաղափարներն էր սերմանում ամենուրեք։ Իր կամքի դէմ, նա զօրաւոր մղում տւեց ազգերի ինքնաճանաչութեան. Իտալիա, Գերմանիա, Բելգիա, անգամ անշարժ, լեթարգիական մրափով տարւած Ռուսաստանը, սթափւում էին բռնակալի ճնշման տակ և հանրապետական զինւորների ազդեցութեան ներքոյ, արթնանում էր հայրենիքի և ազգայնութեան ոգին, այլացեղ ու այլաբարբառ ժողովուրդները սկսում էին գիտակցել իրենց իրաւունքի ու անկախութեան անհրաժեշտութիւնը, սկսում էին հիմք դնել զինւորական կազմակերպութեան։

Ազատութեան ոգին նոր սկսւող դարի անդրդւելի պահանջն էր։ Սէնի ափերից մինչև Թիւրքական բարբարոսութեան մատնւած երկիրները հանդարտ ու անշմարելի տարածւում էր լիբերալիզմը, ազատական հոսանքը։ Նա դառնում էր մի ճշմարիտ խարազան իշխողների համար, ծնում էր խռովութիւններ, վտանգում էր քաղաքական-հասարակական կարգերը։

պէտք էր մի պատուար ստեղծել այդ վտանգի դէմ... Ֆրանսիան ձգել էր զարհուրելի հրդեհը դէպի ամեն կողմ, Ֆրանսիան սասանեցրել էր բոլոր գահերը— պէտք էր սանձ դնել Ֆրանսիային։ Մարե՛լ պէտք էր Յեղափոխութեան մշտաբորբոք օճախը... „Համաճարակ" հիւանդութիւնը օրէցօր աճում է, նրա առաջն առնելու միջոցնե՛ր են պէտք", կրկնում էր անդադար Մետերնիխ *)։

Եւ ահա այդ նպատակով հիմնեց Վիեննայում 1815-ին հռչակաւոր „Սրբազան Դաշնակցութիւնը", հիմնեց ռուսաց միստիկ, խորհրդապաշտ թագաւորի նախաձեռնութեամբ, համախմբեց աւստրիական, պրուսական և մի շարք ուրիշ արևմտեան վեհապետներին։ Հիմնեց Դաշնակցութիւնը „քրիստոնէական" սկզբունքների վրայ։ Մեծ սկզբունքները պատրաստ են միշտ բռնաւորների բերաններում, երբ նրանք ձեռնարկում են յետադիմական, արիւնոտ գործերի։ „Սրբազան Դաշնակցութիւնը" քրիստոնէական պարտք էր դնում իր անգամների վրայ՝ փոխադարձաբար աջակցիլ „վտանգի" րոպէներին։ Ուրիշ խօսքով՝ նա նպատակ ունէր խեղդելու բոլոր միջոցներով ժողովուրդների յեղափոխական ձգտումները և ամեն մի ըմբոստ արտայայտութիւն։ „Քրիստոնէական կրօնի սկզբունքներով տոգորուած՝ պիտի միանան պետութիւնները եղբայրական անբաժանելի կապերով և աստուածային գերագոյն պատգամների համեմատ՝ պիտի աջակցեն իրար ամեն մի պարագայում" — այսպէս էր զառանցում բարեպաշտ և թուլամիտ Ալէքսանդրը։

---

*) Աւստրիայ համբաւաւոր նախարարապետը, որ մինչև պատմութեան ամենաուժեղ դիւանագէտներից և բռնապետական կարգերի ամենադժնդակ փաստաբաններից։

Ուղղած էր Դաշնակցութիւնը պարզապէս Ֆրանսիայի դէմ... Թէև նա վիճաժամանակ խոստանում էր „յարգել բոլոր ազգերի իրաւունքներն ու ազատութիւնները“: Նոյն այդ խոստումը բարձրաձայն տալիս էին դաշնակից բռնաւորները՝ Նապոլէօնի դէմ արշաւելու միջոցին: „Ազա՛տ եղէք ժողովուրդնե՛ր, ազատ յարգիկ ենք բոլորս“... Ունայն խոստումներ, որ շրայլում էին Եւրոպայի հրամանատարները այն ժամանակ, երբ պէտք էր ոտքի հանել ժողովուրդներին ընդդէմ Բօնապարտի: Դրժեցին ցինիկօրէն խոստումը և իւեղի հոչակած ազատութեան՝ նշանակեցին Եւրոպայի ժողովուրդների վրայ մի վիթխարի ժանդարմ, որ անուանեցին „Սրբազան Դաշնակցութիւն“: Նա պահեց սարսափի տակ ամբողջ Եւրոպան, մինչև 1830 թուականը, մինչև պարիզեան նոր, Յուլիսեան Յեղափոխութիւնը: Երբէք ժողովուրդների ու ազատութեան դէմ այդպիսի հսկայ դաւադրութիւն չէր կազմակերպել: Եւ երբէք այդ ազատութեան դահիճները չէին եղել այնքան ցինիկ և անհեթեթ իրենց հանդիսաւոր ծանուցումների մէջ...

Քրիստոնէական եղբայրութիւն էին հոչակում վեհապետները, իսկ այդ միջոցին լսւում էր յօշոտած Լեհաստանի հեծկլտոցը, որ մինչև երկինք էր աղաղակում: Ողբում էր Իտալիան, որին ժանեկ էին աւստրիական ատելի բռնապետութեանը: Ողբում էր Բելգիան, որին բռնի ստորադրել էին օտար Հոլլանդիային, օտար՝ լեզուով, կրօնով ու բարքերով: Ողբում էին գերմանացիք, որ քիչ առաջ ոտքի էին կանգնել՝ կռւելու յանուն ընդհանուր հայրենիքի ազատութեան, իսկ այժմ նորէն ենթարկւած էին բազմաթիւ իշխանութիւնների կամայականութեանց: Ողբում էր անմռունչ ռուսական ժողովուրդը, հարիւր միլիօնանոց գիւղացիութիւնը ճորտային անարգ կացութեան

մէջ, „կնուտի“ և „նագայկայի“ (*) լարբաստս ուժիմի տակ։

Ամեն տեղ լաց ու հառաչանք։ Ամեն տեղ ծաղրուած, ոտնահարուած էր ազգային պատիւը, ժարդկային իրաւունքները։ Եւրոպան իրար մէջ բաժանուած էին միապետները, ինչպէս որ կը բաժանէին հողային անքնակ մի տարածութիւն։ Ձուլուած էին իրար հետ տարբեր ազգութիւններ, միանգամայն տարբեր պատմական աւանդութիւններով։ Բովանդակ եւրոպական ազգաբնակութիւնը ներկայանում էր նրանց, որպէս անբան անասունների մի հսկայական հօտ, որ պէտք էր առաջ քշել մտրակով ու խարազանով, և որ անժուռնչ ու հլու հնազանդութեամբ պարտաւոր էր հետևել իր „աստուածընտիր“ առաջնորդներին։ Այդպէս էր տիրող հասկացողութիւնը։ Այդպէս է դեռ մինչև օրս էլ թագակիր դահիճների բարոյախօսութիւնը, նրանց աւետարանը.—կոյր, ֆանատիկոս՝ իրենց ըմբռնումների մէջ, կատաղի ու մոլեգնոտ՝ հանդէպ այն բոլոր մահկանացուների, որոնք խիզախում են բռնանալ իրենց յաւիտենական, „աստուածատուր“ արտօնութիւնների վրայ...

Սակայն իրերի հոսանքը աւելի ուժեղ է, քան ամենահզօր բռնակալը։ Իզուր Մետերնիխ, յեղափոխութեան այդ երդւեալ թշնամին, ճգնում էր յաւերժացնել տիրող վիճակը։ Ֆրանսիական յեղափոխութիւնը զարկ էր տւել ամեն տեղ ազգային ինքնաճանաչութեան. ժողովուրդների գէթ իմացական մասը եկել էր այն գիտակցութեան, որ ամեն մի ազգի համար կեանքի ու բարգաւաճման անհրաժեշտագոյն պայմանն է՝ նրա անկախութիւնը..

„Ազատութիւնը դագաղի մէջ անգամ ապրում է“ —

---

*) Աւետարանչական մտրակ։

ասում է Թեօրնէ։ Այո, նա ապրեց նոյնիսկ „Սրբազան Դաշնակցութեան“ ամրակուռ դագաղի մէջ և աճելով, ուռչելով ճայթեցրեց դագաղը։ Ցեղափոխութեան գա-



Թէօդօր Կեօրցեր

ղափարը բնական անխախտելի օրէնքով զարգանում ու տարածւում էր նահատակ ազգերի մէջ։ Մտքերի խմո-րումը աստիճանաբար աստկանում էր համալսարան-

ներում, գօրքի մէջ և ժողովրդի ստորին խաւերում, որոնց վրայ առանձնապէս ծանրացած էր բռնապետութեան լուծը։ Մի նոր Եւրոպա էր բարձրանում խաւարի ու տրկուԹեան մԹնոլորտից — Երիտասարդ Եւրոպան՝ Թարմ, կորովի, գաղափարական, որի կոչումն էր խզել հինաւուրց դաւանանքների հետ և առաջնորդել ժողովուրդներին դէպի սոցիալ-քաղաքական ազատագրութիւն։ Լրաւ է, մի աննշան փոքրամասնութիւն էր այդ, բայց միշտ և ամեն տեղ խիզախ փոքրամասնութիւնն է, որ հարթում է ազատութեան ճանապարհը...

***

Գաղտնի ընկերութիւնները իրենց անհամար ճիւղաւորութիւններով բուն դրին Եւրոպայի այլ և այլ անկիւններում։ Դրանք „դաւադիրներն“ էին, այն ահեղ, յանդուգն հոգիները, որոնց յաւէտ պիտի փառաբանէ ժողովրդական վիպերգութիւնը։ Իտալիայում նրանց անունը կարբոնարի էր, Գերմանիայում՝ „առաքինութեան դաշնակից“, Ֆրանսիայում՝ „ճշմարտութեան բարեկամ“, Յունաստանում՝ „Հէթերիա“։ 20-ական և 30-ական թուականները ժշակեցին դաւադիր-յեղափոխականի կլասիկ տիպը, որ մենք տեսնում ենք այնուհետև բոլոր ժամ ու խոշոր ազգերի ազատագրական շարժումների մէջ։ Ամեն տեղ նման էին դաւադիր ընկերութիւնները. կազմակերպութեան, ձգտումների ու գործողութիւնների մի բնական համերաշխութիւն կար նրանց մէջ։ Բոլորն էլ միևնոյն յեղափոխական շնչով վարակուած, բոլորն էլ տոգորուած անսահման ատելութեամբ դէպի բռնապետութեան հաստատութիւնը։

Ռեակցիայի ճանկերում գալարելիս՝ նրանց ուրիշ ելք չէր մնում, բայց եթե բռնել արեան ու զոհողության ճանապարհը։ Դա այն շրջանն էր ազատագրական պայքարի, երբ անժուժելի էր՝ քարոզել սուրբ խաղաղ պրօպագանդ։ Բայց և այն շրջանն էր դա, երբ չէր կարելի ուժի միջոցով դիմագրաւել ուժին, բացարձակ կուռի դուրս գալ ահարկու թշնամու հետ։ Կուիւը չափազանց անհաւասար էր։ Պէտք էր դիմել „ստորերկրեայ“ միջոցների։ Պէտք էր պատսպարել խաւար անկիւններում և գաղտնի դարաններից պարբերաբար շանթել թշնամուն անակնկալ հարուածներով։ Դա տերրօրի սիստեմն է, որ մի առանձին խանդով են գրկել ազատութեան մարտիկները բոլոր երկրներում։

Տերրո՛ր... եղաւ այնուհետև բոլոր յեղափոխականների նշանաբանը։ Մի առանձին թովք ունի այդ բառը բոլոր յուսահատ մաքառողների համար. և նա միշտ էլ եղել է փոքրամասնութեան գերագոյն զէնքը՝ ընդդէմ ճնշող մեծամասնութեան։ Երբ ժողովուրդները յոգնած, ուժասպառ՝ մատնում էին իսպառ լքելու վտանգին, կայծակի շանթեր էին պէտք՝ սթափեցնելու նրանց և խրախուսելու վերստին դէպի կռիւ։ Ցուսահատական և խիզախ վճիռներ էին պէտք՝ երկիւղ ազդելու բռնաւորին և կանգնեցնելու թերևս նրա աւերիչ ձեռքը։ Եւ տերրօրը սկսեց իր արիւնոտ գործը։ Եւրոպական ցամաքի այլ և այլ կէտերում, մին միւսի եւևիից, կարծէք ընդհանուր համաձայնութեամբ, պայթեցին դաւադրական գործողութիւնները, մի տեղ՝ ապստամբութեան ձևով, մի այլ տեղ՝ մասնաւոր մահափորձերի։ Ահա 1819-ին գերմանական Մանհայմ քաղաքում ուսանող Մօրից Զանդ դաշունազարկ է անում ռուս-կայսերական լրտես Կօցեբուին։ Ահա Պարիզում 1820-ին երիտասարդ Լուվել մի հարուածով գետին է փռում գահա-

ժառանգ դուքս Բերրիին. և դեռ քանի՛ քանի յանդուգն դաւեր էին կազմակերպւած նոյն Պարիզում... Ահաւասիկ Նապօլի, Տուրինի, Մադրիդի արիւնահեղ ապստամբութիւնները, որոնք տեղի են ունենում գրեթէ միաժամանակ (1820—21 թ.)։ Ահա „Համաշխարհային Բաստիլ“ - Պետերբուրգում պահականոցի մի գունդ ապստամբում է նոյն վայրկեանին, երբ ցարը Տրօպաւի մէջ Մետերնիխի հետ միջոցներ էր խորհում ոչնչացնելու յեղափոխութեան համաճարակը արևմուտքում։ Ահա քիչ յետոյ Ռուսաստանի հարաւում սարսափելի „դեկաբրիստները“ դաւ են նիւթում գնդապետ Պէստելի ղեկավարութեամբ, որի նպատակն էր սպանել թագաւորին և հանրապետութիւն հռչակել Ռուսաստանում...

Անհաշիւ են դաւադրութիւնները ու ժահափորձերը անցեալ դարու առաջին տասնամեակներում։ Արևմուտքից-արևելք, հիւսիսից-հարաւ մի ևնոյն հոսանքն էր, կամ — բռնապետների լեզուով — մի ևնոյն „հիւանդութիւն“ էր, որ անընդհատ նետաճուճներ էր անում։ Ամեն տեղ դաւադիրների և ապստամբների նիւթական կոչն էր՝ „կեցցէ՛ Սահմանադրութիւնը“։ Սակայն, գործնական արդիւնք տակաւին չկար։ Անպտուղ էին մնում շատ յեղափոխական ձեռնարկներ։ Նրանք յաճախ դեռ չսկսած՝ վիժում էին. բռնաւորների թունոտ վրէժխնդրութեանը մատնելով Սուրբ Գործի հեղինակներին։ Այդպէս վիժեցին բ ս ա ն դաւադրութիւններ, որ պարիզում էին կազմակերպւել։

Ցարատև սարկութեան վարժւած՝ զանգւածները դեռ չէին ձայնակցում իրենց գաղափարական զաւակների կոչերին։ Անհատները զոհւում էին հերոսական անձնւիրութեամբ, նոր-նոր էջեր աւելացնելով յեղափոխական մարտիրոսագրութեան, և վատահ՝ որ իրենց գիտակ-

ներ վրայ պիտի բանէ ու ամէն հանրային ազատութիւնը...

„Սրբազան Դաշնակցութեան“ լէգէոնները սլացան դէպի ամեն կողմ, ուր զարհուրելի „հիւանդութիւնը“ սպառնական գլուխ էր բարձրացրել. Նապոլում, Տուրինում, Սպանիայում և ամեն տեղ բարբարոսաբար ճընշեցին ապստամբութիւնները, խեղդեցին դաւադիրներին և դրակօնական օրէնքներով բռնացան ազատ մտքի ամեն մի արտայայտութեան վրայ: Համալսարանները փակեցին կամ թէ ենթարկեցին անլուր հսկողութեան. շատ թէ քիչ ազատամիտ պրօֆէսօրները դուրս քշեցին, „Առաքինութեան դաշնակցութիւնը“ և բոլոր ուսանողական ընկերութիւնները քայքայեցին, մաժուլը ենթարկեց ցենզօրական անսահման բռնակալութեան, միջնադարեան ինկվիզիցիան իր բոլոր արհաւիրքներով արշաւեց կաթոլիզմի դէմ և գերեզմանային խաղաղութիւնը պահ մի թագաւորեց Եւրոպայի վրայ: Այդպէս էին պատւիրում „քրիստոնէական սկզբունքները“, այդպէս էր թելադրում Սրբազան Դաշնակցութեան“ գերագոյն շահը...

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Վրայ հասաւ, սակայն, Յունաստանի ապստամբութիւնը:

Բալկանեան թերակղզին բաւական ժամանակից ի վեր յեղափոխական խուռ ագիտացիայի թատր էր: Թիւրքական անորակելի բռնապետութիւնը այդտեղ աւելի քան անհնարին էր դարձրել ժողովրդանց խաղաղ ու կուլտուրական կեանքը: Լուծը առանձնապէս ծանր էր քրիստոնեայ ժողովուրդների համար. սերբ, յոյն, բուլգար,

ժակեդօնացի, ժօլդավ ու վլախ—բոլորն էլ հաւատա-
րապէս ճնշուած — անպատմելի թշուառութեան մէջ ապի
արցունք էին թափում։ Մտրկութիւն էր բառիս համարեա
տնտեսագիտական նշանակութեամբ, և այդ մտրկու-
թիւնը ամբողջ դարեր տևեց։

Անհաշիւ էին քրիստոնեայ „ռայա“-ի կրած ճնշում-
ներն ու անարգանքները։ Ցունական շարժման ժամա-
նակակից յոյն Ոդիսևս մի քանի խօսքով բնորոշում է
կացութիւնը.

„Անգթութիւն, որ գործ է դրում առանց կատա-
վարել իմանալու, անիրաւութիւն վէզիրների, վոյվոդ-
ների, կադիների, բուլուբբաշիների կողմից, որոնք բռնա-
բարում էին իրենց հաճելի ամեն մի յոյն կին, գլխա-
տում էին ամեն մի հարուստ վաճառականի, որպէս զի
յափշտակեն նրա ստացուածքը, թոյլ էին տալիս ամեն
մի թափառաշրջիկ սրիկայի՝ սպանել հրապարակով այս
կամ այն ռայային“... Խաղաղ, անզէն, աշխատասէր ազ-
գաբնակութեան համար այդ կացութիւնը աւելի քան
անհանդուրժելի էր։ Սովորական հարկերից դուրս՝
գիւղացին ստիպուած էր իր տանը զինուորներ բնակեցնել,
հանրային աշխատանքները ձրի կատարել, պատերազ-
մական ու այլ կամայական տուրքեր վճարել ևլն ևլն։

Աննահման բռնութիւնը իսպառ չէր բթացրել մտրկին։
Թշուառութեան ու յուսահատութեան գագաթին հա-
սած յոյն աշխատասէրը՝ հողագործ շինականը կամ ար-
հեստասէր քաղաքացին՝ թողնում էր յաճախ իր դաշտն
ու արհեստանոցը և փրկարար հրացանն առած՝ ապա-
վինում էր հայրենի լեռներին... Նա „ասլակ“ էր, բո-
ղոքող։ Նա իր անառիկ թաքստոցից պարբերաբար կը
յարձակէր թիւրք գիւղերի ու կառավարական պաշ-
տօնեաների վրայ, կը կողոպտէր և կըսպաներ, այս կամ այն

ձևով վրէժխնդիր կը լինի իր հայրենիքի դահիճներից... Այդպէս կազմեց կլէփտների համ հայդուկների հռչակաւոր դասակարգը, որ պիտի դառնար նախակարապետ ազատագրական շարժումների և որի ներկայացուցիչները ժենք գտնում ենք այնուհետև արևելեան բոլոր ազգերի ապստամբական կռիւներում։

Սակայն XIX-րդ դարու սկզբում արդէն իսկ երերում էր օսմանեան պետութեան հսկայ ու խարխուլ օրգանիզմը, կենտրօնախոյս ձգտումները ծայր էին տալիս ամենուրեք. փոքր Ասիոյ քրդական դէրէբէյները, Արաբիա, Եգիպտոս, Տունիս, Ալժիր, Բօսնիա-Հերցեգօվինա, Ալբանիա, Մօլդավ-Վալախիա, Սերբիա, Յունաստան, գրեթէ բոլոր հատուածները—ամենք կիսանկախ վիճակում—եռում էին դժգոհութեամբ, ձգտում էին բնազդօրէն դէպի անկախութիւն ու ազատութիւն։ Արևմուտքի գոռ անցքերն էլ իրենց խուլ արձագանքներն ունէին այդ վայրենի խորշերում, ուր ժողովրդային զանգուածները այնքա՜ն ընտելացել էին „ռայա"ի զազիր, ողբերգական կացութեան։

Յունաստանի մէջ, ինչպէս ասացինք, վաղուց արդէն երևան էին եկել ազատարար Բողոքի կայծերը։ Առաջին ըմբոստ նահատակն էր կօնստանդին Ռիգաս։ 18-րդ դարու վերջերում, նա վառած ֆրանսիական յեղափոխութեան նշանաբաններով, յղացաւ իր հայրենիքի ապստամբութեան գաղափարը, մի քարոզչական պտոյտ արեց յոյն գաղութներում, պատերազմական ծրագիր կազմեց, բանակցութեան մէջ մտաւ Վիեննայի ֆրանսիական դեսպանի հետ, փորձեց անձամբ ներկայանալու Բօնապարտին՝ նրա կարող միջամտութիւնը հրաւիրելու Յոյների Իսրայէլ Օրին... Անյողդողդ չունեցաւ յունական ազատութեան այդ առաջին ոահվիրան։ Աւստրիա-

կան կառավարութիւնը բռնեց նրան և յանձնեց մի քանի ուղեկիցների հետ՝ Թիւրքերին։ Բելգրադի փաշայի հրամանով Ռիգաս նետուեց Դանուբի ջրերը (1798 թ.)։ Ասում են, մահից առաջ նա յայտարարեց. „Ես ձգեցի սերմը, ժամանակով ազգը կը հնձէ նրա գեղեցիկ պտուղները“։ Իր ոտանաւորներով նա քիչ անգամ չէր ոգևորել հայրենակիցներին, մասնաւորապէս հայդուկներին.

„Պալիկարնե՛ր, մի՛թէ՞ դեռ երկար պիտի ապրիք առիւծների պէս առանձնացած կիրճերի մէջ, լեռներում ու ժայռերում, մութ այրերում ու անտառներում... Մի՛թէ՞ երկար պիտի թողնէք անպաշտպան ձեր եղբայրներին ու ծնողներին, ձեր հայրենիքը, ձեր տունն ու տեղը։ Յիշեցէ՛ք, որ լաւագոյն է մի ժամ միայն ազատ ապրել, քան հազարաւոր տարիներ բռնակալի լծի տակ“...

Հիմնեցին այլ և այլ տեղերում գաղտնի ընկերութիւններ։ Նրանց համար մշտնջենական խրախոյս էր արևմտեան, իտալական „կարբոնարիզմը“, այդ ընդարձակ և ահաւոր յեղափոխական ընկերակցութիւնը, որի մասին կը խօսենք յետոյ։ Ոչ պակաս զօրաւոր խրախոյս էր և այն բուռն համակրութիւնը, որ վաղուց արդէն ցոյց էր տալիս հիւսիսային հզօր քրիստոնեայ պետութիւնը, Ռուսաստանը՝ դէպի այդ ճնշուած ու հաւատակից ժողովուրդները։ Ռուսաց պետական ծառայութեան մէջ փայլուն դիրք ունէին մօլդաւ հօսպօդար Իպսիլանտի և յոյն կապօդիստրիա, որոնց և վիճակուած էր դեր խաղալ Բալկաններում վաւելիք ապստամբական հրդեհների մէջ։

Գաղտնի ընկերութիւնների մէջ նշանաւոր էր յունական Հ է թ է ր ե ա ն։ Բառի իմաստն է՝ „ընկերակցութիւն՝ փոխադարձ աջակցութեան համար“։ Կար Հէթէերիա — զուտ գրական, օրինական, հրապարակային։ Հիմ-

նեւելով 1812-ին Աթէնքի մէջ և ապա ճիւղաւորելով ամբողջ երկրում՝ նա ձգտում էր զարկ տալ ազգային վերածնութեան, հիմնում էր այդ նպատակով դրամական ֆօնդեր, դպրոցներ, թանգարաններ, գրադարաններ ու գրական հանդէսներ, հրատարակում էր հին յունական կլասսիկներին, ժողովում էր ազգային ժեծարժէք հնութիւնները, ղրկում էր բազմաթիւ յոյն երիտասարդներ դէպի եւրոպական համալսարանները, արծարծում էր ամեն կերպ և ամեն տեղ հայրենասիրութեան հաւատամքը։ Աղօղութիւնը ահագին էր. ասում են, այդ պատկառելի ընկերակցութեան անդամների թիւը հասել էր 80,000-ի։

Կար և Հէթէրիա—գաղտնի, քաղաքական։ Սա լրացուցիչ էր առաջինին։ Երկուսի նպատակը իրօք նոյնն էր՝ թօթափել տաճկական լուծը և վերանւաճել հին փառապանծ հայրենիքը։ Տարբեր էր գործունէութեան միջոցները։ Գաղտնի հէթէրիականները հաստատել էին իրենց կենտրօնը Ռուսաստանի մէջ, Օդեսայում, ապա Մօսկւա։ Նրանց նպատակն էր՝ արծարծել ամբողջ հելլեն աշխարհում ապստամբութեան գաղափարը, բորբոքել ատելութիւնն ու վրէժը թիւրքերի դէմ. և ընկերութեան անդամները երդումով միանում էին այդ հայրենավրէժ ատելութեան աւետարանի շուրջը։

Ընկերութեան գանձարանն ևս գտնւում էր Ռուսաստանում։ Կենտրօնը, բացարձակապէս քաջլսերւած ոուս կառավարութիւնից, ղրկում էր շարունակ քարոզիչներ Թիւրքիոյ այլ և այլ կողմերը՝ տարածելու յեղափոխութեան սերմերը, մշակելու գետինը՝ ապագայ գործողութիւնների համար։ 1818-ին Հէթէրիան արդէն իր գաղտնի կայանն ունէր—կ. Պօլսում։ Կենտրօնական կօմիտէն 8 հոգի էին, մէկը ճնում էր օսմանեան մայրա-

քաղաքի մէջ, միւսը պետերբուրգ, երրորդը Բուքրէշ, միւանները թիւրքիոյ այլ և այլ կողմեր։

Հասան գործելու օրերը։ 1821-ին յոյն Իպսիլանթի թևաւորուած ցարի հովանաւորութեամբ, անցաւ Ռումանիա (Մոլդավ-Վլախիա) և փորձեց ոտքի հանել ազգաբնակութիւնը թիւրք կառավարութեան դէմ։ Փորձը վիժեց։ Մոլդավուրդը տակաւին անպատրաստ՝ չշարժեց տեղից։ Իպսիլանտի ամէն տեղ ասում էր, թէ Ռուսաստանը շուտափոյթ օգնութեան կը հասնի. այդ յոյսը սակայն չ'արդարացաւ, ցարը այնքան էլ չէր շտապում և ի վերջոյ շարժման պարագլուխը հռչակեց, իբրև խաբեբայ։

Անշարժ չմնաց Ցունաստանը։ Ազատամբութեան կոչը ուժգին արձագանք գտաւ հելլէնների սրտերում։ Նրանք ուժեղ էին և ահարկու իրենց խանդավառութեամբ, թէև չափազանց տառապած ու ստրկացած թիւրքական դարաւոր ուժիմի տակ։ 1821 մարտի 21-ին մի արքեպիսկոպոս տնկեց կալավիտրա քաղաքի պարիսպների վրայ անկախութեան դրօշը և անմիջապէս պայթեց ապստամբութիւնը ամբողջ Մօրէում։ Հէթէրիան լաւ էր աշխատել։ Մեծ թւով պատրաստ, զինավարժ ուժեր, ճարպիկ նաւավարներ, մարզած կեանքի զրկանքների մէջ։ Օրինակելի էր և ազգային համերաշխութիւնը — գէթ շարժման սկզբներում։ Դասակարգերը ջնջել էին ազգային մեծ գաստի առջև, հարուստ ու աղքատ ձեռք ձեռքի տուած կազմակերպում էին դիմադրութիւնը։ Ցոյն հարուստներն էին մատակարարում պատերազմական պաշարը, ռազմամթերքը։ Ահա թէ ինչպիսի յայտարարութեամբ էր հրապարակ գալիս ամենախոշոր հարուստներից մինը, Լազար Կոնդուրիոտիս.

„Երեսուն տարուց իվեր ես ամբարել եմ գանձեր — և քախտաւոր կը լինէի, եթէ նրանք այսօր ծառայէին իմ երկրի

ազատութեան... Յուսամ եմ, որ միւս հարուստներն եւս կուզենան նոյն ղեկայումները. եթէ ոչ, դարձեալ մի՛ վհատէք, եւ նաւատորմի ամբողջ ծախքը կը հոգամ մենակ":

Սոսկալի, արիւնահեղ ընդհարումներ: Պատմութիւնը վկայում է, որ իրենց առաջին յաղթական կռիւների ժէջ յոյն ապստամբները ցոյց էին տալիս ծայրայեղ անգթութիւն դէպի իրենց ձեռքն ընկած թիւրք զոհերը—կանայք, ծերեր, երեխաներ: Որքան գարշելի—այնքան եւ բնական... Նոյն տակտիկն են ունեցել շարժման սկզբներում բոլոր միւս ազգերի յեղափոխական զաւակները... „Ակն ընդ ակա՛ն"... Եւ միթէ՞ այդպէս չէր նաև արևմտեան յեղափոխութիւնների ընթացքում, միթէ՞ այդպէս չէին „Ֆիւզացիական մեծ շարժման", Ֆրանսիական Յեղափոխութեան և բոլոր միւս քաղաքական ու սոցիալական փոթորիկների դրդիչներն ու կատարողները... Մարդկային հոգեբանութիւնը ամենուրեք նոյնն է, ամենուրեք նոյն ձևով է հակազդում, ըմբոստանում դարաւոր բռնութեան նիւթած ոճիրների դէմ. մարդկային վրէժխնդրութիւնը—դարերով մթերւած, առելութեամբ վառւած—ուրիշ ելք չի գտնում, ուրիշ միջոց չի ընդունում յաղթանակի վայրկեաններին, բայց եթէ անգթութիւն ու աւերած, մոլեգնութիւն ու զարհուրանք. բնական էին, աւա՛ղ, այդ արեան նախճիրները և այդ ոճրալի սարսափները, որ նիւթում էին յոյները իրենց երէկւայ տէրերի դէմ, յաճախ անմեղ և անմտան մահմեդական ժողովրդի դէմ. բնական էին յեղափոխական և սերբերի, բուլգարների, կրետական, մակեդոնական ապստամբների մերթ ընդ մերթ արտայայտած վրիժառու բռնկումները... ինչպէս որ բնական էին, տարբերաձևաբար, և հայ ապստամբ խմբերի նոյնքան ցասկոտ ու արհաւրալի ժեստերը, սկսած Վասիլ բէկի օրերից—երբ հայկական դանակը Սիւնիքի ձորերի մէջ անխնայ


ժողովուրդ էր օսմանցիներին առանց սեռի ու հասակի խտրութեան — մինչև 1890-ի „արշալոյսի“ օրերը, երբ Կուկունեան խումբը թիւրքական սահմանագլխուժ, առանց վարանելու, կոտորում էր իր ձեռքն ընկած բոլոր թիւրք ու քիւրդ զոհերին։ Մարդկային զգացումն ու բանականութիւնը ցասումով ըմբոստանում են այդ սոսկալի արարքների դէմ, բայց համաշխարհային պատմութիւնը՝ յաւիտենօրէն դաժան, անխռով ու անտարբեր՝ շշնջում է. „այդպէս եղել է, այդպէս լինելու է“... Քաղաքակրթութիւնը դարեր շարունակ տաշում է և տրորում ժարդ-գազանի ճիրաննները, բայց տակաւին չի ամոքել նրա անզուսպ կատաղութիւնը և արիւնաուշտ թռիչքները... Պիտի ամոքի՞ երբևիցէ... Հաւատում ենք և օրօրւում յոյսերով...

Վերադառնանք հելլէնների ապստամբութեան։

Աւելի ևս զարհուրելի եղաւ նրա յարուցած հակահարւածը։ Աւելի անգութ և ծաւալուն՝ մահմեդական վրէժխնդրութիւնը։ Առաջին մեծ „ազգային ապստամբութիւնն“ էր, գրեթէ անակնկալ՝ օսմանեան տէրերի համար։ Եւ սոսկաց բռնակալութիւնը, գլուխը կորցրեց ու դիմեց այն միակ ու գերագոյն միջոցին, որին նա ընդունակ էր իր բարբարոս անձարութեան մէջ և որին այնուհետև հաւատարմօրէն պիտի հետևէին սուլթաններն իրենց հպատակ քրիստոնեաների ապստամբական շարժումների հանդէպ... Նա դիմեց կ ո տ ո ր ա ծ ի։

Հայկական տրագեդիայի ծաւալը նա չունեցաւ, բայց և նւազ ցնցող չէր իր դժոխային զարհուրանքներով։ Իսկ մի քանի մանրամասներ կարող են նոյնիսկ գերազանցել հայկականին։ Կ. Պոլսի յոյն պատրիարքին կախեցին պատրիարքարանի դրան վրայ և 80-ի չափ եպիսկոպոսներ ու վարդապետներ տեղնուտեղը սպանեցին։ Նկեղեցիները թալանեցին ու փլատակ եղան և տասնեակ հա-

զարեւոր ժարդիկ կոտորեցին։ Անհեւի ջարդեր տեղի ունեցան Քիօս, Կիպրոս և Կրետէ կղզիներում և ուրիշ տեղեր. Յունաստանը լողում էր արեան մէջ։ Կրակ ու արիւն Թեսալիայի, Բէօտիայի, Ատտիկայի մէջ։ Եգակի էր իր ժոլեգնութեամբ Քիօսի ջարդը. 100,000 քնա-



Քիօսի ջարդը

կիչներից 47,000-ը վաճառեցին, որպէս գերիներ, ճնաշածը խողխողեցին։ Յոյն ականատես պատմագիրներից մէկը, Զուցօ, այսպէս է նկարագրում այդ վիթխարի կատաստրօֆը.

Կարա-Ալին ներս խուժեց իր ասիական հօրդաներով։ Վերջիններս սարսափելի ճիչեր արձակելով, տարածեցին

քաղաքի մէջ, կրակ նետեցին ամեն տեղ, ջարդեցին եկեղեցիների դռները, քանդեցին մեռելների գերեզմանները, ուր կարծում էին, թէ կը դանէին ծածուկ գանձեր, ապա ցրեցին գերեզմաններից հանած ոսկորները փողոցներում, խառնելով մեռելների նշխարները մեռնողների արեան հետ... Ապա եկան գինուորները և անձնատուր եղան բարբարոս խրախճանքների. քարշ էին տալիս հերթական կանանց սենեակների վրայ և խայտառակ տանջանքներով մեռցնում նրանց՝ իրենց ապանած ամուսինների դիակների վրայ... Դերվիշները, արբած քիօսի անուշարբոյր գինիներով, գիւղային պար կազմեցին հազարաւոր ցլի հանած դլուխների շուրջ... Աւերակների կոյտ դարձնելով 25 հազար բնակիչ ունեցող քաղաքը, նրանք տարածեցին կիւղերը և կատարեցին հարիւրներով ու սոսկալի չարչարանքներով—կին, երեխայ, ծեր, քահանայ, բոլոր նրանց, որոնք չէին կարողացել փախուստ տալ։

Քիօս կզզու 100,000 բնակիչներից մնացին ընդամենը 900 հոգի...

Այո՛, չափազանց տխուր և յուզիչ էջեր ունի հելլեննների ժարտիրոսագրութիւնը .. Միաուլիս և Կանարիս—յունական ազատամարտի հերոսական շարքից—եկան յետոյ իրենց հրձիգ նաւերով վրէժ հանելու թիւրքերից, կատարեցին փայլուն ու անվեհեր թուիչքներ, օդ հանեցին թիւրքական բազմաթիւ նաւեր, բայց թշնամին դեռ երկար մնում էր իր յաղթական դիրքերում, նա դեռ երկար ճօճում էր իր ժարդոջինջ եաթաղանը Ռուսաստանը չէր գալիս... Օգնութեան ձայն չէր լսում և Արևմուտքից՝ Շարժումը ընթանում էր գահավիժօրէն դէպի անդունդ, դէպի ահեղ ու անդառնալի պարտութիւն։ Ներքին մրցումները ու կռիւները առանձնապէս ծանրացնում էին կացութիւնը։ Սկզբնական միահամուռ գաղափարային խանդավառութիւնը չքանում էր և շարժումը կտրատւում մանրիկ-ների. արկածախնդիր և աւազակաբարոյ տարրերը սուրբ բանում էին հրապարակի վրայ և իրական պատուհաս

դառնում յեղափոխական շարժման համար։ Ապստամբութեան պարագլուխները իսկ, սակաւ բացառութեամբ, տարուում էին մրցման տենդով... Մի կատարեալ քաղաքացիական կռիւ էր, որի դէմ Զայլդ-Հարօլդի աստուածաշունչ հեղինակը երկար և իզուր պայքարեց աղաչանքով ու յորդորներով։

Եւրոպան — անկարեկիր և անտարբեր։ Ոչ մի պետութիւն, ոչ իսկ Ռուսաստանը, չէր վստահանում առանձնակի միջամտել. „Շահերի հակամարտութիւնը“, դիւանագիտական անարդ հաշիւները այն ժամանակից արդէն շեշտուում էին Արևելեան խնդրի արիւնաներկ կրկէսի մէջ...

Կռիւը, այնուամենայնիւ, շարունակուեց։ Նա ունեցաւ մի շարք յուզիչ դրւագներ։ Մինչ զինուորական պարագլուխները կազմակերպում էին կռիւն ու դիմադրութիւնը, ուրիշ նշանաւոր գործիչներ — Մավրօկօրդատօ, Նեգրիս և այլն — գումարում էպիդաւրոսի մէջ, գեղջկական մի յարկի տակ „Սահմանադիր ժողովը“ ազգի պատգամաւորներից (1822 յունուար) և իրենց ղեկավարութեամբ խմբագրում էին երկրի հիմնական օրէնքները, ներշնչուած Ֆրանսիական յեղափոխութեան հոչակաւոր ծանուցումներով.

1. Բոլոր կրօնները ազատ են և ազատօրէն կը կատարին բոլոր կրօնական արարողութիւնները։
2. Բոլոր յոյները ազատ են օրէնքի առաջ, առանց խտրութեան պիրքի ու ծագման։
3. Իրաքանչիւր քաղաքացու գոյքը, պատիւն ու ապահովութիւնը դրւում են օրէնքի պաշտպանութեան տակ։

Ցոյն ազգը — ասում էր Սահմանադիր ժողովը իր „անկախութեան յայտարարութեան“ մէջ — յոյն ազգը վկայ է կոչում երկինքն ու երկիրը, որ չնայած օսմանցիների զարհուրելի լծին, որ ապառնում էր քնաջինջ անել նրան, ապրում

է տակաւին։ Այդ գագան բռնաւորները իրենց տժարդի և աւերիչ շահատակութիւններով ստիպեցին յոյն ժողովրդին զէնքի դիմել։ Այս պատերազմը ազգային է և սուրբ է։ Մենք կուզենք վերստանալ մեր դիրքը քաղաքակիրթ ազգերի գերդաստանում։

Ո՜նչ. մինչ՛ յոյները դատապարտուած էին յաւիտենական ստրկութեան, շարունակական հարստահարութիւնների, բռնութիւնների և ջարդերի... Մի քանի բարբարոս հօրդաների կոպիտ ուժը կարող է՞ր միթէ արդարանալ միջազգային իրաւունքի առջև... Մենք ընդհանուր համաձայնութեամբ գնում ենք նւաճելու մեր ազատութիւնը և հաստատապէս որոշած ենք կամ ձեռք բերել այն կամ թէ թաղել մի անգամ ընդմիշտ մեր դժբախտութիւնները մի մեծ աւերակի տակ, որ արժանի է մեր ծագումին...

***

Օգնութիւն չէր հասնում։ „Սրբազան Դաշնակցութեան“ բռնած դիրքը աստիճ դժւարացնում էր յունական շարժման յաջողութիւնը։ Աւստրիան բացարձակապէս հակառակ էր որևէ միջամտութեան. Մետերնիխ կարբոնարիզմի ուրուականն էր տեսնում յունական ձրգտումներում։ Խիստ փափուկ դրութեան մէջ էր ցար Ալէքսանդր ։ Մի կողմից նա կ՚ուզէր խրախուսել Բալկանեան ազգերի յեղափոխական կռիւը, ազատել նրանց տաճկական տիրապետութիւնից, անդամահատել այդպիսով սուլթանների կայսրութիւնը և բարելաւել դէպքում տիրանալ նրան։ Այդ էր պահանջում Ռուսաստանի աւանդական շահը. այդպէս էր հրահանգում պետրոս Մեծի հռչակաւոր կտակը, որ այնքան յաճախ յիշատակւում է դիւանագիտական պատմութեան մէջ և որ իրօք ծուծն է կազմում Արևելեան վիճակի հարցի։ Մեա կողմից նա գարշում ու սարսափում էր յեղափոխութիւններից և իբրև անդամ „Սրբազան Դաշնակցու-

թեան", նա պիտի հոգար ամենախիստ միջոցներով հանգցնել յեղափոխութեան հրդեհը, ուր որ էլ երևար այն: Ահա թէ ինչու դեռ 20-ական թուականներից առաջ՝ Հէթերիայի կոչից Ռուսաստան ուղարկուած Կապոդիստրիասը, որ պիտի խնդրէր օգնութիւն կոմս Կապոդիստրիայից և նրա միջոցով՝ Ալէքսանդր կայսրից, ստիպուեց ձեռնունայն վերադառնալ, առաջ բերելով յոյների մէջ ընդհանուր յուսահատութիւն: Ահա թէ ինչու 1821 թուին, երբ Իպսիլանտին՝ արդէն գրաւած Եաշի քաղաքը, յատուկ պատգամաւոր ուղարկեց Ալէքսանդր կայսեր մօտ. վերջինս ոչ միայն մերժեց յոյներին օգնութեան հասնելու առաջարկը, այլ և խոստացաւ սուլթանին „իր աջակցութիւնը՝ խռովարար յոյներին ճնշելու համար": Ահա թէ ինչու Ռուսաստանը տեղից չշարժուեց նոյնիսկ այն ժամանակ, երբ փոքր յետոյ թիւրք և ռուս կառավարութեան յարաբերութիւնները այնքան լարուեցին, որ ռուսաց դեսպան Ստրոգանովը ստիպուեց հեռանալ Պօլսից: Նոյն թշնամութեամբ էին վերաբերում յունական շարժումներին և միւս պետութիւնները: Այդպէս, օրինակ, 1823 թուին, երբ Վիրօնայում տեղի ունեցած դեսպանաժողովին ներկայացան Յունաստանի պատգամաւորները, պետութիւնների ներկայացուցիչները նրանց լսել անգամ չուզեցին և արհամարհանքով ճանապարհ դրին: Այդ դրութիւնը տևեց մինչև 1826 թուը, երբ վերջապէս յոյների օրհասական կռիւը հարկադրեց Ռուսաստանին նախընտրել իր ժանտաւոր շահը և հանդիսաւոր կերպով խզել իր կապը „Սրբոզան Դաշնակցութեան" հետ:

Յոյների արդար գատը բուռն համակրութիւններ էր վաստակում եւրոպական հանրային կարծիքի մէջ: Թիւրքական գազանութիւնները ցասման ու զայրոյթի փոթորիկ յարուցին արևմտեան երկրներում: Երիտասարդ

Եւրոպան՝ յուսախաբ, կաշկանդած իր հայրենիքի մէջ՝ մխիթարուում ու ոգևորուում էր տեսնելով, թէ ինչպէս հետու արևելքում ժայթքել է ապատութեան հրաբուխը... Մի երկիր, որ եղել է երբեմն քաղաքակրթութեան օրրան, այժմ նրան վերածուում էին աւերակների կոյտերի: Մի ժողովուրդ, որ ունեցել է փառահեղ անցեալ և որ իբրև կրող քրիստոնէական քաղաքակրթութեան, մարտնչում էր ասիական ամենապիգալի բռնապետութեան դէմ... Ահա թէ ինչն էր բորբոքում եւրոպացիների հետաքրքրութիւնն ու կարեկցութիւնը: Սկսեց մի հոյակապ շարժում ի նպաստ Յունաստանի: Բայրօնի ու Շատօբրիանի պէս գրական աստղեր գլուխ անցան այդ շարժման: Եւրոպայի բազմաթիւ կենտրոններում հաստատուեցին յունասէր կոմիտէներ, որոնց կոչումն էր՝ պրօպագանդ անել յունաց ազատութեան համար — և պրօպագանդ՝ ոչ միայն խօսքով: Լօնդօն, Մարսէլ, Ժընէվ, Յիւրիխ, Շտուտգարտ, Միւնխէն և այլն գրամական առատ ժողովարարութիւններ էին անում յոյն հայրենասէրների համար և նոյնիսկ կամաւորների խմբեր էին ուղարկում: Բայրօն ինքն անձամբ գնաց Յունաստան, իր ամբողջ կարողութիւնն ու անձը նուիրաբերելու յունական գատին, և այնտեղ էլ մեռաւ (1824): Այդ ժամը խոր, անդարմանելի սգով համակեց ամբողջ Յունաստանը, իսկ Անգլիայում աւելի ևս ուժ տուեց հելլենասէր շարժումին...

Աուլթան Մահմուդ սպառել էր իր բոլոր միջոցները և օգնութեան կանչել Եգիպտոսի փաշային, իր վասալին: Յոյները թէև ընկճուած, արիւնաքամ՝ շարունակում էին դիմադրութիւնն ու յարձակումները: Թիւրք խաւժանի անլուր վայրագութիւնները, հայրենիքի աւերումը, հարիւր հազար նահատակները և ընդհանուր ողբն ու

արտասուքը կսկծացնում էին նրանց, բայց չէին սարսափեցնում։ Վրէժխնդրութեան կրակով վառուած՝ նրանք գեռ շատ անգամ կարողացան նեղը ձգել տաճիկներին, շատ յաղթութիւններ տարան։ Բօցարիս, Կանարիս, Միաուլիս դիւցազները իրենց փայլուն քաջագործութիւններով դարձան թիւրքերի սարսափ և քաղաքակրթ աշխարհի հիացման առարկայ... Միսօլունգիի յիշատակելի ճակատամարտը վերջին յունահատակն ճիգն էր։ Մօտ 15,000 յոյն բնակիչներ, որոնցից մօտ 6,000-ը զինավարժ, ամրացան իրենց վերջին ապաստանում — Միսօլունգի, որ և պաշարեց Իբրայիմ փաշայի զօրքերով 8 ամսուայ հերոսական դիմադրութիւնից յետոյ՝ բերդն ընկաւ ուժասպառ... և Միսօլունգիի անկման ողբերգը կսկծալի շառաչով անցաւ քաղաքակրթուած աշխարհի վրայից, ցնցեց յունասէրների և ազատութեան բոլոր բարեկամների սիրտը։ Ապաստանուածներից մօտ 10,000 հոգի խողխողուեցին, իսկ կենդանի ճնշածները վաճառուեցին որպէս գերիներ...

Անցաւ մի տարի, ծանր, յուսահատ, մահաշունչ տարի, երբ սովը՝ միացած թշնամու աննկարագրելի անգթութեան հետ անխնայ կոտորում էր յոյներին։ Վերջապէս բախտը ժպտաց։ Փայլեց յուսոյ ճառագայթը Անգլիայից, ուր կառավարութեան ղեկը անցել էր այդ միջոցին ազատամիտ Կաննինգի ձեռքը։ Նա հրաժարեց մետերնիխեան քարացած ու մահաբեր ֆօրմուլներից և որոշեց միջամտել ի նպաստ յոյների... Անգլիային միացաւ Ֆրանսիան, և երկու պետութիւնները շտապեցին համաձայնութեան գալ Ռուսաստանի հետ (վախենալով մի գուցէ նա միայնակ միջամտէ) ու երեքովստորագրեցին 1827 յուլիս 6 Լօնդօնի դաշնագիրը, որ առաջին քայլն էր դէպի Յունաստանի անկախութիւնը, Թիւրքիան Ուսաստանի աջակցութեան

վրայ յենելով՝ յետ մղեց դաշնագիրը, և մի քանի շաբաթայ ապարդիւն բանակցութիւններից յետոյ, երեք պետութիւնների նաւատորմիղը երևացին Սևծովի առջև, ուր գանւում էր թիւրք-եգիպտական միացեալ նաւատորմիղը։ Պատերազմը երկու ժամ միայն տևեց և վերջացաւ թիւրքերի լիակատար պարտութեամբ։ Կատաղեց սուլթան Մահմուդը և մի մոլեգին հրովարտակով խաչակրաց արշաւանքի կոչեց բոլոր հաւատարիմ մուսուլմաններին՝ ընդդէմ գեաւուր պետութիւնների և մանաւանդ ընդդէմ Ռուսիայի, որ սուլթանների ժահացու թշնամի էր դիտւում։

Նիկոլայ կայսրի ուզածն էլ հէնց այդ էր։ Ժամը յարմարագոյնն էր՝ արշաւելու թիւրքի դէմ։ 1828-ին ռուսաց զօրքի մի մասը անցաւ Պրուտ գետը և գրաւեց Մոլդաւ-Վալախիան։ Միւս մասը ուղղւեց դէպի Էրզրում, նւաճելով մի շատ քաղաքներ։ Դիւանագիտութիւնը կանգնեցրեց շտապով Ռուսիոյ յաղթական ընթացքը և ստորագրել տւեց Ադրիանուպոլսի դաշնագիրը (1829 թ.), որով Մոլդաւ-Վալախիան ճնում էր սուլթանի գերիշխանութեան տակ և ռուսաց հովանաւորութեան ներքոյ։ Դրանից առաջ Սերբիան ևս Ակկերմանի դաշնագրով 1826 թ.) ճանաչել էր իբրև կիսանկախ մի երկիր սահմանական գերիշխանութեան տակ։ Ամբողջ Տաճկաստանը բաց էր ճնում ռուսական ազդեցութեան համար, և այդ էր ռուսաց զօրքի ամենափայլուն յաղթանակը։ Ցարը այնուհետև տէր էր Արևելքում... Նրա ճանկերի մէջ անդարձ կաշկանդւել էր Թիւրքիան, շնորհիւ պատերազմական ահագին տուրքերի, որ նա պարտաւորւել էր վճարել Ռուսիային և որ երբէք չկիտի կատողանար հանգցնել Ռուսաստանի հովանաւորութեամբ՝ Բալկանեան քրիստոնեայ ազգութիւնները գանւում էին արդէն ազատագրութեան կէս-ճանապարհին...

Յունաստանի անկախությունը այժմ կատարված իրողություն էր։ Սկզբներում մի առժամանակ ռուսական ինտրիգները անիշխանության ժամանեցին երկիրը, բայց վերջապես 1832-ին Ռավարական իշխան Օտտօն | հաստատեց եւրոպական համաձայնությամբ իբրև թագաւոր անկախ Յունաստանի։ Այդպէս յարութիւն առաւ մահուան ճիրաններում գալարուող դարեւոր ստրուկը։ Այդպէս ազատեց՝ նոր կեանք գրկելով գիտութեան, արեւստի ու փիլիսոփայութեան նախահայրենիքը — ազատեց՝ ահռելի փորձութիւնների բովից անցնելով, անդուլ յուսահատ պայքարից, շարունակական արիւնհեղութիւններից յետոյ...

„ԴԻԿԱԲՐԻՍՏՆԵՐԻ“ ՅՈՑԸ

Ռուսաստանն ևս ազատ չմնաց Ֆրանսիական գաղափարների „վարակումից“։ Նրա միահեծան պետերը — սկսած Պավէլից — կատաղօրէն, մի տեսակ բնազդային գարշանքով կուեցին այդ վարակիչ ու ահաւոր գաղափարների դէմ։ Ընայեաց, սակայն, բռնապետութեան անհաշիւ կաշկանդումներին, ցեներալական ու սահմանային ամենախիստ հսկողութիւններին՝ ըմբոստացման հոսանքը կամացուկ սահում էր դէպի ցարական ինքնիշխանութեան ամենաամուր միջնաբերդերը, նա թափանցում էր զօրքի մէջ։ Զօրքը վարակուեց հէնց հականապօլէօնեան արշաւանքների միջոցին։ Ռուս գիւղական առաջնորդներից ոմանք — առաւելապէս զգայուն ու խոհուն սպաներ — բաւական ժամանակ մնալով Ֆրանսիական հողի վրայ, շփուելով յեղափոխականօրէն մշակուած գիւղացիների հետ, վերադարձան հայրենիք՝ իրենք ևս „մշակուած“ ու վերածնուած։

Եւ ահա 1815-ից սկսած՝ հիմնում են Ռուսաստանում մի շարք գաղտնի ընկերութիւններ, նպատակ դնելով յեղաշրջել միապետական կարգերը։ Նրանք կազմւում են գլխաւորապէս զինուորականներից և կրում են այլ և այլ անուններ. „Հարաւային“ և „Հիւսիսային“ ընկերութիւն, „մալօրօսական“, „կովկասեան“ ընկերութիւն, „կանաչ լամպի“, „ազատ այգեպանների“ ընկերութիւն և այլն։ Կատարւում էին այդտեղ և մի շարք խորհրդաւոր արարողութիւններ (երդում և այլն), ինչպէս Իտալիոյ ու Ֆրանսիայի կարբօնարիների և Գերմանիոյ *Tugendbund*-ի մէջ։

Ամենանշանաւորը եղաւ „Փրկութեան դաշնակցութիւնը“, որ հիմնւեց 1817-ին և հետզհետէ աճեց ու ճիւղաւորւեց։ Նրա հոգին էր մի կատարի և հերոսատիպ զինուորական — Պ ե ս տ է լ։ Նա եղել էր Պարիզում, տոգորւել էր հրաբխային մայրաքաղաքի շունչով, իրացրել էր „Մարդկային Իրաւունքների“ աւետարանը։

Գաղտնի ընկերութեան մէջ էին մի քանիսը ռուս հասարակութեան այն ժամանակւայ աստղերից. Մուրավիով-Ապօստօլ, իշխան Տրուբեցկոյ, Բեստուժեվ, գեներալ Օրլով, Ռիլէյեվ և ուրիշներ։ Նպատակն էր՝ հաստատել սահմանադրութիւն, հոչակել քաղաքացիների հաւասարութիւն օրէնքի առաջ, ազատել գիւղացիներին ճորտական կարգերից և այլն։ Միջոցների մէջ վարանում էին, բայց ի վերջոյ ընդունեցին, որ միակ ու գերագոյն միջոցն է՝ բռնի յեղափոխութիւն։ Ժողովների մէջ հնչում էին ամենաարմատական նշանաբաններ. „կեցցէ՛ հանրապետութիւն, կեցցէ՛ ժողովուրդը, կորչի՛ն դասակարգերի խտրութիւնները, կորչի՛ ազնւականութիւնը“ և այլն։ Ոմանք փառաբանում էին սերրօրը և առաջարկում էին անձամբ սպանել թագաւորին։ Բանակի մէջ դժգոհութիւնը ահագին էր տիրա-

պետող կամայական ուժի հանդեպ... և շատերը այդ զինուրականներից դեկավարում էին անձնական վրէժխնդրութեամբ։

Ուշագրաւ են առաջին ռուս յեղափոխականների „սահմանադրութեան“ նախագիծները։ Մինչդեռ Նիկիտա Մուրավիով առաջարկում էր վերակազմել Ռուսաստանը ֆէդերատիվ, դաշնակցական հիմքերի վրայ, բաժանելով ահագին կայսրութիւնը 15 ինքնօրէն և ինքնավար շրջանների (մէկը՝ Կովկաս), — Պէստէլ, ընդհակառակը, գտնում էր Ռուսաստանի ուժն ու ապագան ամենախիստ կենտրոնացման մէջ, ուր նրա կարծիքով պէտք է իշխէր տիրականօրէն ռուս տարրը և բոլոր անհաշիւ ազգութիւնները պէտք է ձուլուէին նրա մէջ... Մի բան՝ որ Պէստէլ համարում էր ձեռնտու նոյն փոքրիկ ազգութիւնների համար։ Եւ խրոխտ զինուրականի կազմած նախագիծը հրահանգում էր ապագայ կենտրօնական իշխանութեանը՝ „իսպառ ռուսացնել“ ոչ-ռուս ցեղերը *)...

Կովկաս, Ֆինլանդիա—նոյնպէս պէտք է ռուսացուէին, Պէստէլի ծրագրով։ Լեհաստանը միայն բացառութիւն էր կազմում այդ արտառոց ծրագրի մէջ։ Լեհաստանը երկար դարեր եղել է հզօր ու անկախ մի պետութիւն և այդ պատճառով Պէստէլ խնայում է լեհերին ու թելադրում է, որ վերածնուող ռուս ժողովուրդը վեհանձնօրէն անկախութիւն պարգևէ Լեհաստանին...

Այդ ծայրայեղ կենտրօնացման դօգմը և այդ կոպիտ անտարբերութիւնը դէպի ժանն ազգերի իրաւունքները՝ այսօր էլ, տարբախտաբար, շեշտւում են ռուս յեղա-

---

*) Տես Գադոնի ընկերութիւնները Ռուսաստանի մէջ XIX-րդ դարի առաջին քառորդում։ Հրատ. Պետերբուրգ (ռուսերէն), 1907 թ.։

փոխական բանակի (սոցիալ-դեմոկրատիայի) որոշ շարքերում *):

Բոլոր միւս խնդիրներում պէստէլ խիստ դեմոկրատ, արմատական էր և սիրում էր հոլովել ռօբեսպիէռական ֆրազներ։ Նա մանաւանդ դէմ էր ամեն տեսակ դասային առանձնաշնորհումների. „բոլոր մարդիկ պէտք է կազմեն մէկ դասակարգ“, բոլորն էլ հաւասար իրենց իրաւունքների մէջ։ Հռչակում է մասսաների ոտնահարած իրաւունքները, որոտում է հարստութեան ու ծագման արտօնութիւնների դէմ և այլն։

Որոշած էր առաջ բերել գինուորական ապստամբութիւնը 1826 թւի ամառը։ Պէստէլի ծրագրով նա պէտք է սկսէր Պետերբուրգում։ Հարաւի բանակը պիտի արձագանք տար։ Բայց ահա ապստամբութեան տենդային պատրաստութիւնների մէջ լուր է հասնում 1825-ի նոյեմբեր 27-ին, թէ յանկարծակի վախճանել է ցար Ալէքսանդր I։ Վերջինը անզաւակ լինելով՝ գահը պէտք է անցնէր նրա մեծ եղբօր՝ Կոնստանդինին։ Բայց ա՛ս հրաժարւել էր յօգուտ իր եղբօր՝ Նիկոլայի։ Թագադրական այդ խաղը անակնկալ էր երկրի համար։ Եւ ահա դաւադիր գինուորականները որոշեցին օգտւել առիթից։ Նրանք տարածեցին, թէ Կոնստանդինը յօժարակամ չի հրաժարւել թագից, այլ թէ Նիկոլայը կամայականօրէն իւրացրել է այն. և նրանք արձակեցին բանակի մէջ իրենց նշանաբանը, որ եղաւ „դէկաբրիստներին“ մատակոչը.

— „Մենք կուզե՞նք Կոնստանդինին և երդում կը տանք միմիայն նրան“։

Մի այլ, աւելի հակիրճ բանաձևն էր՝

---

*) Տես այդ առթիւ՝ Մ. Վ. „Հատանքներ“։

— „Կօնստանդի՛ն և Կօնստիտուցիա“... (Այսինքն՝ կուզենք Կօնստանդինի հետ և սահմանադրութիւն)։

Զօրքի մէջ ջերմ ընդունելութիւն գտաւ այդ նշանակոչը, միայն... ահագին մեծամասնութիւնը չ'ըմբռնելով բառի իմաստը, կարծում էր, թէ „Կօնստիտուցիա“ ասել է՝ Կ օ ն ս տ ա ն դ ի ն ի կ ի ն ը։ Կօնստանդինը պիտի գար Վարշաւայից, ուր ընդհանուր կառավարիչ էր. և բնական էր ուս ազէտ զինուորականութեան համար, որ իշխանի հետ գար նաև իշխանուհին, Կօնստանդինի հետ — „Կօնստիտուցիան“... Այդ զաւեշտական հանգամանքը գուցէ փոքրիկ դեր չխաղաց „դէկաբրիստների“ սկզբնական աջողութեան մէջ։

Այդպիսի նշանաբաններով էր, որ գաղտնի ընկերութեան թելադրութեամբ, զօրքի մի մասը բանակ դրեց 1825-ի դեկտեմբերին մայրաքաղաքի Սենատսկայա հրապարակի վրայ։ Ծրագրուած էր՝ գինուած ցոյց սարքել։ Եւ այդ ցոյցը պիտի տար արդէն սահմանադրութիւն... Ոչ մի շատ թէ քիչ լուրջ պատրաստութիւն չէր տեսնուած այդ հսկայական ձեռնարկի համար։ Զօրքը գնում էր ցոյց սարքելու և ուրիշ ոչինչ։ Նա գնում էր բարձրաձայն յայտարարելու՝

— Կօնստանդին և Կօնստիտուցիա...

Ռուսական պատմութեան այդ նշանաւոր դրուագի մէջ ուս առաջին յեղափոխականները մատնեցին հարազատութեամբ նոյն ոգին, ինչ որ տեսանք նրանց հետաւոր յետնորդների մէջ, վերջին տարիների փոթորկայոյզ անցքերում. — անվճռականութիւն, անկարողութիւն, գործնական բնազդի և բուն յեղափոխական ոգու կատարեալ բացակայութիւն։ Մի շարք պարագլուխներից և ոչ մէկը չգտնուեց վայրկեանի բարձրութեան վրայ։ Մէկը առաջարկում էր տանել ըմբոստ բանակը պետրոպավլովսկ բերդի վրայ, մի ուրիշը՝ ձմեռային պալատի,

մի երրորդը՝ Սենատի վրայ — և ոչ մէկն էլ այդ ձեռնարկներից չփորձեցին իրագործել։ Մայրաքաղաքի մէջ գործի մեծամասնութիւնը ապստամբութեան կողմն էր։ Մի քանի ժամ շարունակ թիւրիմացութեամբ յեղափոխական դարձած հազարաւոր զինուորները իրենց սպաների հետ Սենատսկայա հրապարակի վրայ աղաղակում էին. „Կոնստանդի՛ն և Կոնստիտուցիա“ և պատրաստ էին գրոհ տալու այն ուղղութեամբ, որ ուղղութեամբ կը թելադրէին պարագլուխները։ Բայց վերջիններս իրենք արդէն կորցրել էին գլուխները և չգային իսկ հրապարակի վրայ։ (Պէտէլ մայրաքաղաքի մէջ չէր). այն ինչ՝ Նիկօլայը, որ բախտի բերմամբ թագաւոր էր եղել և կամենում էր ամեն գնով պահպանել իր թագը, ամենայն եռանդով համախմբում էր իր շուրջը հաւատարիմ զինուորականներին և պատրաստւում էր հասցնելու խռովարարներին վճռական հարուածը... Ոչ ընդհանուր գեկավար Ռիլէևը, որ բոլոր գաղտնի խորհրդակցութիւնների մէջ գիտէր թելադրել իր կամքը, ոչ էլ „դիքտատօր“ նշանակուած պօրավար Տրուբեցկօյը չ'երևացին ապստամբութեան թատերաբեմում։ Ո՞ւր էին նրանք...

Սերգէյ Տրուբեցկօյը, զարհուրելով իր մինչ այն գուրգուրած յեղափոխութեան ուրուականից, բոլորովին կորցնում է հոգեկան հաւասարակշռութիւնը, թագնւում է ընկերներից, երկար, մտամոլոր թափառում է տնից տուն, մի քանի անգամ հաժարեա ուշաթափ է լինում և ի վերջոյ... դիմում է գլխաւոր շտաբը, ուր գտնում է, մեղա՛յ է արտասանում և հանդիսաւոր երդումն է տալիս իբրև զինուորական՝ հաւատարիմ մնալու Նիկօլայ I-ին։

Ռիլէևվ... մի վայրկեան երևում է Սենատսկայա հրապարակի վրայ, բայց տեսնելով, որ „դիքտատօրը“

բացակայ է, ինքն էլ գնում է փնտրելու նրան և այլ ևս չի վերադառնում...

Բուլատով, երրորդ պարագլուխը, որ պիտի առնէր ապստամբ գնդերից մինը իր հրամանատարութեան տակ, ամբողջ առաւօտը փնտրում է իր ընկեր Եակուբովիչին (մի այլ զինուորական հրամանատար) և չգտնելով նրան ապստամբութեան վայրում, ինքն ևս անհետանում է։ Ուշագրաւ է նրա անկեղծ խոստովանութիւնը իր նամակներից մէկում, որի մէջ ցոլում է ռուս յեղափոխականի օրիգինալ հոգեբանութիւնը.

Ես եկայ հրապարակը։ Չգիտեմ ով էր կրակողը, բայց մի երկու գնդակ սուլեցին անցան իմ մօտից։ Վերցրի կառք, ասացայ դէպի թատրօն, տեսայ հանգիստ է. անցայ դէպի Իմպերատորսկի գունդը։ Նոյնպէս բոլորովին հանգիստ է։ Որէն առհնակ նստեցի և եկայ տատիկիս մօտ... Շեմ յիշում, մի բաժակ գինի խմեցի, մի կտոր հաց կերայ և գնացի տուն... Առի ատրճանակ և դաշոյն և հեռացայ... Մէկ ատրճանակը դրեցի ծոցս, միւսը գրպանս։ Գալով Ձմեռային պալատի առաջ և տեսնելով զօրքերը, ես սկսեցի մտքով կազմել շարժման նախագիծը։ Դիմեցի դէպի Պրէօբրաժենսկի գունդը (որ հաւատարիմ էր Թագաւորին), խօսում էի սպաների հետ.. Այդ ժամանակ տեսայ ես Թագաւոր կայսրին։ Ինձ շատ դուր եկաւ նրա արիութիւնը։ Շատ մօտիկ էի նրան, ոչ աւելի քան վեց քայլ, ունենալով հետս դաշոյն և երկու ատրճանակ։ Յիշեցի ամի 12-ի մեր ժողովը, ուր որոշած էր հայրենիքի բարօրութեան համար սպանել Թագաւորին։ Այժմ ես նրա մօտն էի և բոլորովին հանգիստ էի և մտածում էի, որ իմ տեղը չեմ ընկել... Չհանդիպելով ոչ մի տեղ Եակուբովիչին, ես տուն գնացի, երբ արդէն քշել էին բոլոր դաւադիրներին...

Նոյն հոգեբանութիւնն են ժառանգում „դեկտեմբերեան“ ապստամբութեան գրեթէ բոլոր հերոսները։

Այդպիսի պայմաններում՝ վիժումը անխուսափելի էր։ Սենատական հրապարակի վրայ զօրքը սպասեց, սպասեց։

Եւ ապստամբների այդ սարօրինակ անգործութիւնից օգտւելով, Նիկօլայ I հեռվհեռէ աճեցրեց իր հաւատարիմների բանակը, սերտ օղակով շրջապատեց ըմբոստներին և կարճատև ու ապարդիւն բանակցութիւններից յետոյ, թնդանօթի մի քանի հարւածներով ցրւեց նրանց։ Գլխաւոր պարագլուխները կախաղան բարձրացան։

Այդպէս վերջացաւ „դէկաբրիստների“ հռչակաւոր ժեստը։ Նա ձգեց ըմբոստացման առաջին սերմերը ռուսական անապատի մէջ, և իրրև այդպիսին, ունի պատմական կարևորութիւն։ Բանակի վրայ քիչ ազդեց այդ տարապայման շարժումը։ Ազդեցութիւնը մակերեսային էր և վաղանցուկ։ Ռուսական զօրքը հաւատեա թէ նոյնը մնաց այն ժամանակից մինչև այսօր, գրեթէ մի դար տարածութեան վրայ... Մի դար առաջ դեռ հնարաւոր էր „թիւրիմացութեամբ“ ըմբոստացնել նրա մի խոշոր հատւածը, — այսօր այդ հնարաւորութիւնն ևս խիստ սահմանափակ է և գաղափարական Պէստէլների թիւը— գրեթէ նոյնը։ Վերջին 8 տարւայ զինւորական խլրտումները—սպօրադիկ ու անկայուն—այնքա՛ն յիշեցնում են 1825-ի անդրանիկ ըմբոստացումը...

„Դեկաբրիստների“ ցոյցը վիժեց։ Բայց եթէ անգամ աջողութեամբ էլ պսակւէր, դժւար թէ նրա կատարած յեղաշրջումը լուրջ ու յարատև բնոյթ ունենար, քանի որ նա էապէս զինւորական էր և չէր յենւած ազգաբնակութեան շատ թէ քիչ լայն մի խաւի վրայ։

Դէպքը ուժգին տպաւորութիւն գործեց Նիկօլայ I-ի վրայ, որ արդէն իսկ իր խառնւածքով բռնակալ և քմահաճ այնուհետև դարձաւ մի անագորոյն ոսոխ բոլոր յեղափոխականների և ամեն տեսակ ըմբոստացման շարժումների։ Նա պիտի գնար յետագայում խեղդելու այդ շարժումները անգամ սեփական հողից դուրս — Եւրոպայում։

Միահեծան բռնակալութիւնը իր ջինջ, գոռոզ, ասիական պատկերով թագաւորեց Ռուսաստանում — ամբողջ 30 տարի — ստեղծելով ռուսական և համաշխարհային պատմութեան ամենամռայլ, ամենադաժան շրջաններից մինը, որին ռուս լեզուն տւել է մի հակիրճ ու աղէտաշունչ անուն.

— Նիկոլաևշչին ա։

ՑԱՒԼԻՍԵՒՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ի՞նչ եղաւ այդ Յեղափոխութեան հայրենիքը...

Բօնապարտի միահեծան իշխանութիւնը տապալուելուց յետոյ (1815 թ.), Ֆրանսիան ամբողջ 33 տարի, մինչև 1848-ը, ապրեց սահմանադրական միապետութեան ռէժիմի տակ։ Բուրբօնները *) վերստին հրապարակ եկան — հակայեղափոխական ու հականապօլէօնեան Եւրոպայի կամքով — և տիրեցին 15 տարի ևս։ Երկու թագաւորներ էին դրանք, երկուսն էլ արգահատելի ոչնչութիւններ. Լուդովիկոս XVIII և Կարլոս X։ Դրանց կարճատև տիրապետութեան ժամանակաշրջանը (1815—1830) կոչւում է պատմութեան մէջ վերահաստատման շրջան (*Restauration*)։

Խղճալի բան էր և սահմանադրութիւնը։ Գրեթէ այժմեան ռուսական Դուման... Ընտրողական սիստեմը — ցենզաւոր, քաղաքացիների իրաւունքը սահմանափակ, կաշկանդւած. Ֆրանսիայի բախտը՝ յանձնւած էր մի կողմից՝ գոռոզ ու բռնաւոր ազնուականութեան —

---

*) Բուրբօնների արքայատոհմը՝ որի ներկայացուցիչն էր 1792-ին գլխատւած Լուդովիկոս XVI-ը։

որին դաշնակից էր կղերը—միւս կողմից խոշոր կապիտալի ներկայացուցիչ—բուրժուազիան։ Ժողովուրդը չկար հրապարակի վրայ. պարլամենտ և մինիստրութիւն գրեթէ խաղալիկ էին թագաւորի ձեռքում։

Ասես մեռել էր այն ժողովուրդը, որ 1789-ի յուլիս 24-ին ահագնադղրդ ցասումով սլանում էր դէպի Բաստիլ...

Թարեթախտաբար, այդ մահը աւելի յերևանի էր, քան իրական։ Հրաբուխը չէր հանգել և պայթուցիկ նիւթերը խուլ եռում էին նրա արգանդում։ Մերթ ընդ մերթ նրանք դուրս էին ժայթքում վայրկենական որոտումներով և շանթահարում այս կամ այն բռնաւորին։ „Վերահաստատման“ շրջանը լի է դաւադրութիւններով ու տեռրօրական հարուածներով։ 1820-ին, մի թաւմբագործ աշխատաւոր էր, որ Օպերայի մուտքի առջև մխեց իր դաշոյնը դուքս Բերրիի կուրծքի մէջ։ Ջոհը շնչասպառ գետին փռեց, ահաբեկելով ամբողջ պաշտօնական աշխարհը։ Թագաւորի եղբօր որդին էր, տիրող ռէժիմի սիւներից մինը։ Ռէակցիան կատաղեց և ռէժիմը աւելի խստացաւ։ Բայց որքան աւելի էր նա խստանում, այնքան աւելի էր բորբոքւում վրէժխնդրութիւնը ժողովրդային խաւերի մէջ. դաւերին ու մահափորձերին հաշիւ չկար։ Կարբոնարիների ոգով սնուցած գաղտնի ընկերութիւնները մի քանի անգամ փորձ արին զինուորական դաւադրութեամբ տապալելու Բուրբոններին, բայց ապարդիւն։ Տանեակ տարիների աղէտաւոր ձախորդութիւնները ու ջարդերը շատ էին հիւծել ֆրանսիական ժողովրդին, պէտք էր տակաւին սպասել, մինչև վէրքերը փոքր ինչ կազդուրէին։

Շատ չսպասեցին։ Միապետութիւնը ինքն էր փութացնում յեղափոխութեան ընթացքը։ Կարլոս X մի գեղեցիկ օր յղացաւ „պետական հարուած“, վերացրեց

ժամուլի ընչին ազատութիւնը, լուծեց պարլամենտը և հրահանգեց նոր ընտրութիւն՝ աւելի ևս սահմանափակ իրաւունքներով։ Եւ դա եղաւ ազդանշան նոր փոթորկի։

1830-ի յուլիսի 27-ն էր։ Տպարանական բանւորները դուրս նետուեցին փողոց և հաւաքր տալով, ժողովեցին բոլոր միւս արհեստների բանւորներին։ Հրապարակը լցուեց ամբոխով, Պարիզը վերստացաւ հին տեղատօրերի կերպարանքը։ պատնէշները, բարիկադները բարձրացան փողոցներուն։ Ուսանողներ և բանւորներ միացան ազատարար կուի մէջ։ Արհեստագիտական դպրոցի աշակերտներն էին ղեկավարում բարիկադների կառուցումը։ Ջօրքը կանգնեց ամենուրեք, հրատարակեց պաշարման վիճակ։ Լուրը կատաղի էր։ Ժողովուրդը կոտորւում էր, բայց միշտ աւելի և աւելի էր աճում պատնէշների շուրջը։ Ի վերջոյ ամբոխի միահամուռ ոյժերին գրոհի առջև՝ զօրքերը յետ նահանջեցին։ Ապստամբները խուժեցին զօրանոցների մէջ, գրաւեցին զինարանը և պարզեցին քաղաքային տան վրայ եռագոյն դրօշը։

Արգահատելի միապետը, ապաստանած Պարիզից դուրս, *St. Cloud*-ի մէջ, յորդորում էր մինիստրներին, կառավարութեանը՝ պինդ կեցնալ և բոլոր միջոցներով ճնշել ապստամբութիւնը։ Երբ, սակայն, ժողովուրդը իր յարաճուն թափով ու մոլեգնութեամբ նեղը ձգեց արքային, սա բռնեց զիջումների ճանապարհը, հրաժարեցրեց յետագէմ մինիստրութիւնը, բայց արդէն ուշ էր և իր կեանքը փրկելու համար, Կարլոս X, վերջին անժողովրդական Բուրբօնը, փախուստ աւեց Անգլիա— բոլոր նեղեալների գերագոյն ապաստանը։ Նրա տեղ թագաւորեց Օրլէանեան իշխան Լուի Փիլիպպ, որ ձևացաւ սկզբում ազատամիտ ու ժողովրդասէր, սակայն դէպքերը ցոյց տուին յետագայում, որ ժէկ բռնաւորը արժէ միւսին։

Երեք օր տևեց այդ փառահեղ ապստամբութիւնը (26—29 յուլիս 1830 թ.), որի ժէջ ժողովուրդը 504 հոգի զոհ տուեց։ Պարիզի Բաստիլեան հրապարակի վրայ ուղևորը կը տեսնէ այսօր մի բարձր, հոյաշէն սիւն — Յուլիսեան Սիւնը (*La Colonne de Juillet*) — որ կառուցւած է ի յիշատակ այդ արիւնոտ ապստամբութեան, 504 զոհերի ընդհանրական դամբարանի վրայ...



Barրիկադի կառուցումը Յուլիսեան օրերի մէջ

Կարմիր յորձանքը իր պարիզեան մայր-աղբիւրից վերստին ուղղւեց դէպի հարևան ու հեռաւոր երկիրները, „վարակելով“ ամենուրեք, յարուցանելով նոր ցնցումներ ու ընդվզումներ... Բելգիան անմիջապէս ձայնակցեց Պարիզին։ „Սրբազան դաշնակցութեան“ կառուցած արհեստական շէնքը պիտի փլէր ճակատագրական անհրաժեշտութեամբ։ Բռնակալութեան լուծը ծանր էր

գալիս բելգիացիներին ժանաւանդ այն պատճառով, որ իշխողները միանգամայն տար էին հպատակներին՝ իրենց լեզուով, կրօնով ու շահերով։ Մտքերի խմորումը սաստկացաւ Պարիզեան անցքերի ազդեցութեան տակ և կամաց-կամաց վերածուեց բացարձակ ապստամբութեան։ Սակայն ուրիշ տարբեր արիւնհեղութիւններից յետոյ միայն՝ Բելգիան կարողացաւ, վերջապէս, Ֆրանսիայի աջակցութեամբ անջատուել Հոլլանդիայից և կազմակերպել իրեւ անկախ պետութիւն։

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Աւելի ողբերգական է Լեհաստանի ազատութեան կռիւը։ Մինչդեռ Բելգիան ապստամբելով՝ թօթափեց իր վրայ ծանրացած օտար լուծը, Լեհաստանը կորցրեց իր ինքնավարութեան վերջին ճնշոցդն էլ։ Մայրաքաղաք Վարշաւայում պատրաստուում էր կարբոնարիզմի մեթոդով մի ընդարձակ ու ահաւոր դաւադրութիւն, ուր մասնակից էին բարձրաստիճան լեհեր՝ գեներալներ ու գնդապետներ, պրոֆէսորներ ու համալսարանականներ. ազատ Լեհաստանի տենչը վառել, բորբոքել էր ամեն դասակարգի լեհ հայրենասէրների՝ սկսած հարուստ ազնուականից մինչև աղքատ գիւղացին։ Հայրենասիրական բուռն յափշտակութեան մէջ ոմանք երազում էին յետ նուաճել Լեհաստանի երեք մեծ բաժինները, միանգամայն պատերազմ յայտարարելով Ռուսաստանին, Աւստրիային ու Պրուսիային։ 1830-ին ժողովրդական յաղթանակը Պարիզում և եռագոյն գրօշի ծածանումը Վարշաւայի Ֆրանսիական հիւպատոսարանի դրան՝ ելլեքտրականացրին լեհ ազգաբնակութիւնը (Ցունաստանի շարժումները ևս մեծապէս խրախուսել էին լեհերին)։

1830 թ. նոյեմբեր 29-ին Վարշաւան բռնկուեց՝

„Կեցցէ՛ Լեհաստանը“ որոտընդոստ գոչիւններով Մեծ իշխան Կոստանդինը գաղտագողի փախուստ տուեց. մի շարք լեհ գեներալներ, որ դաւաճանել էին հայրենիքի դատին, խողխողուեցին ապստամբների ձեռքով *): Ցեղի ունեցան մեծ ճակատամարտներ: Մի քանի օրից յետոյ Վարշաւան ազատ էր, լեհերի ձեռքում, նրանց ժամանակաւոր կառավարութեան տակ: Ա՛ւա՛ղ: Թախտը մի վայրկեան միայն ժպտաց Լեհաստանի զաւակներին: Կատաղեց գոռոզ ցարը (Նիկոլայ I) և 120,000 զօրք թափեց Վարշաւայի վրայ պատժելու համար յանդուգն լեհերին: Սկսեց մի զարհուրելի, անհաւասար ժենամարտ... Չորս միլիօն բնակիչ ունեցող երկիրը՝ հսկայական Ռուսիայի դէմ: Եւրոպական միջամտութեան և մասնաւորապէս Ֆրանսիայի վրայ էին դրել լեհերը իրենց յոյսը. բայց Եւրոպան ձգեց նրանց բախտի կամքին... Մօտ 10 ամիս տոկունութեամբ կուեցին յետոյ Վարշաւան անձնատուր եղաւ Պասկեվիչին:

Այնուհետև սկսեցին ահռելի հալածանքներ ըմբոստ լեհերի դէմ: Լեհական ինքնավարութեան հետքն անգամ չմնաց: Ազգային զօրքը ջնջուեց: Ազգային համալսարանը փակուեց, կառավարութեան կենտրոնը փոխադրուեց Վարշաւայից — Պետերբուրգ: Մի քանի խոշոր արտօնութիւններ, որ ձիջել էր Ալէքսանդր I, էքս-

*) Ո՞ւր չեն եղել վաճառները... Ուղևորը կը տեսնէ այստեղ Վարշաւայի գեղեցիկ հրապարակներից մէկում մի սև ու հոյակապ սիւն, որի մօտից ամեն մի ազնիւ լեհ անցնում է գարշանքով: Ռուս կառավարութիւնը կառուցել է այն՝ ի յիշատակ իր հաւատարիմ լեհ ծառաների... Սիան վրայ արձանագրուած են անունները այն նշանաւոր լեհերի, որոնք ազգային ապստամբութեան միջոցին անցել են թշնամի բանակը, դաւաճանելով հարազատ ժողովրդին:

ցան, և Լեհաստանը դարձաւ ռուսական մի նահանգ։ Ապստամբներից շատերը կախաղան բարձրացան, ուրիշները խումբ-խումբ աքսորւեցին դէպի Սիբիրի խորքերը և այնտեղ՝ սառնաշունչ ամայութեան մէջ յաւիտեան կաշկանդւած՝ հնչեցրին իրենց յուզիչ հայրենասիրական ողբը... Ուրիշներն էլ փախուստ տալով հայրենիքից՝ ցիր ցան եղան արեւմտեան երկրներում, երգեցին յեղափոխութեան գաղափարն ու ազգերի վերածնութիւնը, երգեցին իրենց անմոռանալի, նւիրական յանկերգը՝ „Դեռ կորած չէ Լեհաստանը“...

IV

ՓԵՏՐԻԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Դասակարգերի կռիւ. — Բլանկի եւ բլանկիզմ. — հաճրապետականներ եւ սոցիալիստներ.—Լամարտին.—Եակոբոդ հաճրապետութիւն.—Ազգային արհեստանոցներ պատմութիւնը. — Բուրժուազիա եւ պրոլետարիատ. — Յունիսեան ջարդեր. — Ռէակցիա եւ նորէն միապետութիւն. — Նապոլէօն III.—Ապստամբութեան հրդեհը Գերմանիայում եւ Աւստրիայում.— Ազգային շարժումը Ունգարիայում. — Յէէնէի եւ Կօշուտ. — Ռէակցիա եւ արիւն. —

Հաստատուեց Յուլիսեան միապետութիւնը: „Աստուծոյ ողորմութեամբ և կամօք ժողովրդի“, Լուի Ֆիլիպ եղաւ Ֆրանսիայի թագաւոր և խոստացաւ յարգել սահմանադրական իրաւունքները: Ոչ մի խոստում, սակայն, որքան էլ նա հնդինակաւոր ու անկեղծ լինէր, չէր կարող խաղաղացնել ալէծուփ Ֆրանսիան, նրա մշտաբորբոք մայրաքաղաքը, ուր օրըստօրէ շեշտւում էր դասակարգերի հակամարտութիւնը և ուր արդէն սպառնական գլուխ էր բարձրացրել նոր իդէալներ ու նոր կեանք աւետող սոցիալիզմի ուրուականը:

Բուն ժողովրդական թագաւորը խիստ հազւագիւտ մի երեւոյթ է, եթէ չ'ասենք անհնարին։ Թագաւորները յենւում են սովորաբար այս կամ այն „բարձր" դասակարգի վրայ, պաշտպան կանգնելով հզօրներին՝ ընդդէմ թոյլերի։ Նրանք երբեմն աջողում են այս կամ այն գործով կամ խոստումով հմայել ժողովրդային ընդհանրութիւնը, բայց և վաղ թէ ուշ դաւաճանում են նրա շահերին։

„Յուլիսեան միապետութիւնը", ունենալով հանդերձ յեղափոխական ծագում, շատ շուտ յարմարեց միահեծան բռնապետութիւնների տրամադրութեան, ժամեցաւ կամաց-կամաց աւստրիական, մետերնիխեան ոգիին, որ այն ժամանակ — „Սրբազան դաշնակցութեան" օրերից ի վեր — տոն էր տալիս ամբողջ եւրոպական ցամաքին, ժամեցաւ միւս կողմից՝ ե կ ե ղ ե ց ու ն։

Ֆիլիպ Օրլէանեան որոշել էր — գէթ խոստացել էր — յենւել ազատամիտ, վօլտէրապաշտ բուրժուազիայի վրայ (բուրբօնները յենւել էին ազնւականութեան ու կղերի վրայ), — ժխտեց սակայն շատ շուտով իր ծագումն ու տիտղոսները։ Վօլտէրեան *) հովերը չքացան հետզհետէ սահմանադրական կառավարութեան մէջ, կաթօլիկ եկեղեցին վերստացաւ իր նախկին հմայքը, եզուիտները նորէն յանդուգն հրապարակ եկան և ուզեցին իրենց ձեռքն առնել համալսարանն ու կրթական գործը։


Արատաւոր էր և ընտրական սիստեմը։ Նա ըստ առաջնւոյն ցենզաւոր էր, ընտրում էին և ընտրւում ունևորները, առանձնաշնորհեալ տարրերը։ Ընդամենը 200,000 ընտրողներ կային ամբողջ Ֆրանսիայում, և պարլամենտը — մի սոսկ խաղալիք նրանց ձեռքում։

---

*) Ապաստաւած, կրօնի խնդիրներում ազատախոհ։

Նախարարապետը, կառավարողը Գիզօն էր, մի հռչակաւոր պատմագիր, պահպանողական մտայնութեան տէր։

Կռիւը նորէն բորբոքեցաւ։ Կռիւ էր կուսակցութիւնների — որ և կռիւ էր դասակարգերի։ Բուր-



Գլուխ Ի

Ժուազական ազատամտութիւնն ևս (լիբերալիզմ), ինչպէս տեսանք, վերջին խօսքը չէր ընկերային էւոլիւսիոնի, տնտեսական կեանքը, գիտութիւնն ու գրականութիւնը առաջ էին բերել նոր, աւելի թարմ ու արմատական հոսանքներ։ Մինչդեռ հանրապետականների մի մասը —

Համալսարանականները, ժողովրդային ժառանգականությունը, ինտելիգենցիա — երազում էին 1793-ի ոգեշնչական հանրապետությունը, կազմակերպում էր միս կողմից բուն ընկերվարական կուսակցությունը իր յուրաքանչյուր կերպարանքով և սկսում էր գործօն դեր խաղալ հասարակական և քաղաքական կեանքի մէջ։ Այդ կեանքը առաջադիմել էր Բաբեօֆի և Սէն-Սիմօնի օրերից ի վեր։ Սոցիալիզմը իջնում էր երազների ամպերից, ժանում էր կամաց կամաց կեանքի իրական ժահոգությունների աշխարհը։ Քանի՛ գործադուլներ ու խլրտումներ արդէն իսկ տեղի էին ունեցել բանուորական, գործաւորական աշխարհի մէջ, 1830 թուականից մինչև 1840-ը։

Ցեղափոխական պրօպագանդը վերստին թափ էր առնում պարիզեան մթնոլորտում և գաղանի, դաւադիր ընկերութիւնները բանում էին սունկի պէս։

Նրանց հոգին էր մի զարմանալի, հերոսական տիպ,— Բլանկի (1805—1881)։

Դաւադիր-յեղափոխականի տիպն է դա, որ արևմտեան կարբօնարիզմը *) արտադրել էր բռնապետական կարգերի դէմ մղած իր ծանր պայքարի ընթացքում։

Ցեղափոխական տարեգրութիւնների մէջ Օգիւստ Բլանկի այն հազւագիւտ դէմքերից մինն է, որ հերոսութեան ամենապերճ գափնիներին միացրել է մարտիրոսութեան, նահատակութեան ծանր խաչը։ Բաւական է յիշել, որ նա մօտ 30 տարի բանտ է նստել... Մենք նրան հանդիպում ենք բոլոր ըմբոստ, հանրապետական, ընկերվարական շարժումների մէջ, որ բռնկուել են Պարիզում 1830-ից մինչև 1870 թուականը, մինչև արիւնոտ „Կոմմունան“, եւ Ֆրանսիայի բոլոր կառավարու-

*) Կարբօնարիզմի մասին կը խօսենք յետագայ գլուխներից մէկում, ուր կը գծենք Իտալական Ազատամարտի պատմութիւնը։

*Թիւննելը մի առանձին կատաղութեամբ հալածել են Բլանկիին *) ու բլանկիստներին։*

---

*) *Մի կատաղի ու մոլեռանդ կոմմունիստ-յեղափոխական։ 22 տարեկան հասակից՝ նա շարունակ նետւում էր յեղափոխական բուռն, արիւնալի տրկածների մէջ. 1827-ին, ժողովրդական յուզումների միջոցին նա մի քանի անգամ վիրաւորւեց ու բանտ դրւեց։ 1830-ից յետոյ կուում էր անդուլ կատաղութեամբ Յուլիսեան միապետութեան դէմ, իբրև պարտզուխ հանրապետականների։ 1839-ին մահւան դատապարտւեց, ապա վճիռը փոխարինւեց բերդարգելութեամբ, որ նա տարաւ խիստ ծանր պայմանների մէջ, դիւցազնական արիւթեամբ։ 1848 ին, Փետրուարեան յեղափոխութեան օրերում, Բլանկին նորէն հանդէս եկաւ ապրատականների առաջին շարքերում, կարմիր դր շակը պարզած։ Ռէակցիան յաղթանակելով՝ նա դատապարտւեց 10 տարւայ բանտարկութեան։ 1859-ին ազատ արձակւեց, բայց 2 տարի յետոյ նորէն բանտարկւեց։ 1870-ին, Բլանկին դարձեալ բարրիկադների վրայ է, կոմմունայի արիւնահեղ ապստամբութեան մէջ, դարձեալ իբրև պարագլուխ... Կրկին անգամ ձերբակալւեց և այս անգամ քշւեց Հեռու աքսորատեղ, ուր մնաց մինչև 1878։ Ի վերջոյ ներման արժանանալով, նա հիմնեց իր բոցաշունչ օրգանը. „Ni Dieu; ni maître“ (Ոչ Աստուած, ոչ իշխան) անունով։ Բայց այնուհետև երկար չդիմացաւ անդուլ ապստամբի յոգնած մարմինը. Բլանկին մեռաւ յեղափոխական Ֆրանսիայի գուրգուրանքով շրջապատուած և այսօր նա հանգչում է Պէռ Լաշեզի գերեզմանատան, իր սիրեցեալ կոմմունարների աշխարհում։*

Բլանկիստական կուի մեթօդն էր՝ գաղտնի գաւադրութիւններ, փոքրամասնութեան անակնկալ հարուածներ, յեղափոխական դիկտատորութիւն... Այդ տեսակ միջոցներով էր երազում հռչակաւոր կոմմունիստը՝ բնկերվարական կար-

Ի՞նչ ասել կուզէ, Լուի Փիլիպի կառավարութիւնը ամեններից աւելի ատում ու հալածում էր բլանկիստական գաղտնի, „ստորերկրեայ“ ընկերութիւնը, որ յայտնի չէ ուր, Պարիզի ո՛ր անկիւնում, հաստատել էր իր կլուբը և այնտեղից տարածում էր իր թովիչ ազդեցութիւնը պարիզեան արուարձանների վրայ...

Մթնոլորտը ելեքտրանում էր հետզհետէ այդ գաղտնի ագիտացիայի շնորհիւ, 1848-ի փոթորիկը մօտենում էր։ Բուրժուա-հանրապետական տարրերն ևս միշտ աւելի և աւելի համակւում էին յեղափոխական տրամադրութեամբ, թէև գործում էին լէգալ, օրինական միջոցներով։ Հրապարակ նետուեց հռչակաւոր բանաստեղծ Լամարտինը, որին նոյնպէս միապետութեան աղաղակող արտաները նետել էին հանրապետական շարքերը։ Լամարտինի թատերամուտը մի ցնցող իրողութիւն էր։ Իր ծննդավայր Մակօնի մէջ նա արտասանեց, ահագին բազմութեան առաջ հանդիսաւոր ու մեղեդնօտ ձառ, որով սպառնում էր միապետական կառավարութեան և նախագուշակում գալոց „փոթորիկը“։ Իր „*Les Girondins*“ ժեծաշուառաչ գրուածքի մէջ նա մի հզօր ու յորդառատ լիրիզմով կոչում էր և արծարծում Մեծ Յեղափոխութեան սասանեցուցիչ յուշերը...

Եկաւ 1848 թուականը, պարլամենտի մէջ հանրապետական օպպօզիսիօնը սկսեց ճառեր — համարձակ և մարտակոչ — ուր քննադատում էր միևիստրութեան քաղաքականութիւնը և պահանջում ռէֆօրմներ։

դերի յաղթանակը։ Աշակերտներն ու հետևողները շուտ լքեցին այդ մեթօդը, որ աւելի համապատասխանում է բուռնապետական ժամանակների ոգուն։ Սակայն, Բլանկիի ոգին տպրում է դեռ... Յեղափոխական սինդիկալիզմի մէջ։ (Տես Մ. Վ., „Հոսանքներ“)։

Ռէֆօրմ ընտրողական սիստեմի — ամենից առաջ։ Այդ էր որ պիտի ստեղծէր նոր ժողովրդական պարլամենտ և պիտի վերանորոգէր Ֆրանսիան։

Ճառերից՝ որոշեցին անցնել հրապարակային ցոյցերի։ Ծրագրեց բանկետ... Մեծ, հանդիսաւոր ճաշկերոյթ, որի շուրջը պիտի համախմբուէր ամբողջ դիմադրական բանակը և պիտի պահանջէր ընտրողական սիստեմի ռէֆօրմ։

Այդ լուրն արդէն սոսկումն ազդեց կառավարութեան վրայ։ Նա որոշեց արգելել բանկետը։ Ինչպէ՞ս սակայն արգելէր... Ժողովները, գումարումները վաղուց հետէ ազատ էին հռչակուած։ Այնուամենայնիւ — արգելեց։

Եւ դա եղաւ ազդանշան խռովութեան։ Ամբոխները թնդացին։ Սպառնական ու որոտընդոստ ճառեր՝ կառավարութեան հասցէին։ Բուրժուա-հանրապետական կուսակցութիւնների վարիչները չգնացին ծրագրուած բանկետին, վախենալով կոտորածից, իսկ ժողովուրդը — գնաց։ Բանուորներ, արհեստաւորներ, ուսանողներ, խառնիխուռը, առանց որևէ առաջնորդի, փետրուար 22-ի առաւօտեան, լցրին Համաձայնութեան հրապարակը, *Place de la Concorde*, երգելով Մ ա ր ս է լ ի է զ և գոչելով „կեցցէ՛ Ռէֆօրմը“։

Նոյն կոչերը — երկու օր յետոյ, իսկական ապստամբութեան օրը, փետրուար 24-ին, Բլանկիստները հրապարակ եկան և վայրկենաբար բարրիկադները բարձրացան Պարիզի արուարձաններում, բանուորական թաղերի մէջ։

Կառավարութիւնը իսկոյն նետեց ապստամբների դէմ Ա զ գ ա յ ի ն Պ ա հ ա կ ը (*La Garde Nationale*). սակայն վերջինս, նոյնպէս դժգոհ կառավարութիւնից, նոյնպէս մշակուած ապստամբութեան գաղափարով լքում

է իր հրամանատարներին և անցնում է ժողովրդի կողմը, հնչեցնելով „կեցցէ՛ Ռէֆօրմը, անկի՛ Լուիզօ“... Տեղաեղ, սակայն, զօրքը դիմադրեց ապստամբներին, արիւնը հոսեց։

Թագաւորը, առանց որևէ դիմադրութեան հանդիպելու, սլանում է դէպի *Tuillerie*, արքայական պալատը։ Վերատադրւում են Մեծ Յեղափոխութեան տեսարանները... Ժողովուրդը ներս է խուժում և կործանում թագաւորական գահը։ „Մա՛հ գողերին“ — լսւում է ժողովրդական ցասկոտ, ահաւոր կոչը։

Ի՞նչ է անում Լուի Փիլիպ... Նա էլ կրկնում է իր նախորդի, Շարլ X ի քայլերը։ Նախ յամառելով, ապա զիջելով աստիճանաբար, հասնում է այնտեղ, որ ստիպւած է լինում... փախչել իր գլուխն ազատելու համար։ Փախչում է գաւառ, ապա երկար դարանից-դարան թափառելով, հասնում է ի վերջոյ հավր նաւահանգիստը, ուսկից նետւում է անգլիական նաւ և ապաստանում Լօնդօն։

Միապետութիւնը ջախջախւած էր... առժամապէս։ Սօցիալիստները շտապեցին օգտագործել վայրկեանը։ Նրանք գրաւեցին Քաղաքային Տունը (*Hotel de Ville*), հռչակեցին հանրապետութիւն և որոշեցին, որ ժամանակաւոր կառավարութեան մէջ մտնեն մի քանիսը սօցիալիստական պարագլուխներից։ Ձայտարարեցին իբրև թեկնածուներ՝ Լուի Բլան, Ֆլօկօն և Ալբեր։

Ընդունեց այդ առաջարկը և կազմեց շուտով ժամանակաւոր կառավարութիւնը, որի մէջ մտան Լամարտին, Լեդրիւ Ռօլլէն, Ք.րագօ և ուրիշներ։

Այդպէս վերջացաւ Փետրուարեան Յեղափոխութիւնը, որ անմիջապէս ձգեց հրդեհը ուրիշ մի շարք արևմտեան ու հարաւային երկիրներ։

Երկրորդ անգամը իր ալէծուփ պատմութեան ընթաց-

քում Ֆրանսիան ջնջեց միապետութիւնը և հաստատեց դեմօկրատիկ, հանրապետական իրաւակարգ։

Երկրորդ հանրապետութեան հետ միասին, իբրև նրա անսասան, անձեռնմխելի խարիսխ՝ հռչակեց ընդհանուր ձայնատուութիւնը (*Suffrage Universel*)։ Եւ դրա հիման վրայ ընտրեց առաջին Սահմանադիր ժողովը, որի մէջ մտան մի շարք հռչակաւոր Ֆրանսիացի գրողներ ու գիտնականներ. Վիկտոր Հիւգօ, Լամարտին, Էդգար Քինէ, Լամբննէ, Թիէր, Բաստիա, Պրուդօն և այլն։

Գերակշռում էին չափաւոր հանրապետական տարրերը, որոնց պարագլուխն էր Լամարտին։ Նա հոգին էր և հանրապետական կառավարութեան։ Իր կրակոտ, քնարաշունչ ճառերով նա հմայում էր ունկնդիրներին և քարշում իր ետևից ամբողջ երկիրը։

Ի՞նչ եղաւ յետոյ...

Ամբողջ Ֆրանսիան լուռ ու մունջ ընդունեց Պարիզի հրովարտակը, որ հռչակում էր հանրապետութիւն։ Թւում էր, թէ ներքին կռիւներն ու ալէկոծութիւնները գէթ առժամապէս պիտի դադրէին. թւում էր. թէ հանրապետական ռէժիմը իր „ազատութեան, հաւասարութեան ու եղբայրութեան“ ծանուցումներով, ժամուկի, խօսքի, խղճի ազատութեամբ, այլ ևս առիթ չպիտի տար դժգոհութեան ու խռովութիւնների... Սակայն ընդհակառակը՝ կուսակցութիւնները, կարծէք, այնուհետև դարձան աւելի անհաշտ և դասակարգային կռիւը ընդունեց աւելի սուր ու կատաղի կերպարանք։ Ընկերվարական կուսակցութիւնը, որ իր ներկայացուցիչներն ունէր կառավարութեան մէջ (Լուի Բլան, Ալբէր), չէր ուզում բաւականանալ լոկ քաղաքական յեղափոխութեամբ և ձգտում էր առաջ բերել սոցիալական յեղափոխութիւն, որ և միայն կարող է փոխել

հիմնականապես աշխատաւոր դասակարգի վիճակը։ Ուռաջին քայլից իսկ սկսւեց բաժանումն ու կռիւը հանրապետական կառավարութեան մէջ, մինչ Բլանկի, Բարբէս և այլ կարմիր յեղափոխականները ժողում էին նոյն պայքարը դրսում, շարունակ աճեցնելով գաղտնի ընկերութիւնների ու կլուբների թիւը, շարունակ դիմումներ ու սպառնալիքներով անելով կառավարութեան։

1848-ի արիւնոտ անցքերն արձանագրելիս՝ չենք կարող չյիշել „ազգային արհեստանոցների“ (*ateliers nationaux*) տխուր, ողբերգական պատմութիւնը, որ կը մնայ յաւէտ իբրև անջնջելի փաստ բուրժուազական ապիկարութեան և մի պերճախօս ապացոյց, որ բանւորները միմիայն իրենցից կարող են ակնկալել իրենց դասակարգային ազատագրութիւնը։ Լուի Բլան խմբագրեց *le droit au travail*-ի (իրաւունք աշխատելու) հրովարտակը, որի համեմատ՝ „հանրապետական կառավարութիւնը պարտաւորւում էր ապահովել բանւորի գրութիւնը աշխատանքով և աշխատանք ժամակորարել ամեն մի քաղաքացու“։ Անմիջապէս հրահանգեց հինել ազգային արհեստանոցներ՝ աշխատազուրկ բանւորներին գործ տալու համար։ Դա ամենամեծ զիջումն էր, որ արեց բուրժուական հանրապետութիւնը բանւորներին։ Բայց հէնց այդտեղից է սկսւում արիւնոտ գրամը։ Ճգնաժամ էր աշխատանք չկար։ Անգործ զանգւածները մերկ ու քաղցած թափառում էին փողոցներում։ Կառավարութիւնը առ երեսս համաձայնեց պարապմունք տալ նրանց, բայց՝ փոխանակ իւրաքանչիւրին ըստ իր ընդունակութիւնների և մասնագիտութեան աշխատեցնելու, բոլորին էլ ստիպեցին հող փորել ընչին օրավարձով։ Այդ միջոցին էր, որ գաւառներից սկսւեց մեծ հոսանք դէպի մայրաքաղաք։ Աշխատազուրկ բանւորների թիւն աճեց, բարձրացաւ երկու ամսւայ ընթացքում

6,000-ից մինչև 100,000։ Այն ժամանակ օրավարձը սկսեցին աստիճանաբար պակասեցնել, շատերին նոյնիսկ զրկեցին աշխատանքից. ապա և հրամայեց արձակել բոլորին ու բոլի չետ քշել դէպի գաւառները։ Բանւորները ըմբոստացան. սկսեց մի տենդային ագիտացիա։ Սոցիալիստական պարագլուխները հրաւիրեցին նրանց դէպի ապստամբութիւն։ Ընդհարումը անխուսափելի էր։

Պրօլետարիատը՝ զինուած ոտից գլուխ՝ բռնեց Պարիզի ամբողջ արևմտեան քաղաքամասը. բարրիկադները բարձրացան... „Ազատութի՛ւն“ — մռնչաց բուրժուազական ռէակցիան, և գեներալ Կավէնեակը հրաման տուաւ ջնջելու ապստամբներին։ Պայթեց մի զարհուրելի ճակատամարտ, որ նշանաւոր է Պարիզի արհաւիրքների պատմութեան մէջ *)։ Մի կողմից պրօլետարիատը, միւս կողմից՝ ամբողջ բուրժուազական ռէակցիայի բանակը, որ երդւել էր իսպառ ոչնչացնել սոցիալիզմի ուրուականը։ Ամրացած Սէն-Անտուանի արուարձանում՝ բանւորները կուեցին յամառ, մոլեգին։ Երեք օրւայ արիւնհեղութիւններից յետոյ գօրքը պաշարեց նրանց և... սկսեց կոտորածը, — ահռելի, մասսային կոտորած, որ յայտնի է պատմութեան մէջ „Ցունիսեան ջարդեր“ անունով։ Բանւորները խմբովին մորթուեցին կամ աքսորւեցին, տասնեակ հազարաւոր պրօլետարներ ընկան բարրիկադների տակ...

Դառն, յուսահատեցուցիչ օրեր էին ֆրանսիական սոցիալիզմի համար։ Մի ծանր հիասթափութիւն պաշարեց ընկերվարականներին և բոլոր առաջադէմ տարրերին։ Սոցիալիստական պրօպագանդը գրեթէ մարեց,

---

*) Վիկտոր Հիւգօ նկարագրել է իր „Թշուառներ“ի մէջ այդ կարմիր օրերի երկու հսկայ բարրիկադները, արիւնով սրսկւած, ամեն կողմից ծակոտւած և դիակներով պատած։

ներա օրգաններըը խափանուեցին։ Սօցիալիզմը ընկճուեց և այնուհետև երկար ժամանակ կենդանութեան նշոյլ էէր ցոյց տալիս։

Բուրժուական հանրապետութիւնը շուտով ինքն ևս խեղդուեց իր նիւթած արեան մէջ։ Ընդամէնը փետրուարեան յեղափոխութեան հմայիչ բեմքասացը, Լամարտին, կորցրեց իր ժողովրդականութիւնը... Յունիսեան ոճիրը առաջ բերեց անողոք հիասթափութեան հետ ուէակցիայի մի ուժեղ հոսանք, որ և շուտով հասաւ իր արտաքին վախճանին։ Ժողովրդական պլէբիսցիտով *) հանրապետութեան նախագահ ընտրուած Լուի Նապոլէօն Բօնապարտը 1851 թուին „պետական հարուածով“ հռչակեց ինքզինքը թագաւոր-կայսր։ „Բօնապարտ“ անունը դեռ հմայք ունէր ֆրանսիական դիւրավառ ու յափշտակուող ժողովրդի աչքում։ Սակայն, իր հզօր ազգակցի, նախկին Բօնապարտի տուերն էր դա միայն, *Napoléon le petit*, ինչպէս որակել էր ազգային մեծ բանաստեղծը, Վիկտօր Հիւգօ։ Այնուամենայնիւ, „փոքրիկ թագաւորը“, Նապոլէօն III անուան տակ, ամբողջ 20 տարի իշխեց Ֆրանսիայի վրայ, մինչև որ Սեդանի արիւնոտ մարտադաշտում գերի ընկաւ Մօլտկէի ձեռքը և դրա հետ միասին խաւարեց ընդմիշտ միապետութեան աստղը ֆրանսիական երկնքի վրայ...

***

Փետրուարեան յեղափոխութիւնը գուցէ աւելի արագասաւոր եղաւ Ֆրանսիայից դուրս, իր լայն ու հզօր անդրադարձուածներով։ Դա մի ճշմարիտ ուրագան էր, որ

---

*) Հանրաւճիռ (ընդհանուր քուէարկութիւն և ուղղակի ընտրութիւն)։

փչեց Պարիզից դեպի արևելք, հարաւ ու հիւսիս, փոթորկելով արքայանիստ մայրաքաղաքները, սասանեցնելով դարաւոր գահերը։ Վիեննա, Բերլին, Սիգիլիա, Նապոլ, Միլան, Պրագա, Դրեզդէն, անգամ հեռաւոր Մոլդավ-Վալախիա — ամեն տեղ արձագանք էին գտնում պարիզեան խրոխտ նշանաբանները և բարրիկադային ճակատամարտները։

Ցանպատրաստից, գրեթէ առանց կազմակերպութեան, առանց գաղտնի ընկերութիւնների ու առաջնորդների՝ բռնկւում էր ժողովրդի լաւագոյն, զգայուն մասը — անգամ Հաբսբուրգեան արքայապաշտ Վիեննայում և Հօհենցօլլերնեան, պրուսական Բերլինում։

Առաջապահը, ավանգարդը գրեթէ ամեն տեղ ինտելիգենցիան է, ուսանողները, ազատամիտ մտաւորականութիւնը, որ քարշում է իր ետևից աշխատաւորական տարրերը։ Մեծ չէ յեղափոխական բանակը, մեծ է սակայն նրա գաղափարի հմայքը և ներշնչած զարհուրանքը։ „*Es lebe die Freiheit!*“ *) որոտում է ամբիոնից մի ձայն, մի երիտասարդ ուսանողի ձայն 1848-ի մարտ 14-ին Վիեննայի մէջ, և ահագին բազմութիւնը շրջապատում է ուսանողին, ցոյց է սարքում կառավարութեան դէմ։ Վերջինը, շանթահարւած արդէն պարիզեան անցքերով, չի փորձում անգամ պաշտպանելու և շտապում է տեղի տալ։ Ալիքն աճում է աստիճանաբար, մայրաքաղաքից անցնում գաւառները, չեխ, լեհ, մաջառ, իտալացի, ամենքն էլ ոտքի են կանգնում „Կորչի՛ Մետերնիխը“ թունոտ, սպառնալի ճիչերով. Բարրիկադները բարձրանում են, հրդեհը միշտ աւելի և աւելի մօտենում է պալատին, թագաւորը սարսափած փախչում է և թագնւում ընտանիքով Տիրոլի մէջ... Հրա-

*) Կեցցէ՛ Ազատութիւնը։

ժարւում է Մետերնիխ, գոռոզ, ամենակարող դիքտատորը, որ 40 տարի շարունակ պահել էր գրեթէ ամբողջ Եւրոպան իր պողպատեայ ոէժիմի ազդեցութեան տակ, հանդիսանալով բռնապետութեան ահեղ ու հանճարեղ փաստաբան։ Յեղափոխականները հռչակեցին սահմանադրութիւն, գումարեց աւստրիական *Constituante*-ը, Սահմանադիր ժողովը, ընդհանուր ձայնատուութեամբ, և նրա առաջին գործն եղաւ՝ ջնջել ֆէօդալական-աւատապետական իրաւունքները։

Միւս կողմից՝ ազգային, անջատական շարժումն էր, որ ծայր տւեց Հաբսբուրգեան ընդարձակ կայսրութեան մէջ, մասնաւորապէս Ունգարիայում ու Իտալիայում։ Իտալական ազատագրութեան այդ առաջին փորձերի մէջ մենք արդէն նշմարում ենք Կարիբալդիի ու Մաձինիի վեհ դէմքերը։ Ռէակցիան, սակայն, յաղթանակեց Իտալիայում դրակօնական միջոցներով, բայց ապստամբների այդ առաջին ճիգերը չ'անցան ապարդիւն, նրանք զարկ տւին ազգային ինքնաճանաչութեան, որը և պիտի տար իր խոշոր ազատարար շարժումները 12 տարի յետոյ...

Կանգ առնենք փոքր ինչ ունգարական ազգային շարժման վրայ, որ նոյնպէս ունեցել է իր ցնծող դրւագները, իր հերոսներն ու նահատակները։

Լիբերալիզմի համաեւրոպական հոսանքը մուտք էր գործում նաև անշարժ, յետամնաց մաջառների մէջ։ Դարերից իվեր նրանք ենթարկւած էին Աւստրիայի, Հաբսբուրգեան արքայատոհմի ճնշող լծին, ովքեր կենտրօնացրել էր իր ձեռքի մէջ ամբողջ կայսրութեան կառավարութիւնը և ձգտում էր յաւերժացնել մետերնիխեան բռնաւոր խարազանը ոչ միայն սլաւների՝ չեխերի, լեհերի, ռուսինների վրայ, այլ և հզօր, լայնատարած ու ռազմասէր Մաճառստանի։ Մի բուռն գեր-

ժանացիք ուզում էին բռնակալօրէն իշխել իրենցից անհամեմատ բազմաթիւ, մեծազանգուած „այլազգիների“ վրայ *):

Թաթարածագում մաջառների մէջ ժողովուրդը միւս կողմից աստակապէս տառապում էր իր հարազատ ու համարիւն ֆէօդալիզմից, աւատատէր ազնուականութիւնից։

Այդպիսով, Արևմուտքից եկող ազատութեան ու հաւասարութեան գաղափարները նպաստաւոր հող էին գտնում նաև Ունգարիայում։ Նրևան էին եկել այնտեղ և գաղափարական դէմքեր, որոնք խօսքով ու գրչով արծարծում էին հայրենասիրութեան և ազատութեան հաւատամքը, ձգտում էին արթնացնել բազմամիլիոն մաջառների մէջ ազգային ինքնագիտակցութիւն և մղել նրանց դէպի նորագոյն քաղաքակրթութեան աւազանը։

Ինչպէ՛ս նման է էւոլիւսիօնի ընթացքը աշխարհի տարբեր ծայրերում, մարդկային տարբեր հատուածների մէջ։ Մաջառներն էս—որ այսօր ունին ազգային լեզուով պարլամենտ, թատրօն, մամուլ ու գրականութիւն — ընդամենը մի 70 տարի առաջ զուրկ էին այդ գրականն, խօսուն լեզուից, ժողովուրդը ունէր իր կոպիտ ժարգոնները, իսկ բարձր, կրթուած դասակարգերը, որոնք ամեն տեղ կոչուած են եղել մղում տալու ազգային ինքնաճանաչութեան, ստեղծելու գրականութիւն ու շարժում — այդ բարձր դասակարգերը՝ ազնուականութիւն, բուրժուազիա՝ մեծ մասամբ գերմանախօս էին կամ իտալախօս, ամաչում էին մաջառական իրենց ծագումից, արհամարում էին իրենց գռեհիկ բառբառները։ Մաջառերէնը, նրանց աչքում, ախոռների, ծառաների լեզու էր... (Նոյն երևոյթը մօտաւորապէս միևնոյն ժա-

*) Այսօր էս, միմիայն Աւստրիոյ մէջ՝ սլաւները կազմում են բովանդակ ազգաբնակութեան 3/4-ը։

ժանակներում գիտել է և Բոհեմիայի մլլիոնատուր չեխերի մօտ, որոնք այսօր նոյնպէս հասել են ազգային ինքնագիտակցութեան ամենաբարձր աստիճանների)։

Եւ ահա—ինչպէս ամեն տեղ — մաջառների մէջ ևս հրապարակ են գալիս առաջամարտիկ „ուահվիրաները“, նրանցից Թերևս մեծագոյնն է կոմս Ստեֆան Զէչէնէյի նա երկար տեն ճանապարհորդել էր Արևմուտքում, դիտել էր ազգերի, մասնաւորապէս Անգլիայի քաղաքակրթական վերելքը, մտածել էր իր սեփական ազգի ճակատագրի մասին և որոշել էր նուիրել նրա մտաւոր դաստիարակութեան մեծ գործին։ Ջուտ կուլտուրական գործունէութիւն՝ առանց որևէ յեղափոխական երազների։

Ամենից առաջ ունգարացի հայրենասէրները միտք են յղանում՝ հիմնել ազգային մի Ակադեմիա (անցեալ դարու 20-ական թուականներին), որ պիտի մշակէր ու զարկ տար մայրենի լեզուին։ Դրամ էր պէտք։ Նոր ունևոր դասակարգերը՝ միանգամայն անտարբեր դէպի այդ կարգի յղացումները՝ տրամադիր չէին զոհաբերելու Պրեսբուրգի աւագաժողովում գաղափարական և հայրենասէր փոքրամասնութիւնը յուսահատ ճիգեր է գործ դնում՝ խորտակելու այդ անտարբերութեան սառուցը, արտասանում է կրակոտ ճառեր, ապացուցանում է մայրենի լեզուի անհրաժեշտութիւնը։ Մէկը հոետորներից բացականչում է.

„Այդ մայրենի բառբառը, որ մեր տարբեր, առանձնայատուկ գոյութեան նշանն է աւստրիական կայսրութեան ժողովուրդների ծոցում, որ մէկն է մայրական նախկին թագի գոհարներից, — այդ լեզուն ճանաչուած, ընդունուած է դաշինքներով, մե՞նք ենք, որ լքում ենք այն, հրաժարւում ենք նրանից“...

ար ուրիշը, խօսելով նիւթական զոհաբերութիւնների անհրաժեշտութեան մասին, յայտարարում է.

„Երկրի մեծատանց զոհաբերութիւններով միայն հնարաւոր կը լինի հաստատել Ազգային Ակադեմիան։ Այս առթիւ պէտք է կրկնել հռչակաւոր զօրավարի խօսքերը. անհրաժեշտ է երեք բան. դրամ, դրամ և դարձեալ դրամ“։

Այս խօսքերի վրայ բարձրանում է տեղից Ստեփան Տէշենէի.

„Պարոննե՛ր, ես չունիմ վճռական ձայն այս ժողովում, ես այս երկրի մեծերից էլ չեմ, բայց ես ունիմ հողեր, եթէ հիմնւի մի գրոց մաճառ լեզուն մշակելու և մեր ցեղի զաւակները ազգային լեզուով դաստիարակելու նպատակով, ես կրտամ նրան իմ գոյքերի ամբողջ տարեայ հասոյթը“։

Հայոենասէր կոմսի այդ անակնկալ յայտարարութիւնը խանդավառեց ժողովը։ Վրպաննները բացեցին, ազնւական ու բուրժուա — ամենքն էլ ստորագրեցին հանգանակութեան թուղթը և քառորդ ժամու մէջ ունգարական Ակադեմիան հիմնւած էր *)։

Ազգային վերածնութեան ասպետն շարունակում է այնուհետև իր փառաւոր գործունէութիւնը։ Մի ուրիշ միտք է զբաղեցնում նրան Ակադեմիայի հիմնելուց յետոյ — մաջառական թատրոնը։ Նպատակը նոյնն է — մշակել ամենից առաջ մայրենի լեզուն, որ պատւանդանն է ազգային գոյութեան — և նրա միջոցով զարգացնել գրականութիւնն ու միտքը, հասցնել այն աստիճանին, որ այդ լեզուն ընդունակ լինի արտայայտելու և արծարծելու գիտական, փիլիսոփայական պրօբ-

*) *Hommes d'Etat de la Hongrie, Revue des Deux Mondes, 1 Août 1867.*

լեռները, Թարգմանելու Շէքսպիր ու Գեօթէ, մի խօսքով, հաղորդակից անելու ժամանակներին եւրոպական քաղաքակրթութեանը։

Հիմնւում է 30-ական թւականներին և ժամանակ թատրօնը։ Տրւում են մայրենի լեզւով առաջին ներկայացումները։

Խոչընդոտները մեծ են հայրենասէրների ճամբու վրայ։ Երկար ժամանակ նրանք ծաղրի առարկայ են „քարձր, փափկասուն“ շրջանների մէջ։ Ցաւոտ աշխատանքը, սակայն, իւ վերջոյ յաղթանակում է։

Ինքը „ռահվիրան“ գրում է գրքեր ու հրովարտակներ մայրենի լեզւով։ Այդ գրքերի ու հրովարտակների մէջ նա մտրակում է հայրենի գոռոզ, ամբարտաւան ֆէօդալականութիւնը, որ ամուր կառչել էր իր դասային առանձնաշնորհումներին, խարազանում է միջնադարեան փտած կարգերը, յորդորում է ընդօրինակել Եւրոպային, պահպանելով հանդերձ ազգային առանձնայատկութիւնը, փոխ առնել Եւրոպայից թէ անհրաժեշտական կեանքի և թէ մտաւոր առաջադիմութեան մեթօդները։

„Ա՛յլ ևս մի՛ կրկնէք, թէ աւստրիական կառավարութիւնն է պատասխանատու Ունգարիայի յետամնացութեան համար — կոչում էր նա, դիմելով իր զառամեալ, պահպանողական հայրենակիցներին։ Ձկայ մի մարդկային ոյժ, որ արգելէ ձեզ՝ ապրելու, եթէ միայն դուք ինքներդ ձեզ չլքէք։ Երկրի վերածնութիւնը ձեր սեփական ձեռքերում է. այն լուծը, որ ճնշում է ձեզ, Աւստրիան չէ, այլ ձեր գօթական նախապաշարումները։ Դուք փակւում էք ձեր որդնակեր հաստատութիւնների մէջ և կարծում էք թէ դրանով պաշտպանում էք մեր ազատութեանց պալլադիոնը *), սակայն իրօք դուք

*) *Palladium*, երաշխիք, զօրավիգ։

պաշտպանում էք մի սոսկ գերեզմանւ Ձեզ լսելով, թւում է թէ Ունգարիան գոյութիւն ունի միայն անցեալի մէջ. բարձրացրէք ձեր սրտերը, այլասեռուած մաջառները, Ունգարիան չի աւարտել իր գերը, այսօր է միայն սկիզբ առնում նրա ճակատագիրը"...

Որքա՜ն ծանօթ, ընտանի են մեր ականջներին այդ աւանական կոչերը։ Բոլոր ազգերի մէջ եղել են այդ պատմական վայրկեաններըը, ուր երկու տարբեր աշխարհներ — հինը և նորը — երկու հակամարտ հոսանքներ — պահպանողականն ու առաջադիմականը — մոլեգնօրէն բաղխել են իրար և ծնունդ տւել հիմնական ու փրկարար վերիվայրումների...

Հին, զառամեալ Արեւմտեան ներկայացուցիչները, ընդդիմանալով ռէֆորմներին, եւրոպական նորոյթներին, քարոզում էին մէկ ծանօթ նշանաբան՝ *extra Hungariam non est vita* (արտաքոյ մաջառականութեան չէք կեանք *), որ այնքան յիշեցնում է մեր վաղեմի պահպանողականների մարտակոչը՝ „արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չէք փրկութիւն", որ այնքան յիշեցնում է և ռուսական սլաւոֆիլների նշանաբանները՝ „ազգադնիկների" դէմ մղած օրհասական պայքարի մէջ։

„Ազգադնիկները", արեւմտեան գաղափարների ներկայացուցիչները, վերջի վերջոյ տարան յաղթանակ բոլոր երկիրներում, նաև Ունգարիայում։

Եկան նոր օրեր։ Ապստամբութիւնների, բռնի, արիւնոտ վերիվայրումների հողմը փչում էր Արեւմուտքից միշտ աւելի ուժգին ու կատաղի, թունդ էր հանում

---

*) Իսկ „մաջառականութիւն" ասելով, հասկանում էին ֆէօդալական հինաւուրց առանձնաշնորհումների ամբողջութիւնը։

երիտասարդ սրտերը ամենուրեք: Այլեւ երիտասարդութիւնն ևս չգոհացաւ Ցէշէնէի և բոլոր „ապգաստերկուլտուրականների“ փոքր ինչ դանդաղ, չափաւոր ու օրինապաշտ քաղաքականութեամբ: Չափաւոր էր կոմս ուահվիրան թէ իր ծագման զօրութեամբ և թէ իր անհատական խառնուածքով: Նա կուզէր, որ ունգարական հայրենիքը բարձրանար խաղաղ, աստիճանական էվօլիւսիօնով, առանց երբէք հակասելու աւստրիական-պետական օրէնքներին, նա չէր ուզում ընդհարում Աւստրիայի հետ և անհաշտ թշնամի էր յեղափոխական միջոցների:

Բայց նրա ուզածը երազ էր, ուտօպիա էր: Աւստրիան միահեծան բռնապետութիւն էր, իսկ ամեն մի բռնապետութիւն, իր ներքին բնոյթի զօրութեամբ իսկ, դէմ է հպատակ և մանաւանդ տարացեղ ժողովուրդների ազատ, բնականոն զարգացման ու առաջադիմութեան. նա հանդուրժում է մինչև մի չափանի աստիճան միայն: Գալիս է վաղ թէ ուշ վայրկեանը, երբ միահեծանի սատրապները թումբ են կանգնում ազգային առաջխաղացութեան դէմ, իրենց անողոք veto-ն դնելով այս կամ այն ձեռնարկի կամ հաստատութեան վրայ:

Խաղաղ, անարիւն էվօլիւսիօնը անհնարին է բռնապետութեան մէջ... Մարդկային պատմութիւնը իր պարբերական և արիւնալի ցնցուածներով բազմի՛ցս արդէն վաւերացրել էր այդ ճշմարտութիւնը. և ահա նոր, վաղուց սերունդն ևս, գիտակ նոյն դառն ճշմարտութեան, հրապարակ եկաւ... արդէն ոչ թէ խաղաղ ու լէգալ էվօլիւսիօնի, այլ ըմբոստացման և բռնի յեղափոխութեան նշանաբաններով:

Ծնունդ առաւ յեղափոխական կուսակցութիւնը: Միանգամայն հայրենասէր, ազգային և դեմօկրատ, ժողովրդական նա ունէր մի շարք հուժկու, երիտասարդ վարիչներ: Բայց նրա ամենափայլուն և ամենայայտնի

պարագլուխն էր — Կօշուտ՝ ծագումով խորվաթ՝ նա մեծցել ու սնուել էր ունգարական միջավայրում՝ և նուիրել իր ուժերը Մաջառստանի վերածնութեան։ Այդ վերջինին նա ձգտում էր յեղափոխութեան ճանապարհով։ Ունգարիան պէտք է անջատուէր Աւստրիայից և կազմակերպուէր, իբրև ուրոյն պետութիւն։ Իբրև գրող, հրապարակախօս և շնորհալի հռետոր, իբրև ժանաւանդ տաք ու ըմբոստ տեմպերամենտ և ազատութեան ու անկախութեան քարոզիչ, նա արագ արագ բարձրացաւ իր ընդարձակ կարիէրի մէջ, դարձաւ ժողովրդի, ամբոխի կուռքը, գրեթէ խաւարեցրեց Ցէշէնէիի հմայքը։

Երկու գաղափարական ախոյեաններըը, բնականաբար, ընդհարուեցին։ Սկսուեց տենդային բանակռիւ։ Ցէշէնէի յայտարարում էր, որ Կօշուտի ծրագիրներին ինքն ևս համակրում է, ինքն ևս դաւանում է յեղափոխական առաջնորդի աւետարանը, բայց մի բան, որ խորապէս դատապարտելի է չափաւոր և պատեհապաշտ կոմսի աչքում, դա Կօշուտի քարոզի տոնն է, նրա կրքոտ ու անխոհեմ ձևը։

Իսկ ունգարական Միրաբօն պատասխանում էր.

„Ի՜նչ. ժնեք, ուրեմն, համաձայն ենք ըստ էութեան և միայն ձև՜ն է ձեզ գրաղեցնում։ Ի՜նչ մի՞թէ իմ յօդուածների ձև՜ն է, որ յեղափոխութեան վտանգ է ծնում Ունգարիոյ համար։ Խոստովանեցէք, որ այդ յեղափոխութիւնը — եթէ նա պէտք է պայթի — ունենալու է աւելի խորունկ պատճառներ“...

Երբ պայթեց Փետրուարեան Յեղափոխութիւնը Պարիզում և տարածեց իր ալիքները Հարաւեան երկրների մէջ, Կօշուտ անյապաղ յայտարարեց իր կուսակցութեան անունից, որ Ունգարիոյ պահանջն է ոչ թէ այս կամ այն ռէֆօրմը, այլ անջատում, անկախութիւն։ Շտապշտապ կազմակերպեց ազգային միլիս, զօրաբանակ և

1848 թ. մարտի 15-ին Կօշուտ, մաջառական մի պատ-
ւիրակութեան գլուխ անցած, դիմեց Վիեննա, պահան-
ջելով ունգարական յատուկ մինիստրութիւն, ֆէօդա-
լական իրաւունքների վերացում, մամուլի, խօսքի ազա-
տութիւն եւայլն։ Ըմբոստ հռետորի այդ սրարշաւ
թատերամուտը այնպիսի որոտընդոստ ովսաննաներով
ողջունեց երկրի մէջ և այդ հանգամանքը այն աստի-
ճան շշմեցրեց միապետին, որ սա շտապեց... զիջել։
Ընդունեց Կօշուտի բոլոր պահանջները, հաստատեց
շուտով մաջառ կառավարութիւն Պրեսբուրգի մէջ, կոմս
Բաթեանի, իբրև նախագահ և Կօշուտ, իբրև մինիստր
ֆինանսների։ Դա առաջին խոշոր քայլն էր դէպի կա-
տարեալ անկախութիւն։

Հակամարտութիւնը, սակայն, շուտով ծայր տւեց եր-
կուսի միջև, առաջինը՝ արիստօկրատ, երկրորդը՝ ժողո-
վրդական, դեմօկրատիկ կուսակցութեան պարագլուխ։

Ներքին երկպառակութիւնների վրայ աւելացան քիչ
յետոյ և արտաքին դաւերը։ Աւստրիան չէր մարսում
իր ահագին պարտութիւնն ու կորուստը, բռնակալները
ե՞րբ են առանց արիւնհեղութեան զիջել իրենց իրա-
ւունքները...

Մինչ այս մինչ այն, ապստամբութեան հրդեհն ան-
ցաւ և Իտալիա, որի մի մասը պատկանում էր նոյն
Աւստրիային։ Ոտքի ելան և չեխերը։ Վերջապէս նոյն
ինքը Վիեննան թատերաբեմ էր ժողովրդական ըմբոս-
տացումների։ Ստեղծւել էր պետութեան համար մի
ահաւոր ճգնաժամ։ Եւ նա փորձեց ազատւել հին, մա-
կիավելիկ հնարքներով... Հպատակ ազգերին իրարու
դէմ հանելով։ Մայրաքաղաքի մէջ հրացանազարկ անե-
լուց յետոյ գեներալ յեղափոխական առաջնորդներին,
կենտրօնական կառավարութիւնը ձգտեց ոտքի հանել
ընդդէմ մաջառ կառավարութեան՝ խորվատներին և

հարաւային այլ սլաւներին, որոնց ազգային իրաւունքները սկսել էր արդէն ոտնահարել այդ նոր ժայռաւ կառավարութիւնը։ Աւստրիան ինքն ևս բռնացել էր միշտ այդ սլավական իրաւունքների վրայ, այժմ սակայն նեղն ընկնելով, շռայլում էր նրանց խոստումներ և աչողում էր դէմ կանգնեցնել ժայռաւներին։

Միապետութիւնը նորէն հետզհետէ ամրացրեց իր դիրքերը, ռեակցիան քանի գնաց, սաստկացաւ։ Նշանակեցին երկու բռունցքաւոր զօրավարներ, ապստամբութիւնը ամբողջ կայսրութեան մէջ խեղդելու համար։ Գեներալ Վինդիշգրէց՝ ճամբեց զօրքով դէպի Ունգարիա, Յադեցկի՝ դէպի Իտալիա (Լոմբարդիա)։ Ֆրանց Եոզէֆի երկու դահիճներն էլ լաւ „հունձ“ արին։ Արշաւեցին Աւտրիայի պէս „խռովարար“ նահանգների վրայ, թողնելով իրենց ետևից արիւն ու աւերած։ Պաշարման վիճակ յայտարարեցին ամենուրեք և սկսեցին կոտորել։ Ձեխերին շուտ հանգստացրին, իսկ Ունգարիայում „պատժիչ բանակը“ հանդիպեց ուժեղ դիմադրութեան։ Կօշուտի համար հասան փառքի, հերոսական ձեռնարկների և ցաւագին պարտութեան օրեր։ Նա իր ձեռքն առաւ ազգի ղեկը, եղաւ դիքտատօր, ծառացաւ բռնապետութեան դէմ իրեն պաշտող ժողովրդի հետ, կազմակերպեց Ազգային պաշտպանութեան կօմիտէ, և իբրև նոր Դանտօն, անցաւ նրա գլուխ։ Մայրաքաղաք հասաւ շուտով 50,000-ի նա սլացաւ թշնամու դէմ, դուրս շպրտեց պաշարող զօրքը, ազատեց մայրաքաղաք Բուդապեշտը, նրա հետ գրեթէ ամբողջ Ունգարիան։ Ապա Կօշուտ, վրէժի ու ցասման բուռն ժեստով յայտարարեց Ունգարիան, իբրև իսպառ անջատուած Հաբսբուրգեան միապետութիւնից, իբրև անկախ հանրապետութիւն։ Պարլամենտը ընտրեց Կօշուտին — նախագահ և ժամանակաւոր կառավարիչ հանրապետութեան։

Ծանր էր Ֆրանց-Եօզէֆի *) կացութիւնը։ Ազգային ակնածավելիզմը, ժողովուրդներին իրարու դէմ հանելը, *divide et impera*-ի յանցաւոր քաղաքականութիւնը, վերջապէս սեփական, գերմանա-աւստրիական զօրքը չ'օգնեցին նրան, չկարողացան յաղթահարել յեղափոխութեան հիդրային։ Ւ։ ահա տեղի ունեցաւ թատրօնական մի հարուած, մի արտառոց ու հրէշաւոր անակնկալ։ Հաբսբուրգեան միապետութիւնը օգնութեան կոչեց... ցարին։ Այն ժամանակ Նիկօլայ Ի-ն էր, գոռոզ ինքնակալը և յեղափոխութեան գաժան թշնամին, որի պատկերը դիտեցինք նախորդ էջերի մէջ **)... Ցարը ձայնակցեց և ռուսական 80,000 բանակը պ ա ս կ ե վ ի չ ի առաջնորդութեամբ ***) 1849-ի յունիս 14-ին անցաւ Կարպատեան լեռներն ու եկաւ յետ նետելու Ունգարիան Աւստրիայի հաժարկուխը այնուհետև երկար չտևեց։ Մեջաւ զօրքի մի մասը անձնատուր եղաւ ռուսներին, կօշուտ փորձեց բանակցել Պասկեվիչի հետ, խոստանալով Ունգարիայի թագը մի ռուսական իշխանի, սակայն չ'աջողեց և ստիպեցաւ փախուստ տալ։ Ապաստանեց իր մարդկանցով — Թիւրքիա։

Այնուհետև սկսեցին կարմիր խրտխռանները։ Ունգարական ապստամբութիւնը խեղդուեց արիւնի մէջ։ Հաստատուեցին գինուրական ատեաններ, արձակուեցին մահուան դատավճիռներ, հրացանի բռնեցին


---

*) Այժմեան հեզիկ ու սահմանադրական թագաւորն է, որ 40-ական հեւականներուն, իրերի բերմամբ, մի բռնաւոր ինքնակալ էր։

**) Տես „Դեկաբրիստների յոյցը“, տոյն գրքի էջ 150։

***) Պասկեվիչը նախկին կառավարչապետն է, ներքին Աշտարակեցու նենգաւոր հակառակորդը, որ ճնշել էր նաև 1830-ի լեհական ապստամբութիւնը։

ուղղար նախարարապետին, կախաղան բարձրացրին բազմաթիւ գինուորականներ և շատերին էլ բանտարկեցին ու աքսորեցին։ Ծերունի Ցէշէնէր, հռչակաւոր կոմս-առաքեալը, որ նախատեսել էր այդ աղէտը



ԿՕՇՈՒՏ

ները, որոնցից ձգտել էր ազատել Հայրենիքը իր երազական ծրագիրներով... Ծերունի Ցէշէնէի էկարողացաւ դիմանալ այդ տարատափելի հարուածներին—խելագարուեց և ողբալիօրէն ապրեց իր կեանքի վերջալոյսը բուժարանի մէջ...

Ահա թէ ինչպէս յաղթանակեց վիեննայի կառավարութիւնը ցարի աջակցութեամբ։ Ահա թէ ինչպիսի սրտառուչ ձևով գիտեն եղբայրանալ աշխարհի բռնաւորները, երբ հարկ է զսպել — մետերնիխեան արտայայտութեամբ — „յեղափոխութեան համաճարակը“...

Ի՞նչ եղաւ Կօշուտ։

Թիւրքիայից նա անցաւ Անգլիա, հաստատուեց ազատ և հիւրընկալ Լօնդօնում։ Այնտեղ յաճախ անում էր հրապարակային ատենախօսութիւններ ունգարական և ուրիշ քաղաքական խնդիրների մասին։ Մտաւ սերտ յարաբերութեան մէջ եւրոպացի նշանաւոր արմատական գործիչների հետ, մօտեցաւ իմիջի այլոց իտալական ծանօթ դաւադիր Մաձինիին... Հիմնեցին ջենովայում միջազգային մի կոմիտէ, որ նպատակ ունէր շաղկապել եղբայրական միութեան մէջ՝ իտալացիներին, մաջառներին և լեհերին՝ ընդդէմ Աւստրիայի։ Վաթսունական թուականներին Կօշուտ արդէն մտերմական յարաբերութեան մէջ էր Լօնդօնի համբաւաւոր տարագիրների հետ, ռուս, լեհ, գերմանացի և այլն։ Այդտեղ էին Մարքս, Հերցեն, Բակունին, Էնգելս և ուրիշներ։ Եւ 1864-ին, Ինտերնացիօնալի *) բացմանը, իբրև շարս այլ ծանօթ յեղափոխականների, մենք տեսնում ենք նաև մեծ, սգաւոր մաջառ ապստամբին, որ եկել էր իր բուռն համակրանքը ցուցադրելու բոլոր ազնիւ դատերի պաշտպաններին։

Անցան տարիներ։ Աւստրօ-ունգարական յարաբերութիւնները փոխուեցին, մեղմացան, յարաբերական ազատութեան ռէժիմի տակ — Կօշուտը, սակայն չվերադարձաւ։ Մշակուեց երկու պետութիւնների միջև

*) Այդ մասին կը խօսենք յետոյ։

Ausgleich-ի սիստեմը, հաշտութեան, իրաւախոհութեան դուալիստական սիստեմը, որ շարունակւում է մինչև այսօր — նոյն Ֆրանց-Եօզեֆ թագաւոր-իշխանի վեհապետութեան տակ *):

Կօշուտին քանից հրաւիրեցին իր հայրենակիցները, քանից նրան առաջարկեցին մեծ պաշտօններ կիսազատ Ունգարիայում — Կօշուտ ճնաց անդրդեւելի, նա գերադասեց ճնալ կամաւոր աքսորի մէջ, քան վերադառնալ դէպի մի հայրենիք, որ հաշտւել էր իր երդւեալ դահճի, Հաբսբուրգեան արքայատոհմի հետ:

Կեանքի մեծ մասը ապրեց տաքսագիր և մեռաւ տաբագիր: 1894-ին կնքեց նա իր մահկանացուն 92 տարեկան զառամեալ հասակում: Դիակը միայն գնաց հայրենիք: Սուգ էր հագել ամբողջ երկիրը, իր մեծագոյն զաւակի մահուան առթիւ:

Ունգարիան չի մոռանում իր Կօշուտին: Անկախութեան կուսակցութիւնը այսօր տակաւին գոյութիւն ունի մաքառ պարլամենտի մէջ և նրանից դուրս: Նրա վարիչն է Ֆրանց Կօշուտ, մեծ հայրենասէրի որդին, որ... տարաբախտաբար, իր հօր անուան հմայքը միայն ունի և ոչինչ չի աւելացրել նրան:

Հայրենի ժողովուրդը չի մոռանում Կօշուտին, — չի մոռանում և Հաբսբուրգեան արքայատոհմը իր ահեղ հակառակորդին: Եւ այսօր ուղևորը, ոտք կոխելով ունգարական մայրաքաղաքը, դիտելով բազմաթիւ ու հոյա-

---

*) Այսօր Աւստրիա և Ունգարիա ունին իւրաքանչիւրը իր պարլամենտ ու մինիստրութիւնը: Միայն երեք ճիւղերի մէջ կառավարութիւնը ընդհանուր է. այն է՝ 1) ֆինանսների, 2) պատերազմական և 3) արտաքին գործերի մէջ: Մէկ ընդհանուր մինիստր է վարում իւրաքանչիւրը այդ երեք ճիւղերից:

կ՝ ապ կոթողները, զո՜ւր կը փնտրէ կօշուտի ժահարձանը։ Կը տեսնէք այն.. միայն գերեզմանատան վիճննան թոյլ էի տալ արձան կանգնեցնել քաղաքում և ունգարական ազնւականութիւնն ու բուրժուազիան, որ կացութեան տէրերն են և որ շատ էլ քնքոյշ չեն յեղափոխականների վերաբերմամբ—համակերպել են, գուցէ սիրով...

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Վիեննայի ապստամբութեան հետեւեալ օրը (մարտ 18) ալէկոծուեց Բերլինը։ Պաղ, խոհուն, ծանրաշարժ գերմանացիք առաջին անգամը նորագոյն պատմութեան մէջ դիմում էին բարիկադների։ Ի՞նչ էր նրանց պահանջը։ Նոյնը, ինչ որ ամեն տեղ — ապրել ազատ, մարդավայել կեանքով, ազատ նախ և առաջ ֆէօդալական կաշկանդումներից։ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը ջնջել էր նրանց, բայց դրացի և հեռաւոր երկրների մէջ դեռ կանգուն էր միջնադարեան այդ քաոսեալի կառուցւածքը։

Սահմանադրութիւն, ազատ խօսք ու մամուլ, ազատ առևտուր ու արդիւնագործութիւն և ընդհանուր, ազգային միութիւն — ահա գերման յեղափոխական աշխարհի պահանջները 1848-ին։ Շարժումը չճնաց կղզիացած Պրուսիայի մէջ, նա ծուարեց ամբողջ Գերմանիայում, մանր ու մուն պետութիւնների մէջ և տարածեց սարսափը բազմաթիւ իշխանների վրայ։ Անողո՜ք էր նեմեզիդան։ Վսեմ, անմոռանալի, պատմական վայրկեաններ էին, երբ թագաւորանիստ քաղաքները մին միւսի ետևից անձնատուր էին լինում ցեղափոխութեանը և երբ նրանց երկչոտ հրամանատարները, ահա-

բեկուած, մի անկիւն էին փնտրում պատսպարելու իրենց յանցաւոր գոյութիւնը...

Ապստամբները, տիրանալով Բերլինին, չուզեցին ընդհանրապէս աւելի վատ էին կազմակերպուած և աւելի շուտ տեղի տուին ռէակցիայի գրոհի առջև, քան որևէ այլ երկրում։ Ա ռ ա ջ ա պ ա հ ը դարձեալ կազմում էր ազատամիտ մտաւորականութիւնը, կազմում էին համալսարանական տարրերը, գիտնականներ, պրօֆէսօրներ և ուսանողներ, որոնք ձրագրում էին ստեղծել, վերջապէս, կեօրների ու Ֆիխտէի երազած գերմանական միացեալ, ազատ հայրենիքը։ Բաւական ուժեղ շեշտուած էր այդ շարժուձների մէջ հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն հ ո ս ա ն ք ը։ Նա ծայր աւեց Ֆրանկֆուրտի հռչակաւոր պարլամենտի մէջ, ուր մի քանի հարիւր ժողովրդական ընտրեալներ—դարձեալ մեծ մասամբ յայտնի գիտնականներ ու ազատամիտ պրօֆէսօրներ *)—եկել էին մշակելու քաղաքական մի ազատ

*) Այդ շարքերում էր, ի միջի այլոց, Կ ա ր լ Ֆ օ խ տ, մեծանուն գիտնական-փիլիսոփան, որ յետոյ մահուան դատապարտելով, փախաւ Շվէյցարիա և իր համաշխարհային հմայքով տասնեակ տարիներ արտակարգ փայլ տուեց ժընեվի համալսարանին։ (Մեռ. 1895 թ.)։

կազմակերպութիւն հաւասն գերմանական աշխարհի համար (այդտեղ պիտի ժանէին նաև Աւստրիայի գերմանն տարրերը)։ Բրեթէ, սակայն, ապարդիւն անցաւ այդ պատմական համագումարը, ուր արտասանեցին մի երկար շարք գեղեցիկ ճառեր, ձևակերպեցին տեսական տրակտատներ, բայց չկարողացան համաձայնութեան գալ գործնական խնդիրների շուրջը։ Երբ սկսեցին հալածանքներ Ֆրանկֆուրտի պարլամենտի դէմ, սա իր գաղտնի կօմիտէների միջոցով նիւթեց մի շարք խլըրտումներ Սաքսօնիայում, Բադէնում, Վիւրտեմբուրգում։ Սաքսօնիայի թագաւորը և Բադէնի մեծ իշխանը փախան և օգնութիւն խնդրեցին պրուսական թագաւորից։

Սակայն, Գերմանիայում ևս բռնակալութիւնը, մի վայրկեան զարհուրանք ու ճգնաժամ ապրելուց յետոյ, շուտով վերսաին կազդուր եց և դիմելով կորովի միջոցների, աջողից խեղդել ապստամբութիւնը ամենուրեք։

Միապետութիւնը վերահաստատուեց... Բայց ալ դէն խոցոտուած էր, սասանուած իր հիմքերի մէջ։ Նա այնուհետև բռնեց ուրդէն զիջումների ճանապարհը։ Բայց մի բան, որ խորտակուեց 1848-ի յեղափոխական փոթորիկների մէջ—Գերմանիայում, ինչպէս նաև Աւստրիայում—դա ֆէօդալիզմի սիստեմն էր *)։ Այդտեղ ևս, ինչպէս 1789-ի Ֆրանսիայում, բուրժուազիան էր, որ գլուխ էր անցած յեղափոխութեան և նրա ձգտումն էր՝ ամենից առաջ ջնջել միջնադարեան ստատիկութեան տարկանոնութիւնները, խորտակել մաքսային և հազար ու մի այլ պատնէշները, որ բաժա-

---

*) Այսօր էլ դեռ դոյութիւն ունի գերմանա-աւստրիական աշխարհում, բայց ոչ այլ ևս իր վաղեմի զօրութեան մէջ։

նում էին ժողովուրդներին, ստեղծել ընդարձակ ու ընդհանրական մի շահաստան, ազատ սլացք հաղորդել առևտրին ու արդիւնաբերութեանը։ Վենջիններըը այնուհետև ահագին թռիչք արին և պատրաստեցին քայլ առ քայլ Գերմանական Միութիւնը, որ իրագործեց 1871-ին Սեդանի և Պարիզի մարտադաշտերում, Բիսմարկեան „հրի ու երկաթի քաղաքականութեամբ“...

V

ՍՕՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Սօցիալիզմը 1848-ի յեղափոխական մթնոլորտում. — Պրօլետարիատի կուիւը Ֆրանսիայում եւ Անգլիայում. — Ձարտիզմ.—Մասսային ըմբոստացում եւ ռէակցիա. — Ձարիստական բողոքի էութիւնն ու պատմական նշանակութիւնը.—Սօցիալիզմի եւ Անարխիզմի թէօրետիկոսներ.—Պրուդօն, Շտիրներ, Կարլ Մարքս. — Պրուդօնի դիրքը սեփականութեան եւ բուրժուական կարգերի նանդէպ. — Բողոք Ասուծոյ դէմ. — Մարդկութեան դարաւոր տառապանքների վրէժը. — Շտիրների բողոքը ընդդէմ բոլոր «նեղիւնակութիւնների». — Կոմմունիստական Մանիֆէստ. —

Սօցիալական, աւելի ճիշտ, սօցիալիստական բողոքն ևս—հնագոյնի և բուրժուական արտատուր կարգերի դէմ—շեշտուում էր հետզհետէ Եւրոպայի գիտակից արհատական շրջաններում: Բաբեօֆից, Սէն-Սիմօնից, Ֆուրիէից Օվէնից և այլ վեհանձն առաքեալներից յետոյ շարունակում էին հրապարակ գալ այլ և այլ երկրներում ընկերվարական մտածողներ ու մարտնչողներ որ պատերազմ էին յայտարարում ընկերային տիրապետող կարգերի դէմ և միաժամանակ փորձում էին մշակել տեսականապէս ձևակերպել աշխատաւոր և սօցիալիստ մարդկութեան իդէալները:

1848-ի Յեղափոխութեան նախօրեակին արդէն իսկ

ուժեղ կերպով ծայր էր տալիս „սոցիալիստական խմո-
րումը“։ Բլանկի, Բարբէս, Լուի Բլան, Կաբէ պրուդօն,
Մաքս Շտիրներ, Կարլ Մարքս, Էնգելս—ահա անուն՝ եր,
որ այն ժամանակ արտասանւում էին պատկառանքով
բանւորների և մտաւորականների „ստորերկրեայ“, դա-
տապիր ժողովներում։ Անուններ, որոնցից իւրաքանչիւրը
խորհրդանիշ էր մի ամբողջ հոսանքի, մի ամբողջ վար-
դապետութեան, — նոր, կարմիր, „աշխարհակործան“
վարդապետութեան...

Ֆրանսիայում — տեսանք արդէն — նոր հոսանքը իր
գործօն դերը խաղաց քաղաքական վերիվայրումների
ընթացքում, առաջադրեց վերջում իր ուրոյն պահանջ-
ները, պարզեց կարմիր դրօշակը և կատաղի ընդհա-
րումներից յետոյ՝ մարեց ժամանակաւորապէս Յունիսեան
աղէտներում։

Իսկ այնտեղ, Լամանշի միւս կողմը փուած բրիտա-
նական մեծաւոր կղզիների մէջ, ուր նորագոյն ճար-
տարարեստը փթթել էր ամենէն վաղ և ամենէն հզօր
թռիչքներով և ուր նորագոյն կապիտալիզմը, գործա-
րանային, մեքենային արդիւնաբերութիւնը ամենէն աւելի
շուտ էր արտադրել իր ազէտաւոր հակասութիւնները,
ուր սանձարձակ աճող հարստութիւնների հետ նոյնքան
սանձարձակ աճում էր բանւորութեան զանգւածային
թշուառութիւնը, — այնտեղ, Անգլիայում, բունկւեց աշ-
խատաւորական ամենամեծ շարժումը, իր յատուկ պա-
հանջներով ու նշանաբաններով, իր առաջամարտիկ հե-
րոսներով ու նահատակներով։

Նրա անունն էր — Չ ա ր տ ի զ մ, Չարտիստա-
կան շարժում։ Նա սկսել էր դեռ 1838-ին հիմն-
ւել էին ընկերութիւններ, կոմիտէներ, որոնք ձըգ-
տում էին մի ելք գտնել հարստահարւած բանւորու-
թեան համար՝ կապիտալիզմի խեղդիչ ու ալաստեռս

լաբիւրինթոսից։ Ո՞ւմ չափուռը էր իր պահանջներով աշխատաւորական այդ անդրանիկ շարժումը, նա ուզում էր ձեռք բերել մի քանի բարելաւուածներ պրօլետարիատի կացութեան մէջ, նա առաջադրում էր կառավարութեանը ժողովրդական իղձերի թուղթը, *the people's Charter*, պահանջելով նրա գործադրութիւնը։ Այդ թղթի վրայ արձանագրուած էր, իբրև առաջնակարգ պահանջ ընդհանուր ընտրողական իրաւունք և գաղտնի ձայնատուութիւն։ Պէտք էր վերացնել աշխատաւոր դասակարգի թշուառութիւնը, իսկ դրա համար անհրաժեշտ էր նախ և առաջ բարեփոխել քաղաքական կարգերը, վերացնել անգլիական արիստօկրատիկ ՍահմանադրութիւնՆը և հաստատել ճշմարիտ ժողովրդապետութիւն... Այսպէս էին տրամաբանում չարտիստները, (նրանցից շատերը Ռօբերտ Օուէնի կողմնակիցներ էին)։

Բուրժուազիան և լօրդերը խուլ ճնացին այդ պահանջների հանդէպ, 1839-ին պարլամենտը մերժեց անգամ քննութեան առնելու մի խնդրագիր, որ գալիս էր աշխատաւոր դասակարգից և ծածկուած էր մէկ միլիօն ստորագրութիւններով։ Այն ժամանակ աշխատաւորները դիմեցին բացարձակ ապստամբութեան և երկար ժամանակ Անգլիայի տնտեսական և քաղաքական կեանքը փոթորկուեց պարբերական խռովութիւններով։ Միթինկներ, մասսային գործադուլներ և մասսային յարձակումներ ամբողջ քաղաքների վրայ, ցոյցեր Նիւպօրտ, Բիրմինգամ և ուրիշ քաղաքներում։ Կառավարութիւնը ի վերջոյ զսպեց, պարագլուխներից մի քանիսը մահուան դատապարտեցին, ուրիշները աքսորի։ 1848-ին, սակայն, չարտիզմը վերսկսեց իր ագիտացիան, նորէն գործադուլներ ու մասսային ցոյցեր Լօնդօնում, Մանչեստրում, Էդինբուրգում, Գլազգօվում,— և նորէն ռէակցիայի հարուածներ։

Ահել քան տաս տարի սիստեմատիկ ձևով առաջ տարուեց չարտիզմը։ Զուտ պրոլետարական շարժում էր դա, — ասում է Զոմբարտ — առաջին կազմակերպած պրոլետարական շարժումը *)։

Նախ այն պատճառով, որ աշխոյժ, եռանդուն պրոլետարներն էին կազմում չարտիստների դլխաւոր խմբումները, երկրորդ՝ այն մտքով, որ նրանց առաջադրած պահանջները բղխում են ուղղակի պրոլետարիատի կենսապայմաններից։ Գլխաւոր տեղը բռնում է նրանց ձգտումը՝ բարեփոխելու հարատահարուած գործարանական բանւորների նիւթական կացութիւնը։ Արդէն այն ժամանակ պահանջ էր լսուած՝ սահմանել ժամերի maximum-ը (մեծագոյն թիւը) աշխատանքի համար։ Պրոլետարական է չարտիստների շարժումը և նրանով, որ կապիտալի ու աշխատանքի հակասութիւնը շատ անգամ երևան է գալիս նրա մէջ աւելի և աւելի որոշ կերպով։ „Կառավարութիւնը“, „տիրող դասակարգը“ նոյնանում են այդտեղ կապիտալիստների դասակարգի հետ։ Այդ նոյնութիւնը արտայայտում է բնական ատելութեան մէջ՝ դէպի ձեռնարկու տարրը, ատելութիւն, որ այն ժամանակ ամբարուած էր մասսաների ծոցում և դարձել էր մի պատերազմի կոչ։ Օ'Կոննորի ճիչը՝ „անկի՛ն թշուառականները, որոնք ձեր արիւնն են խմում, ձեր կանանց թշուառութիւնը հեշտասիրութեան գործիք են դարձնում և կշտանում են ձեր սեփական քրտինքով“—կենդանի յիշեցնում է մեզ այսօրեան պրոլետարիատի հրապարակական ժողովների ֆրազէօլոգիան։ Բարձրագոյն աղաղակը „աշխատելու իրաւունքի“ մասին մի բոլորովին պրոլետարական գիծ է. կուզում էին դեռ այն ժամանակ յանուն իրաւունքի՝ լիակատար արդիւնքն ստանալու աշխատանքից, յանուն „յաւելեալ արժէքի“, որ ձեռնարկուների գրպանն է անցնում։

Չարժումը վերջնականապէս դադար առաւ, բայց նա չ'անցաւ ապարդիւն։ Դա՝ մի յուժկու ազդարարութիւն

---

*) Վերներ Զոմբարտ, „Սոցիալիզմը և Սոցիալական Չարժումը XIX դարում։ Հայերէն թարգմանութիւն Մ. Վ., հրատ. ժբնէվ, 1898 թ.։

էր Անգլիայի և ամբողջ Եւրոպայի համար։ Մի նոր վտանգ էր այդ՝ առանձնաշնորհեալ դասակարգերի հանդէպ, մի վտանգ, որ կառավարութիւնները չէին կարող հաշուի չ'առնել... Ահա՜ անգլիական հեռատես կառավարութիւնը, որ գիտէ առհասարակ տե՜ղին, խելացի բարեներոգութիւններով առաջն առնել հանրային մեծ ցնցումների։

Ուշագրաւ երևոյթ։ Այն հեռաւոր օրերից ի վեր, բանուորական—քաղաքական շարժումներ գրեթէ այլ ևս չտեսանք Անգլիայի մէջ։ Եւ այսօր իսկ՝ սոցիալական շարժումը այնտեղ էապէս տնտեսական ու գործնական դրոշմ է կրում, *trades-unions*-ների հսկայածաւալ մարմինները իրենց ճնշող մեծամասնութեամբ դեռ հեռու են քաղաքական և զուտ ընկերվարական այն շեշտուած բնաւորութիւնից, որ մենք դիտում ենք ցամաքային երկրների, մասնաւորապէս Ֆրանսիայի ու Գերմանիայի մէջ *)։

Կառավարական ճնշումները չէին, որ մեռցրին չարտիզմը, այլ այն հանգամանքը՝ որ Անգլիան այնուհետև մտաւ ընդարձակ բարեներոգութիւնների և տնտեսական անսովոր զարգացման ու բարգաւաճման մի շրջան։ Կապիտալիստական երկիրների մէջ Մեծ Բրիտանիան առաջինն էր, որ զգաց „սոցիալական խնդրի“ վտանգաւոր բնոյթը և հաստատեց գործարանային, աշխատաւորական լայն օրէնսդրութիւն, որ մի չափով ապահովում ու բարւոքում էր պրոլետարիատի գոյութիւնը։ „Ընկերային խնդիրը“ չլուծուեց, հարկաւ, դրանով, գանգուածային թշուառութիւնը չվերացաւ երկրից և այսօր

---

*) Պրոլետարական թոյլ ու տարտամ շարժումները ծայր առին նաև Գերմանիայում, 1848—49 թուականներին, համաեւրոպական անցքերի ազդեցութեան տակ։

հետզհետե աճում է սոցիալիզմը անգլիական բանուորութեան մէջ, բայց այդ ընդարձակ, համեմատաբար մարդասէր ու արդարամիտ օբէնադրութեամբ Անգլիան կարողացաւ կանխել „աղէտաւոր“ բռնկումները, որ կարող էին առաջ գալ կապիտալիզմի դասական հայրենիքում։

Սոցիալիզմի և սոցիալական յեղափոխութեան շատ թէ քիչ խոշոր տեսաբաններ ևս (թէօրետիկոսներ) չտուեց Անգլիան։ Նրանք ծնունդ առան դարձեալ նոյն ցամաքային երկիրների մէջ, ուր դասակարգերի ներհակութիւնները ու բաղխումները աւելի ուժեղ էին և դրա հետ՝ կառավարութիւնները ու ռէժիմները էլ չունէին բրիտանական ռէժիմի մի քանի հոչակուած առաքինութիւնները, նրա աւանդական յարգանքը դէպի անհատի ազատութիւնը, նրա լայն (համեմատաբար!) սահմանադրական ու ռամկավարական ոգին և նրա զգաստ, հաւասարակշռուած, բանաւոր քաղաքականութիւնը։

Հաշուի առնելու է, անտարակոյս, նաև ազգերի տարբեր ցեղային առանձնայատկութիւնները, նրանց խառնուածքը ևայլն։

Ֆրանսիան տւեց մի Պրուդօն, Գերմանիան — մի Կարլ Մարքս։

Երկուսին էլ տեսնում ենք 1848-ի փոթորիկների նախօրեակին, երկուսն էլ տենդային կերպով զբաղուած են կապիտալիստական կարգերի խարազանումով և գալոց հասարակութեան հրապուրիչ ծրագիրներով։

Երկուսը անհաշտ հակոտնեաններ են, մինը գրում է „Թշուառութեան փիլիսոփայութիւնը“, միսը (Մարքս) — ի պատասխան — գրում է շուտով „Փիլիսոփայութեան Թշուառութիւնը“ (*La Misère de la Philosophie*). ծաղրելով ու խարանելով առաջինին։ Որքան էլ, սակայն, իր

ժեծ ախոյեանին ծաղրի ենթարկէ կարլ Մարքսը—որ յաճախ է անարդար եղել դէպի իր կարող հակառակորդները—իրաղութիւնը կը ճնայ այն՝ որ պրուդօնը, չնայեած իր վրիպուճներին (իսկ վրիպուճներով շատ հարուստ է և կարլ Մարքսի դօքտրինն ու տակտիկը *), ճնում է ֆրանսիական և միջազգային սոցիալիզմի խոշորագոյն դէմքերից մինը: Մարքս եղել է բարեկեցիկ ընտանիքի զաւակ, անցել է դպրոց, համալսարան, մշակել է կուռ մտածողութեան դիսցիպլին, ձեռք է բերել փիլիսոփայական լայն աշխարհահայեացք և համակարգումի (*systématisation*) մեծ կարողութիւն. պրուդօն եղել է մի թշուառ ինքնուս, զուրկ կրթութեան միջոցներից. բայց իր տոկուն ինքնաշխատութեամբ և արտակարգ խմացականութեամբ թափանցել է սոցիալական չարիքների արմատները և յայտարարել մի շարք ճշմարտութիւններ, որոնք ահագին ազդեցութիւն են ունեցել Ֆրանսիայի և Եւրոպայի ընկերվարական շարժման վրայ:

Ձենք կանգ առնում երկարօրէն այս կարգի գնահատուճների վրայ, որ դուրս են ներկայ աշխատութեան սահմաններից:

Անցեալ դարու 40-ական թուականներին երեք խոշոր դօկումենտներ, երեք ինքնատիպ, յեղափոխական աշխատութիւններ ցնցեցին ժամանակի արմատական, առաջադէմ մտաւորականութիւնը:

Առաջինը **Պ ր ո ւ դ օ ն ի** գիրքն էր **Ս ե փ ա կ ա ն ո ւ թ ե ա ն** մասին **), որ լոյս տեսաւ 1840-ին:

---

*) Տես երկուսի մասին ընդարձակօրէն՝ մեր „Հոսանքների"-ի մէջ:

**) „Ի՞նչ է Սեփականութիւնը" խորագրով (*Qu'est ce que la Propriété?*):

Երկրորդը Մաքս Շտիրների հատորն էր, „Մեննակը և իր սեփականութիւնը“ վերնագրով *), որ հրատարակուեց 1845-ին։

Երրորդը հոչակաւոր „Մանիֆեստն“ էր, որ հրատարակեց կարլ Մարքս 1847-ին։



Պ ր ո ւ պ ո ճ

Երեք դէմքերն էլ—ուժեղ, կամքոտ և օրիգինալ—ժարմնացած բոզոք էին տիրող անիրաւութիւնների դէմ։ Մէկը—Մարքս—հիմնում էր, աւելի ճիշտ, շարունակում էր հիմնաւորել Բաբեօֆների և ԱԷն-Սիմօնների

*) *Max Stirner, Der Einzige und sein Eigenthum.*

հռչակած սոցիալիզմը։ Միւս երկուսը, Պրուդօն և Շտիրներ, հիմնում էին, իւրաքանչիւրը տարբեր տեսակէտով — անարխիզմը։

Երեքն էլ դասանում էին հեգելեանիզմ, պատկանում էին հեգելեան դպրոցի ծայր-ձախակողմեան թևին։ Իսկ Հեգելի փիլիսոփայական վարդապետութիւնը իր մի շարք ծանուցուածներով հանդիսանում էր էապէս ժխտական, յեղափոխական մի աշխարհահայեացք։ Կայուն, տևական ոչինչ չկայ, ամեն ինչ ենթակայ է յարաժամ փոփոխութեան,— այսպէս էր ուսուցանում այդ վարդապետութիւնը։ Պետութիւն, հասարակութիւն, բարոյականութիւն, իրաւունք ու սեփականութիւն, կրօն ու աստուածութիւն,— մշտնջենապէս փոփոխւում ու յեղաշրջւում են, տեղի տալով նորանոր ձևերի, ծնունդ տալով նորանոր գաւանանքների։ Դա մի տեսակ փիլիսոփայական „նիհիլիզմ“ էր, որ շեշտւում էր բոլոր աշխարհներում։ *Nihilo* — ժխտում եմ... Դա ժխտական վերաբերումն էր դէպի բոլոր գոյութիւն ունեցող „հեղինակութիւնները“ *)։

Աստուած չէ ստեղծել մարդուն, այլ մարդն է ստեղծել Աստծուն — հետո՛ւ ուրեականները... քարոզում էր Լուդվիգ Ֆոյերբախ, նա որ Շտրաուսի հետքննում, վերլուծում էր Աստուծոյ և Քրիստոսի ստեղծածային էութիւնը՝ նորագոյն փիլիսոփայութեան և գիտութեան տեսակէտներով...

Պրուդօն, Շտիրներ և Մարքս ուշի ուշով ականջ էին դնում փիլիսոփայական նիհիլիզմի ուահվիրաներին և փորձում էին կիրառել այն՝ սոցիոլոգիայի, ընկերաբանութեան աշխարհում, իրենք ևս բացարձակապէս ժխ-

---

*) Մ. Վ. „Վերածնւող Հայրենիքը“։

տական դիրք են բռնում դէպի այսպէս կոչուած „հասարակական խարիսխները“։

Ւ՞նչ է սեփականութիւնը, հարցնում է Պրուդօն եւ վերլուծելով նրա էութիւնը, քննելով այլ եւ այլ թէօրիաները, պատասխանում է.

— Սեփականութիւնը *) չի կարող հիմնուել ոչ գրաւումի, ոչ աշխատանքի վրայ, նա ոչ մի կերպ չի կարող արդարացուել, նա միանգամայն ապօրինի է, անբարոյական...

Պրուդօն չի կանգ առնում ամենածայրայեղ արտայայտութեան առջեւ եւ արձակում է ապշահար ժամանակակիցներին իր ցասկոտ դատավճիռը.

— „Սեփականութիւնը գողութի՛ւն է“, ասում է նա, *la propriété—c'est le vol!*

Մի ֆրազ, որ ահազանգի սթափեցուցիչ ղօղանջն էր այն ժամանակում...

Քսան տարի յետոյ, Ֆերդինանդ Լասսալ պիտի բերան առնէ նոյն դարձուածը եւ պիտի կրկնէ գրեթէ Հարազատ թարգմանութեամբ.

„Այսօրեան սեփականութիւնը ուրիշի վաստակ է“... *Das heutige Eigenthum ist Fremdthum!...*

Տնտեսագիտական հարցերը միայն չէին զբաղեցնում Պրուդօնին, այլ եւ աւելի ընդհանուր, տիեզերական կնճիռները, Աստուծոյ, ստեղծագործութեան, բարոյագիտութեան եւայլն։ Եւ երկար որոճալուց յետոյ այդ խորախորհուրդ պրօբլեմները, նա մի օր նետում է այս դաժան կոչը մտածող աշխարհին.

„Աստուածը—չարիք է, ստութիւն եւ բռնութիւն“։

„Իմացական եւ ազատ մարդու առաջին պարտակա-

---

*) Խօսքը հողային եւ փողային, խոշոր, կապիտալիստական սեփականութեան մասին է։

նութիւնն է, ասում էր նա, գուրս քշել իր մտքից և խղճից Աստուծոյ գաղափարը։ Որովհետև Աստուածը, եթէ իրօք գոյութիւն ունի, էապէս թշնամի է մեր բնութեան։ Ոչ չ'ասեն մեզ այլ ևս, թէ Աստուծոյ ճամբաները անթափանցելի են։ Մենք թափանցել ենք այդ ճամբաները և կարդացել ենք այնտեղ Աստուածային անկարողութեան, եթէ ոչ չարաժառութեան ապացոյցներ, գրած արեան տառերով"։

Առաջ բերենք այդ մոլեգին և խարանող գրձուածները Պրուդոնի հարազատ լեզուով.

De quel droit Dieu me dirait-il encore: s o i s s a i n t, p a r c e q u e j e s u i s s a i n t? Esprit menteur, lui répondrai-je, ton règne est fini; cherche parmi les bêtes d'autres victimes. Pourquoi me trompes- tu? Pourquoi par ton silence as tu déchainé en moi l'égoïsme? Pourquoi m'as tu soumis à la torture du doute universel! doute de la vérité, doute de la justice, doute de la conscience, doute de toi-même, ô Dieu! Les fautes dont nous te demandons la remise, c'est toi qui nous les fais commettre: les pièges dont nous te conjurons de nous délivrer, c'est toi qui les a tendus: et le satan qui nous assiège, ce satan, c'est toi!

Nous etions comme des néants devant ta majesté invisible, à qui nous donnions le ciel pour dais et la terre pour escabeau· Et maintenant te voilà détroné et brisé. Ton nom, si longtemps le dernier mot du savant, la sanction du juge, la force du prince, l'espoir du pauvre, le refuge du coupable, et bien! ce nom désormais voué au mépris et à l'anathème, sera sifflé parmi les hommes. Car Dieu, c'est sottise et lâcheté; Dieu, c'est hypocrisie et mensonge; Dieu, c'est tyrannie et misère; Dieu, c'est le Mal.

„Ի՞նչ իրաւունքով Աստուած կ'ասէ ինձ. «սո՛ւրբ եղիր, քանզի ես ինքս սուրբ եմ» Սատանա՛յ ոգի—

կը պատասխանեմ ես նրան — քո տիրապետութիւնը վերջացած է. փնտրի՛ր այլ զոհեր յիմարների մէջ։ Ինչո՞ւ կը խաբես ինձ. ինչո՞ւ քո լուսեաւք շրթայարդերծել ես իմ մէջ էգոիզմը. ինչո՞ւ մատնել ես ինձ աներեւակայ կասկածի չարչարանքին. կասկա՛ծ ճշմարտութեան հանդէպ, կասկա՛ծ արդարութեան ու խղճի, կասկած անգամ քո վերաբերմամբ, ո՛վ Աստուած։ Այն մեղքերը, որոնց համար մենք քեզնից թողութիւն ենք խնդրում, — այդ մեղքերը դու ինքդ ես մեզ ներշնչել։ Այն արդայիծները, որոնցից աղերսում ենք ազատել մեզ, դու ինքդ ես նրանց լարել. և այն ատտանան, որ պաշարում է մեզ - դու ինքդ ես։

„Մենք մինչև օրս աչնչութիւն էինք քո աներևոյթ վեհութեան առջև, տալիս էինք քեզ երկինքն իբրև գահ և երկիրը իբրև պատուանդան։ Այժմ ահա՛ դու գահավէժ և խորտակուած։ Քո անունը, որ երկար ժամանակ վերջին խօսքն էր պիտանականի, նւիրապրծուժը դատաւորի, այժը իշխանի, յոյսը թշուառի, ապաստանը մեղապարտի, — այսուհետև նա՝ մատնուած անէծքի ու արհամարհանքի՝ սուլոցո՛վ կը յիշուի մարդկանց միջև։ Որովհետև Աստուածը — դա յիմարութիւն է և վատութիւն. Աստուածը — դա կեղծիք է և ստութիւն. Աստուածը — դա բռնութիւն է և թշուառութիւն։ Աստուածը — դա ինքը յուդան է և Չարը“։

. . . . . .

Ein Fluch dem Götzen zu dem wir gebeten
In Winterskälte und Hungersnöthen!...

(Անէ՛ծք Աստուծուն, որին աղօթեցինք
Ձմրան ցրտերին, սովի ճանկերում)... —

Գրում էր, նոյն ժամանակաշրջանում, մի այլ թուլոտ ու սկեպտիկ հանճար, գերմանացի բանաստեղծ Հայնէ, իր շանթարձակ „Ջուլհակներ“ի մէջ *)...

Կարելի է երևակայել, թէ որպիսի ցնցող տպաւորութիւն էին գործում այն հեռաւոր օրերի մէջ Պրուդօնեան այդ անզուսպ ու ժոլեգին շանթերը, Հէգ, տան-

---

*) *Die Weber* („*Buch der Lieder*“).


ջահար հոգիների ցաւագին պոռթկումներ էին դրանք, որ կուզէին վրէժխնդիր լինել ժարդկութեան կրած դարաւոր բռնութիւնների ու տառապանքների համար...

Սոցիոլոգիայի աշխարհում Պրուդօն արժարծեց և մի այլ հիմնական ու ծանրակշիռ միտք. այն՝ որ անհատի ազատութիւնը լիակատար անելու համար, կ ա ռ ա վ ա ր ո ւ թ իւ ն ն ե ր ը ա ս տիճանաբար պէտք է նւազին, սահմանափակւին և ի վերջոյ պէտք է անհետանան, տեղի տալով.. Անիշխանութեան, Ա ն ա ր խ ի ա յ ի ն: „Անարխիա“ բառը Պրուդօնն էր, որ գործածեց առաջին անգամ, և այնուհետև նա դարձաւ անուն մի ամբողջ վարդապետութեան, որ այսօր նոյնպէս ունի իր գրականութիւնն ու մտածողների շարանը: Պրուդօնի փաստաբանած այդ վարչական նիհիլիզմը (*le nihilisme administratif*) նշանաբան դարձաւ ոչ միայն յետագայ ճշմարիտ անիշխանականների, այլ և Սպենսերի ու Տօլստոյի համար:

„Կորչի՛ն բոլոր հեղինակութիւնները, որ բռնանում են իմ եսի վրայ“ —աղաղակում էր Մաքս Շտիրներ: „Անբարոյական է“ ոչ միայն սեփականութիւնն ու պետութիւնը, այլ և ամեն բան, որ ձգտումն ունի սահմանափակելու իմ անհատական ազատութիւնը. անբարոյական է... Նոյնիսկ ինքը բարոյականութիւնը: Ո՛չ մի ճնշող պարտաւորութիւն իմ եսի վրայ, ոչ հայրենիքի ու հասարակութեան, ոչ այս կամ այն իդէալի. իմ եսից դուրս՝ ես ոչինչ չեմ ճանաչում, ժո՛ղ բոլոր կաշկանդիչ շղթաները, ժո՛ղ բոլոր ճանաչւած հեղինակութիւնները...

Բ ո ղ ո ք ը հասնում է այդտեղ հիւանդագին և այլանպակ զառացանքի, „նիհիլիզմը“ գարնւում է իր գռեհիկ և արատաւոր ծայրայեղութեան մէջ... Թէպէտ և—պէտք

չէ մոռանալ — այստեղ ևս, Շոփրների այդ էգօիստ, հակա-քնկերային և զառանցող հոգու խորքում, նոյն դարերով հա-լածական, տրորուած ու խորտակուած եւ ան է, որ վայր՛էմ է ցաւագինօրէն, հակազդում է մոլեգնաբար իրական ու



Մ ա ր ք ս

երևակայական դահիճների դէմ, ձգտելով ազատագրել մի անգամ ընդմիշտ բոլոր խոչերից ու զրկանքներից...

Անհա և Մարքսը։

Աւելի դրական և իրապաշտ, քան երկու նախորդ-

ները, աւելի սրատես և ուշադիր՝ հասարակութիւնները շարժող հիմնական խթանների և ուժերի նկատմամբ։ Հեռու միանգամայն անիշխանական էգօիզմի ծայրայեղութիւններից և իդէալիստական անհող բանդագուշանքներից։

Մարքսն ևս բողոք է բառնում ժամանակակից ընկերային տարկանոնութիւնների ու չարիքների դէմ, մերկացնում է նրանց աղբիւր. պատճառները, վեր է հանում շահի, նիւթական մղումների դերը մարդկային ամբողջ պատմութեան ընթացքում և ցոյց է տալիս միակ իրական ճանապարհը, ուսկից պէտք է գնայ հարստահարուած մարդկային ընդհանրութիւնը՝ հասնելու համար գալոց երջանիկ, կօմմունիստական իրաւակարգին։

Դա սակարգային կռիւն է — այդ ճանապարհը։

Եւ ահա 1848-ի փետրուարեան յեղափոխութեան նախօրեակին հնչում է Մարքս-Էնգելսեան մանիֆեստի կոչը, որ կոչն է և մինչև օրս սոցիալիստ աշխատաւորութեան.

— „Պրօլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք“։

Բոլոր երկրների պրօլետարները պէտք է միանան՝ ընդհանուր ուժերով խորտակելու համար բուրժուական կապիտալիստական հսկայ ոէժիմը, որ իր շինարար, քաղաքակրթիչ առաքելութիւնը կատարելուց յետոյ, դարձել է այժմ վնասակար ու կաշկանդիչ ընկերային պրօգրէսի համար, ճնշում է, տարկացնում բանւորական զանգւածները, ամբարում է շարունակ հարստութեան լեռներ և ձգում է թշուառութեան անդունդներ, կենտրօնացնում դրամագլուխը միշտ աւելի և աւելի սակաւաթիւ ձեռքերի մէջ, և ի վերջոյ պիտի խորտակւի — ցաւով ու շառաչուտով — նոյն այդ ներքին ճակատագրական հա-

կասուԹիւնների զօրուԹեամբ, պիտի ջնջւի ժանեաւոր, կապիտալիստական սեփականուԹիւնը և բուրժուա հասարակուԹեան փլատակների վրայ պիտի բարձրանայ կոմմունիստական, համայնական իրաւակարգը...

Մինոլորտը շատ էր լցուած ազգային-քաղաքական պայքարների նշանաբաններով և Մարքսեան այդ կոմմունիստական, միջազգայնական մանիֆեստը 1848-ի օրերուն, յուզեց միայն արմատական երիտասարդուԹեան նեղ շրջաններ։ Ո՛ւր գտնէր նա լայն արձագանք։ Ժողովուրդները, դեմօկրատիզմը օրհասական կռիւ էին մղում իրենց տարրական ազգային իրաւունքների համար և քիչ յետոյ պիտի մարէին բռնապետուԹեան լախտի հարուածների տակ։ Ֆրանսիան էր, որ պիտի ձայնակցէր ամենից առաջ մանիֆեստի խանդավառող կոչերին, Ֆրանսիան, որ ծնել էր սոցիալիզմի մեծ հոսանքը և սոցիալիստ ռազմիկների լեգէոնը... Բայց Ֆրանսիան էլ շուտով ընկճուեց Նապոլէոն III-ի յետախաղաց ռէժիմի տակ, իսկ պարիզեան մարտնչող պրոլետարիատը, ինչպէս տեսանք, ճարակուեց Յունիսեան արեան բաղանիքների մէջ...

„Մանիֆեստը“, սակայն, անհետ չմնաց գրականուԹեան արշիվներուն. 16 տարի յետոյ, նա նորէն բեմ նետուեցաւ — ինտերնացիոնալի հիմնադրուԹեան միջոցին — իր երկու զինակից հեղինակների հետ. ժամանակի ընԹացքում աճեց հետզհետէ նրա ընԹերցողների ու կողմնակիցների Թիւը և այսօր նա, 1848-ի այդ հակիրճ ու կտրուկ հրովարտակը, Թէև մասամբ հնացած, իր պատկառելի տեղն ունի համաշխարհային ընկերվարական գրականուԹեան ու շարժման մէջ, իբրև ընդհանուր սկզբունքների ու տակտիկի մի յուշարար...

VI

ԳՐԻՄԻ ԿԱՑԱՍՏՐՕՓԸ

ԵՒ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսական դաւերը Արեւելքում. — Անգլիա եւ Թրանսիա՝ Թիւրքիայ նովանւաւորի դերում.—Ղրիմի պատերազմը եւ նեռեւանքները —Յարիզի տագնապի մէջ.—Ազատասէրնչ գրականութիւն եւ նեռին ռէֆորմներ.— Յեղափոխական խմորում.—Մտաւորականութիւն եւ Չանգլած.—Ռուս „նիհիլիստի" մտայնութիւնը.—Հերցեն եւ „Կօլօկօլ".—Չերնիշեվսկի եւ իր նահատակութիւնը.—

Արեւելեան մեծ խնդիրը շարունակում էր տանջել դիւանագէտներին Թիւրքիան շարունակ թաւեթաթում էր օտար դաւերի ու մրցումների և ռուսական ախորժակները բորբոքւում էին միշտ աւելի և աւելի պօլիտը իր բացառիկ դիրքով ու նշանակութեամբ շատ էր հրապուրում ռուս վեհապետներին և Նիկօլայ կայսրը պատրաստւում էր յափշտակել „հիւանդ մարդու" հարուստ ժառանգութիւնը։

Եւ որքան աւելի էին շեշտւում Ռուսաստանի յա-

ահնութիւնները, որքան աւելի էր առաջանում յարիզմը դէպի Պոլիս, այնքան աւելի էր յուզւում արևմտեան Եւրոպան, մանաւորապէս Անգլիան։ Ամեն ոք զգում էր, որ տպագան յղի էր ահաւոր փոթորիկներով։

Իր հեռաւոր նպատակներին հետամուտ լինելով, Ռուսաստանը երբէք աչքից չէր թողնում նրանց հասնելու անհրաժեշտ միջոցը — թիւրքահպատակ քրիստոնեայ ազգերի սէրն ու համակրանքը։ Եւ ռուս քաղաքականութեան մշտնջենաւոր հոգսն էր՝ զօրացնել, շեշտել աստիճանաբար իր „հովանաւորութիւնը“ բալկանեան քրիստոնեաների վրայ։ Հովանաւորութիւն՝ այն մտքով, որ այդ քրիստոնեայ ցեղերը ազատուեն թիւրքաց հպատակութիւնից, բայց և այն մտքով, որ նրանք չապրեն անկախ, քաղաքական կեանքով... Ահա թէ ինչու, երբ փետրուարեան յեղափոխութեան լուրերը հասան Մոլդաւ-Վալախիա և երբ այնտեղ ևս սկսեցին տեղի ունենալ շարժումները, Նիկոլայ I, որ բնազդային տարօրէն էր տածում դէպի յեղափոխութիւնը, շտապեց համաձայնութեան գալ սուլթանի հետ և 60,000 զօրք ղրկեց Բուքրէշ՝ ազատագրական շարժումը խեղդելու։ Ռուսաց հովանաւորութեան հակառակորդները չարաչար պատժուեցին և Ադրիանուպոլսի դաշնագրով վերջած մի քանի իրաւունքներ, որոնք մի յայտնի ազատութիւն էին տալիս վալախ ժողովրդին — ոչնչացան։ Մոլդաւ-Վալախիայի իշխանները զրկուեցին իրենց ընդհանուր պատգամաւորական ժողովներից և հօսպոդարներ ընտրելու իրաւունքից, որն այժմ անցնում էր ցարին ու սուլթանին։

Ռուսաստանը միշտ նորանոր պատրուակներ էր ստեղծում միջամտելու „հիւանդ մարդու“ գործերին։ 1848—1851-ին նրա գործակալները՝ պղտոր ջրում ձուկ որսալու նպատակով՝ աջողեցին խռովութիւններ յարուցանել տաճկահպատակ Բօսնիայում և Բուլգարիայում,

սակայն տաճիկները բարբարոսաբար ճնշեցին խռովարարներին և Ռուսաստանը ոչինչ չշահեց։

Բայց Նիկոլայ կայսրը անպատճառ խզել էր ուզում սուլթանի հետ, և ահա 1851-ին նա միջամտության մի նոր պատրուակ գտաւ։ Դա „Սուրբ վայրերի“ հսկողության խնդիրն էր երուսաղէմում ու Բեթղէհէմում։ Այդ հսկողութիւնը դարերից ի վեր պատկանում էր լատին կաթոլիկներին, որոնք գտնւում էին Ֆրանսիայի հովանաւորութեան տակ։ Ռուսաստանի վաղեմի ձգտումն էր՝ խլել լատիններից այդ իրաւունքը և յանձնել յունադաւաններին։ 1808-ին այդ ձգտումն իրագործեց։ Ֆրանսիան՝ ներքին ալեկոծութիւններով կլանուած՝ մի վայրկեան ժուռացութեան էր տւել իր շահերն արևելքում։

Բայց Նապոլէօն III, որ 1851-ին թագաւոր դարձաւ պետական հարուածով, որոշել էր անխախտ պահել Ֆրանսիայի պատմական իրաւունքները՝ ընդդէմ ռուսական ոտնձգութիւնների։ 1851-ին նա ուղղեց սուլթանին իր պահանջները Սուրբ վայրերի վերաբերմամբ։ Սուլթանը համակերպեց, բայց Ռուսաստանի սպառնալիքների առաջ ստիպուեց յետ առնել իր համաձայնութիւնը։ Սուլթանական մայրաքաղաքում մի ճշմարիտ մենամարտ էր, որ սկսուեց Ռուսիայի և Ֆրանսիայի միջև։ Առաջինը բացորոշ նպատակ ունէր՝ ամեն կերպ դրդել Թիւրքիային դէպի պատերազմ... 1853-ի սկզբներում իշխան Մենշիկով Պօլիս ուղևորուեց ցարի կողմից յատուկ յանձնարարութեամբ։ Նա սկսեց յորդորել սուլթանին՝ գաղտնի դաշն կապել Ռուսաստանի հետ, որով այդ վերջինը ձեռք բերէր ներգործական հովանաւորութիւն Սուրբ Երկրի վրայ, միաժամանակ պարտաւորելով ապահովել սուլթանին Ֆրանսիայի յարձակումների դէմ։ Թիւրք կառավարութիւնը՝ խրախուսուած Ֆրանսիայի և

Անգլիայի ներկայացուցիչներից՝ պատասխանեց, որ „յունադաւանութեան իրաւունքները յարգելով հանդերձ՝ անկարող է կապել մի այդպիսի դաշն, որ խախտում է նրա անկախութեան ու վեհապետութեան սկզբունքները“։

Մենշիկով հեռացաւ Պօլսից թունաւոր սպառնալիքներով։ Տագնապը ժամ էր։ Յուլիս 3-ին (1853 թ.) ռուսաց զօրքը անցաւ Պրուտ գետը և գրաւեց Մոլդավ-վալախիան։ Լուրը տարածելուն պէս՝ անգլիական և ֆրանսիական նաւատորմիղները շտապով դիմեցին դէպի Դարդանէլ։ Երկու արևմտեան պետութիւնները Ռուսաստանի համարձակ ու վտանգաւոր արշաւանքի դիմաց՝ հաւաձայնութեան եկան պաշտպանելու Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը, իսկ քիչ յետոյ դաշն կապեցին՝ յարձակողական ու պաշտպանողական։ 1854 փետրուար 4-ին դիւանագիտական յարաբերութիւնները խզեցին Ռուսաստանի ու երկու արևմտեան պետութիւնների միջև,— և պատերազմն սկսեց, Ղրիմի սարսափելի, աւերիչ պատերազմը։ Հիւսիսի ահեղ „վիթխարին“, որ այնքան յաղթական կոիւներ էր մղել Թզուկ Տաճկաստանի դէմ՝ յետ նահանջեց անգլո-ֆրանսական միացեալ գրոհի առջև։ Սեվաստօպոլի երկարատև և արիւնահեղ պաշարման միջոցին Նիկոլայ I յուսահատութիւնից „յանկարծամահ եղաւ“, ինչպէս գրում է փափկանկատ պատմագրողը։

Ղրիմի պատերազմը նշանաւոր եղաւ իր քաղաքական ու սոցիալական հետևանքներով։ 1856 փետրուար 25-ին գումարուեց Պարիզում պետութիւնների համաժողով, որ և ստորագրեց մի շարք կարևոր վճիռներ, բոլորովին ուղղուած ընդդէմ Ռուսաստանի, յօգուտ թէ Թրքիայի և Ծովը չէզոք յայտարարուեց. ռուսաց հովանաւորութիւնը վերացուեց Բալկանեան երկրներից և սայլավերջիններն ձեռք բերին կիսանկախ գոյութիւն Թիւրքիոյ

վերհսպետութեան տակ։ Օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը դարձաւ այնուհետև մի դօգմ միջազգային իրաւունքի և դիւանագիտութեան համար։ Թիւրքիան բարոյապէս կազդուրուեց և այնուհետև Անգլիայի ու Ֆրանսիայի շնորհիւ, պատուաւոր տեղ գրաւեց մեծ պետութիւնների շարքում։ Պէտք էր, որ մի կերպ վարձատրէր նա իր բարերարներին՝ նրանց ժամանած ծառայութեան համար։ Սուլթանը զգում էր այդ, ուստի և դիւրութեամբ զիջեց երկու պետութիւններին, որոնք ըէֆօրմներ էին պահանջում՝ թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակը բարելաւելու։

1856 փետրուար 18-ին հրատարակուեց Հատտը-Հիւմայունը, որով հռչակւում էր հաւասարութիւն բոլոր ազգութիւնների ու դաւանութիւնների և իրաւունք էր տրւում քրիստոնեաներին՝ մտնելու ամեն տեսակ ծառայութեան մէջ, մինչև իսկ պետական խորհուրդ։ Սոսկ ձևականութիւն էր այդ հանդիսաւոր խոստումը, քանի որ ոչնչով չէր սրբագործւում թիւրքիան կարող էր այն իրագործել կամ չիրագործել և վերջին դէպքում նա ենթակայ չէր ոչ մի բռնի միջամտութեան...

Այդպէս վերջացաւ Ղրիմի յիշատակելի պատերազմը։ Ռուսաստանի զինւորական մեծութիւնը խորտակուեց այդ պատերազմի մէջ, մինչդեռ թիւրքիան արևմտեան եւրոպայի ուսերի վրայ բարձրացաւ հպարտ, չարախնդաց, ամբարտաւան... Այնուհետև նա աւելի ևս բարբարոսացաւ, իբրև տիրապետող ուժ իր սահմաններում. այնուհետև նա աւելի անգթութեամբ սկսեց հալածել իր հպատակ քրիստոնեաներին, քանի որ ապահով էր այլ ևս ռուսական միջամտութիւններից...

Հատտը-Հիւմայունը դատարկ խօսք էր. 60-ական թուականներին թիւրքիան նորէն ականատես

եղաւ մի շարք իրարու յաջորդող ներքին խռովութիւնների ու ապստամբական կռիւներու։ Լիբանանի քրիստոնեաներուն ջարդը դրուզներուն ձեռքով՝ պատճառ եղաւ այդ երկրի ազատութեան օսմանեան լծէն (1860)։ Ֆրանսիան էր ազատարարը։ Կոտորուող և կաթոլիկ մարօնիտները նրա հովանաւորութեան տակ էին։ 1861-ին ոտքի ելան սև-լեռնցի հռչակաւոր դիւցազունները Մօնտէնէգրոյի մէ և մի փառաւոր ջարդ տուին 20,000 տաճկական կանոնաւոր զօրքին։ Դարձեալ Ֆրանսիան էր, որ եւրոպական միջամտութիւն հրաւիրեց և այնուհետև Մօնտէնէգրոյի անառիկ լեռներէն ընդմիշտ վերացաւ սուլթանական վեհապետութիւնը։ Սև-լեռնցիներուն փայլուն յաղթանակով քաջալերուած՝ ապստամբեց Հերցեգովինան. 20.000 սպառազէն կտրիճներ չորս ամիս շարունակ դիմադրեցին թուով 60,000 տաճիկ զօրքին։ Բայց Մօնտէնէգրոյի բախտը չէր վիճակուած նրան։ Եւրոպան այս անգամ ճնշեց բաժանուած և տրամադիր չէր միջամտելու. Ֆրանսիան զբաղուած էր Մեքսիկայի պատերազմով։ Թշնամու թուական առաւելութիւնը յաղթեց վերջապէս և Հերցեգովինան մատնուեց ջարդ ու թալանի։ Բնակիչներուն մի մասը սրախողխող եղաւ, միւս մասը շարունակեց իր ստրուկ գոյութիւնը թիւրքաց լծի տակ, որը այնուհետև դարձաւ աւելի դաժան, աւելի ճնշող։

Ահա վերջապէս կրէտէն, միշտ կոտորուող, բայց և միշտ ըմբոստ կրէտէն, որ նոյնպէս փորձ է անում, այդ արիւնալի ժամանակներում, թօթափելու իր վրայ ծանրացող տիրապետութիւնը։ Առաջին անգամը չէր, որ նրա զաւակները գլուխ էին բարձրացնում. 1770, 1821, 1841 թուականները յեղափոխական արիւնով են արձանագրուած կրէտէի տխուր պատմութեան մէջ։ Վաղուց նա փափագում էր ձերացած լինել մայր Ցու-

նստանին... Եւ ինչպէս միշտ, այս անգամ ևս ապաառիք կղզին ճնաց անօգնական։ Տասնեակ տարիներ պիտի անցնէին այն օրից, մինչև որ մարտիրոս կղզին իր զաւակների բուռն ճիգերով կրնաներ իր բաղձալի անկախութիւնը, ապա և միացուէր մայր-Հայրենիքին։

Տարօրինակ էր Բալկանեան երկրների ճակատագիրը և եւրոպական պետութիւնների դիրքը 60-ական թւերին։ Մի տեղ՝ արիւն, միջամտութիւն և յաղթանակ։ Մի այլ տեղ՝ միևնոյն Բալկանեան աշխարհում՝ քրիստոնեաների ահռելի ջարդեր և եւրոպական անտարբերութիւն։ Մինչդեռ Կրէտէն, Հերցեգովինան՝ լքուած քաղաքակիրթ աշխարհից, մատնուած բախտի հարուածներին՝ ողբում էին իրենց դառն ճակատագիրը, Մօլդավ-Վալախեան և Սերբիան, եւրոպական միջամտութեան շնորհիւ թօթափում էին մահմեդական լուծը և կազմակերպում, իրրև անկախ երկիրներ։ 1862-ին Ֆրանսիայի և Ռուսաստանի աջակցութեամբ Մօլդավիա և Վալախիա միացան, ձուլուեցին իրար մի անկախ պետութիւն (Ռումանիա)՝ ընդհանուր իշխանով ու մայրաքաղաքով։ Իսկ 1867-ին նոյն երկու պետութիւնների վրայ յեղափոխելով՝ Սերբիան դուրս քշեց իր սահմաններից տաճկական զօրքի վերջին ճնաշորդները...

***

Ղրիմի պատերազմը մի խիստ ազդու դաս եղաւ ռուսական միապետութեան համար։ Նա մերկացրեց երկրի գարաւոր վէրքերը, ապացուցեց, որ ռուսական բանակը այժմ չէ, ցոյց տուեց, որ զօրքի կազմակերպութիւնը, զինուորական սիստեմը, երկրի արդիւնաբերութիւնը և ընդհանուր քաղաքական-սոցիալական կազմը հիւանդ են արմատից իսկ, և որ Ռուսաստանը կարօտ է խորունկ ռէֆորմների։

Ամենաաղաղակող վէրքը, ամենամեծ արատը—ճորտութիւնն սիատեմն էր։ Գրեթէ ամբողջ պատմական Ռուսաստանում հողը բաժանւած էր խոշոր, լայնածաւալ կալւածների, որոնց տէրերն էին՝

1. Թագաւորը։
2. Արքայական ընտանիքը
3. Ազնւականները (մօտ 100,000 ընտանիք)։

Եւ իւրաքանչիւր խոշոր կալւած բաժանւում էր երկու մասի, մինը շահագործւում էր բուն իսկ սեփականատիրոջ ձեռքով, միւսը տրւում էր գիւղական համայնքին՝ որից հողատէրը ստանում էր պատշաճ տուրք։

Մի դաժան օրէնքի զօրութեամբ—որ սահմանւել էր 16-րդ դարի վերջերում—գիւղացի աշխատաւորը կապւած էր իր հողին, որից հեռանալու իրաւունք չունէր. դատապարտւած էր ապրելու միշտ, սերնդէ-սերունդ հողատէր աղայի լծի տակ, կատարելու նրա բոլոր քմահաճոյքները, հնազանդւելու և ծառայելու նրան, որպէս ստրուկը՝ տիրոջ։ Միջնադարեան ռէժիմն էր՝ միջնադարեան բարքերով *)։ Մի քանի գծեր յիշեցնում են նոյնիսկ հնադարեան ստրկութիւնը։ Կալւածատէրը, „պօմէշչիկը“ կարող էր ծառայեցնել իր հպատակ ճոր-

---

*) Միայն թէ այդտեղ, Ռուսաստանում, գիւղական համայնքին տրւած հողը չէր բաժանւած մասնաւոր, անհատական սեփականութիւնների։ Ուստ ճորտը մէկ մասնաւոր գոյք միայն ունէր—իր խրճիթը։ Մնայուածը—վարելահողեր, արօտատեղեր, անտառներ և ջրեր—կազմում էր գիւղի ընդհանուր, համայնական սեփականութիւն։ Մարգագետիններն ու վարելահողերը բաշխւում էին գիւղացիների միջև, մի յայտնի ժամանակամիջոցով. այդ վերջինը լրանալուց յետոյ՝ վերստին միացնում էին հողերը և վերստին բաշխում վիճակով։

ային, ինչպես ուզէը՝ իր տան մէջ, կամ դաշտերում՝ կարող էր ծեծել նրան—և այդ վայրագ սովորութիւնը գործադրւում էր ամենալայն չափերով — կարող էր նոյնիսկ սպանել, ենթարկել տանջանքների, բռնաբարել նրա կինն ու աղջիկը և այլն։

Երեսուն միլիոն ճորտեր ապրում էին այդ քաոսի վիճակում։

Ահա այդ վէրքն էր ամենից առաջ, որ հարկաւոր էր դարմանել։ Ռուս ժառանգականութիւնը, յանձին իր ընտիր ներկայացուցիչների, սկսել էր արդէն պայքարը, 19-րդ դարու 30-ական թուականներից։ Գոգոլ, Տուրգենեվ, Հերցեն և ուրիշ փայլուն հանճարներ նկարագրել էին իրենց գրւածքներում ճորտութեան մռայլ էութիւնը և նշաւակել ու խարանել։

Խնդիրը հասունացել էր։ Գրականութիւնն ու մտաւոր առաջադիմութիւնը դրել էին այն՝ ամբողջ մտածող Ռուսաստանի առջև. Ղրիմի պատերազմը եկաւ իր հերթին ցնցելու մաքերը և համոզելու անգամ երկրի կոյր, մոլեռանդ հրամանատարներին, որ անհրաժեշտ է դէն շպրտել միջին դարերի այդ անպատիւ աւանդը, վերացնել ճորտութեան հաստատութիւնը և ազատել Ռուսաստանի միլիոնաւոր գիւղացիներին։

Տագնապալի և աղէտաւոր պատերազմից յետոյ ակներև էր — նոյնիսկ այդ կոյր վարիչների համար — անտեսական հինաւուրց կարգերի վնասակարութիւնը։ „Պէտք է խորտակել ճորտութեան ուժին, որ կաշկանդում է ուժերի ազատ, ներդաշնակ խաղը, և այնուհետև կը բազմանան ազատ աշխատաւոր ձեռքերը, կը զարգանայ մասնաւոր նախաձեռնութիւնը, կը բարգաւաճին արդիւնագործութիւնն ու առևտուրը և ժողովրդի նիւթական բարեկեցութեան մակարդակը բարձրանալով՝ կը ծաղկին նաև պետական ֆինանսները — այդ խոշոր

գրաւականը պատերազմի աջողութեան — կ'աճի ու կը ծաւալի գինուորական ուժը, կը լուծեն, վերջապէս, ներքին ըմբոստ տարրերը"... Այսպէս էր, անշուշտ, արաժաքանում պաշտօնական Ռուսաստանը, երբ ցար Ալէքսանդր II 1861 թ. փետրուար 19-ին իր նշանաւոր մանիֆեստով ծանուցեց Ռուսաստանին ճորտութեան սիստեմի վերացումը։

Ձեռնարկեցին և մի շարք ուրիշ ռէֆօրմների — դատաստանական, կրթական, գինուորական և այլ աշխարհներում, իրագործեց բուն ռուսական նահանգներում տեղական սահմանափակ ինքնավարութիւն (Զէմստվօ) և այլն։ Այդ բոլոր ռէֆօրմները, սակայն, մի նշանախեց անգամ չփոխեցին միահեծան բռնապետութեան սիստեմը և թագաւորը ճիւմ էր ըստ առաջնոյն ինքնակոլ ու գերագոյն տնօրէն լայնածաւալ կայսրութեան ճակատագրի։ Շշուկներ եղան մի վայրկեան, թէ „մեծ ռէֆօրմների շրջանը" պիտի պսակւի... Սահմանադրութեան շնորհումով, թէ Ալէքսանդր II յօժարակամ պիտի ընծայէր Ռուսաստանին պարլամենտ, յօժարակամ պիտի որոշէր սահմանափակել իր իրաւունքները... Միամիտ պատրանքներ էին Տվէր քաղաքի ազնւականութիւնը յանգգնեց խնդրել մի ադերսագրով, որ սահմանի համայն Ռուսաստանի պատգամաւորական ժողով — և խիստ կոպիտ մերժումն ստացաւ. նրա անդամներից 13 հոգի ձերբակալւեցին, իբր ըմբոստներ...

Ցեղափոխական պրօպագանդը նոր թափ առաւ ռէֆօրմների հետ։ „Դէկաբրիստների" հռչակաւոր „ապստամբութիւնից" ի վեր՝ Ռուսաստանը արել էր որոշ քայլեր մտաւոր առաջադիմութեան ասպարիզում։ Հին բռնկւող նիւթերին աւելացել էր մի նոր ու հզօր գործօն, որ յարաժամ խթանում էր մտքերը և միշտ աւելի ու աւելի աճեցնում քննադատող և ըմբոստ մտաւորա-

կանութեան լեգէօնը։ Դա ազատաշունչ գրականութիւնն էր։ 30-ական ու 40-ական թուականները տւել էին արդէն մի փայլուն պլէեադ գրողների ու մտածողների, որոնք սոսկումով էին անդրադառնում իրենց հայրենիքի կուլտուրական ու քաղաքական յետամնացութեան վրայ և ձգտում էին դուրս բերել Ռուսաստանը միջնադարեան ճահճից ու մղել այն դէպի արևմտեան քաղաքակրթութեան աւազանը։ Պետրոս Մեծը 18-րդ դարու սկզբներին կացնի հարուածներով փորձել էր խորտակել հնաւանդ, բորբոսնած ռուտինը, մտցրել էր փոքր ինչ թարմ, արևմտեան հոսանք, բայց այդ վերջինը կորել էր հնութեան ու փտութեան ովկիանի մէջ և ահագին կայսրութիւնը — մանաւանդ Նիկոլայ I-ի երկարատև թագաւորութեան շրջանում — դեռ մի անեզր ճահիճ էր և մի վիթխարի ու ժննդակ բաստիլ...

Գրականութիւնը — մի բուռն ազատատենչ մտաւորականութեան թևերի վրայ — դուրս եկաւ պատերազմելու այդ ահարկու բաստիլի դէմ։ Բանաստեղծներ, երգիծաբան-վիպասաններ և կրիտիկոս-գրողներ։ Պուշկին, Լերմոնտով, Գոգոլ, Գրիբոյէդով, ապա Բելինսկի և ուրիշներ։ Միւս կողմից ահա երիտասարդ իմաստասէրների մի խումբ — Ստանկեվիչ, Գրանովսկի, Բակունին, Հերցեն, Օգարեօվ — որ տակաւին 30ական թուականներում, Մոսկուայի մէջ տենդով կարդում է ու արծարծում հեգելեան փիլիսոփայութիւնը, իսկ վերջին երեքը ներշնչւում են միաժամանակ Սէն-Սիմոնի և Ֆուրիէի ընկերվարական վարդապետութեամբ։ Նրանք կը գառնան շուտով յեղափոխական շարժման նախաձեռնող և ղեկավար։ Նրանք բոլորը այսպէս կոչւած „զապադնիկ“-ներն էին (արևմտական). սպառազինւած արևմտեան քաղաքակրթութեան նշանաբաններով նրանք անհաշտ կռիւ էին

յայտարարել սլավոֆիլներին, հին, աւանդապաշտ Ռուսաստանի ներկայացուցիչներին (Աքսակով, Խոմեակով և ուրիշներ)։

Քիչ յետոյ հրապարակ են գալիս և ռուսական գրականութեան ու մտքի տիտաններըը — Տուրգենեվ, Դոստոյեվսկի։ Խորապէս ժողովրդասէր, ամէկավար՝ նրանք մի դաժան ռէալիզմով նկարագրում են ճնշուած ու կորած զանգուածների թշուառութիւնը, նկարագրում են խեղճ ու կրակ մուժիկին, աշխատաւորին, պրպըտում են խորունկ կարեկցութեամբ և յաճախ ձանձրալի, յոգնեցուցիչ տոկունութեամբ (Դոստոեվսկի) նրա հոգու բոլոր խորշերը և ձգտում են նոյնպիսի ջերմ համակրանք ստեղծել գէպի թշուառն ու անարգուածը իրենց բոլոր ընթերցողների, ամբողջ ռուս հասարակութեան մէջ։ Այդտեղ է ռուսական հանճարների և նրանց ստեղծած գրականութեան հզօր ու ինքնատիպ գիծը։ Վէպը դառնում է այն օրերից իվեր մի գերազանց գէնք ընդդէմ տիրապետող խաւերի ու բռնութեան։ Վէպի միջոցով աւելի դիւրին է հրապարակախօսել, յայտարարել վարագուրուած ձևերով ազատական գաղափարները և խուսափել ամենակարող ցենզուրի հարուածներից։ Վէպի մէջ ռուս գրողը դնում էր իր բոլոր երազներն ու ցաւուծները և յաճախ նաև իր քաղաքական ծրագիրները։ Վէպի միջոցով պիտի ազդէին յետագայում և հռչակաւոր նարօդնիկները, և ինքը Լեվ Տոլստոյը և անգամ յեղափոխական մեծ պարագլուխը — Չերնիշեվսկի։

Գրական շարժման հետ զուգընթացաբար թափ էր առնում յեղափոխական խմորումը՝ գլխաւորապէս հասարակական երիտասարդութեան մէջ։ 1848-ի պարիզեան անցքերը թոյլ արձագանք գտան անգամ Ռուսաստանում։ 1849-ին բացուեց Պետրաշեվսկու խմբի դատաքրութիւնը, որին մասնակից էին մի շարք գինուո-

բականները *): Անփորձ երիտասարդները էին, առանց շատ թէ քիչ լուրջ ծրագրի ու կազմակերպութեան: Գումարում էին գաղտնի ժողովները և զբաղւում Սէն-Սիմոնի, Օուէնի և այլ ժամանակակից արևմտեան սոցիալիստների ընթերցանութեամբ: Ջուտ ընկերվարական բնոյթ ունէր այդ գաղտնի ընկերութիւնը և քաղաքական պրօբլեմները շատ էլ չէին հետաքրքրում նրան: Պետրաշեվցիները որդեգրել էին ժամանակի ամենաարմատական վարդապետութիւնը և նոյնիսկ արևմտեան սահմանադրական ռէժիմի մասին խօսում էին արհամարհոտ անտարբերութեամբ... Նա „բուրժուական", առանձնաշնորհեալ ռէժիմ էր... Ուշագրաւ է այդ փիծը, որ մենք կը հանդիպենք ռուս յեղափոխական շարժման բոլոր յետագայ էտապների մէջ: Յիշենք, որ 1825-ի նշանաւոր „դէկաբրիստներն" էլ պահանջում էին հանրապետութիւն, այսինքն դարձեալ այն ժամանակւայ ամենաարմատական հասարակակարգը...

Ճորտերի ազատութիւնը նոր ու հուժկու զարկ տւեց յեղափոխական խմորումներին: Սակայն—մի այլ ուշագրաւ հանգամանք — մի շարք ռուս յեղափոխական գէմքեր իրենց ըմբոստ քննադատութիւնների ու յարձակումների մէջ, ուղղւած խոշոր-կալւածատիրական ռէժիմի դէմ՝ ոչ միայն խնայում էին թագաւորի անձնաւորութիւնը, այլ և նոյնիսկ կոչ էին անում նրա բարի զգացումներին, յորդորում էին շարունակել ու լրացնել ժողովրդի, բազմամիլիոն գիւղացիութեան ազատագրման գործը: Թագաւորը իր 1861-ի փետրւար 19-ի ժեստով—որի պատճառները մատնանշեցինք քիչ առաջ—վաստակել իր մեծ ժողովրդականութիւն՝ անգամ մտա-

---

*) Դրանց շարքումն էր Դ ո ս տ ո ե վ ս կ ի (1821—1881), որ ինչպէս յայտնի է, աքսորւեց Սիբիր:

ւորականութեան առաջապահ շարքերի մէջ և շատերը մի սին, ծայրայեղօրէն միամիտ պատրանքով թագաւորից էին սպասում բռնապետական կարգերի խորտակումը և ժողովրդի ազատութիւնը։

Այդ չարաշուք պատրանքով տարուած էր և ռուս անդրանիկ յեղափոխական հրապարակագիրը, նա, որ առաջին անգամը հաստատելով արտաստվանում ռուսական ազատ տպարան, իր հզօր գրչով սթափեցրեց ժողովրդի լայնածաւալ ընտրատանի ժառանգական խաւերի մէջ և գրաւեց այդ երկրի պատմութեան մէջ ժառանգապէս նոյն դիրքը, ինչ որ Ռուսսօն Ֆրանսիայի պատմութեան մէջ։ Մեր խօսքը Հերցենի մասին է, որի վրայ հարկ է փոքր ինչ կանգ առնել, քանի որ նրա ազդեցութիւնը տարածւում է անգամ ներկայ սերնդի վրայ և քանի որ այդ անձի մէջ, նրա հաւատամքի ու տակտիկի մէջ՝ մենք գտնում ենք այն մի քանի էական առանձնայատկութիւնները, որոնք բնորոշում են ժամանակակից ռուս յեղափոխականին։

***

Նիցցայի շքեղ հանգստարանում, *Château*-ի տիրական և գեղանկար բարձունքի վրայ, Գամբետտայի գերեզմանից ոչ հեռու, մի համեստ, բրօնզէ արձան է կանգնած — մի կարճահասակ ծերունի, ռուսական դիմագծերով, որ ձեռքերը կրծքին ծալած, տխուր, վշտատանջ աչքերը գետնին է յառել և խորասուզւել ծով մտքերի մէջ *)... Ասես այդ չքնաղ երկնքի տակ հաժաշխարհային վիշտն է մարմնացնում ու որոճում. ասես այդ մշտածիծաղ դրախտի մէջ դեռ ողբում է իր սգաւոր

*) Հերցենն ծնւել է 1812 թ-ին, Ռուսաստանում, վախճանւել է 1870-ին Պարիզի մէջ և թաղւել է Նիցցայում։


Հայրենիքի ողբը և տանջում նրա ազատության հակայ ու անմեկնելի առեղծածով...

Առեղծած— արդարև: 60 տարի է անցել Հերցենի քարոզչական գործունէության առաջին օրերից — և այսօր տակաւին նրա խօսքը պահպանում է իր տեսուր այժմէութիւնը, նրա ազատաշունչ քարոզը պահպանում է իր թարմութիւնը, նրա բազմաթիւ յօդուածները և արտայոյզ կոչ ու յորդորները դեռ ունին, տարբախտաբար, իրենց գոյութեան իրաւունքը. Այսօր դեռ հարկ է զանգահարել մեծ աքսորականի բարձրաղօղանջ „Կոլոկոլը“, զանգահարել երկար, անդուլ, յարատև, որովհետև սլավօնական վիթխարի հաւերը դեռ քնած է լեթարգիական մրափով, որովհետև 60 տարուայ ազատագրական քարոզը դեռ չի խռովել նրա մահաշունչ, տրկական անդորրութիւնը և բռնութեան խարազանը դեռ գործում է նրա անզգայ, համբերատար մէջքի վրայ՝ այն ժամանակ, երբ ամբողջ մարդկութիւնը, անգամ ասիական ճահիճ-աշխարհը, համակուել է սահմանադրական ու հանրապետական վերիվայրումների տենդով..

— „Կուզէ՞ք, որ ուղեկցեմ Ձեզ դէպի մեծ ռուս յեղափոխականը“ — շշնջում է ինձ Փրանսիացի գերեզմանապահը, գամբետտայի շիրմի առջև ինձ հետ երկար սպասելուց յետոյ:

„Մեծ յեղափոխական“ — այդպէս էլ անուանում են Հերցենին, թէ իր հայրենիք Ռուսաստանում, թէ Եւրոպայում: Բառը, սակայն, շատ էլ տեղին չէ, եթէ ըմբռնենք այն իր դասական իմաստով: Հերցեն չ'եղաւ, յեղափոխական մի Ռուսաստի, մի Դանտօնի, մի Մաձինիի, մի Կօշուտի եղանակով: Միջեւատեակեան կարգերի հանդէպ նա չբռնեց այն ժխտական և արմատական դիրքն ու ուղղութիւնը, որ յատուկ է բոլոր ճշմարիտ յեղա-

փոխականներին։ Նա յեօթ ծնաց իր խօսքով ու գործով նոյնիսկ իր Հայրենակից „դէկաբրիստներից“, մի Պէսաէլից, մի Ուիլէվից, որոնք 1825-ին, Ֆրանսիական յեղափոխութեան շունչով բոցավառուած՝ փորձում էին



Հ ե ր ց ե ն

զինուորական ապստամբութեամբ վայր գլորել անիծա-
կուռ միապետութիւնը և հիմնել նրա փլատակների
վրայ ժողովրդավար հանրապետութիւն... Հերցեն և
յետագայ ռուս կարող իդէօլօգներն ու գործիչները,
ամբողջ ռուսական շարժումը ապացուցին, տարաբախ-

տաքալ, որ պէստէլների այդ խանդավառ, հրաբխային հոգեբանութիւնը մի հազւագիւտ երեւոյթ էր Ռուսաստանի լայնածաւալ յեղափոխական անապատի մէջ։ Ատելութիւնը, անհաշտ ու թունոտ ատելութիւնը դէպի միապետական կարգերը և դրա հետ շաղկապւած ըմբոստութեան, ապստամբութեան կրակը այն հեռաւոր ու յիշատակելի օրերից ի վեր, երբէք քիչ-շատ լայն չափերով ծայր չտւեց՝ ոչ բանակի ու ժողովրդի մէջ, ոչ էլ կրթւած հասարակութեան մէջ։ Հին, կլասիկ յեղափոխութեան այդ „հրեղէն հոգեբանութիւնը“ պաշարեց միայն անհատներին և ցանցառ ու հազւագիւտ խմբակներին,—նա դուրս մնաց զանգւածներից...

Այդ մոլեգին ատելութիւնը և այդ հրեղէն խառնւածքը միանգամայն օտար մնաց և Հերցենին, ռուսական մեծագոյն, տաղանդաւոր հրապարակագրին։ Նա „յեղափոխական“ քարոզիչ եղաւ զուտ ռուսական եղանակով. նա հարազատ նմուշն եղաւ այն ինքնատիպ ու տարապայման հոգեբանութեան, այն երազուն և լաւատես իդէալիզմի ու ուտօպիզմի (ցնորականութեան), այն մեղմ, հաշտարար, անդարմանելիօրէն կրաւորապաշտ քաղաքականութեան, որ մատնել է գրեթէ միշտ և մատնում է այսօր ևս այդ զարմանալի ժողովուրդը յանձին իր առաջադէմ, „արմատական“ գործիչների, տաղանդաւոր գրողների ու քարոզիչների և հարիւրմիլիոնաւոր զանգւածների։ Հերցեն հանդէս եկաւ խորապէս համակւած այդ ցնորական գաղափարականութեամբ, այդ լաւատես և կրաւորապաշտ իդէալիզմով ու ուտօպիզմով։ Նա ըմբռնեց „յեղափոխութիւնը“ լոկ խաղաղ վերանորոգմ ն, բարոյական ներգործութեան, լոկ խօսքի ու յորդորի ճանապարհով... „ի վերուստ“ թափւելիք մանանայի, բռնապետական „վեհանձն պարգեւի“ կերպարանքով։ Եւ նա ուղղեց իր տենդոտ յոր-

դորները... Ռուսաստանի մ ի ա պ ե տ ն ե ր ի ն՝ նա ուղղեց նոյն յորդորները անգամ ա զ ն ւ ա կ ա ն ու ւ թ ե ա ն—ային քաջութեան, ժողովրդակուլ դասակարգին, որ եղել է միշտ բռնապետութեան ամենամուր պատւանդանը և որի նմանը դժւար է գտնել համաշխարհային պատմութեան մէջ։ Կոչերով ու յորդորներով, խօսքով ու խրատով՝ Հերցեն ուզում էր հ ա մ ո զ ե լ բռնապետական կարգերի այդ տիպար-ներկայացուցիչներին՝ որ յօժարակամ թողնեն իրենց հարստահարութեան ու կեղեքման խարազանը, երջանկացնեն ժողովուրդը, ազատեն գիւղացիութիւնը ճորտութեան պատուհասից և այլն։

Եւ երբ Ղրիմի ազէտալի պատերազմից յետոյ ճորտութեան ամօթալի սիստեմը վերացաւ կայերական մի հրովարտակով, իբրև մի հաստատութիւն, որ հիմնական պատճառներից մէկն էր կրած պարտութեան և որի գոյութիւնը մշանջենաւոր արգելք էր երկրի արդիւնաբերութեան զարգացման, տնտեսական, դրամական բարգաւաճման և զինւորական վերակազմութեան համար,— գանւեցին միամիտ մարդիկ, որ վերագրեցին այդ խոշոր ուէֆօրմը Հերցենի քարոզներին, թագաւորի վրայ ունեցած նրա խօսքի ազդեցութեան։ Եւ Լեվ Տօլստոյ—որ դարձեալ մի նմուշ է նոյն ռուսական ինքնատիպ „յեղափոխականութեան“—հիացմունքով ու ափսոսանքով էր յիշում Հերցենին. „Ափսո՜ս, ասում էր, որ շուտ մեռաւ. եթէ ապրէր, Ռուսաստանի զարգացման ընթացքը այլ ո ւ ղ ղ ո ւ թ ի ւ ն կըստանար“...

Եւ երէկ Հերցենի ծննդեան 100-ամեակին, կադէտ Ծպիչեվ, իր բազմաթիւ համախոհների հետ կրկնում էր Տօլստոյի այդ խօսքը, ինքն ևս հաւատալով, որ եթէ Հերցեն քիչ աւելի ապրէր, Ռուսաստանը այլ ընթացք կը բռնէր, այլ կերպարանք կունենար ներկայումս...

Այսինքն չէր առաջ գայ „Նարոդնայա Վոլիա“-ի և յաջորդների բուռն յեղափոխութեան քարոզն ու տակտիկը, չէին յայտնի քաղաքական հրապարակի վրայ ուժգարձակ ժեղեաբօլշեներն ու Սազօնօվները, չէին լինի անգամ այն թոյլ ու դժգոյն զանգւածային բունկուժները, ապատաժբական այն հազւադէպ թուիչքները, որոնք „միայն գրգռում են իշխողներին և ամրապնդում հալածանքի ոէժիմը“... Ձէր լինի այդ բոլորը... որովհետև Հերցեն սոսկ իր գրչով ու խօսքով կը կարողանար ազդել բռնապետութեան վրայ, կը կարողանար պատրաստել ռուսական ընդհանրութիւնը խաղաղ վերիվայրումի ու նւաճումների համար...

Ահա դարձեալ մի պերճախօս ապացոյց նոյն ցեղային, բացատական, անդարմանելի հոգեբանութեան... Եւ գուցէ սխալ չէր լինի բացականչել. „քերեցէ՛ք ռուս ազատականին, ամենակարմիր յեղափոխականին — և դուք կը գտնէք իւրաքանչիւրի մէջ մի խոշոր դօզ տօլստօյականութեան“: Այդ դժբախտ գիծը կարմիր ժապաւէնով անցնում է ամբողջ ռուս յեղափոխութեան պատմութեան միջից:

Այդ բնորոշ, ցեղային տօլստօյականութեան մի այլ գիծն է — համբերողութիւնը դէպի ժողովրդի թշնամիները: Ցայտնի են արդէն մի քանի դրւագներ Ռուսաստանի վերջին շարժումներից, երբ տագնապի ամենավճռական վայրկեաններին ռուս յեղափոխականները, սոցիալիստները իրենց կողմն ունենալով ժամանակաւոր յաղթանակը, մի անըմբռնելի „վեհանձնութեամբ“ խնայել են ծուղակն ընկած թշնամուն և դրա շնորհիւ քիչ յետոյ վիժեցրել յեղափոխութեան աջողութիւնը.. մի հանգամանք, որ այսօր դառնացած արտով խոստովանում են նոյնիսկ իրենք ռուս սոցիալիստները:

Համբերողութեան ու „վեհանձնութեան“ այդ գիծը

նոյնպէս մասամբ գալիս է Հերցենից։ Վերհանձնութի՛ւն թշնամու հանդէպ, անգամ արիւնռուշտ, երդւեալ թշնամու... Հերցեն չէր համակրում Ֆրանսիական ցեղափոխութեան հերոսներին, ահերրօրիստներին, որոնք չէին կամեցել բարոյապէս ազդել, „հաժոզել" բռնաւորներին։ Բռնի յեղաշրջումներ չէր սիրում Հերցեն։ Դա յորդորում էր և իր լեհ բարեկամներին, յեղափոխականներին — 1863 թուականի նախօրեակին — չդիմել ապստամբութեան։ Նա գերագոսում էր դիմումներ անել ցարին ու ազնւականութեան։ 1855 թ. մարտ 10-ին նա գրում է զգացած, սրտառուչ նամակ Ալէքսանդր II-ին, ուր նւաստօրէն մատնացոյց է լինում գիւղացիների ազատման անհրաժեշտութեան վրայ և յայտարարում է, որ եթէ ցարը յանձն առնէ իրագործելու այդ ուէֆօրմը և դրա համար ցանկանայ, որ Հերցենը լռէ, ժամանակաւորապէս դադարեցնէ իր ազատագրական քարոզչութիւնը,—նա պատրաստ է համակերպել և լռել *)։ Նամակն, ի հարկէ, պատասխանի չարժանացաւ։

Մի ուրիշ գիծ ևս գտնում ենք ռուսական շարժման ուսհվիրայի մէջ, մի գիծ, որ դարձեալ այդ շարժման հարազատ սեփականութիւնն է, նրա ուրոյն, բացառական յատկանիշը։

Դա քաղաքական անտարբերութիւնն է, աւելի ճիշտ՝ անտարբերութիւնը՝ պետական կազմի ձևերի նկատմամբ (*apolitisme*)—մի հանգամանք, որ այսօր ցոլում է նաև ռուսական խոշոր ու գործօն յեղափոխական կուսակցութիւնների գաւանանքի և մանաւանդ տակտիկի մէջ։

Գրեթէ կատարեալ անտարբերութիւն՝ դէպի կառավարական սիստեմները... Հանրապետութիւնը Հերցենի աչ-

*) Տես „Րէչ" 1912 թ. № 83։

քում աւելի հրապուրիչ չէ, քան միապետութիւնը։ Ֆրանսիայի նւաճած հանրապետական իրաւակարգը նրա կարծիքով բարձր չէ նախնի ֆէօդալ-միապետականից և նոյնիսկ շեշտում է, որ այդ հանրապետութիւնը նւաճելու համար չ'արժէր իսկ թափել ոչ միայն արիւն, այլ նոյնիսկ մելան"։

Որովհետև... դա „բուրժուական հանրապետութիւն է"։ Եւ Հերցեն մի գերագոյն արհամարհանք էր տածում դէպի արևմտեան այդ բուրժուական կեանքի „մեշչանութիւնը", գռեհկութիւնը. և նա խանդավառւած իր հայրենի ժողովրդի բազմահոչակ „առաքինութիւններով", երազում էր, թէ այդ ժողովուրդը իր բնածին կօմմունիստական սովորութիւններով ու բարքերով, իր „միր"ի, „արտէլի", համայնական կազմակերպութիւնների սիստեմով կոչւած է մի՛ր „ուսուցանելու", առաջնորդելու մեշչանական, բուրժուական Եւրոպային։ Դա ռուս „նարօդնիկների", ժողովրդասէրների ծանօթ հաւատամքն է, որ քանի գնում խորտակւում է իրականութեան արհամարհոտ և տրորող հարւածների տակ։

Հերցեն սիրեցեալ նահապետն է այդ շնաշխարհիկ նարօդնիկների, որոնք ահագին դպրոց ստեղծեցին Ռուսաստանի մէջ և որոնք մշակւած են նոյն Հերցենեան ապաքաղաքական (ապօլիտիկ) հրահանգներով, նոյն դժբախտ քաղաքական անտարբերութեամբ, որի շնորհիւ (թերևս գլխաւորապէս) այսօր տակաւին զուրկ ենք մնում հսկայածաւալ Ռուսաստանի մէջ սահմանադրական իրաւակարգի ամենատարրական երաշխիքներից...

Մինչին ռուս յեղափոխականը, սոցիալիստը, սոցիալդեմօկրատը արիւն ու մարմին է դարձրել իր մէջ այդ կորստաբեր տրամադրութիւնը և այդ յաւակնոտ արհամարհանքը դէպի արևմտեան սահմանադրութիւնները, դէպի արևմտեան բուրժուականութիւնն ու „մեշչանութիւնը"... և այդ այն ժամանակ՝ երբ սեփական հայ-

բեննիքը իր բազմամիլիոն ժողովրդով լողում է աշխարհի ամենախեղդուկ ճահճի մէջ, անկարող լինելով մի առնական ժեստ անելու և դուրս նետուելու դէպի ազատ ու թարմ մթնոլորտ...

***

Այո, անցեալ դարու 50-ական թուականներին արդէն ծայր էին տալիս նորաբողբոջ ազատագրական շարժման մէջ՝ մեր յիշատակած այդ մի շարք ձախորդ, բացասական գծերը—քաղաքական անտարբերութիւն, ուտօպիզմ, կրաւորականութիւն, բուն յեղափոխական քարոզի բացակայութիւն, „բուրժուական կարգերի“ ու „մեշչանութեան“ արհամարհում և սեփական ուժերի անտեղի չափազանցում—որ տակաւին այսօր ևս գերակշռող են ռուսական կուսակցութիւնների մէջ: Սակայն Հերցեն լոկ այդ ձախորդ գծերով չէ, որ ներկայանում է քննադատող աչքերի առջև: Նա իրաւամբ մեծարուում ու փառաբանուում է իր երախտագէտ յետնորդների կողմից, իբրև ռուսական ազատ խօսքի հիմնադիրը և իբրև ռուսական բողոքի ամենամեծ, ամենահուժկու շեփորող-հրապարակագիրը: Նա վօլտերեան գրիչ ունի, սուր, կծու, ծաղրող և խարանող: Իր ժանեակուր կեանքը դեռ շատ վաղ մշակել էր իր մէջ բողոքողի ու խարանողի այդ գծերը: Դեռ մատաղ հասակի մէջ՝ իջաւ նրա վրայ բռնապետութեան հարուածը, նա աքսորուեց դէպի Սիբիրի սահմանները: Վերադարձին՝ արդէն գիտակից ըմբոստ է, նրան սկսում է խեղդել հայրենի իրականութիւնը և նա նետում է ինքզինքը Եւրոպա: Գալիս է պարիզ 40-ական թուականներին, ծանօթանում է Պրուդոնի ու այլ հռչակաւոր յեղափոխականների հետ, նետուում է խանդավառութեամբ պարիզեան փոթորկոտ կեանքի ալիքները, աշխատակ-

ցում է սոցիալիստական թերթերին։ Յունիսեան ջարդերից և միապետութեան նոր յաղթանակից յետոյ, Հերցեն դուրս է քշւում Պարիզից, դառն հիասթափութեան մէջ, փշրւած յոյսերով, գնում է դէպի մի աւելի ազատ կայան, դէպի Լ ո ն դ ո ն։ Այնտեղ հիմնում է տպարան և լոյս է ընծայում 1857-ից — Օգարեօվի, աւելի ուշ, Բակունինի աշխատակցութեամբ — իր հռչակաւոր „Կոլոկոլը“ (Զանգ)։ Ծանօթանում է այդտեղ, Լօնդոնում, աշխարհահռչակ յեղափոխական առաքեալների հետ, — Մաձինիի, Գարիբալդիի, Կօշուտի և ուրիշների։

Ահագին աղմուկ յարուցեց Ռուսաստանում ազատ խօսքի այդ առաջին պղպտարը, ահագին գարկ տւեց նա — Հերցենի թևաւոր ու կրակոտ գրչի շնորհիւ — մտքերի սթափման գործին, մի յատնի իրարանցում ձգելով նոյնիսկ կառավարական շրջանների մէջ։ „Զանգ“-ի հրատարակութեան 1857 — 1862 ժամանակամիջոցը պատմական, անմոռանալի մի շրջան է ռուս ազատութեան տարեգրութեան մէջ։ Մեծ աքսորականը, սոցիալիստ Հերցենն, նոր խօսք էր հնչեցնում իր ստրկացած հայրենակիցների ականջներին, — ազատութեան ու վերանորոգութեան խօսքը։ Նա գնում էր դէպի Ռուսաստանի բոլոր անկիւնները, հազարաւոր արձագանքներով շրջան էր անում կրթւած, լուսամիտ հասարակութեան մէջ, գործում էր իր ազդեցութիւնը նաև իշխող տարրերի վրայ, յարուցանում էր երկիւղ ու պատկառանք...

Այդտեղ է Հերցենի մեծ, պատմական նշանակութիւնը, իբրև ազատութեան մեծատաղանդ առաքեալի ու հրապարակախօսի։

Հերցեն, սակայն, չգոհացաւ լոկ լրագրային հրապարակախօսութեամբ։ Օժտւած խոշոր ընդունակութիւններով, տէր ահագին զարգացման, էրուդիցիայի, ծանօթ համաշխարհային գիտական-փիլիսոփայական գրականու-

թեան՝ նա շօշափում էր իր բազմաթիւ գրուածքների մէջ նաև ընդհանուր, վերացական բնոյթ ունեցող, հասարակագիտական խնդիրներ և այդտեղ, այդ ընդհանուր մարզանքների աշխարհում նա արծարծում էր ռուսական Սուբ'եկտիվիզմի ծանօթ թէզիսները. նա ինքը, կարելի է ասել, հիմք էր դնում հռչակաւոր „սուբ'եկտիվիստ դպրոցին", որի հիմնական խորհուրդն ու նպատակն է՝ **կռիւ յանուն անհատականութեան, կռիւ յանուն անհատ-անհատի լիակատար ազատութեան՝** ընդդէմ այն բոլոր խոչընդոտների ու կապանքների, որ դնում են պետութիւնը, հասարակութիւնը, և սխալ, մոլար, ծայրայեղօրէն օբ'եկտիվիստ վարդապետութիւնները, որոնք առանձնապէս բարգաւաճում էին այն ժամանակ և հակած էին զոհաբերելու անհատին յօգուտ ու յանուն հաւաքականութեան, հասարակութեան, պետութեան...

Անհատի և հասարակութեան փոխ-յարաբերութիւնը, իբրև մէկը և թերևս դժուարագոյնը ժամանակակից ընկերաբանութեան կնճիռներից՝ ամբողջ կեանքի ընթացքում զբաղեցրին սոցիալիստ Հերցենին — սոցիալիստ՝ ոչ այնքան դօքտրինով, վարդապետութեամբ, որքան իր կծու, անողոք քննադատութեամբ, ուղղուած ընդդէմ բուրժուազական կարգերի: Անհատի երջանկութիւնը պէտք է լինի առանցքը և վերջնական նպատակը հասարակական էւօլիւցիայի. անհատը — այդ կօնկրետ, շօշափելի էութիւնը՝ իր այլազան պահանջներով ու տեսչերով պէտք է ստանայ, պէտք է նւաճէ հնարաւորութիւն՝ լիակատար ու բազմակողմանի կերպով զարգացնելու իր ժառանգական, հոգեկան, ֆիզիկական կարողութիւնները... Ահա այն մեծ թեզիսը, որ յետագայում աւելի հանգամանօրէն պիտի արծարծեն Լավրով. Միխայլովսկի և ռուսական սուբ'եկտիվիզմի այլ ականաւոր

ներկայացուցիչներ։ Դա Ընտիրներեան կոպիտ անհատապաշտութիւնը չէր, դա անհատի սանձարձակ, էգօիստական պոշտամունքը չէր, որ ժառանգում է սոսկ եսի հաճոյամոլ ախորժակների և անզուսպ վայելքների մասին, արհամարհելով ամեն իդէալ և ամեն մի հեղինակութիւն, ոտնահարելով ուրիշ մարդկանց նոյնքան սուրբ իրաւունքները, ծաղրելով ու նշաւակելով „հասարակութիւն“, „բարոյականութիւն“, „գաղափար“, „պարտականութիւն“ և այլ նման „կուռքեր“...

Ընդհակառակը, Հերցեն, Լավրով, Միխայլովսկի, ամբողջ ռուսական սուբ՚եկտիվիստ դպրոցը չափազանց բարձր է դասում իդէալները և նրանց հետ կապւած պարտաւորութիւնները, քարոզում է անդադար գրկանք ու զոհողութիւն, քարոզում է գրեթէ միջնադարեան նահատակութիւն յանուն իդէալի, ժողովրդի, հասարակութեան... Նա չի գաւում անհատը հասարակութիւնից, չի տեսնում անտիթեզ, թշնամութիւն, հակօրինութիւն այդ երկու կատէգօրիաների միջև, չի հակադրում էգօիզմը ալտրուիզմին, եսը հաւաքականութեան, այլ միացնում, ձուլում է նրանց կեանքի միևնոյն ամբողջական յորձանքի մէջ, իբրև այդ կեանքի երկու տարրեր, հարազատ և հիմնական տարրերքներ — փոխադարձաբար լրացնող — երկուսն էլ հաւասարապէս ծանրակշիռ և անհրաժեշտ... եթէ, հարկաւ, ըմբռնենք էգօիզմը իր ազնւագոյն իմաստով, իբրև շեշտուած մարդկային անհատականութեան իրաւունքների ու պահանջների և ոչ իբրև ջատագովուած հակաընկերային, անասնական կրքերի ու թուիչքների։

***

Մի հարուստ, շքեղ անհատականութիւն, մի սուր ու մտրակող գրիչ, մի խորապէս ինքնատիպ ոճ, որ մէկն է

հեղինակի բնատուր օժիտներից, որ առատօրէն փռուած է ձեր առջև գեղարուեստագէտ-հրապարակագրի այնքան փայլուն և հրապուրիչ էջեր, տարածելով ամենուրեք խանդավառուածն ու ելէքտրացուած. վերջապէս, մի ազնիւ, հայրենաշունչ ժարտնչող, որ թէպէտ և չ'ըմբռնեց սկզբից շիտակ ու քաղձալի ճանապարհը, թէպէտ և չձգտեց ժարզել իր հայրենի երիտասարդութիւնը բուն, դասական յեղափոխութեան մի՛ակ փրկարար հնոցի մէջ, այնուամենայնիւ մեծ, ահագին, արգասաւոր գործ կատարեց այն մռայլ ժամանակներում — իսկ մեծ ժարդկանց պէտք է դատել իրենց ապրած ժամանակի տեսակէտից — առաջ բերեց մի շարժում մտքերի ու հոգիների մէջ, որ գնաց այնուհետև յարաճուն կոհակներով, մերթ ընդ մերթ դաւաճանեց իր նախնի խազապատկեր պատգամներին, մերթ ընդ մերթ որոտաց ռումբի, ուժանակի սաստանեցուցիչ բոմբիւններով, յղացաւ գժոխային և խօլական դաւադրութիւններ, շանթահարեց, գետին փռեց արքաներ ու մինիստրներ, տարտափեցրեց աշխարհը մի չնչին փոքրամասնութեան հերոսական թռիչքներով, իգեալիզմի ու անձնուրացութեան շնաշխարհիկ պոռթկումներով, ճարակեց և ճարակուեց անհաւասար բաղխումներով, թուլացաւ, ուժասպառուեց և ամբողջ տասնեակ տարիներով չքացաւ հրապարակից, ապա վերստին բեմ նետուեց մի աղէտաւոր պատերազմից նպաստաւորուած, նուաճեց ազատութեան մի քանի փշրանք և նորէն խորտակուեց ու խորասուզուեց ժամանակաւոր մոռացութեան ալիքների տակ. ուսկից նորէն դուրս կը լողայ վաղ թէ ուշ, ցաւոտ կեանքի հրամայական պահանջների հանդէպ, աւելի կուռ, ներդաշնակ, կազմակերպուած, աւելի հզօր և յաղթական:

***

Ընկերային կամ սոցիալական գիծը գերակըշռում էր Ռուսաստանի նորաբողբոջ շարժման մէջ, — չափազանց թոյլ էին այնտեղ՝ քաղաքական մտահոգութիւնները։ Եւ դա ունէր իր պատմական ու տնտեսական պատճառները *)։ Գիտակից մտաւորականութիւնը, խեղդւած իր հայրենի մթնոլորտում, ծարաւը լմբոստ մտքի ամեն մի արտայայտութեան՝ դիւրութեամբ ենթարկւում էր արեւմտեան ամենածայրայեղ, արմատական հոսանքներին, այսինքն՝ սոցիալիզմին ու անարխիզմին։

Միւս կողմից էլ՝ երկրի տնտեսութեան զարգացման աստիճանը, նրա նահապետական խակութիւնը, դասակարգերի թոյլ շերտաւորումը արգելք էին լինում զուտ քաղաքական-սահմանադրական շարժումների առաջացման, որպիսի շարժումներ կատարւել էին արեւմտեան Եւրոպայում 1789, 1848 թւականներին։ Չկար Ռուսաստանում այն յստակ դասակարգը, որ կրող ու առաջապահ հանդիսանար այդ աւելի չափաւոր շարժումների, չկար երրորդ դասակարգը կամ բուրժուազիան, որ իր հզօր արդիւնաբերական ու ֆինանսական կարողութեամբ ցանցապատէր ամբողջ երկիրը, իր ձեռքն առնէր հասարակութեան բոլոր կենդանի ոյժերը և ծառանար ամեն բան կաշկանդող վիճակի բռնապետութեան դէմ, պահանջելով ոչ թէ սոցիալիզմ ու հանրապետութիւն, այլ պարզ Սահմանադրութիւն։ Այդ կարևոր դասակարգը չկար, տարաբախտաբար, նա տակաւին իր սաղմի մէջ էր, խակ ու խաւար մի սաղմ... Եւ մինչև օրս էլ ռուսական բուրժուազիան ճնում է թոյլ ու տարաղաս վիճակում, քաղաքականապէս գրեթէ անչափահաս, անկարող՝ թելադրելու իր

*) Տես Մ. Վ. „Հոսանքներ"։

կամքը ժուռւորականութեան, ազգին ու իշխանութեան։

Մնում էին այդպիսով հրապարակի վրայ աշխատաւորը ժողովրդից և նաև ազնւական դասակարգից առաջացած ժուռւորական ցանցառ շարքերը, իբրև վիճակ դիմադրական ու յեղափոխական ոյժ՝ ընդդէմ վիրապետութեան և նրա դաշնակից ազնւականութեան։ Իսկ նրանք էլ... գրեթէ բոլորովին անտարբեր էին դէպի պետութեան քաղաքական ձևերը և գրել էին իրենց դրօշակի վրայ— Սօցիալիզմ։ Այն Սահմանադրութիւնը, որ նւաճել էին անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք,— բաւարար չէր ռուս յեղափոխականների համար. նրանք կուզէին շատ աւելի արմատական յեղաշրջումներ և շատերը — նոյնիսկ ականաւոր մտածողներից—օրօրւում էին պատրանքով՝ թէ Ռուսաստանը, շնորհիւ իր „միր“-ի, իր յատուկ գիւղական, համայնական կարգերի (Օբշչինի Ստրոյ)՝ պիտի կարողանայ մէկէն ի մէկ թռիչք գործել դէպի Կոմմունիզմի, Ընկերավարութեան քնագաւառը, առանց անցնելու հարկաւորաբար այն բոլոր աստիճանները, առանց ապրելու կապիտալիզմի զարգացման այն բոլոր փուլերը, որ ապրել է արևմտեան աշխարհը։ Անհունօրէն չափազանցնում էին նախկին ռուս ընկերվարականները այդ համայնական կարգերի արժէքը, առանց իրենց հաշիւ տալու, որ մուժիկային այդ բիրտ ու խոպան համայնքը, նախնական վայրենութեան իր բոլոր գծերով, անկարող է, առանց խորունկ յեղաշրջումների ու կերպարանափոխումներ ապրելու, վերածուիլ սոցիալիստական գիտակից ու ինքնիշխան հասարակութեան։


Նոյն տիպարի սոցիալիստ էր և մեր տաղանդաւոր, աշխարհահռչակ պարտգլուխը — Հերցենի շեվսկի (1828—1889 թ.)։ Ռուսական և համաշխարհային յեղափոխութեան ամենամեծ նահատակներից մինը։ Այդ

անունը, շրջապատած գիտութեան և երկարատև, անօրինակ ժարտիրոսութեան լուսապսակով, ամբողջ սերունդներ ներշնչեց ու դաստիարակեց, ամբողջ տասնեակ տարիներ իշխեց երիտասարդութեան մտքերի վրայ — և այսօր էլ Ռուսաստանի մի ծայրից մինչև մյուսը՝ նա արտասանում է խորունկ հիացմունքով։

Կղերական ընտանիքի զաւակ և կրթուած ու դաստիարակուած կղերական ճեմարանում՝ նա երիտասարդ հասակի մէջ „վարակուեց“ ըմբոստացումի համայնաճաղակ „հիւանդութեամբ“։ Ընտակ, քննադատող միտք, հզօր ու ընդհանրացնող իմացականութիւն՝ նա շուտ թափանցեց այն չարիքների էութեան մէջ, որոնք կրծում էին հայրենիքի վիթխարի օրգանիզմը և առանց երկար տարուբերելու՝ նետուեց դիմադրական բանակը, յարեց ընկերվարական վարդապետութեան։ Սկսեց իր կարիէրը գրական քննադատութեամբ. դարձաւ հոգին այն մեծ, պատմական հանդէսի — „Սովրեմեննիկ“ — որ 50-ական և 60-ական թուականներին ռուս առաջադիմական մտաւորականութեան դրօշակակիրն էր, որի շուրջը համախմբուած էին ժամանակի ամենալուսաւոր աստղերը՝ Դօբրօլիուբօվ, Միխայլօվ և ուրիշներ։

Ապա եռանդով նետուեց տնտեսագիտական ուսումնասիրութիւնների, սկսեց քննադատել անսովոր հմտութեամբ արևմտեան մեծ տնտեսագէտների (մասնաւորապէս Ջօն Ստիւարտ Միլլի) գործերը, փայլեց, որպէս խորունկ կրիտիկոս ու գիտնական, ստացաւ յետագայում Մարքսի անվերապահ ներբողը։ Բոլոր քննադատութիւնների մէջ ցոլում էր Չերնիշեվսկու ըմբոստ ոգին, նրա անհաշտ թշնամութիւնը արևմտեան լիբերալիզմի հանդէպ և նրա բուռն համակրանքը՝ դէպի կօմմունիզմը, ընկերվարութիւնը։ Եւ իրրև կօմմունիստ՝ նա ոգևորւում էր ռուս համայնքով, „միր“ի, „արտէլի“ գուտ ռուսա-

կան կազմակերպութեամբ, հողերի ընդհանուր, համայնական սեփականութեամբ (որ նրա կարծիքով իդեալ էր արևմտեան ժողովուրդների համար) և նրա վրայ կառուցանում էր գալոց հոյակապ կոմմունիստական շէնքը։ „Ինչ փոփոխութիւններ ու յեղաշրջումներ էլ որ առաջ գան տնտեսական զարգացման ընթացքում,—գրում էր



Չ ե ր ն ի շ է վ ս կ ի

նա — մենք չպիտի յանդգնենք ձեռք տալ մեր երկրի սրբազան ու փրկարար սովորութեան, չպիտի յանդգնենք բռնանալ համայնական հողատիրութեան վրայ“ *).

„Ստորերկրեայ“ կեանքը եռում էր պետերբուրգի մէջ,

*) Տ ու ն, Ռուս Յեղափոխական Շարժման Պատմութիւնը, էջ 35։

կազմակերպում էին նոր-նոր գաղտնի ընկերութիւններ (Ամենահռչակը — „Հող և Ազատութիւն“ անունով, „Ջեժլիա ի Վօլիա“), բոլորն էլ սոցիալիստական վառ գունաւորութեամբ, հրատարակում էին անվերջ ու բոցաշունչ թռուցիկներ, որոնց մէջ առաջին տեղը բռնում էին միշտ Հողը և Ժողովուրդը։ Ռուս սոցիալիստները ապստամբութեան կոչ էին անում այդ ժողովրդին, առանց որևէ նախապատրաստական, կազմակերպական աշխատանք կատարելու, մի տարօրինակ, ծայրայեղօրէն միամիտ երիտասարդական ժամբութեամբ։ Եւ այդ բոլոր թռուցիկները կորչում էին հարիւր միլիոնանոց զանգուածի սառցային անտարբերութեան մէջ, յուզելով միմիայն մտաւորականների սահմանափակ շրջաններ։

Շարժման սկիզբն էր դեռ և այդ կարմրավառ թռուցիկները ունէին իրենց պատմական նշանակութիւնը։ Ահա մի քանի քաղուածներ, որ գաղափար են տալիս նրանց ընդհանուր ոգու մասին։

Ահա թէ ինչ էր գրուած նշանաւոր յեղափոխական Մ ի խա յ լ օ վ ի մի թռուցիկի մէջ, ուղղուած „Նոր Սերնդին“.

Մեզ պէտք չէ ցար ու կայսր, Աստուծոյ օծեալ, ժառանգական անկարողութիւնը ծածկող ծիրանի... այլ պէտք է ընտրովի գիւղական տանուտէր, ուճիկով... Եթէ Ալէքսանդր II չի հասկանում այդ և չի ուզում յօժարակամ դիջուիլ անել ժողովրդին, — աւելի վատ իրեն համար... Նո՛ր սերունդ, մի՛ մոռացէք, որ մենք գլխաւորապէս ձեզ ենք դիմում, ձեր մէջ ենք տեսնում մարդիկ, որոնք ընդունակ են զոհաբերել իրենց անձնական շահերը երկրի բարօրութեան... Մենք կուզենք, որ Հողը պատկանէ երկրին և ոչ անձին, որ իւրաքանչիւր համայնք ունենայ իր հողաբաժինը. մենք կուզենք պահպանել համայնական հողատիրութիւնը...

Մի այլ թռուցիկի մէջ գրուած է.

Հողը պատկանում է ուրիշ ոչ ոքի, այլ միայն ժողովր-

դին... Նրան յայտարարել են ապատութիւն. բայց այդ ազատութիւնը խօսքով է միայն և ոչ գործով... Ժողովուրդը լսում է գեներալներին ու չինովնիկներին, բայց չի իմանում, թէ այդ ի՞նչ ազատութիւն է, առանց հողի և չինովնիկների ու կալուածատէրերի հարստահարութեան տակ *)...

Ա՛յդ երբորդ թուղթիկի մէջ յեղափոխականները հաժոռում են ժողովրդին, որ ցարը խաբել է նրան, որ „ազատարար“ մանիֆեստից յետոյ ուուս գիւղացիները գտնվում են աւելի ծանր գերութեան. ապա բացատրում են գիւղացիներին, թէ ինչ է ճշմարիտ ազատութիւնը, օրինակ են բերում Ֆրանսիան և Անգլիան, ուր ժողովուրդն է կառավարում երկիրը, ընտրում ու հեռացնում է թագաւորներին և այլն։ Ի վերջոյ յորդորում են ուուս ժողովրդին՝ գաղտնի կազմակերպել, պատրաստել ու պատրաստել, մինչև որ կը հնչէ ընդհանուր ապստամբութեան ազդանշանը։

Այդ վերջին թուղթիկը վերագրեց Չերնիշեվսկիին։ Հարցաքննութեան ժամանակ, սակայն պարզ էր ամենքի համար, որ „նիհիլիստական“ այդ ամբողջ ագիտացիայի հոգին նա էր — Նիկոլայ Չերնիշեվսկի։ 1862-ին նա ձերբակալուեց, 2 տարի պահուեց նախնական քանտարկութեան մէջ, ապա դատապարտուեց տաժանակիր աշխատանքի և քշուեց Սիբիր։ Քանտի մէջ գրեց նա իր նշանաւոր սոցիալիստական վէպը. „Ի՞նչ անել“, որ տասնեակ տարիների ընթացքում ուուս մտաւորական երիտասարդութեան աւետարանն եղաւ։

Այնուհետև սկսւում է այդ մեծ մարդու համար տառապանքի ու խաչելութեան մի սոսկալի շրջան։ Կատորգայի (տաժանակիր աշխատանք) եօթ տարին լրացնելուց յետոյ՝ Չերնիշեվսկի աքսորուեց Եակուտեան նահանգի ամենահիւսիսային և անմարդաբնակ գաւառներից մինը

*) Տուն, Ուուս. Յեղ. Շարժման պատմութիւն էջ 38—39։

— Վ ի լ ի ւ յ ա կ, ուր ձնաց երկար տարիներ վայրենի եակուտների հետ, մի կատարեալ մտաւոր անապատուած, միշտապէս ժանդարմական հսկողութեան տակ։ Ռուսական, գուցէ և ամբողջ համաշխարհային յեղափոխական տարեգրութեան մէջ դժուար է գտնել մի այլ օրինակ այնպիսի աղեխարշ նահատակութեան, որին ենթարկուեց այդ մեծ հանճարը Ալէքսանդր II-ի ազատամիտ կուսակալութեան ձեռքով։ Քսան տարի շարունակ ապրեց նա այդ անօրինակ պայմաններում, կտրուած իր ընտանիքից և ամբողջ լուսաւոր աշխարհից, կենդանի թաղուած Սիբիրեան ձիւներում։ Փորձեց յարաբերութիւն հաստատել եակուտների հետ, բայց — ապարդիւն... Առողջութեան հետ բայքայուեց աստիճանաբար՝ ուղեղը։ 1889-ին ազատեցին նրան, բայց արդէն կատարեալ աւերակ էր, թէ ֆիզիքապէս և թէ հոգեպէս։ 1880-ին մեռաւ Աստրախանի մէջ—և այդպիսով ընդմիշտ չքացաւ այն հսկայ դէմքը, որի ահաւոր ուրուականը այնքան տարիներ դողացրել էր Ռուսաստանի վեհապետներին։ Չերնիշեվսկիի կեանքը, նրա ցաւոտ արտասուեցնող նամակները սիբիրեան իր ձիւնեղէն գերեզմանից՝ մի յաւիտենական ու ցնցող մեղադրագիր են բռնապետութեան անհոգի դահիճների դէմ...

VII

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ

Italiam! Italiam!...

Virgilius

Ալճիէրի եւ բռնակալութեան պրօբլեմը. — Ֆրանսիական Յեղափոխութեան ազդեցութիւնը. — Յոյսեր եւ յուսախաբութիւններ. — Կարբոնարիզմ. — Իտալիան աւստրիական լծի տակ. — Յեղափոխական գրականութիւն. — Մանձինի. — Դաւեր եւ խրտումներ. — Պիէմոնտի դերը. — Կաւուր եւ Նապոլէօն III. — Ֆրանս-իտալական դաշնակցութիւն եւ պատերազմ. — Վարիբալդի. — Թափառումներ եւ արկածներ. — Հազարի արշաւանքը. — Վենետիկ եւ Հռոմ. — Կապրէրա. —

Իտալիա... գոչե՛նք մենք ևս Վիրգիլիոսի հետ՝ լի հիացմունքով ու երախտագիտութեամբ դէպի այն երկիրը, որ հինաւուրց ու փառքեամ մի քաղաքակրթութեան որրանն է, արուեստի ու գրականութեան մեծահուչակ հայրենիքը, ուր ամեն մի քայլափոխում դուք զարնւում էք անցեալի շքեղապանծ կոթողներին, ուր աւերակներն իսկ այնքա՛ն խօսուն են, գեղեցիկ ու կախարդիչ, ուր բանաստեղծը, փիլիսոփան, վիպասանը, հնախոյզը, ընկերաբանը՝ գտնում են մի անապատ աղ-

բիւր ներշնչուժի ու խանդավառութեան, մի հսկայ շռեմարան ամեն տեսակ գանձերի—իմացական և նիւթական—մի ամբողջ ծով տպաւորութիւնների, յոյզերի ու խոհերի...

Գուցե ոչ մի այլ հայրենիք Եւրոպայում չի ճաշակել օտար լուծն ու տառապանքը այնքան խոշոր չափերով, բայց և գուցե ոչ մի ուրիշ հայրենիք չի ունեցել այնքան չքնաղ դիւցազնամարտ, այնքան վսեմ դրւագներ ազգային վերածնութեան, այնքան շքեղ ռահվիրաներ, նահատակներ և հերոսներ... Ալֆիէրին դեռ մոլեգնում է ազատասէր մարդկութեան ականջներին, յորդորելով բնաջինջ անել բոլոր թագակիր գահիճներին, Արբօնարիզմը դեռ նիւթում է ստորերկրեայ նկուղների մէջ իր դժոխային դաւերը Մաձինին, Դաւադրութեան և Տերրօրի յաւիտենական ոգին, դեռ իշխում է կարմիր ըմբոստների աներևոյթ դարաններում։ Իսկ Գարիբալդին — դեռ համաշխարհային, լեգենդական Զիւաւորն է, ազատութեան ու կուի անզուգական ասպետը, խնկարկւած և գուրգուրւած երկրագնդի բոլոր ծայրերում, — Ասպետը, որին ոչ ոք չի հաւասարել առաքելական վեհութեամբ, ապստամբական թուիչքների յանդգնութեամբ ու մեծութեամբ, և որ այսօր էլ Ջանիկօլօի բլրակից, ուր կանգնած է իր հոյակապ յուշարձանը, դեռ հմայում է, հիպնօզում, քաջալերում բոլոր ըմբոստ հայրենիքների առաջամարտիկ հերոսներին...

Թողքը բռնութեան դէմ առանձնապէս կատաղի է, երբ բռնաւորն ու իշխող ցեղը օտար են, դրսէն ղօռով ներմուծւած, հարկադրւած։ Իտալիան ամենամեծն է և ամենակիրթը այն երկիրներից, ուր վաղուց, դարերից ի վեր բոյն էին դրել այդ օտար բռնաւորները։

եւ Իտալիայում ամենից շուտ ու մի ահաւոր մոլեգնութեամբ բորբոքեց կուիւը այդ օտար լծի դէմ։ Մի ազգ, որ երբեմն իշխել էր տիեզերքի վրայ, որ տեւել էր աշխարհին գեղարուեստի ու գրականութեան վիթխարի կոթողները — այն ժամանակ երբ գրեթէ ողջ Եւրոպան թաղուած էր տգիտութեան ու բարբարոսութեան մշուշի տակ — այժմ այդ ազգը յօշոտել էին մի շարք օտար վեհապետներ, բաժանել էին իտալական հարթնիքը իրարից անկախ նահանգների և իւրաքանչիւրը կառավարում էր իր նահանգը միահեծան դեսպօտի պէս, ժտրակով ու խարազանով։ „Ոչ մի կապ այդ անջատուած իտալական իշխանութիւնների միջև — Սիցիլիա, Սարդինիա, Կորսիկա, Տօսկանիա, Եկեղեցական պետութիւն, Լոմբարդօ-Վենետիկ, Պիէմոնտ, Մոնակօ, Սան-Մարտինօ, Պարմա, Մոդենա եւայլն — իւրաքանչիւրը կառավարում էր իր սեփական օրէնքներով, իւրաքանչիւրի վեհապետը սահմանում էր տուրքեր, ընդլայնում էր կամ սխմում առեւտուրը, կազմակերպում բանակը, ինչպէս իրեն հաճելի էր... Դա մի կատարեալ անդամահատումն էր, որի տխուր հետեւանքները ակներև էին. այդ բոլոր նահանգները օտար էին մին միւսի համար, օտարացած, խորթացած էին իրարից՝ մանաւանդ հիւսիսային և հարաւային Իտալիան. ասես տարբեր ցեղեր էին, տարբեր օրէնսդրութիւններ և վարչութիւններ, ոչ մի խրախոյս առեւտրի համար, ոչ մի գիտակցութիւն ընդհանուր շահի, անհամար խոչընդոտներ — մաքսային ևլն — գանագան նահանգների միջև, խոչընդոտներ ամենամանրամաժեշտ ապրանքների արտահանութեան ու ներմուծման գէմ“ եւայլն *)։

Այդպիսի տխուր պատկեր էր ներկայացնում Իտա-

---

*) *Mario Menghini, La Giovine Italia.*

լիան՝ մի շարք տիրանների իշխանութեան տակ։ „Ամենաընդարձակ իտալական պետութիւնն էր Նապոլի ու Սիցիլիայի իշխանութիւնը, որ ունէր մօտ 6 միլիոն ազգաբնակութիւն։ Այդ գժբախտ երկիրները աներևակայելի չափերով կեղեքւում էին սպանիական տիրապետութեան տակ։ Իշխողները ծծում էին հպատակ ժողովրդին՝ առանց բնաւ հոգալու նրա բարեկեցութեան մասին։ Երբ 18-րդ դարի սկզբում սպանիացիք հարկադրուած էին թողնել Նապոլն ու Սիցիլիան, նրանք թողին այդ երկիրները առանց ոևէ ճարտարարուեստի, առանց առևտրի ու հաղորդակցութեան ճամբաների։ կարճատև աւստրիական միապետութիւնից յետոյ՝ հաստատուեց այնտեղ ֆրանսիական Բուրբոնների նոր իշխանատոհմը... Սիցիլիայում — որ ամենէն յետամնացն էր, կտրուած բոլորովին եւրոպական քաղաքակրթութիւնից — 1,200,000 ազգաբնակութիւնից գրեթէ 800,000-ը ճորտեր էին խոշոր հողատէրերի ձեռքում. կային դրա հետ 63,000 քահանաներ, աբեղաներ և կուսաններ... Ժամանակ առ ժամանակ ապստամբում էր տգէտ ու սովալուկ ժողովուրդը — ինչպէս, օրինակ, 1773-ին — սակայն իշխանութիւնը դիւրութեամբ հանդարտեցնում էր նրան“ *)...

Վրէժն ու թոյնը ամբողջ դարերով էին կուտակւել այդ մեծ ժողովրդի ծոցում,— վրէժն ու թոյնը ոչ թէ անբան ու անգիտակ ստրկի, ոչ թէ իներտ ու որոճող մարդ-գրաստի, այլ հպարտ, գիտակից հայրենասէր էակների մէջ։ Այդպէս էր իտալական մտաւորականութիւնը։ Այդպէս էր թուով չնչին, բայց արտով մեծ՝ յեղափոխական փոքրամասնութիւնը։ Այդ-

*) *Pietro Orsi, Das Moderne Italien.*

պիսի պարագաներում հայրենիքը ժի հրաբուխ է, որ վաղ թէ ուշ պիտի ժայթքի սասանեցուցիչ որոտումներով։ Այդպիսի պարագաներում ապստամբական քարոզը չափ, սահման չի ճանաչում. կրակը արծարծւում է ամեհի չափերով, ատելութիւնը ճնշող միրապետութեան դէմ շղթայազերծւում է անողոք և աւերիչ, խօլական և վայրենի։ Իտալացի յեղափոխականները—գուցէ աւելի հին, քան ֆրանսիականները—աւել են մեզ, բոլոր մեծ ու փոքր ազգերին, որոնք կռւել են և դեռ կռւում են օտար լուծերի դէմ—աւել են, կարելի է ասել, յեղափոխութեան կլասսիկ հաւատամքը՝ դաժան, արիւնալի և արհաւրալի։ Տերրօրի և քաղաքական սպանութեան գաղափարը Իտալիայում էր, որ արծարծւեց, դեռ Ֆրանսիական Յեղափոխութիւնից առաջ։ Գաղտնի, խորհրդաւոր ընկերութիւնները այնտեղ է, որ ստացան ամենամռայլ գունաւորումը (կարբօնարի՛զմ)։ Արեան ու վառօդի սրբազան հիմնը այնտեղ է, որ երգւեց ամենամոլեգին շեշտերով։ Դաւադրական տենդը, ժակօբինեան հաւատոյ հանգանակը, անձնուրացութեան և կամաւոր նահատակութեան բնազդը, հայրենիքի ու ազատութեան խանդավառ պաշտամունքը և թունաւոր ատելութիւնը դէպի Օտարն ու նրա լուծը, դէպի ճնշումն ու բռնութիւնը,—այդ բոլորը մի հզօր ու ահարկու սլացք առաւ Իտալիայի յեղափոխական դպրոցի մէջ...

„*Cacciar i stranieri!*“ — „Դո՜ւրս քշել օտարներին“ — այդ ճիչը լսւում էր Իտալիայում դեռ պետրարկաի *) օրերից, նա եղաւ Մաձինիի մշանջենական կոչը և նա դարձաւ յետագայում կարգախօս բոլոր

---

*) Իտալ. հռչակաւոր բանաստեղծ, ծն. 1304 թ.։

տրուկ, օտարահպատակ ազգերի յեղափոխական տարրերի համար։

Դո՛ւրս քշել օտարին և ստեղծել ազատ, անկախ հայրենի կառավարութիւն, ըստ կարելւոյն դեմոկրատիկ, ոամկավար հիմերի վրայ, ի գործ դնել ամեն միջոց՝ նպատակին հասնելու համար, — այսպէս եղաւ նշանաբանը իտալացի յեղափոխականների և ազգային նշանաւոր գրողների ու հրապարակագիրների։

1777-ին լոյս է տեսնում Ալֆիէրիի *) ցնցող գըրուածքը բռնակալութեան մասին — *Della Tirannide*. Ազդած էլ իր հայրենակից Մ ա կ ե ա վ է լ ի ց **), բայց սրա հակադիր բևեռն էր։ Մինչ Մակեավէլլի փաստում ու դրատում է միահեծան, ինքնակալ բռնապետութիւնը, Ալֆիէրի՝ ազատ ոգու մի մոլեգին թռիչքով ծառանում է բռնաւորի, միապետի իշխանութեան դէմ, անհաշտ կռիւ է յայտարարում նրան և նոյնիսկ ջատագովում է քաղաքական սպանութիւնը, ուրիշ խօսքով՝ արքայասպանութիւնը։ Այդ սարսափելի քարոզները հնչում էին Ֆրանսիական Յեղափոխութիւնից 12—15 տարի առաջ։ 16 տարի յետոյ Պարիզի մէջ պիտի գլխատուէր ժողովրդական դատի որոշումով՝ այդ բացարձակ միապետութեան մի տիպարներկայացուցիչը — Լուդովիկոս XVI։ Հարկաւ, Ֆրան-

---

*) *Vittorio Alfieri*, իտալ. յայտնի թատերգակ (1749 թ. — 1803)։

**) *Niccolo Machiavelli*, իտալ. աշխարհահռչակ պատմաբան, որ 1515-ին հրատարակած „*Il Principe*“ գրուածքի մէջ հիմնաւորում ու ներբողում էր բացարձակ, միահեծան թագաւորի սկզբունքը, նրա մէջ միայն գտնելով դարմանը Իտալիայի վէրքերի և միջոցը նրա վերածնութեան։

սիացի յեղափոխականները չէին ազդած Ալֆիէրիից, ընդհակառակը, այդ վերջինն էր հաւանականօրէն ներշնչած ֆրանսիական էնցիկլօպէդիստների, մասնաւորապէս Ռուսսօի, քաղաքական-ընկերաբանական գրուածքներով։ Բայց ուշագրաւ է իտալացի յեղափոխական գրողի ոճն ու ոգին—աւելի բուռն ու մոլեգնոտ, աւելի անհաշտ ու արմատական։

Նա վերլուծում է բռնակալութեան սկզբունքը, նրա էութիւնը։ Այդ սկզբունքը միշտ չար է, անբնական, հակամարդկային, անկախ բռնաւորի անձնաւորութիւնից, նրա լաւ կամ վատ յատկութիւնից։ Լինի դեսպօտը չար կամ բարի—նրա կառավարութիւնը միշտ բռտճելի է ու աղետալի, քանի որ մարդկանց, հազարաւոր ու միլիօնաւոր հպատակների ճակատագիրը կախուած է միահեծանի քմահաճոյքից... Բռնաւորն ինքն է, որ կարող է ստեղծել, փոփոխել, բանդել օրէնքները... Դա մի սարսափելի ոյժ է, որ անսահմանօրէն և անպատիժօրէն վնասելու կարողութիւն ունի.. Սարսափը միակ պատուանդանն է բռնակալական այդ չարաշուք կառուցուածքի, սարսափը այն միակ կապն է, որ շղթայում է բոլոր հպատակներին բռնաւորի ոտքերի տակ... Ծողովուրդը, որ հանդուրժում է մի այդպիսի բռնակալութեան, ոչ այլ ինչ է, բայց եթէ ոչխարների մի զազիր հօտ (*vile branco di pecore* *)։

„Բռնակալութեան“ պրօբլեմը դառնում է առանցքը Ալֆիէրիի քաղաքական խոհերի։ Բռնակալութեան կատեգօրիայի մէջ նա մտցնում է և պապութիւնը, որին ջերմ հակառակորդ են եղել գրեթէ բոլոր հին ու նոր իտալացի յեղափոխական գրողները։ Բռնակալութիւնը, ասում է Ալֆիէրի, սահմանել են յօժարակամ

---

*) *Vittorio Alfieri, Della Tirannide.*

իրենք զանգւածները և եթէ նրանք կամենան, կարող են վերստին բնաջինջ անել ամեն բռնութիւն։ Բայց ամենից առաջ այդ զանգւածները պէտք է զգան, գիտակցեն այդ բռնութեան ճնշող, աղէտաւոր բնոյթը։

Շկայ կուիւ առանց զոհողութեան։ Բռնակալութիւնը կործանող պատերազմի մէջ պէտք է գրկել **նահատակութեան** ծանր խաչը։ Եւ Ալֆիէրի ոգևորւած ներբողում է նահատակութիւնը, որ „երբէք ապարդիւն չի անցնում“, ներբողում է ինքնայորդոր, յօժարակամ մահը, որ հազար անգամ գերադասելի է ստրկական գոյութիւնից։ Իւրաքանչիւր նահատակ իր վսեմ օրինակով ցնցում է ուրիշներին, ցանում է սերմերը ապագայ ազատաբեր հունձերի համար...

Ազատութեան մի մոլեռանդ տենդով համակւած՝ Իտալիայի մեծանուն ողբերգակը կսկծում էր, գառնապէս գանգատւում, որ իր ժամանակի սերունդը մանր է և տափակ, որ նա չի արտադրում հին Հռօմի ու Յունաստանի պէս հերոսներ... Ալֆիէրի իր թատերական գլուխգործքների մէջ ոգեկոչում է այդ հերոսներին՝ խթանելու, արթնացնելու համար իր ժամանակի թմրած երիտասարդութիւնը։

Բռնակալութեան պատուհասը և ազատութեան սէրը բանաստեղծ դարձրին մի այլ նշանաւոր իտալացու — Ֆօսկօլօին *)։ Նա էլ՝ Ալֆիէրիի պէս կրքոտ ու ցասկոտ, բուռն, մարտական խառնւածքի տէր, ատող կղերի ու բռնապետութեան, համոզումով հանրապետական։ Նա էլ ցաւով ու ցասումով էր դիտում զանգւածների տգէտ ու խեղճ վիճակը և անդունդը մար-

---

*) *Ugo Foscolo* 1777 թ.—1827։

ւորականութեան ու ժողովրդի միջև։ Նա էլ երգում ու փառաբանում է իր գրւածքների մէջ Հայրենիքի սէրը, խթանում է ազգային ինքնագիտակցութիւնը։

***

Ֆրանսիական յեղափոխութիւնն էր, ասկայն, որ ուժգին զարկ տւեց Իտալիայի վերազարթուժին, ինչպէս ամբողջ մտածող և զգացող երկրագնդին։ Ֆրանսիական յեղափոխութիւնը ոչ միայն իր ազատարար գաղափարներով էր, որ պատրաստեց գետինը իտալական գալոց շարժումների, այլ և այն տնտեսական պայմաններով, որ նա ստեղծեց մասնաւորապէս Իտալիոյ մէջ։

Ի՞նչ էր Իտալիան երկար դարերի ընթացքում, Հռոմէական կայսրութեան (արևմտեանի) անկումից ի վեր։ Մի դժբախտ, քաօսային, բաժան-բաժան գոյութիւն, մի տեսակ եւրոպական Հայաստան, մատնւած գիշատիչ դրացիների պարբերական խուժումներին, ենթակայ մերթ գերման, մերթ Ֆրանսիական ու սպանիական, մերթ աւստրիական տիրապետութեան. կային և մի շարք փոքրիկ, անկախ Հանրապետութիւններ. բայց Ամբողջը մի չտեսնւած քաօս էր, առանց ազգային գիտակցութեան ոևէ հետքի, ներքին անդուլ ու արիւնահեղ մրցումներով ու կռիւներով, որոնց մի խոշոր դրւագը իր կարմիր զարհուրանքներով լցրել է դժոխաշունչ էջերը Դանտէի „Աստուածային Կատակ“ի...

Անտագոնիզմը տիրողի և հպատակի միջև բորբոքեց և հետզհետէ աւելի և աւելի սուր բնոյթ առաւ այն ժամանակից, երբ հին, կուլտուրական ժողովրդի մէջ սկսեց արթնանալ ազգային գիտակցութիւնը։ Մինչ այդ՝ Իտալիոյ ժողովրդային զանգւածները և անգամ վերին, մասւորական խաւերը ընտելացել ու համակերպել

էին իրենց վիճակին, Մի ժամանակ նոյնիսկ — ասում է Գերվինուս — աւստրիական տիրապետութիւնը Լոմբարդիայում, մասնաւորապէս Վենետիկում, համեմատաբար շատ մեղմ էր և կը նպաստէր որոշ չափով իտալացիների նիւթական ու մտաւոր առաջադիմութեան։ Դա մի տեսակ ոսկէ դար էր, հաշտ, միաբան ապրում էին աւստրիացիք և իտալացիք, ոչ մի կասկած ու անտագոնիզմ իշխողի ու հպատակի միջև. իտալացի պետական մարդիկ յարգի էին Վիեննայում և փոխադարձաբար աւստրիացիները Միլանում. իտալական երաժշտութիւնը անցնում էր Վիեննա, գրականութեան կենտրօն էր դառնում Միլանը... և այդպիսով անուղղակի նպաստաւորւում էր իտալական ազգայնութիւնը... Ոչ մի ըմբոստացում. ոչ մի անջատական ձգտում *)...

Բայց ահա վրայ հասաւ Ֆրանսիական Յեղափոխութիւնը և նրա հետ ազատական, հանրապետական գաղափարների յորձանքը դէպի Իտալիա... Նապօլէօնեան բանակների միջոցով իսկ... Սկսւեց հայրենասիրական ուժգին խմորումը Ապենինեան թերակղզու մէջ և դրա հետ միասին փոխւեց նաև աւստրիական կառավարութեան սիստեմը... Տիրեցին բացառիկ օրէնքները, ճնշումն ու հալածանքը։ Դա նոյն բնական, տրամաբանական volte-face-ն է, որ արել են հայկական ճակատագրի վերաբերմամբ Թիւրքիան և Ռուսաստանը։ Թէ մէկ և թէ միւս բռնապետական կայսրութեան մէջ հայութիւնը ունեցել է իր այսպէս կոչւած „ոսկէ շրջանը“, վայելել է մի որոշ ժամանակ տիրող, օտար ուժերի հովանաւորութիւնը, զարկ է տւել իր ազգային կուլտուրային, իր դպրոցին ու գրականութեան... Շու-

*) *Gervinus, Geschichte des XIX Jahrhunderts, I B.* էջ 446—448.

տով, սակայն, վրայ է հասել ռեակցիան, իշխողը նորէն փականք է դրել ազատախոս լեզուներին, հէնց որ հպատակը մտել է ազգային վերազարթուժի „վտանգաւոր" ճանապարհը... Դառնանք Իտալիային։

Արհեստան իշխանների հովանիի տակ ազնւականութիւնն ու կղերը տիրում էին ամենուրեք երկրի մէջ, ինչպէս Ֆրանսիայում, Մեծ Յեղափոխութիւնից առաջ։ Բայց XVIII-րդ դարի վերջերում առևտուրն ու ճարտարարուեստը թափ առան հիւսիսային Իտալիայի մէջ, դրա հետ միասին սկսեց արագօրէն զարգանալ պատմական երրորդ դասակարգը, բուրժուազիան, որին և վիճակուած էր գլուխ կանգնել նորաբողբոջ ազգային շարժման։ Ֆրանսիական նոր տիրապետութիւնն էլ աւելի ևս նպաստաւորեց Իտալիայի տնտեսական և կուլտուրական յառաջխաղացութիւնը։ Ինչպէս յայտնի է, Ֆրանսիական զօրքերը Բօնապարտի առաջնորդութեամբ եկան գրաւեցին նաև Ափենինեան թերակղզին։ Մաքսային ու այլ խոչընդոտները վերացան, երկրագործութիւնը, առևտուրն ու արհեստները անկաշկանդ թռիչք առան, բացուեցին հաղորդակցութեան ճամբաները, խրախուսուեցին գիտութիւնն ու արուեստը... Ցիրից միաժամանակ յարաբերական ապահովութիւն կեանքի ու գոյքի։ Այդ բոլորը, բնականաբար, նպաստում էր ազգային մի խութեան, հարթում էր տարբերութիւնները և մեղմում անտագոնիզմը միևնոյն հայրենիքի այլ և այլ հատուածների միջև։ Նոյն էւօլիւցիան կրել է և նորագոյն Գերմանիան։

Ամեց աստիճանաբար իտալական բուրժուազիայի հարստութիւնն ու ազդեցութիւնը, ամեց հետզհետէ և նրա իղձերի թարգման գրողների ու հրապարակագիրների փաղանգը, որ անդուլ արծարծում էր ժողովրդի, երիտասարդութեան մէջ հայրենասիրութեան կրակը,

ազգային անկախութեան գաղափարը... Ամեն բան կար— հայրենիք, լեզու, գրականութիւն, պատմական մեծաշուք անցեալ,—էկար միայն անկախութիւնը։ Պէ՞տք էր նւաճել այն։ Պէտք էր պատրաստել ժողովուրդը զանգւածային ապստամբութեան համար, „դո՛ւրս քշել օտարներին, թօթափել տերկութեան լուծը հին, փառապանծ հայրենիքի պարանոցից և ստեղծել նոր Իտալիան՝ առաւժանադրութեան ու ազատութեան նշանաբանով“...

Ֆրանսիական, նապօլէօնեան տիրապետութիւնը նոր, թարմ հոսանք բերելով, մի վայրկեան ոգևորեց իտալացի հայրենասէրներին։ Ֆրանսիական զօրքերի հետ ասես մի նոր, զովարար, սթափեցուցիչ հով էր փչում Ալպերից, որ կազդուրում ու խրախուսում էր ազատասէնչ սրտերը։ Մի մեծ յոյս էր ճառագայթում երկրի վրայ, իտալացի հայրենասէրներին թւում էր, թէ հասել է ժամը, երբ պիտի խորտակուին տերկութեան շղթաները և պիտի իրագործուի Իտալական Միութիւնը Մեծ Յեղափոխութեան զօրքերի աջակցութեամբ։

Ցնծութեամբ դիմաւորեց ժողովուրդը բօնապարտեան լէգէօններին, մինչդեռ Իտալիայի տէրերը աչ ու դողով հաւակւեցին։ Եղան մի շարք ժողովրդային խլրտումներ։ Բօնապարտը քշեց բազմաթիւ իշխաններին, հաստատեց շատ տեղերում հանրապետական կառավարութիւններ, տապալեց վենետիկում ու ջենովայում հին, օլիգարշիկ, աղնւապետական հանրապետութիւնը և սահմանեց նրանց տեղը աւելի ռամկավար, հանրապետական մի ռէժիմ։ Ասացինք արդէն, որ ֆրանսիացիների մուտքը գգալի յեղաշրջումն առաջ բերեց նաև տնտեսական-կուլտուրական կեանքի մէջ։ Վերացան ֆէօդալական կապանքները, գրաւեցին վանքապատկան հսկայ հողերը, ճամբաներ ու կրանգքներ շինեցին, առևտուրը

ազատ շունչ առաւ և դրա շնորհիւ սկսեց բարձրանալ նոր դասակարգը, աշխատասէր և ձեռնհաս բուրժուազիան, որ իր ձեռքն առաւ գրաված կղերական հողերի մի խոշոր մասը։

Սակայն, մեդալի միւս կողմը կարւ երկար չտևեց նապօլէօնեան դեմօկրատիզմի իդիլլիան։ Երկիրը մատնուեց շուտով նոր հրամանատարների կամայականութեան։ Ռամկավար հանրապետութիւնները չքացան, քանի որ նրանց ստեղծողը ինքն արդէն հռչակուեց շուտով միահեծան թագաւոր (1804-ին)։ Չքացան յեղափոխական ֆրազները, որ նապօլէօն սիրով արտասանում էր իր արշաւների մեծ ճամբու վրայ և նրանց տեղը հռչակուեցին տիրանների սովորական հրահանգները՝ „կարգ, հնազանդութիւն, անդորրութիւն“... Ամբողջ Ապենինեան թերակղզին ենթակայ էր այժմ պարիզեան Դեսպօտի և նրա բազմաթիւ տեղապահների քմահաճոյքին։

Ցուսախաբութիւնը մեծ եղաւ իտալացի հայրենասէրների շրջաններում։ Տարիները անցնում էին անձկալի սպասումի մէջ։ Ազգային Միութիւնն ու Անկախութիւնը չէին գալիս։ Նապօլէօն ընկաւ, գումարուեց Վիեննայի պատմական դեսպանաժողովը, գլուխ եկաւ տխրահռչակ „Սրբազան Դաշնակցութիւնը“, Եւրոպայի քարտէզը վերստին յեղաշրջուեց, Իտալիան վերստին ենթարկուեց լծի — աւելի ծանր, աւելի բիրտ ու անհանդուրժելի։ Նրա բախտը դրուած էր այժմ Մեթերնիխի ոտքերի տակ *)։ Յեղափոխութիւն, ազգերի վերածնութիւն ու անկախութիւն — բոլորը ենթարկուեց մի զարհուրելի օստրակիզմի, հակայեղափոխական, բռնապետական ուրագանը փչեց կատաղութեամբ բովանդակ Եւրոպայի,

*) Տես գրքիս նախորդ էջերը։

ժանաւորապէս Իտալիայի վրայ, որի ամբողջ հիւսիսային մասը ընկաւ վերստին աւստրիական տիրապետութեան տակ։

Սակայն, *Risorgimento*-ի հերոսները, իտալական վերածնութեան ռահվիրաները չէին վհատուում Հայրենասիրական տենդը աւելի էր արծարծւում բռնակալութեան կռած հսկայական դագաղի մէջ. բանաստեղծները ողբում էին և յուսադրում, ներբողում էին հայրենիքի հին փառքերը և ազգ արցունք թափում ներկայի վրայ...

Ի՛նչ աղեկտուր շեշտերով էր ողբում հայրենիքի անկեալ վիճակը մեծն Լէօպարդի, 1818-ին գրած իր ծանօթ ոտանաւորի մէջ—*All' Italia.*

O patria mia, vedo le mura e gli archi
E le colonne e i simulacri e l'erme
Torri degli avi nostri,
Ma la gloria non vedo,
Non vedo il lauro e il ferro ond'eran carchi
I nostri padri antichi. Or fatta inerme,
Nuda la fronte e nudo il petto mostri.
Oimè, quante ferite,
Che lividor, che sangue! Oh qual ti veggio,
Formosissima donna! Io chiedo al cielo
Et al mondo: dite, dite
Chi la ridusse a tale?
Sparte le chiome e senza velo
Siede in terra negletta et sconsolata
Nascondendo la faccia
Tra le ginocchia e piange.

Ո՛վ հայրենիք, տեսնում եմ մեր նախնիքների
պատիւները և կռնաձրները, աստուշաններ և կոթողներ,

Մենարաններ ու աշտարակներ, բայց չեմ տեսնում
Նրանց փառքեր
Նախնեաց սուր ու դափնիներ.
Կանգնած ես դու այժմ անզէն,
Մերկ ճակատով ու մերկ կուրծքով
Ասա՛ղ... քանի՛ վէրքեր, որքան արիւն,
Ի՞նչ օրի ես, ո՛վ հինաւուրց գեղեցկուհի.
Երկի՛նք, երկի՛ր, ասացէ՛ք ինձ,
Ո՞վ նրան հասցրեց այդ օրին...
Շղթայակապ ու հերարձակ,
Սգաւոր և անյարդար
Նստած է նա գետնի վրայ
Եւ գլուխը ծնկների մէջ
Լալիս է անմխիթար...

***

Սկսւեց բուռն, „ստորերկրեայ“, գաւազրական գործունէութիւնը կարբոնարիզմը բեմ նետւեց— գաղտնի, աներևոյթ խորշերում—ահ ու սարսափ նետելով Մետերնիխներին և բոլոր նրանց, որոնք յաւակնում էին պահել աշխարհը միջնադարեան խաւարակուռ դժոխքի մէջ։

Ի՞նչ էր կարբոնարիզմը։ Նախընթաց գլուխների մէջ, խօսելով եւրոպական գաղտնի ընկերութիւնների մասին, յաճախ ենք յիշել կարբոնարիներին։ Հարկ է այժմ նկարագրել մանրամասնօրէն այդ վերին աստիճանի ուշագրաւ աղանդը, որ մի ժամանակ ահաբեկել էր Եւրոպայի հրամանատարներին։

Իտալիան պէտք է համարել կարբոնարիզմի հայրենիք, թէև ոմանք Ֆրանսիայի մէջ են փնտրում նրա

ծագումը,—ֆրանսիական միջնադարում, երբ այս ու այն տեղ հիմնել էին այսպէս կոչուած փ ա յ տ ա հ ա տ-ների (*bücherons*) գաղտնի ընկերութիւնները։ Նրանք դաւանում էին դեմօկրատիկ, ռամկավարական սկզբունք-ներ, պահանջում էին, որ ժողովուրդը ինքը վարէ իր սեփական գործերը. պահանջում էին հաւասարութիւն եւայլն։ Յիսուսը պատւաւոր նախագահ էր այդ ընկերութիւնների, որոնց նշանաբանն էր՝ Յոյս և Հաւատ։

Կարբոնարի, Կարբոնայօ (*carbonaio*) իտալերէն նշա-նակում է ա ծ խ ա գ ո ր ծ, որ հեռու չէ փ ա յ տ ա-հ ա տ ի կատեգօրիայից։ Այդպէս էին կոչւում այդ գաղտնի ընկերութիւնները, որովհետև նրանց մշտական ժամադրավայրը՝ ա ն տ ա ռ ն էր, նրանց ժողովները տեղի էին ունենում փայտահատների, ածխագործների աներևոյթ խրճիթներում։

Երբ է սկիզբ առել այդ խորհրդաւոր աղանդը իտա-լական երկնքի տակ—յայտնի չէ. գիտենք միայն, որ դարեր առաջ, երբ բռնկել էր Իտալիայում Գվելֆ-Գիբելեան հռչակաւոր պատերազմը *), վտարանդի գվելֆները գիբելիններից խուսափելու հա-մար՝ հաւաքւում էին ու խորհրդակցում հեռաւոր ան-տառների խորքերում։

---

*) Գվելֆ և Գիբելին — երկու հզօր կուսակցութիւններ էին, որոնց պայքարը ալեկոծեց և արիւնեց իտալական պատ-մութիւնը 12-րդ դարից մինչև 15-րդը, բաժանելով երկիրը երկու խոշոր ու հակամարտ հաւաքածոների։ Գիբելինները կու-զէին գերման թագաւորների տիրապետութիւնը Իտալիայում, իսկ Գվելֆները մոլեռանդ կողմնակից էին պապի և իտա-լական անկախութեան։

Սակայն XVIII դարու վերջերուն էր և XIX-ի սկզբներուժ, որ կարբոնարիզմը, իբրև գերազանցապէս քաղաքական-յեղափոխական մի աղանդ, նշանաւոր դեր խաղաց թէ Իտալիոյ և թէ ամբողջ Եւրոպայի պատմութեան մէջ։ Նպատակն էր՝ ոչնչացնել ամեն տեղ բռնակալ իշխանութիւնը և սահմանել ամենուրեք ռամկավարական կարգեր։ Նպատակին հասնելու միջոցն էր — դաւադրութիւն և կռիւ։


„Ազատութի՛ւն կամ Մա՛հ“, „Վրէ՛ժ“, „Հաւասարութիւն“, „Անկախութիւն“ և այլ դիւթիչ ու որոտուն բառերը կրկնւում էին յաճախ այդ սարսափելի աղանդաւորների մօտ, որոնց գաղտնի ատեաններըը իրենց ընդարձակ ճիւղաւորութեամբ մի ժամանակ ցանցապատել էին ամբողջ Հարաւային Իտալիան։ Հազարաւորնե՛ր էին նրանք, որ ուխտել էին բռնակալութեան ոչնչացումը, կապւել էին եղբայրական դաշինքով և երդումի սրբազան արարողութեամբ։ Մի հոյակապ ուխտ էր դա, մի հսկայ դաշնադրութիւն։ Ֆրան-Մասօնիզմին նման էր շատ կողմերով։ Կարբոնարիները նոյնպէս ունէին մի շարք ծէսեր ու էմբլէմներ, մի ահագին, խստապահանջ կանոնադրութիւն, մի ամբողջ ցերեմօնիալ։ Նրանք և ունէին իրենց սիմվոլիկ, պայմանական լեզուն, որի բառերը փոխառուած էին ածխի առևտրից։ Գաղտնի ժողովի տեղը կոչւում էր խրճիթ, իտալերէն — *baracca*, ժողովի վայրը կոչւում էր ծմակ — *Bosco*, իսկ ժողովի պայմանական անունն էր՝ վաճառք — *Vendita*։ „Մաքրել անտառը գայլերից“ — կարբոնարիզմի բառաւոով նշանակում էր ազատել երկիրը բռնակալներից։

Ընկերութեան կանոնադրութիւնը մահով էր պատժում դաւաճաններին ու մատնիչներին, մահով նաև — ուխտադրուժներին, ռէնէգատներին։ Սրբազան գործը, իբրև աջողութեան գերագոյն պայման, պահանջում էր

բացարձակ գաղտնապահութիւն և իւրաքանչիւր կարբոնարի, ընկերութեան մէջ ընդունելիս՝ երդւում էր չմատնել ոչ ոքի ընկերութեան գաղտնիքները, հնազանդել կուրօրէն ղեկավար շէֆերին, կատարել սրբութեամբ ստանձնած պարտաւորութիւնները, զոհաբերել Սուրբ գործին իր անձը և իր գոյքը, պայքարել անվհատ Հայրենիքի ու Ազատութեան համար։ Իւրաքանչիւր կարբոնարի պարտաւոր էր իր հաշւով ձեռք բերել նաև սուր ու հրացան։

Փոքր ինչ աւելի կանգ առնենք այդ զարմանալի աղանդի վրայ, որ տեղ է, կարելի է ասել, գաղտնի կազմակերպութեան կլասսիկ ձևը բոլոր երկրների մարտնչող տարրերի համար... Մեր համեստ իրականութեան մէջ ևս ծլել ու զարգացել է—երբեմն հզօր չափերով—կարբոնարիզմի թունաւոր, բայց և փրկարար ծաղիկը, զարգացել են գաղտնի կազմակերպութեան մօտաւորապէս նոյն ձևերը, նոյն „ուխտի“ հանգամանքով, նոյն երդումի արարողութեամբ, նոյն խորհրդաւոր պայմանական նշաններով, էմբլէմներով... Հայ դաւադիրը, տերրօրիստը, հայ ֆէդային — մանաւանդ շարժման սկզբներում — եղել է „կարբոնարի“, առանց երբեք այդ անունը լսած լինելու...

„Եղբայրները“ էին անւանում իրենց գաղտնի ուխտի անդամները, աւելի ճիշտ, հօրեղբօրորդի (*buona cugina*) — այդ մտերմական անունն ենք գտնում և մի շարք ուրիշ կրօնական աղանդների մէջ։ Իսրաելական կրօնական էր և կարբոնարիզմը. աւետարանի լաւագոյն առաքինութիւնները յանձնարարւում էին անդամներին, պէտք էր լինել մաքուր, ազնիւ, անխարդախ՝ կարբոնարի դառնալու համար։ Այդպէս էր պահանջում բարձրագոյն մարմինը։ Իրենց դիրքով, բնականաբար, հասարակ չէին



ԿԱՐԱՊՈՒՏԻՆՅԱՆՑ ՓՈՂՈՑԻ ՀՅՈՒՂԱՀԱՐՍՈՒՄ

կարբոնարները. կար մի յատնի երարխա, կային երեք աստիճաններ, ինչպես վաղեմի համքարական դրութեան մէջ։ Սեծամասնութիւնը աշկերտներ էին (քարգահ, *apprenti*), ապա գալիս էին վարպետները և նրանց բոլորին ղեկավարում էր Մեծ վարպետը (*Gran Maestro*)։

Ժողովատեղին ներկայացնում էր եռանկիւնի մի սենեակ, մի մութ ու խուլ քարայրի մէջ, պատած ներքուստ ամբողջապէս փայտէ ձողերով։ Նախագահում է Մեծ վարպետը։ Նա բազմած է արևելեան կողմը դրւած յատուկ աթոռի վրայ, ձախատին երկայն, կարմիր, չալմայաձև թաշկինակ, գօտիին կապած ունի մէկ կացին և մէկ գաշոյն։ Աջ ու ձախ նստած են ընտիր հոգեորներ։ Նրա առջև գետեղւած են այլ և այլ խորհրդանշաններ.— աղ, ջուր, մի խաչ, փայտերի մի կապոց, կրակ, հող, ճերմակ փշերից հիւսւած մի պսակ և այլն։ Սենեակի մէջ այլ և այլ զէնքեր։ Դրան առջև սուրը ձեռին կանգնած են երկու պահապաններ։ Աթոռները ու նստարանները պատած են կարմիր պաստառներով։

Բազմաթիւ աշկերտները նստած են երկու շարքով, նախագահի աջ ու ձախ կողմ։ Պէտք է ընտրել նրանցից նոր վարպետներ՝ ճիւղաւորելու և բազմացնելու համար Սուրբ Ուխտը։

Հանդիսաւոր է ժողովի բացումը։ Խօսում է Մեծ վարպետը, „Մեծ ընտրեալը“։ Նա բացատրում է կարբոնարիզմի խորհուրդը, նրա ծագումն ու նպատակը, բացատրում է, թէ ինչպէս բնութիւնը ծնել է մարդուն ազատ ու երջանիկ, բայց ամեն տեղ նա գտնում է շղթաների տակ, ամեն տեղ՝ „մարդը մարդուն գայլ“։ Պէտք է անում՝ կազմակերպել և փշրել այդ շղթաները։ Ապա բացատրում է կարբոնարիական սիմբոլների նշանակութիւնը։ Կռիւը դէմ է պահանջում, նահատակու-

թիւն—և խաչը նշան է այդ նահատակութեան։ Ջուրը՝ մաքրելու համար է մեր հոգիների ժանգը, աղը՝ պիտի փրկէ կարբոնարիներին՝ փճացումից, ապականութիւնից... և այլն և այլն։ Խաչը նմանապէս նշան է, որ բռնակալները պէտք է ենթարկուին խաչելութեան և փշեայ պսակը պիտի ծակոտէ նրանց յանցաւոր գլուխները *)...

Խօսում է Մեծ վարպետը և ճառը լի է խորհրդաւոր այլաբանութիւններով.

— Ժամը քանի՞ է, բարի եղբայր, հարցնում է նա ընտիրներից մէկին և վերջինը պատասխանում է.

— Բարձրապատիւ Մեծ Ընտրեալ, ահազանգը հընչում է աւեն կողմից և տալիս է իր արձագանքը մեր քարայրի խորքերում։ Ես կարծում եմ, որ դա ազդանշանն է ազատ մարդկանց ընդհանուր վերազարթումի։

— Բարի եղբայր, ժամը քանիի՞ն պիտի սկսուին մեր գաղտնի աշխատանքները.

— Կէս գիշերին, Մեծայարգ Ընտրեալ, երբ ժողովրդային զանգւածները մեր հաժախոհների ղեկավարութեամբ պիտի հաւաքուին, կազմակերպուին ու գրոհ տան բռնակալութեան դէմ։

— Եղբայրնե՛ր, դուք պահապան-հրեշտակներ մեր սպաստանի, արդեօք վստա՞հ էք, որ ոչ մի օտար մարդ չի մուտք գործել մեր շարքերը. և արդեօք ընդհանուր շարժման համար կոչւած բոլոր ղեկավար-կարբոնարիները իրենց դիրքերո՞ւմ են.

— Այո՛, Մեծայարգ Ընտրեալ, հսկիչները կատարել են ճշտութեամբ իրենց պարտքը, օտար տարրեր չկան

---

*) *Memorie sulle Società Segrete dell' Italia Meridionale.*

մեր մէջ և բոլոր ղեկավարները երդւել են նահատակւել կամ յաղթել...

Ապա նախագահը հրաւիրում է նշանաւոր հռետորներից մէկին ճառել ու բացատրել աւելի երկարօրէն կարբոնարիզմի նպատակը։ Հռետորը նկարագրում է երբեմնի ոսկէ դարը, երբ մարդիկ հնազանդւում էին միայն բնութեան օրէնքներին, պարզ էին, բարի, առաքինի. ապա նկարագրում է գեղեցիկ Աւգօնիայի (իտալական Հայրենիքի) թշւառ կացութիւնը, ժառանգած 30-ի չափ մանր ու խոշոր տիրաններից։ „Նրանց լուծը տապալելու համար է, ասում է, որ մեր պապերը հիմնել են Կարբոնարիան... Ցարագրւած աշխարհից, անկարող առայժմ հրապարակ նետւել,— ազատութիւնը փախել, ապաստանել է անտառների մէջ, թագնւել է հեռաւոր քարանձաւներում և այնտեղից սրում է իր դաշոյնը, երդւելով բնաջինջ անել Հայրենիքի բոլոր դահիճներին“...

*Ահա մի քանի հատւածներ կարբոնարիական մի ճառից, որ աւրողջապէս տպագրւած է պատմական մի վաւերագրի մէջ *).*

„Իմացէ՛ք, վերջապէս, որ մեծագործ Կարբոնարիայի նպատակն է վերադարձնել քաղաքացիներին այն ազատութիւնն ու իրաւունքները, որ բնութիւնը պարգեւել է նրանց և որ բռնութիւնը խլել է նրանցից։ Այդ նպատակին հասնելու համար՝ պէտք է մշակել առաքինութիւն, պէտք է սիրացնել բոլոր քաղաքացիներին... Ո՛վ մարդիկ, չէ՞ք լսում միթէ Ձեզ կաշկանդող շղթաների շառաչը... Թագաւորները համարում են իրենց բոլորից բարձր և կարծում են թէ իրաւունք ունին

---

*) *Memorie sulle Società segrete...*

ուրիշի արիւնը ծծելու, ուրիշներին ստրկացնելու, պատերին ու գոլքին տիրանալու, կանանց ու աղջկանց սեփականելու... Եւ այդ գժոխային արարածներին դեռ պատիւ ու մեծարանք են շռայլում... Ո՛վ, մարդկային կուրութիւն... Վրէ՞ժ է գոռում այնքան անմեղ քաղաքացիների արիւնը, օգնութի՞ւն են աղ...ղակում բանտերի մէջ հեծկլտացող հարազատները... կարբօնարիները, որ գիտեն ճշմարտութիւնն ու արդարութիւնը, որ ունին զգայուն, մարդկային սիրտ, մի օր, անշուշտ, վրէժխնդիր պիտի լինին"...

Ճառը աւարտելուց յետոյ, նախագահը բարձրաձայն արտասանում է երդման բանաձևը.

Երդւում եմ՝ առել յաւիտենօրէն բոլոր բռնակալներին ու նրանց սրբանեակներին, երդւում եմ ամեն միջոց ի գործ դնել, արիւնս անգամ չխնայել՝ նրանց բնաջինջ անելու համար... Եթէ երբ և իցէ դժբախտութիւն ունենայ դրժելու իմ երդումը, թո՛ղ որ այդ դէպքում կարբօնարիները ապանեն ինձ ամենատանջալի ձևերով, թո՛ղ խաչեն ու փշեայ պսակով զարդարեն ճակատս. թո՛ղ աղջ-աղջ յօշոտեն մարմինս, այրեն փորոտիքս և անթաղ շպրտեն մարմնիս բեկորները"...

Ամենքը միաբերան աղաղակում են,
— „երդւո՛ւմ ենք",
Եւ Մեծ Ընտրեալը փակում է նիստը այս խօսքերով.
— „Առաւած ունկնդիր է ձեզ, եղբայրներ. ահա լսւում է նրա որոտը, ձեր երդումներն ընդունած են, ժողովուրդը պատրաստ է կռւելու և նա կը տանի յաղթանակը: Վա՛յ ձեզ, եթէ դաւաճանէք ժողովրդին"...

Ահա կարբօնարիզմը XIX-րդ դարու սկզբներում, մանաւորապէս Հարաւային Իտալիայում, նա արագօրէն զարգացաւ, ճիւղաւորւեց: 1820-ին նա ար-

դէն նիւթում էր նապօլի ժողովրդային ըմբոստացումը, որով ստիպեց թագաւորին ստորագրել սահմանադրութիւն։ Քիչ յետոյ, „Սրբազան դաշնակցութեան“ հրահանգով վրայ հասաւ աւստրիական զօրքը, խեղդեց շարժումը և վերականգնեց միահեծան ռէժիմը։ Կարբոնարիզմը ժամանակաւորապէս խեղդուեց նաև պիէմոնտում ու Իտալիայի այլ վայրերի մէջ։ Բայց նա անցաւ Ալպերը և շուտով բուն գրեց Ֆրանսիայում ու այլ բռնապետական երկրներում։

Մի վայրկեան խզենք յեղափոխական շարժման էւոլիւսիոնի թելը և տեսնենք թէ ինչ էր ներկայացնում Իտալիան աւստրիական լծի տակ։ Վիեննայի վեհաժողովը տւել էր աւստրիացիներին Իտալիայի հիւսիսային մասը, ամենահարուստը և համեմատաբար ամենակրթը. իտալական հիւսիսի տէրը իրօք տէր էր ամբողջ երկրի. բոլոր միւս իշխանութիւնները քիչ թէ շատ ենթարկուած, ստորադրուած էին Աւստրիային։

Լ Ո Խ Ծ Ը.

Նոյնն էր ինչ որ Ունգարիայում ու այլ հպատակ երկրներում։ Մի տեսակ նահապետական բռնապետութեան իրաւակարգ էր, ասում է Գերվինուս, մի սիստեմ, ուր թագաւորի սանձարձակութիւններին միացած էին երկու արտօնատէր դասակարգերի — ազնուականութեան ու կղերի — նոյնքան սանձարձակ հարստահարութիւնները։ Ազնուականութիւնը ունէր իր ձեռքում երկրի հողերի մեծագոյն մասը, ինչպէս նաև պետական բարձր պաշտօնները։ Բիրտ, ձրիակեր մի դասակարգ, առանց կրթութեան ու քաղաքական դաստիարակութեան, թշնամի ժողովրդի, բարեկամ եզուիտների, երդ-

ւեալ հակառակորդ լիբերալիզմի ու ամեն տեսակ նո-
րոյթների։

Ասացինք արդէն, թէ ինչպէս մի ժամանակ, երբ տակաւին չէր բողբոջել հայրենասիրական ու յեղափո-խական շարժումը, աւստրիացիք համեմատաբար լաւ էին վարուում իրենց իտալացի հպատակների հետ և նոյնիսկ որոշ չափով նպաստում էին նրանց ազգային վերածնու-թեան։ Ուէժիմը, սակայն, հիմնականապէս փոխուեց, հէնց որ ծայր տւին Լոմբարդիայում ու Վենետիկում անկա-խութեան ձգտումները։ Ֆէօդալ-բռնապետական իրա-ւակարգը պատնէշ կանգնեց յեղափոխական խմորում-ների դէմ. դադարեց ամեն շփում արտասահմանի հետ, գրաքննութիւնն ու լրտեսութիւնը իշխեցին ամենուրեք, լրտեսութիւն—անգամ դպրոցներում, ուր ուսուցիչները աւտոմատներ էին, հլու, անձայն պաշտօնեաներ։ Ընտեղ, դպրոցի մէջ, ամենայն խնամքով մշակում էին միահե-ծան բռնապետութեան սկզբունքը, հրամայում էին մա-նուկներին՝ սիրել թագաւորին, ինչպէս իրենց հարազատ հօր, քարոզում էին, որ թագաւորը բացարձակ տէր է հպատակների գոյքի ու կեանքի, քարոզում էին հնա-զանդել նրան ստրկօրէն.

Ցիրեց „բացառիկ օրէնքը“ Իտալիայում, հալածեց իտալական գրականութիւնը, լեզուն, արգելեցին ան-գամ կլասիկ երկերը, արգելեց պրօֆէսօրներին մե-տաֆիզիկա աւանդել և կրօնական հարցեր շօշափել. բնագիտութեան դասերն անգամ ենթարկեցին կաշ-կանդումների։ Գաղանի ոստիկանութիւնը հրէշաւոր չա-փեր առաւ. աճեց կասկածն ու ատելութիւնը իշխողի ու հպատակի միջև. անխնայ հալածեց հայրենասէր երիտասարդութիւնը, մանաւանդ կարբոնարիներն ու ֆրան-մասոնները... Դա ռուսական ռէժիմն էր, նիկօլա

Լ-ի գաժան, զարհուրելի ուժիվը, որ ամեն կերպ խեղ-
գել էր ուզում ժողովրդի ինքնագիտակցութիւնը։

Կաշկանդումներ—նաև նիւթական, տնտեսական աշ-
խարհում. մաքսային ու այլ արհեստական պատնէշները
անջատում էին գաւառ-գաւառից, արգելում էին ազ-
գային կեանքի շրջանառութիւնը, անդամալուծելով
առևտուրը (Սպրանքների փոխանակութեան հետ, կաշ-
կանդում էր և մտքերի փոխանակութիւնը գրա-
կանութեան շրջանառումը, ընդհանուր լեզուի մշակու-
թիւնը, ամեն մի գաւառ իր բառբառն ունէր և գեռ
մի էնչին փոքրամասնութիւն միայն տիրում էր ընդհա-
նուր գրական լեզուին, որ Բօկկաչիօի ու Դանտէի օրերից
ի վեր հռչակած էր իբրև գերազանց ու անհրաժեշտ
գործիք Համաիտալական Միութեան)։

Հարկային սիստեմի մասին չենք էլ խօ-
սում. Արքայական պալատը բացարձակ տէր էր իր հպա-
տակների. նա ոչ միայն օրէնքներ էր սահմանում, այլ և
մանում էր կամայականօրէն հպատակների առօրեայ
կեանքի ու ժառանգութիւնների մէջ, ամեն ինչ միահե-
ծանօրէն կանոնաւորելու, տնօրինելու համար։ Ամեն բան
կենտրօնացած էր Վիեննայում—և այնտեղից մինիստր-
ները կառավարում էին, աւելի ճիշտ՝ թալանի ու աւե-
րածի մատնում հեռաւոր „նահանգները“, այնքա՛ն տարբեր
ցեղային, լեզուական ու հոգեկան առանձնայատկութիւն-
ներով։ Մինիստրներն իսկ—անկամ, անսկզբունք խաժա-
ճիկներ էին, պաշտօնէութիւնը — բիրտ, տգէտ, կաշա-
ռակեր *)...

„Մարդկային ցեղը շարժուում է անդադար դէպի
առաջ. եթէ չենք կարող յետ մղել շարժման անիւը,

---

*) *Gervinus, Geschichte des XIX Jahrh. I B.*

գէթ աշխատելու ենք կանգնեցնել այն" — ասում էր աւստրիական նախարարապետ Մետերնիխ, բռնապետութեան տիպար-ուահվիրան... Եւ մետերնիխեան դահիճները արշաւում էին կայսրութեան մի ծայրից միւսը, խուզարկում, բանտարկում, ժահացնում: Մի հսկայ ու անողոք պատերազմ էր դա ազատական շարժման դէմ: „Լիբերալիզմը" պէտք էր խեղդել ամեն գնով և „մարգկային ցեղը ազատել"... Այդպէս էր ուխտել Մետերնիխ: Բայց նա չէր կարողանում նոյնիսկ Աւստրիան ազատել „լիբերալիզմի" համաճարակից. նա դիմում էր յուսահատ, օրհասական միջոցների. մտքերը յուզած էին ամենուրեք—Իտալիայում, Ունգարիայում, Բօհեմիայում, Գալիցիայում: Բռնակալութիւնը կործանում էր շինելու համար, բաժանում, կուռացնում էր հպատակ ազգերը՝ երկրի ամբողջութիւնը պահպանելու և իր ուժիմը յաւերժացնելու նպատակով: Իտալական վաշտեր էր ղրկում՝ ունգարական շղթաները կռելու, միւս կողմից մաջառ, լեհ ու չեխ պատժական զօրքեր էր ղրկում՝ իտալացիների դէմ...

Ամբողջ երկիրը մի վիթխարի զնդան էր: Բանտերը—լեփ-լեցուն կենդանի մեռելներով: Մահուան էր դատապարտում ամեն ոք, որ ճանաչելով կարբոնարիներին, չէր մատնում նրանց: Ամեն ինչ թոյլատրուած էր բանտերի մէջ — և ծեծ, և չարչարանք ու անարգանք, և ամենաքստմնելի հաւատաքննութիւն: Անցէ՛ք մի անգամ „Հառաչանքի կամուրջից" — *Ponte dei Sospiri*— վենետկի մէջ, մտէք մութ նեըքնայարկը և դիտեցէք զարհուրելի նկուղները ու չարչարանքի գործիքները, որոնցով մի ժամանակ պատժել են իտալացի հայրենասէրներին... Անօրինակ ոճիրներ են կատարել մանաւանդ Շպիլբերգում, աւստրիական Բաստիլի մէջ: Ահա բանտային հաւատաքննութեան մի երկու օրինակ.

Պատժւում էին ոչ միայն դաւն ու ձեռնարկը, այլ և մ ի տ ք ը, մտադրութիւնը։ 1820-ին ձերբակալւեց Իտալացի հայրենասէր Պիետրօ Մարօնչելլի և նետուեց վենետկի բանտը։ Փաստական ապացոյց չկար, բայց վճռել էին պատժել մարդուն։ Եւ ահա 18 ամիս բանտի մէջ տանջելուց յետոյ, սկսում են հարցաքննել նրան։

„Ուզէ՞ք արդեօք, հարցնում է քննիչը, որ Իտալիան ի տեղի բաժնուած ճնալու բազմաթիւ իշխանների միջև, միացած լինէր մէկ ընդհանուր, անկախ ու սահմանադրական կառավարութեան ներքոյ“... Մեղադրեալը պատասխանում է, որ ինքը հարկ չի տեսնում պատասխանելու մի այդպիսի հարցի։ Քննիչը, սակայն, պնդում է։ Մարօնչելլի, ի վերջոյ, յայտնում է իր իսկական բաղձանքը։ Եւ այդ արդէն բաւական է դիտում դատապարտման համար։

Մի այլ տեղ քննիչը հարցնում է Իտալացի ջիօվաննի Բաչէգօին — մի այլ թանկագին որս, որ չեն ուզում ձեռքից ձգել, բայց որի դէմ նոյնպէս չկան նիւթական ապացոյցներ.

— „Եթէ Իտալիան մի օր ազատագրւէր, իբրև անկախ ազգային պետութիւն, գէնք կը բարձրացնէի՞ք նրա համար“։

— Անտարակոյս, պատասխանում է սպան... Եւ պատժւում է 15 տարւայ տաժանակիր բերդարգելութեամբ. պատժւում է լոկ „դիտաւորութեան“, „մտադրութեան“ յանցանքով *)..

---

*) *H. Misley, L'Italie sous la domination autrichienne, Paris, 1832.*

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Այդպէս, ռէակցիան ճարակում էր ամբողջ Ապենինեան թերակղզին՝ բանտերով, շղթաներով ու անդադրում գլխատումներով ուզում էին կանգնեցնել մի մեծ ազգի յեղափոխական վերածնուելիւնը, ուզում էին թումբ դնել Ազգային գաղափարի յաղթական ընթացքի առաջ։ Ապարդիւն էին այդ օրհասական ճիգերը, ինչպէս որ ապարդիւն են անցել նրանք բոլոր ուրիշ երկրներում, պատմութեան բոլոր շրջաններում։

Տնտեսական և քաղաքական ճնշումների և նրանց յարուցած ընդհանուր դժգոհութեան հետ՝ աճեց հետզհետէ յեղափոխական գրականութիւնը. բանաստեղծների ու վիպասանների թևերի վրայ անդիմադրելիօրէն առաջ սլացաւ Իտալական անկախութեան Իդէալը։

„Ոտքի՛ եղէք, Իտալիայի զաւակներ“, — որոտում էր բանաստեղծ Բերքէ... Հողը ժե՛րն է, ոտքի եղէք և ի գէ՛ն... Հասել է ժամանակը, որ պիտի փշրէ բռնաւորի լուծը Ալպերից մինչև Սիցիլիա... Բռնակալութեան աւերակների, խորտակւած գահերի վրայ պիտի անկե՛նք մեր եռագոյն դրօշը... Ոտքի՛ եղիր, Իտալիա՛“...

Նոյն ըմբոստացման գաղափարն էր արծարծում — աւելի զգոյշ, չափաւոր ձևերով — մի այլ բանաստեղծ, իտալացի մեծ վիպասան Մ ա ն զ օ ն ի *), որ ռօմանտիզմի ամենախոշոր ներկայացուցիչներից մէկն էր համաեւրոպական գրականութեան մէջ։ Նա գրում էր քնարերգական ոտանաւորներ, պատմական ողբերգութիւններ և պատմական վէպեր, ուր ոգեկոչում էր հայրենիքի անցեալ փառքերն ու ձախորդութիւնները, յորդորում

*) *Manzoni* (1785—1873 թ.)։

էր վիպական լինել և ընդհանուր ու համերաշխ ճիգերով նւաճել ազատութիւնը։ Անհագին շառաչում ունեցան նրա „նշանուածները“ (*Promessi Sposi*), հերոսներ էր պատկերացնում — գաղափարական, առնաւիպ — որոնց վրայ ծանրացած է օտար բռնակալութեան լուծը... Միշտ նոյն ջերմ, հայրենասիրական գաղափարն էր խթանում ու ղեկավարում նրան այդ երկերի մէջ. Մանձոնիի պրօզը սքանչելի էր, դիւթիչ ժամանակակից սերնդի համար։

Բայց իտալական շարժումը դեռ սպասում էր իր մեծագոյն Դահվիրային, իր ճշմարիտ Առաքեալին, որ պիտի գար զինուած վիպագամային հրապարակախօսական խանդավառող գրչով և կարբօնարիզմի շանթահարող աւետարանով։ Նա պիտի գար պարզ, մատչելի բառերով շեփորելու իտալական Միութեան ու անկախութեան երազը, և մի ընդհանուր, կործանարար հեղեղի մէջ վիացնելու բոլոր խուլ դժգոհութիւնները, ըմբոստացման բոլոր հոսանքները։

Այդ մարդը հրապարակ եկաւ անցեալ դարու երեսնական թուականներին. նրա անունն էր — Մ ա ձ ի ն ի *)։ Դեռ գրնթէ պատանի էր, որ հայրենիքի ազատութեան գաղափարով վառուած, մտաւ նա, իբրև ուսանող, կարբօնարիների շարքերը, ձերբակալուեց ու մի քանի ամիս բանտ նստեց։ Բանտը աւելի հրահրեց յեղափոխական ու հայրենասիրական նրա եռանդը, Մաձինի երկար մտածեց Իտալիայի ճակատագրի, նրա փրկութեան միջոցների մասին, համոզուեց, որ մինչեւնօրեայ ազատագրական ձեռնարկները վիժել էին զ ա ն գ ւ ա ծ ն ե ր ի տգիտութեան, անտարբերութեան, անպատրաստութեան

*) *Giuseppe Mazzini (1805—1872 թ.)։*

ընորհիւ, որ հետևապէս պէտք է կրթել, դաստիարակել ժողովուրդը գալոց շարժուձեների համար, արծարծել նրա մէջ ընդհանուր, իտալական հայրենիքի պաշտամունքը, նրա ազատութեան ու միութեան իդէալը։

Քարոզը, սակայն, ազատագրական պրօպագանդը, որքան էլ ազդու և արդիւնաւոր՝ դեռ բաւական չէր։ Պէտք էր միաժամանակ հիմնել գաղտնի, յեղափոխական մի ընդարձակ ընկերակցութիւն և դիմել անմիջապէս ըմբոստացման ձեռնարկների։

Զանգւածներն ևս դեռ բաւական չէին։ Որքան էլ նրանք մշակւած լինէին յեղափոխական պրօպագանդով, գիտակ իրենց սրբազան իրաւունքների՝ չէին կարող այնուամենայնիւ վար տապալել մի շարք ահարկու բռնապետութիւններ։ Հարկ էր ունենալ զինւած մի ոյժ, թէկուզ մի փոքրիկ նահանգապետութիւն, կանոնաւոր բանակով և ֆինանսական ու այլ միջոցներով, հարկ էր ունենալ մի այդպիսի կորիզ, որի շուրջը համախմբւէր ամբողջ թերակղզու գիտակից, հայրենասէր ընդհանրութիւնը — ազատագրուող Իտալիայի բախտը տնօրինելու համար։

Եւ Մաձինիի աչքերը յառեց դէպի Պիէմօնտ։ Միակ նահանգն էր, որ դեռ պահպանում էր Ալպեան լեռների տակ իր անկախութիւնը, զուտ ազգային, իտալական արքայատոհմի իշխանութեան տակ։ Նա կոչւած էր Իտալիայի ազատագրութեան դրօշակակիրը և առաջապահը դառնալու։ Սակայն նա ստանձնեց այդ դերը երկար վարանումներից ու բազմաթիւ հարւածներից յետոյ։ Պ՛էմօնտի թագաւորն էր այն ժամանակ Կարլօ Ալբերտօ, որ երբեմն անդամ էր գրւել կարբօնարիների ընկերութեան, բայց յետոյ վերստին „խելօքացել էր“ և կառավարում էր իր երկիրը գրեթէ նոյնքան բռնակալօրէն, ինչպէս և օտար իշխանները։

Երեսնական թուականների սկզբներում կարլօ Ալբերտօ, Պիէմօնտի իշխանը, ստացաւ Մարսէյլից մի երկար ու անանուն գրուածքն, որ մի շանթոտ յորդորական էր։ Անյայտ հեղինակը կոչ էր անում իտալացի իշխանին՝ ձեռնարկել անյապաղ ընդհանուր հայրենիքի ազատագրութեան. նա գրում էր՝

„Արքա՛յ. Մի՞թէ երբէք չէք ունկնդել այն արձագային հայեացքը, որ մի ամբողջ աշխարհ է պտնում, մի՞թէ երբէք չէ՞ք անդրադարձել մեր գեղածիծաղ հայրենիքի վրայ, որ հպարտ է քսան դարերի վսեմ յուշերով, — մեր հանճարի հայրենիքի վրայ, որ կարօտ է մի հզօր կամքի ու մի քանի քաջ որտերի՝ փրկութեան համար օտար բռնութեան անարգանքից... Մի՞թէ երբէք չէք խորհել՝ ստեղծելու այդ քաօսից մի նոր աշխարհ, տիրելու այդ աշխարհին, երջանկացնելու 20 միլիօն իտալական ժողովուրդը... Դուք ունեցաք, այո՛, մի ժամանակ այդ խոհերը և նրանց շնորհիւ դուք դարձաք ժամանակաւորապէս դաւադիր... Մի՛ կարմրեք... Ձկայ աւելի ազնիւ կոչում այս աշխարհում, քան դաւադրի կոչումը — Դաւադիրը, որ մարդկութեան վրիժառուն է և կառավարը բնութեան յաւերժական օրէնքների... Կանգնեցէ՛ք ազգի գլուխ և դրեցէ՛ք Ձեր դրօշի վրայ. Միութիւն, Ազատութիւն, Անկախութիւն։ Դարձէ՛ք ազգի վրիժառուն, նրա իրաւունքների պաշտպանը, նրա անկախութեան վերականգնողը. ազատեցէ՛ք Իտալիան բարբարոսներից, ստեղծեցէք ապագան, ուէք Ձեր անունը մի ամբողջ դարու, բա՛ց աչքեք նոր դարագլուխ...

Արքա՛յ. եթէ դուք չդործէք, միևնոյն է, ուրիշները պիտի գործեն առանց Ձեզ և ընդդէմ Ձեզ... Ես Ձեզ ասացի ճշմարտութիւնը. ապառ մարդիկ ապառում են Ձեր պատասխանը դործի մէջ... Ինչ էլ անէք, յաւ իմացէք. գալոց աշխարհը պիտի դատէ ու գնահատէ Ձեզ — Դուք պիտի լինէք կամ առաջինը մարդկանցից, կամ լաւ վերջինը իտալական բռնակալներից։ Ընտրեցէ՛ք։

Ստորագրուած էր „Մի Իտալացի“։ Անանուն գրողը

Մ ա ձ ձ ի ն ի ն էր։ Այն ժամանակ ընդամենը 26 տարեկան երիտասարդ էր նա, բայց արդէն հոգին ու ղեկավարն էր ազատագրական շարժման։ Հայրենիքի բռնաւորներից ազատուելով, նա ապաստանել էր Մարսէլլ, ուր և հիմնել էր իր հռչակաւոր գաղտնի ընկերութիւնը, որին անդամագրուում էին պրօֆէսօրներ, փաստաբաններ, գինուորականներ, բժիշկներ և այլն։ Մի թովիչ անուն գարդարում էր այդ ընկերութեան ճակատը. նա կոչուում էր — „Երիտասարդ Իտալիա“, *La Giovine Italia*։ Նոյն անունով սկսեց հրատարակել և յեղափոխական օրգանը, Մաձձինիի խմբագրութեամբ։ Հիմնուեց վերջապէս ազգային ֆօնդ։

Այնուհետև շարժման ուիթմը արագացաւ, յեղափոխական տենդն աճեց ժառանգականութեան ու զանգուածների մէջ, նոր-նոր ուժեր գինուորագրուեցին ապստամբական դրօշակի տակ, նոր-նոր կտրիճներ շտապեցին իրենց գլուխը դնելու Հայրենիքի խորանի առջև։ Եւ ամբողջ իտալական երկրում, խաւարի ու տգիտութեան համատարած մթնոլորտի մէջ, հոգեպարար, կազդուրիչ շեշտերով արձագանքեց „Երիտասարդ Իտալիա“ի կոչը և հոլովուեց ամենուրեք մարգարէի խորհրդաւոր ու կախարդիչ անունը —

— „Մ ա ձ ձ ի՛ ն ի“։

Պիէմոնտի թագաւորը խուլ մնաց երիտասարդ առաքեալի թախանձագին կոչի հանդէպ և նոյնիսկ հրամայեց ձերբակալել նրան, եթէ յայտնուէր իշխանութեան սահմաններում։ Խստութիւնները ազատական շարժման դէմ աւելի և աճեցին պիէմոնտում։ Մաձձինի ցասումով դրժեց միապետութիւնը և պարզեց հ ա ն ր ա պ ե տ ա կ ա ն դ ր ո շ ը։ „Երիտասարդ Իտալիա“ի ծրագիրն եղաւ — „Հայրենիքի անկախութիւն և Միութիւն՝ դեմոկրատիկ, ժողովրդավար ռէժիմի տակ“։

Այդ իդէալն էր, որ սկսեց գաղտնի տարածել ջենովացի հռչակաւոր Դաւադիրը։ Նա միանգամայն օժտուած էր այդ վսեմ առաքելութեան համար. ունէր կամք, եռանդ և անսասան հաւատ՝ դէպի իր գործը, նրա վերջնական յաղթանակը։ Միստիկ էր, խորհրդապաշտ, հաւատում էր բացարձակ Արդարութեան յաղթանակին, երազում էր համամարդկային եղբայրութեան ոսկէ դարը, ունէր ինքնատիպ մի հաւատամք, որ ձևակերպւում էր երկու խօսքով. *Dio e il Popolo*, Աստուած և ժողովուրդ.. Հաւատացող էր Մաձինին, թէև Թշնամի պաշտօնական եկեղեցու ևզգային շարժումը, նրա ըմբռնումով, պէտք է դառնայ մի տեսակ կրօն, ջինջ, հզօր և ծաւալուն։ Հաւա՞տ է պէտք նախ և առաջ, ասում էր նա, այն հաւատը, որ մեծացրեց ու շքեղացրեց Հռոմը, այն հաւատը, որ ներշնչեց քրիստոնէութիւնը, որ խթանեց Ֆրանսիական Յեղափոխութեան լեգէոններին, այն հաւատը, որ բարձրացնում, ուժեղացնում է թոյլերին.. Հաւատի հետ, սակայն, պէտք է և անձնուիրութիւն, անշահախնդիր հայրենասիրութիւն, զոհաբերելու մշտնջենաւոր պատրաստականութիւն... Այն կռիւը, որ սկսում ենք—ասում էր Մաձինին իր հայրենակիցներին—պահանջելու է հազարաւոր կեանքեր, բանտ, աքսոր, թշուառութիւն, ընտանիքների կործանում, սիրելիների լաց ու հեծեծանք.. պէտք է յանձն առնենք այդ բոլորը յանուն մեր մեծ Իդէալի. պէ՞տք է սեղմենք մեր կուրծքերին պարտքի և արիւնի Աւետարանը.—այդպէս է, որ պիտի փրկւի մեր Թանկագին հայրենիքը“...

Այդ հայրենիքը—ժողովուրդն էր, իտալական ժողովուրդը, որի համար Մաձինին մի ճշմարիտ պաշտամունք ունէր. նա էր, որ պիտի կատարէր ազգային յե-

*ղափոխութիւնը *) և ոչ բարձր, ազնւական դասակարգը, որից երբէք սպասելու չէ փրկութիւն։*

Անհագին էր „երիտասարդ Իտալիա“ի հմայքն ու ազդեցութիւնը, գաղտնի ընկերութիւնները չտեսնւած ծաւալ առան, Մաձինիի դրօշակի տակ համախմբւեց գրեթէ ամբողջ գաղափարական ու մարտնչող երիտասարդութիւնը։

Կենտրօնը Մարսէյլ էր։ Այնտեղ էր հաստատւել առաքեալը և այնտեղից ամենակարող դիքտատօրի պէս, ղեկավարում էր շարժումը, անդադար քարոզում էր, կազմակերպում ու հրահանգում։ Այնտեղից նա տալիս էր և կուի ազդանշան։ Լաւագոյն ձևը չէր, հարկաւ, այդ բացարձակ և անձնական կենտրօնացումը։ Ինչպէս միշտ և ամեն տեղ՝ նա վրիպում էր յաճախ, յարուցանում էր դժգոհութիւն կազմակերպութեան մանաւանդ հեռաւոր ճիւղերի մէջ, որոնք կուզէին լինել փոքր ինչ ինքնուրոյն, ապակենտրօն։ Որքա՜ն դժւար էր ղեկավարել շարժումը դրսից... Մաձինիի հմայիչ դէմքը և անհագին ժողովրդականութիւնն անգամ չկարողացան արգելք լինել դժգոհութիւնների ծագման։

Այնուամենայնիւ շարժումը առաջ գնաց. Դաւագիրը նիւթեց մի շարք ապստամբութիւններ Իտալիայի այլ և այլ նահանգներում։ Գործի սկիզբն էր... վիժում էին մեծ մասամբ այդ խմբական ըմբոստացումները և դահճի ձեռքը մատնում հարիւրաւոր անձնուրացներ։ Մաձինին չէր վհատում. նահատակների արիւնը, ինչ պայմաններում էլ թափւէր այն՝ երբէք ապարդիւն չէր. նա գե-

---


*) „*Le rivoluzioni hanno ad esser fatte pel popolo et dal popolo*“ (*Յեղափոխութիւնները պէտք է կատարւին ժողովրդի միջոցով և ժողովրդի համար*)։ *Mazzini, Scritti editi e inediti* (*Bolton King*).

բագոյն միջոցն էր պարարտացնելու հայրենի հողը գալոց մեծ ապստամբութեան համար։ Մասնակի խլրտուքները գերազանցապէս անհրաժեշտ էին ընդհանուր շարժում յարուցանելու... Այդպէս էր տրամաբանում մեծանուն յեղափոխականը և երբէք ձախորդութիւնը չէր լքում նրան։

Պատրանքը, յարկաւ, մեծ տեղ ունէր երիտասարդ առաքեալի խանդավառ լաւատեսութեան մէջ. նրան թւում էր, թէ հաւատը իրօք կարող է լեռներ շարժել, թէ նոյնիսկ փոքրաթիւ անձնուրացները, զինուած բուռն, գաղափարական ոգևորութեամբ, կարող էին խորտակել բռնապետութեան լուծը։ Մաձինին շարունակում էր զինուրագրել այդ անձնուրացներին, պատրաստում էր նրանցից շրջիկ-պրօպագանդիստներ և ղրկում էր երկրի բոլոր ծայրերը, պատրաստում էր դաւադիրներ ու տեղրօրիստներ, հրատարակում էր միաժամանակ յեղափոխական կոչեր, կարմիր, թևաւոր բրօշիւրներ, որոնք գնում էին գաղտնի ճամբաներով ողողելու գիւղերն ու քաղաքները։

Եւ ահա, այդ անդուլ օրոնուճների ճամբու վրայ, զինուրագրուժի և կազմակերպութեան այդ տենդային աշխատանքի մէջ, նա հանդիպում է մի այլ երիտասարդ հայրենասէրի, որին վիճակուած էր յետագայում դառնալ ազգային շարժման Հրամանատար Զօրավարը և լցնել աշխարհը իր տիտանեան անձնաւորութեան հմայքով։ Մաձինին գտաւ Գարիբալդիին... Այդ վայրկեանից, կարելի է ասել, Իտալիայի ճակատագիրը դարբնուած էր արդէն։ Մաձինին—իբրև մտաւոր առաջնորդ, միանգամայն քարոզիչ և կազմակերպիչ, Գարիբալդին—իբրև ռազմիկ-խմբապետ, զինուորական հրամանատար... Երկուսն էր հզօր, արտակարգ դէմքեր, իւրաքանչիւրը իր կարիէրի մէջ, երկուսն էլ անխոցելի

և անպարտելի՝ ժողովրդեան աչքում։ Ջիւզեպպե Գարիբալդիի ջենովական ծովագօրքի սպայ էր, երբ Մաձձինին հանդիպեց նրան։ Իտալացի գրողները բանաստեղծական գոյներով են նկարագրում այդ նախախնամական հանդիպումը երկու երիտասարդների, որոնք պիէմոնտի հետ միասին պիտի կռէին հայրենիքի բախտը... Երկար, անքուն մի գիշեր, գաղտնի տեսակցութեան մէջ, Մաձ-



Մ ա ձ ձ ի ն ի

ձինին բացատրում է իր առաքելութիւնը Գարիբալդիին, պարզում է նրան հայրենիքի օրհասական վիճակը, պարզում է յեղափոխական կուսների անխուսափելի անհրաժեշտութիւնը և յորդորում է բերել իր բաժին աջակցութիւնը երիտասարդ Իտալիային։ Այդտեղ է, որ անվեհեր գինուորականը, հմայուած վարպետի թովիչ քարոզներից, երկար ու լուռ ունկնդրելուց յետոյ, արտասանում է, իբրև պատասխան, իր լակոնիկ և վճռական ֆրազը.

— *Sono pronto, fratello, dite mi quando, dove, come!* Պատրա՛ստ եմ, եղբայրս, ասացէ՛ք միայն, ե՞րբ, ո՞րտեղ, ինչպէ՞ս...

Գարիբալդին անդամագրուեց գաղտնի Հայրենասիրական Ընկերութեան և սերտ յարաբերութիւն հաստատեց վարպետի հետ։ Քսան տարի յետոյ է, որ նա պիտի կատարէ իր խօլական թռիչքները, հայրենիքի թշնամիների դէմ. առ այժմ թողնենք նրան և հետևենք Մաձինիին։

Գարիբալդին միակ զինուորականը չէր, որ արձագանք տուեց մեծ ֆարոզչի կոչին. վերջինը զինուորագրեց մի շարք ուրիշ սպաներ ևս. և նոյնիսկ մէկ երկու գեներալ խոստացան իրենց աջակցութիւնը։ Պրօպագանդը գաղտագողի առաջ էր գնում բանակի մէջ, գլխաւորապէս ջենովայում ու Ալեսսանդրիայում։ Կառավարութիւնը հսկում էր. և մի օր նա յանկարծակի գրոհ տուեց դաւադիրների դէմ, ձերբակալեց ու բանտ նետեց շատերին և գաղտնաբար տանջելով, պահանջեց քաց անել ընկերութեան գաղտնիքները։ Ցեղափոխական գլխաւորներից մինը—Լակօբօ Ռուֆֆինի—որին առաջարկում էր կամ մատնել իր ընկերներին կամ թէ ենթարկուել տանջանքների՝ բանտի մէջ ինքնասպանութեամբ վերջ տուեց իր կեանքին։ Տաս զինուոր և մի քաղաքացի, բոլորն էլ Մաձինիի հետևողներ, հրացանի բունեցին. բազմաթիւ ուրիշները դատապարտուեցին բերդարգելութեան։

Աղէտալի սկզբնաւորութիւն էր... Վարպետի սիրտը կսկծում էր հեռու աքսորի մէջ գաղափարակից աշակերտների այդ չարաչար նահատակութեան համար, բայց նա շարունակում էր ստոյիկեան արիութեամբ մրմնջալ իր գաժան, յեղափոխական հատատամբը.

— „*Le idee maturano rapidamente quando sono*

nudrite dal sangue dei martiri!“... — „Գաղափարները արա՛գ են հասունանում, երբ սնւում են նահատակների արիւնով“...

Բունութեան թաթը հասաւ, վերջապէս, և իրեն Մաձինիին Ֆրանսիայի միապետական կառավարութիւնը սկսեց հալածել նրան Մարսէյլում։ Ընտրման վճիռ արձակուեց նրա դէմ և տպարանը փակուեց։ Բայց դատերը իր անսովոր ճարպկութեամբ կարողացաւ խոյս տալ երկու հարուածներից էլ։ Նա հաստատեց գաղտնի տպարան և ինքն էլ թագնուեց մի հաւատարիմ ֆրանսիացու տան մէջ։ Տարին երկու անգամ էր միայն դուրս գալիս տնից և այն էլ գիշերը, կնոջ զգեստով։

1833-ին գնաց Թրընև, ուսկից կուզէր ապստամբութիւն կազմակերպել Սավուայում և գուցէ ամբողջ Պիէմոնտում, կարլո Ալբերտոի ուխտադրուժ իշխանութեան դէմ, որ հեղինակել էր վերը յիշած գաղտնային ճրնշուաճերը։ Այնտեղ, ազատ Շվէյցարիայում գաւաւ նա բազմաթիւ օտարազգի աքսորականներ — լեհ, գերմանացի, ֆրանսիացի — որոնց հետ վճռեց կազմակերպել միջազգային ռամկավարական մի Դաշնակցութիւն, ստեղծել մի Երիտասարդ Եւրոպա՝ փրկելու համար — յեղափոխական ճանապարհով — բոլոր ստրուկ ժողովուրդներին։

Սակայն, շվէյցարական կառավարութիւնն էս, հզօր դրացիների ճնշման տակ, սկսեց նեղել իտալական ազատագրութեան Առաքեալին, խոչընդոտներ հանեց նրա ծրագիրների առջև։ Վիժեց Սավուայի ապստամբութեան ծրագիրը, Մաձինի ստիպուած եղաւ հեռանալ Շվէյցարիայից, գնաց Լօնդօն, բոլոր ըմբոստ աքսորականների ազատագոյն ապաստանը...

Վիժեցին Մաձինեան ապստամբութիւնները Ա-

բուցցայում, Ռօմանիայում, Կալաբրիայում եղան վանմ ու ողբերգական դրւագներ այդ յախուռն ըմբոստացումների մէջտեղ, ուր ունեցան հերոսական անձնազոհութեան չքնաղ օրինակներ։ Ամենայուզիչ դրւագներից մինն է Բանդիէրա եղբայրների նահատակութիւնը, որ անջնջելի տառերով արձանագրւած է իտալական տարեգրութեան մէջ։ Երկու եղբայրներ էին, երկու սպաներ վենետիկից — Ատտիլիո և Էմիլիո Բանդիէրա։ Երկուսն էլ յափշտակւած Մաձինիի յեղափոխական քարոզներով, որոշում են զոհաբերել իրենց կեանքը Իտալիայի ազատութեան։ 1842-ին նրանք հաղորդում են իրենց որոշումը Մաձինիին, կապւում են նրա հետ և լքելով աւստրիական բանակը, ուղևորւում են դէպի Կալաբրիա, ուր արդէն Մաձինիի հրահանգով բունկւել էր ապստամբութիւնը։ Նրանց միանում են 17 գաղափարակիցներ։ Սակայն, նախ քան նրանց տեղ հասնելը, շարժումը խեղդւում է արեան մէջ։ Կալաբրիա մտնելով, խումբը անմիջապէս մատնւում է և շրջապատւում թշնամու զօրքերով։ Տնղի է ունենում կատաղի ճակատամարտ Ռօվիտօ հովտի մէջ, երկու եղբայրները կռւում են յուսահատ մոլեգնութեամբ և ի վերջոյ միւս գաղափարակից ընկերների հետ գարնւում են բուրբօնեան գնդակներից ու նահատակւում, վերջին անգամ աղաղակելով՝ *viva l'Italia!*

Վրէժի ու ցասման փոթորիկ հանեց Բանդիէրա եղբայրների մահը ամբողջ Իտալիայում։ Նոր զարկ տւեց նա յեղափոխական խմորումներին, բայց և միաժամանակ այլ և այլ կողմերից բարձրացան ձայներ, որոնք քարոզում էին թողնել Մաձինեան արիւնոտ յեղափոխութեան ճանապարհը, խնայել երիտասարդ ուժերը, գործել զգուշութեամբ ու խոհեմաբար, գիմել նպատակին խաղաղ քարոզչութեամբ ու կազմակերպութեամբ։

Խոհեմութեան ասպետների յաւիտենական վայելատո՛ւնը... Մաձինին անգրդուելի էր. նրա խորունկ համոզումով՝ արիւնն էր միայն վերածնելու Իտալիան, խիզախ, անվեհեր թուիչքներով էր, որ պիտի պատրաստէր գալոց հսկայ վերիվայրումը, անդուլ զոհաբերութեամբ էր, որ պիտի ստեղծէր նոր գաղափարական և առնական սերունդ ազատութեան պատերազմի համար։ Պատմութիւնը իրաւունք տուեց Մաձինիին — և ոչ միայն իտալական արիւնաներկ պատմութիւնը, այլ և բոլոր ճնշուած ու պայքարող ժողովուրդներինը...

Մեծ էր այնուամենայնիւ „Խոհեմութեան“ բարոյի հմայքն ևս, ուժեղ էր նրա ազդեցութիւնը վանաւանդ բարձր դասակարգերի վրայ։ „Խաղաղ պրօպագանդի“ նշանաւոր ռահվիրան էր Վինչենցօ Ջեօբերտի, որ յորդորում էր միացնել իտալացի իշխաններին պապի հովանիի տակ և ազատագրել հայրենիքը ընդհանուր ու խաղաղ ճիգերով։ Հրապարակ եկան այլ գրողներ ու աշխատութիւններ նոյն ուղղութեամբ — Ձեզարէ Բալբօ, Մասսիմօ դ'Ազէլիօ և այլն։ Պապն էր, որ պիտի փրկէր Իտալիան .. պապութիւնն էր, սակայն, որ եղաւ յետագայում ամենամեծ խոչընդոտներից մինը Իտալական Միութեան։

Այսպէս թէ այնպէս, հանրային կարծիքի մէջ, Ջեօբերտիի և այլոց քարոզների ազդեցութեան տակ, տեղի ունեցաւ շրջուն։ Եւ որ ամենէն ծանրակշիռն էր՝ ինքը Պիէմօնտի թագաւորը, Կարլօ Ալբերտօ սկսեց ուշադրութեամբ ականջ դնել չափաւորների քարոզներին, հետաքրքրել նրանց ծրագրով։ „Խաղաղ առաջադիմութիւն“ էին քարոզում ամենքը — չափաւոր ազատականներ և Պիէմօնտի իշխան — բայց և ամենքն էլ ներքուստ խորապէս համոզուած էին, որ միմիայն բռնի, յեղափոխական ճանապարհով էր, որ իտալացիք պիտի „դուրս քշէին

օտարներին" (*Cacciare i Stranieri!* — յիշենք նորէն հայրենասէրների նշանաբանը)։ Ձափաւոր ազատամիտներն ևս Մաձինիի կուսակցութեան պէս իրօք ժղում էին պիէժոնտի իշխանին դէպի պատերազմ, որ պէտք է ոտքի հաներ ամբողջ Իտալիան...

Կարլօ Ալբերտօ, որդեգրելով հանրերգ Իտալիայի ազատագրութեան ծրագիրը և շարունակ ածեցնելով իր բանակը, էլ խիզախում վճռական քայլ անել Աւստրիայի դէմ (իր մշտական վարանումների պատճառով կոչեց նա *Re Tentenna*, վարանոտ թագաւորը)։ Դարձեալ Ըմբոստացման յարաճուն շարժումն էր, Մաձինեանների հերոսական թուիչքներն էին, որ արիւնաթիւն ներշնչեցին նրան և ստիպեցին վերջ ի վերջոյ թշնամական դիրք բռնել դէպի Աւստրիան, Իտալիայի դահիճը։ 1846-ին, ժաքսային մի խնդրի առիթով պիէժոնտը ընդհարում ունեցաւ Աւստրիայի հետ։ Այդ խոշոր քայլը աւելի թափ ու ծաւալ տւեց յեղափոխական խմորումներին, որոնց տիրական ազդեցութեան տակ Ցոսկանիայի մեծ իշխանը և պապ Պիոս IX-ը նոյնպէս փոխեցին իրենց ներքին քաղաքականութիւնը, ընդառաջ գնացին ժողովրդական պահանջներին, մարին մի շարք ոէֆորմներ և անուղղակի խրախուսեցին ընդհանուր ազատագրական շարժումը։ Պիոս IX-ի լիբերալիզմը մի վայրկեան այնքան խոստումնալի էր, որ Մաձինին ուղղեց նրան մի նամակ, որով հրաւիրում էր գլուխ կանգնել ազգային շարժման։

Բայց ամենէն վճռական և յուսատու ժեստը՝ պիէժոնտինն էր։ Կարլօ Ալբերտօ վերստին դարձաւ ժողովրդական, ցոյցեր եղան արքայական պալատի առջև, ամբոխը կեցցէ՛ գոչելով, յորդորում էր թագաւորին զինչել ու պինդ կանգնել Աւստրիայի դէմ։ Տեղի ունեցաւ մխիթարանական ջենովայում — 1846-ի սեպտեմբեր-

րին—իտալացի գիտնականների 8-րդ համագումարը, որ իրօք վայրկեանին համապատասխան քաղաքական մի ժողով էր, մի տեսակ համախտալական պարլամենտ։ Գիտութեան մասին չէր, որ ճառում էին այդտեղ, այլ հայրենիքի ու ազատութեան։

Հրդեհը բռնկւում էր... Յուզեց աւստրիական կառավարութիւնը, դող ընկաւ ամենակարող Մետեռնիխի սիրտը։ Եւ նա շտապեց սովորական, դրակօնեան միջոցներով խեղդել „համաճարակը“։ Այս անգամ գրեթէ ամբողջ Իտալիայի վրայ էր, որ պիտի զարնէր մետեռնիխեան ռէակցիան. Պարիզեան յեղափոխութիւնը (1848, փետրուար) վրայ հասաւ այդ միջոցին, իբրև մի նոր պայթուցիկ նիւթ, և 1848-ի սկզբներին Իտալիան ծայրէ ծայր յեղափոխական օրեր էր ապրում։ Առանձնապէս կատաղի էին բարրիկադային կռիւները Սիցիլիայում ու Նապօլում։ Դարձեալ հին պատմութիւնը... բռնակալները սարսափահար խոնարհւում են ապստամբ ժողովրդի առջև, „չնորհում են“ սահմանադրութիւն... սպասելով պատեհ վայրկեանին՝ նորէն յետ խլելու։

Հարաւի անցքերը թև են տալիս հիւսիսին և նոյն ցոյցերն ու սահմանադրական աղաղակները տեղի են ունենում գրեթէ բոլոր մեծ քաղաքներում, Ջենովա, Ֆլորենցիա, Տօրինօ, Միլան, Վենետիկ և այլն։ Ժողովուրդը ցոյց է անում և պապի դէմ, հռօմում, պահանջելով սահմանադրութիւն։ Պապը պատշգամից օրհնում է ցուցարարներին և հրահանգում է „չդնել այնպիսի պահանջներ, որ հակառակ են եկեղեցու սրբութեան“։ Ժողովուրդը, սակայն, չի համոզւում և նրա սպառնական աղաղակների առջև կաթօլիկութեան վեհապետն ևս ստիպւում է իւ վերջոյ տեղի տալ ու սահմանափակել իր միահեծան իշխանութիւնը իր պետութեան սահմաններում։

Թուում էր թէ հասել է վճռական ժամը, երբ բազմատանջ երկիրը պիտի թօթափէր վերջապէս օտարի լուծը և պիտի կատարէր իր բաղձալի Միութիւնը։ Այդպէս չ'եղաւ, սակայն, դեռ շա՜տ փուշ ու տատասկ էր ցանուած ազատութեան ճամբու վրայ։ Իտալիան ստրուկ էր, քանի դեռ կար աւստրիական անիծապարտ տիրապետութիւնը Լոմբարդօ-Վենեցիայում, ուսկից նա տարածում էր քառնութեան խարազանը բովանդակ Թերակղզու վրայ։ Այդ հիդրայի գլուխն էր, որ պէտք էր ջախջախել։ Ինչպէ՞ս սակայն...

Իբրև արձագանք պարիզեան յեղափոխութեան՝ Վիեննան ևս պարզել էր ապստամբութեան դրօշը և հրդեհը ծագել էր աւստրիական այլ և այլ գաւառներում։ Հաբսբուրգեան ահագին կայսրութիւնը տարրալուծւում էր, կենտրօնական կառավարութիւնը կորցրել էր գլուխը. այդ հանգամանքից սիրտ առան Միլանն ու Վենետիկը։ Ապստամբութիւնը պայթեց երկու տեղերում էլ։ Վենետիկում ժողովուրդը դիմեց խուռներամ դէպի Ս. Մարկոսի հրապարակը և պահանջեց զէտ արձակել քաղաքական կալանաւորներին, ամենից առաջ երկու նշանաւոր քաղաքացիների — Դանիէլ Մանին և Ցօմպէօ—որոնց ամբոխը տարաւ թևերի վրայ, աննկարագրելի ցնծութեան ժէջ. ապա հռչակեց հանրապետութիւն և Դանիէլ Մանին կոչեց նախագահ ժամանակաւոր կառավարութեան։ Միլանում հարիւրաւոր բարրիկադներ կառուցեցին. ժողովուրդը կատաղած գրոհ էր տալիս աւստրիական զօրքի ու թնդանօթների դէմ։ „Անհնարին է, ասում է Ռօսսի, նկարագրել այն հիշատակելի օրերի տեղդային կռիւները գրեթէ բոլոր քաղաքամասերում. ամեն մի փողոց իր փառաւոր դրւագն ունէր, ամեն մի տուն՝ մի հերոս։ Երիտասարդ, ծեր ու մանուկ, ամենքը կատարում էին իրենց պարտքը, ան-

գամ կղերը ժանակցում էր ազատագրական պատերազմին։ Զանգակների ղողանջը միանում էր հրացանների ու թնդանօթների որոտին — և այդպէս հինգ օր ու հինգ գիշեր, անընդհատ... Աւստրիացիները դուրս քշուեցին քաղաքից, ջարդուեց ու փախաւ 14,000 բերդապահ զօրքը“ *)..

„Դո՛ւրս քշել օտարին“, նորէն ու աւելի ուժգին որոտաց ըմբոստացումի բանակը, և բոլոր աչքերը վերստին դարձան դէպի Պիէմոնտ, ամենքն էլ պատերազմ էին աղաղակում Աւստրիայի դէմ։ Պատերազմի կուսակից էր և մի նշանաւոր գործիչ-հրապարակախօս, որ պատկանում էր չափաւորների բանակին և խոշոր դեր պիտի կատարէր յետագայ անցքերի մէջ. — դա *Risorgimento* օրգանի խմբագիրն էր — Կ ա վ ո ւ ր ը։ Նա պահանջում էր անմիջական զօրաշարժ։ Եւ պատերազմը, վերջապէս, սկսուեց։ Պիէմոնտի իշխանը ղրկեց իր զօրքը Աւստրիայի դէմ, նրան միացաւ պապի, ապա և Տօսկանիայի ու Նապօլի իշխանների բանակները։ Ընդամենը մօտ 90,000 մարդ։ Հազուագիւտ խանդավառութեան օրեր։ Տասնեակ դարերից ի վեր առաջին անգամը ամբողջ Թերակղզին ոտքի էր կանգնում ընդհանուր թշնամու դէմ... Իտալիան, որ քիչ առաջ լոկ „աշխարհագրական մի արտայայտութիւն“ էր Մետերնիխի համար, վերածնւում էր, իրրև հզօր, պատկառելի, ինքնաճանաչ ազգայնութիւն։ Էտնայից մինչև Ալպեան գագաթները ծածանւում էր եռագոյն դրօշը և բիւրաւոր արձագանքներով կրկնւում էր Կարլօ Ալբերտօի նշանաւոր խօսքը. „*L'Italia forà da se*“, „Իտալիան ինքը պիտի կռէ իր ճակատագիրը“...

Իտալական միացեալ բանակը յաղթականօրէն շարժ-

---

*) *Pietro Rossi, Das moderne Italien.*

ւեց Լոմբարդիայի վրայից դէպի Սինէիս. աւստրիական զօրքը, անհամեմատ աւելի ստուար, արշաւեց նրա դէմ հին ու փորձւած մի զօրավարի, Ա ա դ ե ց կ ի ի, առաջնորդութեամբ։ Ցեղի ունեցան բուռն ճակատամարտներ։ Հերոսաբար կռւեցին իտալացի կամաւորները, որոնց մէջ բազմաթիւ ուսանողներ Փլօրենցիայից, Պիզայից, Սիեննայից։ Յաղթութիւնը սկզբում իտալացիների կողմն էր, բայց յետոյ վրայ հասաւ ձախորդութիւնների ու պղէտների շարանը։ Նրա մէջ տեղ իտալիայում ներքին անհամաձայնութիւնը, պառակտումը։ Պատերազմի ժամանակ իսկ՝ քաղաքական երեք հոսանքները բունեցին անհաշտ և պղէտաւոր հակամարտութեամբ։ Նրանք վիճում էին վաղւան Իտալիայի կառավարութեան ձևի մասին։ Կային 1) բացարձակ միապետականներ, 2) սահմանադրական միապետականներ և 3) արմատական հանրապետականներ։ Սահմ.-միապետականները պահանջում էին դաշնակցական, ֆէդէրատիվ կազմակերպութիւն մի շարք իշխանների վերհսկողութեան տակ։ Այն ինչ. հանրապետականները, Մաձինիի ղեկավարութեամբ, Սահմանադիր ժողով էին պահանջում, հանրապետական մի պարլամենտ՝ երկրի ճակատագիրը, նրա քաղաքական կազմը որոշելու համար։ Մաձինիի կուսակցութիւնը ուժեղ ու ազդեցիկ էր առևտրական մեծ կենտրոններում՝ Ջենովա, Միլան, Լիվոռնո, Հռոմ, Նապոլ և նա յոյս ունէր ֆրանսիական հանրապետականների աջակցութեան վրայ։ Ի վերջոյ սահմ.-միապետականները յաղթանակեցին հիւսիսային Իտալիայում, մաձինեականները՝ միջին Իտալիայում, իսկ բացարձակ միապետականները՝ հարաւում։

Ֆրակցիաների կռիւը անդրադարձաւ բանակի վրայ։ Արդէն իսկ իտալական զօրքը թւով քէչ էր և անկարող էր չափւել Թշնամու հետ։ Պարտութիւնից պարտու-

թիւն՝ Իտալիան շուտով նորէն պիտի սահէր դէպի նախկին կացութիւնը, ապստամբ երկիրը դրեթէ ամբողջապէս պիտի ընկնէր վերստին աւստրիական լծի տակ։ Վենետիկն էր, որ դեռ հերոսաբար դիմադրում էր աւստրիացիներին։ Երկրի մէջ յեղափոխական խմորումները դադար չ'առած, „Երիտասարդ Իտալիան“ անդուլ ու անվհատ մղում էր իր ազատարար պրօպագանդը, Ունգարիան պարզում էր ապստամբութեան դրօշը, Վենետիկը շարունակում էր կռւել և պիէմոնտը, թէև յաղթահարւած, շարունակում էր սպառնալ։

Այդպէս էր պատկերը 1848 թւականի վերջում, երբ Աւստրիայի մէջ, Ֆերդինանդ I թագաւորը հրաժարւելով, գահ բարձրացաւ 18 տարեկան մի պատանի, այժմեան Ֆրանց Յօզեֆը։

Աւստրիան ունգարական դէպքերից շփոթւած, դեռ չէր դրել իր թաթը ամբողջ Իտալիայի վրայ, բայց աւստրական յաղթանակից քաջալերւած՝ փոքրիկ իշխանները սկսել էին արդէն հալածել յեղափոխականներին և փորձում էին վերականգնել նախկին վիճակը։ Նապոլի իշխանը, Ֆերդինանդ I, առանձնապէս աչքի ընկաւ իր նիւթած գազանութիւններով։ Յեղափոխական ճանաչւածները խմբովին ժահւան էին դատապարտւում և գլխատւում։ Այդ սարսափները հետաւոր բրիտանական պարլամենտում բողոքի շանթեր յարուցին Մեծ անգլիացու, Գլադստօնի կողմից։

Միջին Իտալիայում հանրապետականները պինդ կանգնեցին։ Պապը նոյնպէս փորձեց վերադարձնել իր նախկին առանձնաշնորհումները, վերականգնել հին, կղերական բռնապետութիւնը, բայց ժողովուրդը դարձեալ գրոհ տւեց սպառնալի աղաղակներով և պապը փախաւ։ Այն ժամանակ Մառձինի գուժարեց — եկեղեցական պետութեան մէջ—իր երազած Սահմանադիր ժողովը։ Վեր-

ջինը յայտարարեց, որ պապը ընդմիշտ զրկուած է իր աշխարհիկ, քաղաքական իշխանութիւնից և հռչակեց հռոմէական հանրապետութիւն (9 փետր. 1849 թ.)։ Կազմեց մի տեսակ եռապետութիւն(*triumvirat*), որի պարագլուխն էր Մաձինի։ Նա հրաւիրեց բոլոր իտալացիներին ընտրել պատգամաւորներ մի ընդհանուր Սահմանադիր ժողովի համար՝ իտալական միութիւնը իրագործելու նպատակով։ Երազ էր տակաւին...

Կաթոլիկ պետութիւնների—Աւստրիայի, Սպանիայի և անգամ Ֆրանսիայի—վրայ առանձնապէս ծանր տպաւորութիւն գործեց հանրապետականների յաղթանակը Հռոմում, եկեղեցական կամ պապական պետութեան մէջ։ Ֆրանսիան նոյնիսկ զօրք ղրկեց Հռոմը և պապութիւնը փրկելու հանրապետականների ձեռքից։ (Տարօրինակ է թւում... 1849 էր, Ֆրանսիայի մէջ հանրապետութիւն էր... Սակայն կաթոլիկները շատ ուժեղ էին պարլամենտում և նրանց ցանկութեամբ էր, որ Ֆրանսիական զօրքը արշաւեց դէպի Հռոմ՝ մաձինեականների դէմ։ Այդ ըմբոստացուցիչ արարքի համար իտալացի յեղափոխականները յետագայում պիտի փորձեն վրէժխնդիր լինել Ֆրանսիայից)։ Մաձինեականները, սակայն, կազմակերպեցին Հռոմում, Գարիբալդին հաւաքեց իր կարմիր շապկաւորների լեգէօնը և բուռն դիմադրութեամբ յետ մղեց Ֆրանսիական գրոհը։ Տեղի ունեցաւ, սակայն, երկրորդ արշաւանք և այս անգամ Ֆրանսիացիք գրաւեցին Հռոմը, դուրս քշեցին յեղափոխականներին և վերականգնեցին պապի աշխարհիկ բռնապետութիւնը։

Տօսկանիայի իշխանն ևս կամեցաւ վերահաստատել իր միահեծան իշխանութիւնը, բայց այդտեղ ևս մաձինեականները ուժգին դիմադրութիւն ցոյց տւին, մեծ իշ-

խանը փախաւ, Մաձինի հրաւիրեց սահմանադիր ժողով և հռչակեց հանրապետութիւն։

Միլանի մէջ միապետական լիբերալները, վախենալով, որ Մաձինին այնտեղ ևս պիտի մոցնէր շուտով հանրապետութիւն, հռչակեցին ժողովրդական հանրաքուէով, որ Լոմբարդիան միացած է Պիէմոնտին, որի ուժին սահման.-միապետական էր։ Միացաւ Պիէմոնտի հետ նաև Վենետիկը *)։

1849-ի մարտին, երբ Վիեննան զբաղուած էր ժողովական ապստամբութեան ճնշումով, Պիէմոնտի թագաւորը նոր արշաւանք կազմակերպեց Աւստրիայի դէմ, 85,000 բանակով։ Նորէն յուսահատ ճիգեր, նորէն պարտութիւն։ Նօվարայի ճակատամարտը իսպառ խորտակեց Պիէմոնտի զինուորական ուժերը. Կարլո Ալբերտօ հրաժարեցաւ գահից և նրա ժառանգը, Վիկտօր Էմանուէլ, պատերազմական որոշ տուրք վճարելով, հաշտութիւն կնքեց։

Մայլ, ահաւոր օրեր հասան Իտալիայի գլխին։ Դժոխքը նորէն թագաւորեց Լոմբարդիայից մինչև Սիցիլիա։ Մետերնիխի յաղթական զօրքը մորակը ձեռին արշաւեց կայանից կայան և ամեն տեղ վերահաստատեց վաղեմի կարգը։ Աւստ. զօրավար Հայնաս — որին „բռներնի“ մակդիրը տուին, գրոհ էր տալիս իր զինուորներով անգամ անպաշտպան կանանց դէմ, ծեծում էր անխնայ։

Մօդէն, Պարմա դքսուհիները, որ միացել էին Պիէմոնտին, գրավեցին աւստրիական զօրքերով, վերստին անջատուեցին բռնապետական իրաւակարգով։ Բարբարոսութեան հեղեղը հասաւ Ցօսկանիա և Հռօմ, ամեն տեղ

---

*) *Seignobos, Histoire politique de l'Europe Contemporaine.*

Հալածանք սկսեց հանրապետական գործիչների ու գաղափարների դէմ։

Իտալիան—նախկին ստրուկն էր, պատառոտած ու գազազած... Այնքա՜ն զոհաբերութիւն—և ոչինչ։ Այնքան հերոսական կուխներ ու ցնցումներ, այնքան արիւն ու տառապանք—առանց դրական արդիւնքի։ Այդպէս են ազգերի, բոլոր ազգերի ազատագրական շարժուձևները։ Չկայ մի հանճար, որ կարողանայ հեշտացնել, թեթևացնել ազատութեան այդ դժոխային երկունքը։ Չկայ մի մեթօդ, մի դեղատոմս, մի համադարման, որ կարողանայ սկզբից իվեր ուղղել մի ազգի յեղափոխական դրաման հարթ, անարիւն ճանապարհով, սակաւագոյն դիմադրութեան ու զոհողութեան ճանապարհով... Մեղաւո՞ր էր Մաձինին, մեղաւո՞ր էին կարբօնարիները, Իտալացի յեղափոխականները, երբ նրանք ազատութեան աւետարանը ամուր գրկած, շղթայազերծեցին այդ արիւնոտ ճակատամարտները և այդ ահաւոր զուլումները։ „Մեղաւոր են“ — ձայնում էին այն ժամանակ չափաւորներն ու խոհեմները։ Բայց պատմութեան դատի առջև սրբագործեցին այդ զարհուրելի, կործանարար խիզախները, պատմութիւնը կոթող կանգնեց նրանց „աւերիչ“ գործունէութեան իւրաքանչիւր քայլի վրայ Մաձինին, „դաւադրութեան յաւիտենական, եղեռնանիւթ“ հանճարը բարձրացաւ ու հասաւ անհասանելի բարձունքների և այսօր նա, որպէս աշխարհիկ մի սուրբ, խնկարկւում ու պաշտւում է իր ազատագրած հայրենիքի բոլոր անկիւններում... Առաջ գնանք։

ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐԻՄԱՆԸ.

Խորտակւած յոյսեր, դառն, ցաւագին հիասթափութիւն... Դարձեալ չվհատեցին ազատութեան ոգեմիկ-

ները։ Դարձեալ Մաձձինին գործի վրայ էր իր քաջարի կոբիւններով։ Նախկին հպարտ գիտակցութեամբ, նախկին ջերմ ու անսասան հաւատով։ „Անտած ինքը նախասահմանել է Իտալիայի ազատագրումը— այսպէս էին դաւանում *Risorgimento*-ի հերոսները— Անտած ինքը ստեղծել է երկրի վրայ տարբեր ցեղեր լրնց տարբեր լեզուներով ու բարքերով, որպէս զի Լուսաքանչիւրը ազատ, ուրոյն կեանք վայելէ“... Միայն թէ... ազատութեան Անտածը դաժան է, անողոք, նա պահանջում է ժարտնչող ժողովուրդներից արեան գետեր, դժոխային փորձութիւններ, օրհասական գալարումներ...

Մաձձինին այրում, խորովում էր կատարուղ բարբարոսութիւնների հանդէպ։ Իր անզօր ցասումի մէջ ատամներ էր կրճտացնում ընդդէմ երեք գլխաւոր ոսոխների, որ չարախնդաց ամբարտաւանութեամբ ոտնահարում էին Իտալիան։ Երեք դահիճներն էին՝ Աւստրիան, Պապը և Նապօլի իշխանը։ Ինչպէ՞ս հանդուրժէր... Առաքեալը շարունակում էր թափահարել արտասահմանից իր պերճախօս գրիչը, շարունակում էր խարանել անարգ ոէժիմը և հրահրել հայրենակիցներին դէպի նոր պատերազմ. „Դա լպիրշ յաղթանա՜կն է բռնի ոյժի — ճչում էր նա — մեր եղբայրներին աքսորում են խմբովին ու մահացնում Եւրոպայի այլ և այլ կողմերում, մենք լսում ենք նրանց քոյրերի ու մայրերի հեծկլտոցը, մենք տեսնում ենք ամենուրեք ստի, լրտեսութեան, պաշկանիչ անբարոյութեան թագաւորութիւնը, մեր ականջին հնչում է աղտագակը հպարտահարած ժողովրդի, մեր աչքին պատկերանում է հրահանգիչ օրինակը բոլոր նրանց՝ որոնք կռւում ու նահատակւում են լռելեայն... Մի այդպիսի կացութիւն չի կարող յարատևել և չպէ՞տք է յարատևէ. լաւագոյն է մեռնել մի գեղագոյն ու փառաւոր ճակատամարտում,

պարզելով մեր ազգային դրօշը, քան թէ տեսնել ամեն օր, թէ ինչպէս հայրենիքի ազնւագոյն զաւակները ընկնում են մին մեսի եւսի դահիճների կացնի տակ... Կարճատե՛ն են բռնութեան երազները և անվրէպ ու անխուսափելի է յաղթանակը մի ժողովրդի, որ կռւում է ու տառապում յանուն արդարութեան և յանուն սուրբ ազատութեան" *)...

Պիէմոնտը դարձեալ հանրային ուշադրութեան կենտրոնն էր, սահմանադրական պիէմոնտը իր փոքրիկ բանակով, իր հինգ միլիոն ժողովրդով, իր ազգատիկ տնտեսութեամբ։ Ի՜նչ փոյթ, թէ արդէն երկու անգամ պարտել էր չարաչար։ Նա նորէն կը պատրաստւի և նորէն կը յարձակւի։ Բայց այժմ արդէն նա կը մտցնէ մի նոր տարր իր գործունէութեան մէջ—դիւանագիտական տարրը։ Պ՛ածեցնէ իր զօրքը և կը փնտրէ դաշնակիցներ Եւրոպայում։

Այդ դերն էր, որ ստանձնեց Կավուրը, մինիստր-վարչապետ պիէմոնտի. մի ուժեղ խմացականութիւն, մեծատաղանդ դիւանագէտ։ Նա խորհեց, որ Իտալիան մեն-մենակ չի կարող թօթափել աւստրիական հզօր բռնապետութեան լուծը, որ հարկ է կոչ անել համակիր պետութիւնների և իրաւախոհել նրանց հետ, միասին գործելու և աւստրիացիներին քշելու համար։ Ո՞վ կարող էր լինել այդ ապագայ դաշնակիցը։—Միմիայն՝ Ֆրանսիան։ Պէտք էր, ուրեմն, իրաւախոհութեան մէջ մտնել Ֆրանսիայի հետ, հայցել նրա վիներական աջակցութիւնը, խոստանալով նրան յայտնի փոխարինութիւն, հատուցում։ Այդպէս էր ծրագիրը Կավուրի և ամբողջ չափաւոր կուսակցութեան, որ ինչպէս տեսանք, հակառակ էր ապստամբական միջոցների։

---

*) *Mazzini. Scritti editi e inediti.*

Ինչպէ՞ս վերաբերուեց Մաձինին դէպի այդ ծրագիրը։ —Միանգամայն բացասաբար։ Նա իր ամբողջ էութեամբ դէմ էր դիւանագիտական իրաւախոհութեան, որ նրա աչքում ստորացնում էր ազատագրական պատերազմի հմայքը. անհաշտ, կարմիր, յեղափոխական առաքեալն էր նա, սկզբունքի ու մաքրութեան ասպետը, թշնամի ամեն տեսակ կոմպրոմիսի, իրաւախոհութեան։ Հակաժարտուիթիւնը կատարեալ էր նրա և կավուրի միջևն վէրջինը ազնւական իր կրթութեամբ, միապետական իր համոզումներով, իսկական դիպլօմատ էր, պատեհապաշտ, օպպօրտիւնիստ, պատրաստ մտնելու ամեն տեսակ կոմպրոմիսների մէջ։

Մաձինին դէմ էր Ֆրանսիայի միջամտութեան՝ նաև զուտ գործնական նկատումներով։ Ֆրանսիան Նապոլէօն III-ի Ֆրանսիան էր, ուխտադրուժ բռնաւորի, որ հէնց նոր էր նիւթել իր *coup d'Etat*-ն և ոչնչացրել փետրուարեան հանրապետութիւնը։ Մաձինին վախենում էր այդ մարդու միջամտութիւնից. Նապոլէօն III-ը, ասում էր նա, կարող է խլել Իտալիան Աւստրիայից, բայց նշանակել նրա գլխին մի նոր բռնաւոր, իր հլու կամակատարներից։ Հանրապետական և դեմօկրատ էր Մաձինին, համոզուած՝ որ իտալական մեծ ազգը հանրապետական ռէժիմի տակ միայն կարող է իրօք առաջադիմել ու բարգաւաճել։ Ի՞նչ ասել կուզէ, որ մեծ ֆարոզչի բնազդը չէր վրիպում այդ հիմնական կէտի մէջ և եթէ Իտալիան իր ազատագրութեան օրերից իւ վեր ընդունէր հանրապետական իրաւակարգ նա շատ աւելի առաջադէմ ու բարգաւաճ կը լինէր այսօր և ազատ կը մնար այն անհամար խոչերից ու չարիքներից, տգիտութեան ու թշուառութեան պատուհասից, պատերիզմի, ոճրականութեան և մասսային գաղթականութեան աղէտներից, որոնք 50 տարուց իւ վեր ծանրացած

են այդ գեղանի և դժբախտ երկրի վրայ, շնորհիւ մեծ մասամբ միապետական ռէժիմի, որ քաղաքական մի քանի ազատութիւններ շնորհելով հանդերձ, նպաստաւորում է տնտեսական հրէշաւոր անհաւասարութիւնը, ագնւականութեան ու կղերի անյագ կիղեքումները, լատիֆունդիաների ոճրագործ սիստեմը և զանգւածների հսկայածաւալ պրօլետարացումը..

Ի՞նչ անել. սակայն պիէմօնտն էր գալոց ազատագրական պատերազմի առաջապահը, իսկ պիէմօնտը միապետական էր: Միւս կողմից գրեթէ ակներև էր, որ առանց դրսի միջամտութեան, առանց Ֆրանսիայի, Իտալիան անզօր էր աւստրիացիների դէմ: Առաջ եկաւ մի ծանր դիլեմմա... Ինչպէ՞ս լուծել գորդեան հանգոյցը: Մաձինեաններն անհաշտ մնացին: Անխոնջ պաւագիրը միշտ նորանոր ծրագիրներ էր յղանում, մինը միւսից հոյակապ, բայց աւա՛ղ, անիրագործելի: Դա մասամբ անհետևանք յարաբերութեան մէջ Եւրոպայի յեղափոխական պարագլուխների հետ, որոշեց նիւթել նրանց հետ միասին ապստամբութիւններ ամբողջ Եւրոպայում, ամակավարական նշանաբանով, զբաղեցնել ամեն տեղ բռնապետներին, նեղը ձգել մասնաւորապէս աւստրիական կառավարութիւնը, դիւրութիւն տալ Իտալիայի ըմբոստներին առաջ բերելու յաղթական ապստամբութիւնը իրենց երկրում և հայրենիքի ազատագրումը.. Եւրոպան քիչ առաջ բոցավառուած էր փետրուարեան հրդեհով, ինչո՞ւ վերստին չի կարելի բորբոքել նոյն հրդեհը... Եւ մեծ աքսորականը — նա դեռ ճնում էր աքսորական ու թափառական, խորթ զաւակ իր հայրենիքի, անգամ պիէմօնտի — սկսեց տենդային բանակցութիւններ — 50-ական թուականների սկզբներում — Կոշուտի և Լեդրիւ-Ռոլլէնի հետ (վերջինը պարագլուխ էր ֆրանսիական հանրապետականների). Ապարդիւն ճիգեր էին..

Միևնոյն ժամանակ ժաձինեաններըը գրեթէ անընդհատ առաջ տարան իրենց դաւադրական ձեռնարկները։ Մի խումբ տերրօրիստներ որոշեցին սպանել Աւստրիայի թագաւորին, երբ սա կատարում էր իր հանդիսաւոր ուղևորութիւնը դէպի Վենետիկ։ Ոստիկանութիւնը, սակայն, պատահմամբ ձերբակալեց տերրօրիստներից մէկին և դաւը բացւեց։ Տեղի ունեցաւ Մանտովայի արիւնալի դատը, որի հետևանօք, 1852 թ. դեկտ. 7-ին կախաղան բարձրացան Էնրիկո Տաձձօլի (հոգևորական), բժիշկ Կարլօ Պօմա, Անջելօ Սկարսելինի, Բերնարդօ Կանալ, Ջիօվաննի Յամբելլի. քիչ յետոյ ընկան դահճի հարւածների տակ մի շարք ուրիշ վենետիկեան քաղաքացիներ, ի միջի այլոց հոգևորական Գրացիօլլի և կոմս Մօնտանարի։ Ուրիշները աքսորւեցին Մօրավիա։

Դրակօնեան պատիժները աւելի էին սաստկացնում գրգռումն ու ատելութիւնը. տերրօրական ձեռնարկները վերջ չունէին։ 1853-ի փետրւարին հարիւրի չափ միլանցի յեղափոխականներ թափւեցին յանկարծ աւստրիական պահակի վրայ և կոտորեցին, յուսալով, որ այդ խիզախ ձեռնարկին կը հետևէ ընդհանուր ապստամբութիւն... Կտրիճները ձերբակալւեցին, նոր դատ ու նոր դրակօնեան վճիռներ. 16 հոգի կախաղան բարձրացան։

Մաձինին շարունակում էր դաւել և մի օր տերրօրիստի վրէժինդիր ձեռքը բարձրացաւ Պարմայի բռնաւոր իշխանի, Կարլոս III-ի վրայ, որ ժողրել էր ամենադարշելի վարչական սիստեմ և ժողովրդի հարւածներով էր պատժում քաղաքական կալանաւորներին։ Օրը ցերեկով բազմամարդ փողոցի մէջ դաշունազարկ եղաւ նա, տերրօրիստը փախաւ և ոչ ոք չմատնեց նրան, թէև ամբողջ քաղաքը գիտէր նրա ով լինելը։ Ժողովուրդը

պահ մի ազատ շունչ քաշեց, բայց դեռ բանի՛ այդ-
պիսի բռնաւորներ կային Իտալիայում...

***

Կավուր—Պիէմոնտի նոր մինիստր-նախագահը—ցոյց
տւեց անսովոր եռանդ փոքրիկ պետութեան վերանո-
րոգման գործում։ Շուտով երկաթուղիներն ու հեռա-
գրաթելերը ծայր տւին այլ և այլ ուղղութիւններով,
զարգացաւ առևտուրն ու արդիւնաբերութիւնը, երկիրը
վերսին ծաղկեց, պատերազմի ու պարտութեան աղէտ-
ները մոռցւեցան։ Հայրենասիրական գաղափարն էլ,
Իտալիայի միութեան ու անկախութեան գաղափարը,
աւծարծւեց ու աճեց զուգընթացաբար. վերջապէս, բա-
նակը վերակազմւեց, նոր բերդեր կառուցւեցին և այլն։
Պակասում էր միայն մէկ բան — դաշնակից պետու-
թիւնը։ Այդ էր փնտրում հևիհև Կավուրը և ահա
Ղրիմի պատերազմը նպաստաւոր առիթ տւեց նրան՝
ժողովրդին արևմտեան պետութիւններին։ Երկար բա-
նակցութիւններից յետոյ՝ նրան յաջողւեց դաշն կապել
Ֆրանսիայի ու Անգլիայի հետ (1855 թ. յունւար),
որով Պիէմոնտը պարտաւորւում էր 15,000 զօրքով
մասնակցել Ռուսիոյ դէմ սկսւած պատերազմին։ Դիւ-
թական ոչ մի շահ չունեցաւ այդ պատերազմից, բայց
պարիզեան վեհաժողովին իտալական փոքրիկ պետու-
թիւնն ևս մասնակցեց, յանձին իր ներկայացուցչի —
Կավուրի։ Վերջինը դրեց այդտեղ պաշտօնապէս Ի տա-
լ ա կ ա ն խ ն դ ի ր ը, հրաւիրեց վեհաժողովի ուշա-
դրութիւնը Ապենինեան թերակղզու կացութեան, աւս-
տրիական ռէժիմի և հպատակ ժողովրդի դարաւոր
տառապանքների վրայ։ Ցանուն Եւրոպայի խաղաղու-
թեան՝ Կավուր պահանջում էր լուծել այդ հարցը։

Ֆրանսիա և Անգլիա համակրութեամբ լսեցին պիէժոնտի գանգատները։ Դա արդէն քարոյական խոշոր վաստակ էր։ Իսկ քիչ յետոյ՝ պլօմբիէրի պատմական տեսակցութեան մէջ, կավուր նապոլէօն III-ի հետ կնքեց մի համաձայնութիւն, որով Ֆրանսիայի թագաւորը խոստանում էր ազատել Լոմբարդո-Վենետիկի մինչև Ադրիատիկեան ծովը, պայմանով՝ որ պիէժոնտը յանձնէ Ֆրանսիային Սավուան և Նիցցան։

Անցինք արդէն, թէ որպիսի տհաճութեամբ էին նայում Մաձինին ու իրայիններըը առևտրական այդ իրաւախոհութեանց վրայ։ Անխոնջ Դաւադիրը շարունակում էր հոչակել զուտ յեղափոխական մեթօդը և նիւթել խռովութիւններ ու մահափորձեր։ Պարմայի իշխանին սպանելուց յետոյ՝ մաձինեանները փորձեցին ոչնչացնել միւս գազան-բռնաւորին, նապոլի իշխանին և տապալել նրա ռէժիմը։ 1856-ին երիտասարդ Բենտիվենա գլուխ անցաւ մի քանի խմբերի և փորձեց ապստամբեցնել ժողովուրդը։ Փորձը, սակայն, վիժեց և խմբապետն ու մի շարք ուրիշ պարագլուխներ հրացանի բռնուեցին։ Վիժեցին շատ ուրիշ փորձեր ևս։

Բայց միմիայն իրենց երկրի բռնաւորների դէմ չէր, որ իտալացի դաւադիրները ճօճում էին սուրն ու ատրճանակը։ 1858-ին նրանք փորձեցին սպանել նապոլէօն III-ին... Պարիզում էին մոռացել, որ 1849-ին Ֆրանսիական զօրքը հռօմի վրայ արշաւելով, խեղդել էր հանրապետական շարժումը և վերահաստատել պապի բռնապետութիւնը։ Եւս առաւել նրանք չէին մոռանում այդ՝ որ ինքը նապոլէօն III եղել էր մի ժամանակ — 30-ական թուականներին — յեղափոխական, կարբոնարի եւ ահա որոշում են սպանել ուէնէգատին,

որի վրայ այնքան յոյս էին դրել իտալացի ըմբոստները և որը դաւաճանում էր Իտալիային ու Ցեղափոխութեան։ Մի երեկոյ, երբ կայսրը դուրս էր գալիս թատերական ներկայացումից, չորս իտալացի տերրօրիստներ, Օպերայի առջև իսկ ռումբեր նետեցին արքայական կառքի վրայ։ Սպանեցին ու վիրաւորեցին 156 հոգի, բայց Նապոլէօն III ճնշց անվնաս։ Օրսինին, այդ խիզախ դաւադրութեան ղեկավարը, գլխատեց։ Դէպքը ուժգին ցնցում պատճառեց Թագաւորին և փութացրեց նրա միջամտութիւնը իտալական գործերի մէջ։ Այս դէպքից յետոյ էր, որ տեղի ունեցաւ Պլօմբիէրում կավուրի ու Նապոլէօնի տեսակցութիւնը, որին պիտի հետևէր 1859-ի ազատարար պատերազմը...

Ի՞նչն էր դրդում Նապոլէօն III-ին իր ձեռքն առնել—այնքան ջերմեռանդութեամբ—Իտալիայի գործը։ Նախ, ի հարկէ, հոգային նոր նուաճումների հրապոյրը։ Բայց կային այդտեղ և գաղափարային, „իդէօլօգիական“ մղումներ։ Նախկին կարբոնարին սիրում էր Իտալիան, որի հետ կապուած էր ազգակցական կապերով, նա կուզէր յարութիւն տալ փառաւոր անցեալի տէր մի ազգի եւ ազգայնութեան սկզբունքի (le principe de nationalité), որ նա պատերազմ յայտարարեց Աւստրիային։ Մէկ ոք իրաւունք չունի բռնանալու մի ազգի ճակատագրի վրայ—այսպէս էր հռչակում Թագաւորը ex-կարբոնարին — ամեն մի ազգ ազատօրէն, անկախօրէն պէտք է տնօրինէ իր բախտը... Կար, անշուշտ, նաև վրէժի, ըվանշի ուժեղ խթանը. Նապոլէօն III չէր մոռանում, որ 1815-ին Սրբազան Դաշնակցութեան մէջ, Աւստրիան էր, մետերնիխեան գոռոզ ու բռնաւոր Աւստրիան, որ այնքան նաստացրեց յեղափոխական Ֆրանսիային և հակայ ժանդարմ կանգնեց Եւրոպայի բոլոր մաներ ու

խոշոր ըմբոստացող ազգերի վրայ ժամը հասել էր „հատուցման“—և ահա Ֆրանսիայի վեհապետը շանթալի սպառնալիքներ է յղում Վիեննային... Իսկ Վիեննան ամեն գնով պահպանել էր ուզում իր հեգեմոնեան, գերիշխանութիւնը Պենինեան թերակղզու վրայ:

Դէպքերը գոհավիժեցին 1856-ից իվեր, պարիզեան կոնգրէսից յետոյ: Կավուրը արագ-արագ առաջ տարաւ պատերազմի պատրաստութիւնները. յեղափոխականների կուսակցութիւնը, յաղթահարուած ու ճարակուած 1849-ի անցքերի ժէջ, վերստին հրապարակ եկաւ, Մաձինին թողեց, վերջապէս, իր աքսորավայրը, Թուաւ դէպի սիրած Հայրենիքը, հաստատուեց Ջենովայում և անմիջապէս սկսեց էլ „դաւերը“: Գարիբալդին գլուխ անցաւ ազգային լէգէոններին: Աճում էր գրգռուածն ու ատելութիւնը Աւստրիայի դէմ. վերջինը տենդով կենտրոնացնում է իր զօրքերը Լոմբարդիայում ու վենետիկի շրջանում, թափում է այնտեղ ժօտ 200,000 զինուոր: Կավուրը պարլամենտից ստիպողական կոչ է անում իտալացի ըմբոստաններին, վառում է հայրենասիրական կրակը, գրգռում է Աւստրիայի դէմ...

Վիեննան որոշեց նախայարձակ լինել նա պահանջեց Պիէժոնտից զինաթափ լինել և սոացաւ կտրուկ մերժում: Պատերազմ էր: Ֆրանսիան յայտարարեց, որ պիտի աջակցէ իր դաշնակցին: 1859 ապրիլի 29-ին աւստրիական զօրքը, թուով 170,000, անցաւ Տիչինօն, ճիշտ միևնոյն ժամանակ Ֆրանսիական բանակը, թուով 120,000, կտրեց Ալպերը Նապօլէօն III-ի հրամանատարութեան տակ և միացաւ Պիէժոնտի զօրքի հետ, որի թիւը հասնում էր ժօտ 60,000-ի: Վերջինը նախայարձակ եղաւ: Գարիբալդին իր ալպեան որսորդների լէգէոնով արշաւեց կանոնաւոր բանակի հետ աւստրիացիների դէմ, պարտեց վերջիններին ալ թևը, առաւ Վարէզը և յաղ-

Թականօրէն սլացաւ դէպի Կոմօ։ 10,000 զօրք պաշտպանում էր այդ քաղաքը։ Գարիբալդին ունէր միայն 5000 մարդ. զարնեց անսովոր յանդգնութեամբ և առաւ Հաստատեց այնտեղ իտալական վարչութիւն և կազմակերպեց կամաւորների վաշտեր։ Գարիբալդեան յաղթանակների լուրը շառաչուտով անցաւ ամբողջ Լոմբարդիայի վրայից և բռնկեցրեց գրեթէ ընդհանուր ապստամբութիւն։ Աւստրիացիք շարած էին Ադդայի այդ անակնկալ ու շանթոտ հարուածների հանդէպ, նրանք տեսնում էին Գարիբալդիի ուրուականը ամեն տեղ—և ամեն մի գիւղ մտնելիս դողալով հարց էին տալիս. „Այստե՞ղ է նա արդեօք“...

Մինչ այս մինչ այն, տեղի ունեցաւ արիւնալի ճակատամարտ Մաջենտայում, որից յետոյ Աւստրիան իսպառ յետ քաշեց Լոմբարդիայից։ Նա փորձեց վերստին գրաւել այն, բայց դաշնակից զօրքերը առաջն առան. Սօլֆերինոյի մօտ տեղի ունեցաւ նոր ու բուռն ճակատամարտ, աւստրիացիք նորէն ջարդուեցին և փախան։ Այդ միջոցին Պրուսիան սպառնաց միջամտել։ Նապօլէօն վախեցած՝ շտապեց դիմել խաղաղութեան բանակցութիւնների։ Նա կացութեան տէրն էր և իրաւարարը։ 1859 յուլիս 8-ին նա անձնական տեսակցութիւն ունեցաւ Ֆրանց Յօզէֆի հետ. և քիչ յետոյ ստորագրեցին խաղաղութեան պայմանները։ Աւստրիան պիտի յանձնէր Լոմբարդիան Նապօլէօնին, որ պիտի յանձնէր այն Պիէմօնտին։ Իսկ ինքը՞ն... Մանր իտալական պետութիւնները պիտի կազմէին դաշնակցութիւն, ընդ նախագահութեամբ... Պապի։ վենետիկի շրջանը նոյնպէս պիտի յարէր այդ Դաշնակցութեան, բայց միայն աւստրիական գերիշխանութեան տակ...

Ահա թէ ինչպէս կատարեց Նապօլէօն III իր հանդիսաւոր յանձնառութիւնները հանդէպ Պիէմօնտի և

Իտալիայի նա, որ խոստացել էր ազատագրել Իտալիան Ալպերից մինչև Ադրիատիկեան ծովը, նա այժմ բաւականանում էր միմիայն Լոմբարդիան Պիէմոնտին յանձնելով։ Աւստրիական տիրապետութիւնը կանգուն էր մնում Վենետիկում, իսկ Իտալիայի մեծագոյն մասը յանձնւում էր պապին... Պարզ էր, որ Նապոլէօն կամենալով հանգերձ դուրս մղել աւստրիացիներին Ապենինեան թերակղզիից, չէր ուզում իրօք Իտալիայի միութիւնը։ Նա կուզէր այդ երկիրը բաժան-բաժան ֆրանսիական գերիշխանութեան տակ պահել... պապի միջոցով. Իրականանում էր Մաձինիի գուշակութիւնը...

Խաղաղութեան պայմանները ցաւ ու գասում պատճառեցին ամբողջ Իտալիայում Պիէմոնտի թագաւորը, Վիքտոր Էմանուէլ II, ստորագրեց այն, հակառակ ազգային կամքի, հակառակ իր վարչապետ Կավուրի թախանձանքներին։ Կավուր զզւանքով հրաժարական տւեց։

ԳԱՐԻԲԱԼԴԻ.


Նապոլէօն չէր ուզում Իտալիայի միութիւնը, բայց իտալացի յեղափոխականները իրագործեցին այն՝ հակառակ Նապոլէօնի։ Բարեբախտաբար, ողջ էր դեռ Մաձինին, ողջ էր Գարիբալդին. նրանք վճռեցին ոտքի հանել ամբողջ հարաւը, յանուն Միութեան։

Գարիբալդին այդ օրերից ի վեր դառնում է արդէն ազգային շարժման տիրական դէմքը և ամբողջ աշխարհի ուշադրութեան կենտրոն։ Նա հէքեաթային անխոցելի դիւցազն էր, որ իր սխրանեան թռիչքներով սարսափեցնում էր հայրենիքի դահիճներին և սքանչացումի խօսքեր պոկում մարդկութեան մեծագոյն զաւակների շրթունքներից։ Մենք տեսանք նրան քսան տարի առաջ իր մեծ վարպետի, Մաձինիի հետ ազգային փրկու-

թեան ծրագիրը որոճալիս։ Այնուհետև նա մասնակցեց մի շարք մաճձինեան դատավրութիւնների, յաճախ ենթարկուելով մահուան վտանգի։ Ապա բախտը նետեց մի առժամանակ այդ անհանգիստ ու արկածախնդիր Ոգին դէպի Հարաւ-Ամերիկայ, ուր նա գործօն մասնակցութիւն ունեցաւ ազատագրական կռիւների մէջ։ Բրազիլիայի մի մեծ նահանգ ըմբոստացել էր միապետական ռէժիմի դէմ, հռչակել էր հանրապետութիւն։ Գարիբալդին կամաւոր գրեց, մի երկու տասնեակ ուրիշ իտալացի քաջերի հետ կազմեց մի ասպատականաւ, կնքեց այն „Մաճձինի“ անունով և նետուեց պատերազմի մէջ։ Գնաց նա և իբրև ձիաւոր, բռնապետական զօրքերի դէմ, ցոյց տալով այդ արհեստի մէջ արտասովոր ընդունակութիւն։ Անզուգական էր նա մանաւանդ անկանոն, պարտիզանական կռիւների մէջ (*guerilla*), իբրև խըմբապետ, հրամանատար։ Աքանչելիօրէն զինավարժ էր, ահեղօրէն յանդուգն. գիտէր փոքրաթիւ կտրիճներով մղել անհաւասար ու յաղթական ճակատամարտներ մեծաքանակ զօրքերի դէմ, գիտէր կայծակի արագութեամբ զարնել անյայտ դարաններից և շշմեցնել ու փախուստի մատնել թշնամուն։ Եւ ամեն տեղ, ազատութեան խանդավառ պաշտամունքի հետ դիւցազն հրամանատարը մատնում էր մի վսեմ հոգի, ամենաբարձր վեհանձնութիւն, ցոյց էր տալիս յարգանք դէպի զոհերը, դէպի պարտւածի կեանքն ու գոյքը։ Դրանք գարիբալդեան ճշմարիտ յատկանիշներն են, որ, տարաբախտաբար, քիչ են նք հանդիպում անգամ լուսաւոր աշխարհի պարբերական ընդհարումների մէջ։ Այդ սկըզբունքների ոգով էլ Ռազմիկը դաստիարակում էր իր լեգէոնները։

Քանի՛ արկածներ ու յաղթանակներ—իր անդադրում ու հերոսական թափչքների միջոցին... Անհաշիւ են

նրանք, և մեր գրքի սուղ էջերը չեն թույլ տալիս երկարօրեն կանգ առնելու նրանց վրայ։ Մի օր իր հայրենական թափառումների մէջ, երիտասարդ Գարիբալդին յայտնուեց մի տան լուսամուտի առջև, դէմ յանդիման մի գեղեցկուհու, որ վայրկենապէս շղթայեց նրա ուշա-



Գ ա ր ի բ ա լ դ ի

դրութիւնը իր դէմքի հզօր ու առնական արտայայտութեամբ։ Առանց վարանելու, հայրենիքն իջաւ ձիուց և բախեց տան դուռը... Իր արծւային հայեացքն էլ օրիորդի սիրտն էր գրաւել վայրկենաբար և երբ դուռը բացուեց, Գարիբալդիի առջև արձանացաւ հրապուրիչ բրազիլիու-

հին, նոյնպէս յուզուած, սրտատրոփ Անիտան էր... երկուսի միջև փոխանակուած հայեացքն արդէն ամուսնացրեց երկու հոգիները։

— „Դու իմն ես“, ժրաջան կարիբալդին, պարզ, կտրուկ, լակոնիկ, ինչպէս իր ռազմական հրամաններն էջ։

Գուցէ երբէք սիրոյ յայտարարութիւնը չէ եղած այնքան կարճ ու կտրուկ և չէ ընդունուած այնպիսի արագութեամբ։

Այդ յիշատակելի օրից ի վեր Անիտան դարձաւ Գարիբալդիի բախտի ու արկածների անբաժան ուղեկիցը, որի հետ նա թափառեց տասնեակ տարիներ, յաճախ նեռւեցին մրսին կուի, յեղափոխութեան փոթորիկների մէջ։ Կեղեցիկ և արիասիրտ բրազիլիուհին ժպտում էր ամենավտանգաւոր արկածների հանդէպ, չէր վհատւում երբէք և ի տեղի բեռ լինելու, ցոյց էր տալիս ինքզինքը որպէս արժանաւոր զինակից իր հոյակապ ամուսնու։ Երկուսն էլ խանդավառ սիրահարներ ազատութեան ու կուի։ Ասես նախախնամութեան մատը կար այդ չնաշխարհիկ ռօմանի մէջ։

Շուտով մի այլ կուիւ ծագեց Հարաւ-Ամերիկայում։ Ուրուգվայ փոքրիկ պետութիւնը պատերազմի մէջ էր յայնածաւալ Արգենտինի հետ։ Նոր էր խաղաղութիւնը վերահաստատուել Բրազիլիայում, Գարիբալդին իր Անիտայի հետ նուիրուել էր փոքր ինչ հանգիստ կեանցաղի և ահա Ուրուգվայի կառավարութիւնը հրաւիրում է նրան ստանձնել ամենախոշոր մարտանաւի հրամանատարութիւնը։ Ազատասէր Հայդուկը, որ իր կեանքի նպատակ էր դրել՝ աջակցել միշտ ու ամեն տեղ ակարին ընդդէմ հզօրի անիրաւութեան, ձայնակցեց իրեն ուղղած հրաւէրին և սլացաւ վերստին դէպի պատերազմ (40-ական

թուականների սկզբում), հետ առնելով Անիտան և իր հայրենակից մի խումբ կարիճներ։

Դժուարին արշաւանք էր, լի ձախորդութիւններով ու սոսկումներով։ Գարիբալդին քաջութեան հրաշքներ գործեց. նա կռւում էր անհաւասար ուժերի բազմաթիւ թշնամու դէմ, կորցրեց բուռն ընդհարումների ժէջ իր զինակիցներից շատերին, այրեց, վերջապէս, իր նաւը, թշնամու ձեռքը չտալու համար, յետ նահանջեց, բայց շուտով նորէն յարձակուեց թարմ ուժերով արգենտինեան բանակի վրայ և տարաւ իր ամենափայլուն յաղթանակներից մինը։ Ուրուգվայի կառավարութիւնը նշանակեց նրան հանրապետութեան ընդհանուր հրամանատար, բայց Գարիբալդին հրաժարուեց այդ մեծ պատուից և շտապեց դէպի իր հայրենիքը, Իտալիա, ուր բռնկուել էր ազատութեան շարժումը։

1848 ապրիլին էր, որ Հռչակաւոր Ասլմիկը իր 63 իտալացի զինակիցներով նաւ նստեց դէպի Եւրոպա։ Գիբրալտարի նեղուցն անցնելով՝ խումբը լուր առաւ, թէ Պալերմօն, Միլանը, Վեննտիկը արդէն իսկ դուրս են քշել աւստրիացիներին։ Աննկարագրելի էր գարիբալդեանների խանդավառութիւնը, նրանք լալիս էին ուրախութիւնից, իրարու գիրկ նետւում և համբուրւում։ Հերոսը շտապեց նախ գէպի Նիցցա, իր ծննդավայրը։ Նրա ամերիկեան ախրագործութիւնների լուրն արդէն հասել էր հայրենակիցներին և նրան դիմաւորեցին ցնծութեամբ ու կեցցէներով։ Պատաւ ժողը այցելելուց յետոյ, գնաց Պիէմօնտ իր ծառայութիւնը մատուցանելու կարլո Ալբերտոին.. որը 15 տարի առաջ մահուան էր դատապարտել Գարիբալդիին, իբրև մաձինական դաւադիրի։ Կարճամտութեամբ, յանցաւոր կուրութեամբ Պիէմօնտի թագաւորը մերժում է Հերոսի աջակցութիւնը։ Վերջինը գնում է Միլան, այնտեղից Բերգա-

ժասկ, ուզում է կազմակերպել Հայդուկների մի սուար խումբ և սկսել ամենուրեք պարտիզանական կռիւ։ „Քանի որ չունինք կանոնաւոր ու զօրաւոր բանակ, ասում էր նա, մեր փրկութիւնը պարտիզանական կռիւների մէջ է“։ Աջողութիւն չունեցաւ այդ քարոզը. խումբը կազմուեց, բայց սակաւաթիւ էին կամաւորները և զուրկ ռազմական խանդավառութիւնից։ Այնուամենայնիւ մի քանի խիզախ թռիչքներ կատարեց նա և մի անգամ նեղ ձգեց աւստրիացիներին։

Հռօմում էր — 1849-ին — որ նա ցոյց տուեց իր ռազմական հանճարը այն յիշատակելի կռիւի մէջ, որ մաձինեաններըը սկսել էին ընդդէմ պապի իշխանութեան, յանուն հռօմէական հանրապետութեան։ Ապա վերսկսում են Հայդուկի թափառումները փոքրաթիւ զինակիցներով սլանում է շարունակ դէպի սարուկ հայրենիքի այլ և այլ ծայրերը, գլխաւորապէս հիւսիսային Իտալիայում, անակնկալ յարձակումներ է գործում աւստրիացոց դէմ։ Իր սիրելի Անիտան միշտ հետն է, քաժանում է արշաւանքների բոլոր դառնութիւնները։ Ի վերջոյ, յոգնութիւնից ու հիւանդութիւնից ուժասպառուեց քաջարի բրազիլիուհին և մեռաւ արշաւանքի միջոցին Ռավեննայի մի խուլ ագարակի մէջ, իր սիրեցեալ ամուսնու գրկում։ Գարիբալդին երկար, յուսահատ ողբաց այդ զարմանալի էակին, որ եղաւ մարմնացումը նրա էքնաղ երազների և որ սիրեց, պաշտեց նրան մինչև մահ։ „Այնպէ՞ս էր նա սեղմում դիակը իր գրկի մէջ — ասում է պատմագիրը — որ կարծես ուզում էր իր սեփական կեանքը ներշնչել նրան“։ Սակայն աւստրիացիք մօտենում էին... Ագարակատէրը աղերսում է Գարիբալդիին փախչել, ապա թէ ոչ, ասում է, ես էլ կորած եմ, եթէ իմանան, որ ապաստանել եմ ինձ մօտ ծեր փոխականին։ Ռազմիկը վերջին անգամ նայում է սիրած

ամուսնու դիակին — ազէկաուր, սիրտ կարատող հայեացք — և հեռանում էր։ Դա ամենագառն վայրկեանն էր նրա կեանքի մէջ *)...

Ագարակաեէրը շտապ-շտապ հողին է յանձնում դիակը։ Ցետագայում Անիտայի նշխարները փոխադրեցին Նիցցա, իր ամուսնու ծննդավայրը և ամփոփեցին Դղեակի հին գերեզմանատան մատուռի մէջ **)։

---

*) *Ch. de Saint-Cyr. Garibaldi.*

**) 1909-ի փետրուար թէ մարտ ամիսն էր. մի օր Նիցցայում, կարմիր թռուցիկներով գարիբալդեան լէգէօնր ձանուցանում էր, որ Château-ի գերեզմանատանը, Անիտայի մահուան 60-ամեակի առիթով պիտի բաց անեն նրա յուշարձանը և պիտի կատարւի հանդէս։ Ի միջի այլ նիցցայաբնակ օտար գրողների, հրաւիրւած էր և գրքիս հեղինակը՝ մասնակցելու այդ եզակի յեղափոխական հանդէսին։ Քիչ անգամ էի կեանքիս մէջ ներկայ գտնւել այդքան յուզիչ թափօրի։ Հաւաքւել էր բաւական աւտար, կօսմօպոլիտ բազմութիւն։ Ընդհանուր ուշադրութեան առարկայ էին մի շարք հին գարիբալդեաններըը, զառամեալ ինվալիդներ, կարմիր շապիկները հագած։ Նրանք բոլորը թէ և թևի կուռել են մի ժամանակ „տիեզերական Առպետի“ հետ։ Նրանցից իւրաքանչիւրը մի սպի ունի մարմնի վրայ, մի բաղդը յուշ այդ հին դիւցազնական օրերից։ Սկսւում են ճառերը, խօսում է մի ալոց այդ փառահեղ ինվալիդների ներկայացուցիչը, խօսում է երկար, դողդողալով, իտալերէն փոքր ինչ յեղաթիւրւած բառերով, պատմում է շնաշխարհիկ Զոյգի ամանը, երկու հոգիների յեղափոխական ներդաշնակութիւնը, ազատութեան խանդավառ պաշտամունքը, ներկայացնում է նրանց ռազմական արկածները, ուրախութիւններն ու տառապանքները... Ինչքա՜ն, յիրաւի, արտառուչ է այդ խեղճ Անիտայի կեանքի վէպը, նրա հանդիպումը Գարիբալդիի

Երկար թափառումներից յետոյ Հերոսը բնակութիւն հաստատեց Կապրերա կղզիի մէջ *), ուր պարապում էր որսորդութեամբ ու երկրագործութեամբ։ 1859-ի անցքերը վերստին դուրս կոչեցին նրան իր իդիլլիկ անդորրութիւնից և այս անգամ նա իր հայդուկային թուիչքներով պիտի դառնար բուն իսկ Հոգին իտալական ազգային շարժման։

Իբր յաղթական պատերազմից յետոյ Գիէմոնտը միացրեց Լոմբարդիան, կենտրօնական Իտալիայի մի շարք նահանգներն ևս—Տօսկանիա, Պարմա, Մօդէնա ևլն—ընդհանուր ձայնատուութեամբ նոյնպէս հռչակեցին իրենց միութիւնը Պիէմոնտի հետ։ Սակայն դեռ ամբողջ իտալական հարաւը ճնշում էր օտար բռնակալութեան ճանկերուժ։ Պէտք էր հակառակ Նապոլէօնի, իրագործել հայրենիքի լիակատար Միութիւնը Ալպերից մինչև Էտնա։ Ահա այդ դժուարին գործն էր, որ ստանձնեցին իտալական յեղափոխականները։ Գարիբալդին, վարէգի և ոմանք իր յաղթական կռիւներից յետոյ պատրաստում էր իր ալպեան որսորդներով (*cacciatori delle Alpi*) խուժել Տիրոլ, բայց հէնց այդ միջոցին լուր առաւ, որ խաղաղութիւնը կնքուած է արդէն. խոր կսկիծ պատճառեց նրան իր ծննդավայր Նիցցայի յանձնումը Ֆրան-

---

հետ, սիրոյ կիրքը, որ յանկարծակի բռնկուում ու տիրում է նրան, ամուսնութիւնն ու խօլական ձիարշաւները սարերի ու ձորերի մէջ, յոգնութիւնն ու մահացու վտանգները, նաւային անհաւասար ճակատամարտը, ուր գեղանի ամազոնը ինքն է վարում թնդանօթը իր չքնաղ ամուսնու քով, ապա այդ ցնծագին վերջալոյսը Նաւեննայի մենաւոր ապարանում, հիւանդութիւնն ու աստիճանական ծերութիւը, հոգեվարքն ու մահը՝ հեռակլոտացող Տիտանի գրկում...

*) *Caprera*. Սարդինիայի հիւսիս-արևելեան կողմը։

սիային. բուռն կերպով բողոքեց, բայց արդէն ուշ էր։ Առիւծը համակերպեց ատամները կրճտացնելով և պատրաստեց մի նոր արշաւանքի համար, աւելի մեծ, աւելի ծաւալուն։ Մաձինին արդէն ղրկել էր իր գործակալները Սիցիլիա կղզին՝ ապստամբութիւն հանելու համար։ Այդ ուղղութեամբ աշխատում էր այնտեղ և Հռչակաւոր Կրիսպին, երբեմն կարմիր յեղափոխական, ապագա —90-ական թուականներին — միացեալ Իտալիայի նախարարապետ՝ բաւական յետադէմ կերպարանքով։ Մաքերը յուզւած էին արդէն, տրամադրութիւնը բարձր էր աժենուրեք Հիւսիսի գոռ դէպքերի ազդեցութեան տակ և Գարիբալդիի անունը շրջան էր անում ամբողջ Իտալիայում։

ՀԱՋԱՐԻ ԱՐՇԱԻԱՆՔԸ.

Սիցիլիան պարզեց ապստամբութեան դրօշը. քանի երրորդ անգամը... Ովքա՜ն արիւն էր տեսել այդ հեռաւոր ու վատաբաստ կղզին։ Ամենաքստմնելի բռնակալութիւնն էր խշխում այնտեղ. երկրի ծաղիկը — ժողովրդի, բուրժուազիայի, ազնուականութեան լաւագոյն մասը — մատնւած էր անողոք ճնշման ու հալածանքի. բանտարկւում, աքսորւում, ոչնչացւում էին բոլոր „կասկածելիները“. ծեծ, չարչարանք ու անարգանք բանտերի մէջ... Դահճի մարտակը գործում էր անդադար։ Ազատամիտ Եւրոպայի ժողովուրդներն ու կառավարութիւնները ցասումով էին դիտում բուրբոնների այդ բարբարոս անձարձակութիւնները. օգնութիւն ոչ մի տեղից չէր գալիս, սակայն. Հարաւային Իտալիան անքուն էր մի ծանր օրհասի տակ։ Ատելութիւնը դէպի բուրբոնները, աճելով, նորէն ժայթքեց, ծագեցին խռովութիւն-

Ներ Սիցիլիայում։ Այս անգամ էլ, անտարակոյս, Հպարտ կղզին պիտի ընկճէր ռէակցիայի հարուածները տակ, եթէ հիւսիսից չառեղար ակնկալուած օգնութիւնը։ Գարիբալդին վրայ հասաւ, որպէս ազատարար հրեշտակ։ Ունէր նա իր տրամադրութեան տակ ամենաընտիր ռազմիկները մի լէգէօն, 1200 հոգուց բաղկացած։ Եւ ձեռնարկը յաւերժացաւ պատմութեան մէջ, որպէս „Հազարի արշաւանք“ — „*Spedizione dei Mille*“.

Մեծադղորդ մի անձ էր այդ լէգէօնի կազմակերպուճն ու ղեկնուղը, *Risorgimento*-ի աղեներացնցող, խանդավառող անձը։ Գարիբալդիի արծաթին թևերի վրայ իտալական Միութեան իդէալն էր, որ արշաւում էր դէպի ստրուկ, բռնութեան ու խաւարի մէջ հեծկլտացող Հարաւը։ Ամբողջ Իտալիան աննկարագրելի ցնծութեան մէջ էր։ Ամբողջ աշխարհը հև ի հև ուղեկցում էր լեգենդական Հերոսի հանդիսաւոր թափօրին։ Գուցէ երբէք, Բաստիլի առումից ի վեր, չէր տեսնուել Ազատութեան գաղափարի այդքան չքնաղ մի սլացք, տիեզերական „Բողոքի“ այդքան ահեղ մի ժեստ։ Գուցէ երբէք, պարիզեան երկրասասան անցքերից ի վեր, ստրուկ ու բազմատանջ ժարդկութիւնը չէր զգացել այնքան ուժգին, ռազմական, հոգեպարար մի սարսուռ՝ ի տես բացուող արշալոյսի և խորտակուող շղթաների...

Հազարի արշաւա՛նքը... Ջենովայում էր, որ կազմակերպուեց նա, Մաձինիի ծննդավայրում։ 1860 թ. մայիսի 4-ն էր։ Փողոցները լցրել էր խուռներամ բազմութիւնը։ Գարիբալդիի անունը բոլորի շրթների վրայ էր և ամեն տեղ լսւում էր.

— „Այս գիշեր մեկնում են“...

Հասնում է և մեկնելու արտայոյզ վայրկեանը։ Երկու նաւ — „Լոմբարդօ“ և „Պիէմոնտէ“ — պատրաստ են տանելու ազատարար լէգէօնը դէպի ապստամբ Սիցիլիա։

Գիշերային խորհրդաւոր լռութեան մէջ լսւում է Ընդհանուր Հրամանատարի ձայնը... Գարիբալդին յորդորում է, քաջալերում իր զինուորներին.

*Թիավարեցէ՛ք, եղբայրներ, արշաւեցէ՛ք դէպի ամեն կողմ, ուր կան ազատութեան համար մարտնչող հայրենակիցներ. գնացէ՛ք առանց հարցնելու, թէ որքան մեծ է թշնամու թիւը և որքան քիչ ենք մենք կամաւորներս... Գնացէ՛ք հանդէպ ձախորդութիւնների ու վտանգների, որ թշնամին պատրաստում է Ձեր դէմ... Թիավարեցէ՛ք, դուք, ազատութեան նաւաստիներ. այնտեղ հարաւային հօրիզոնի վրայ փայլփլում է մի աստղ, որ տեսել է առաջին անգամը Բէատրիչի մեծ երգիչը *), որ այնուհետև ժպտացել է Հայրենիքի մեծ զաւակներին. Իտալիայի աստղն է դա... Գնացէ՛ք, պատմութիւնը պիտի յաւերժացնէ Ձեր փառաւոր անունները և յետագայ սերունդները զարմանքով ու աքանչացումով պիտի յիշեն Ձեզ, այս յանդուգն ձեռնարկի հեղինակներին...*

Լէգէօնի մէջ էին, իբրև նշանաւոր և ազդեցիկ ապրատամբներ, Նինո Բիքսիո, Կայրօլի եղբայրներ, բանաստեղծ Նիէվօ և Ֆրանչեսկո Կրիսպի, նոյն Կրիսպին, որ 30 տարի յետոյ դարձաւ նախարարապետ, „Իտալական Բիսմարկ“: Կային զինուորներ իտալական Հայրենիքի բոլոր ծայրերից. կային նաև օտարներ—մի մաջառ, մի քանի Ֆրանսիացի, մի երկու անգլիացի. կար 70-ամեայ ջենովացի մի ծերուկ: Կային այդտեղ և 150 ուսանողներ, Պադովայի համալսարանից: Կային, վերջապէս և մի քանիսը „ալպեան որսորդներից“:

Եւ „Հազարը“ արշաւեց ալիքների ու վտանգների միջից դէպի հեռաւոր և ալէծուփ կղզին, գնաց բշելու այնտեղից բուրբոններին, ընդամենը 1100 հրացանով— հարիւր հազարաւոր բուրբոնեան բանակի դէմ...

Մայիս 11-ին Գարիբալդեան լէգէօնը հասաւ Սի-

---

*) Դանտէ:

ցիլիայի Մարսալա նաւահանգիստը և փորձեց ցամաք ելնել, ապստամբներին վիճանալու համար։ Բայց թշնամի զրահանաւերը նրա դէմ եկան և սկսեց բուռն հրաձգանաձգութիւն։ Գարիբալդի և Ինքսիօ, իրրև ճարպիկ նաւավարներ, կարողացան յետ մղել յարձակումը և ափ հանել կամաւորներին։ Գարիբալդիի անունը և նրա առաջին յաղթանակի լուրը կայծակի արագութեամբ տարածեցին կղզիի մէջ, յարուցանելով ամեն տեղ խանդավառութիւն ու հրճուանք. „Ժամանա՞կն էր — ասաց մի ծերունի, դիմաւորելով Գեներալին — որ գայիր մխիթարելու մեզ, որովհետև ծնելու օրից է, որ մենք ողբում ենք“...

Հրամանատարը անմիջապէս ուղղեց կղզիի ազգաբնակութեանը մի թռուցիկ, որով յորդորում էր օգնութեան գալ կամաւորներին.

„Ես եկել եմ մի բուռը քաջերով փրկելու ձեզ և մեր գործը գիւրին կըլինի, եթէ ամենքս միաբան լինենք. ի զէ՛ն, ուրեմն, ով ո՛, զէնք չ՛առնէ, վատասիրտ է և դաւաճան։ Զէնքի պակասութիւնը չ՛առնէք իբրև պատրուակ։ Մենք յետոյ կունենանք հրացաններ, իսկ առայժմ ամեն մի զէնք օգտակար է, միայն թէ գանւի քաջ ձեռքերում։ Հաւատացէք ինձ կը հոգան երեխաների, կանանց ու ծերերի մասին. իսկ դուք երիտասարդներ, եկէ՛ք իմ եռանդից. Սիցիլեան պիտի ցոյց տայ աշխարհին, որ մի երկիր կարող է նւաճել իր ազատութիւնը, եթէ կամենայ“։

Կռիւը կենդանի արձագանք գտաւ կղզիի մէջ և կամաւորների նոր խմբեր շտապեցին միանալ ազատարար Լէգէօնին։ Հրամանատարի անունն արդէն բոլորի համար գրաւական էր յաղթանակի. այդ անուան շուրջը յօրինւել էին երգեր ու առասպելներ. ոմանք ասում էին, որ տեսել են Գարիբալդիի քով մի հրեշտակ, որ պաշտպանում էր նրան գնդակներից ..

Մարսալայից Լէգէօնը գիմեց դէպի Սոլէմի։ Այդտեղ

Գարիբալդին մի նոր թռուցիկով յայտարարեց, որ ստանձնում է կղզիի դիքտատորութիւնը յանուն Վիկտոր Էմանուէլի։ Բուրբոնեան կառավարութիւնը (որի կենտրոնը Նապոլն էր), սարսափի ու շփոթութեան մէջ սկսեց բողոք բառնալ պետութիւններին՝ ընդդէմ պիէմոնտեան կառավարութեան „դաւերի“։ Միևնոյն ժամանակ նա հրաման ղրկեց Պալերմօ *) իր զօրքերի հրամանատարին՝ դիմագրաւելու Գարիբալդիին։ Ցեղի ունեցաւ մեծ ճակատամարտ կատալաֆիմի բերդի մօտ։ Թշնամին անհամեմատ ստուար թիւով բռնել էր միանգամայն անառիկ դիրք, ուսկից տեղում էր գնդակների տարափը կամաւորների վրայ։ Կռիւը սարսափելի էր. նա պիտի որոշէր արդէն „Հազարի“ ճակատագիրը։ Եթէ յաղթէին գարիբալդեաններըը, նրանց պէտք է ծովը նետէին։ Եթէ յաղթող ելնէին՝ Իտալիայի միութեան ճանապարհն էր հարթուած։ Գարիբալդին զգում էր այդ. և նա անդադար խթանում էր ու խրախուսում լեգէօնաւորներին. բայց դրութիւնը կրիտիքական էր։ Մի վայրկեան ինքը արիասիրտ Բիքսիօն յուսահատ դիմեց հրամանատարին. „Պէտք չէ՞ արդեօք յետ նահանջել“։

— „Մենք այստեղ Իտալիայի միութիւնը պիտի դարբնենք կամ պիտի մեռնենք“ — պատասխանեց Գարիբալդին։

Ապա վերստին այցելեց շարքերը և հայրաբար դիմեց զինուորներին.

— Հանգստացէ՛ք մի վայրկեան, զաւակներս, ապա մի վերջին ճիգ — և մենք կը յաղթենք։

Մի վայրկեան յետոյ նա թռաւ առաջին շարքերի մէջ դէպի բերդը։ Քաջերը, խանդավառուած, հետևեցին իրենց պաշտելի խմբապետին և վերջին գրոհը տուին—

*) Սիցիլիայի մայրաքաղաքը։

յաղթական գրոհը։ Թշնամին յետ նահանջեց։ Կատաղաֆիմին ճնաց Լէգէօնի ձեռքում։ Բայց սուղ գնով գնեց յաղթանակը։ „Հազարի“ շարքերը ճարակուեցին. բազմաթիւ սպանուածներ և վիրաւորներ... Ի՜նչ փոյթ, սակայն, երկիրը վերածնւում էր, ազատւում տարկուսեան դարաւոր կապանքներից, ժողովուրդը աներևակայելի ցնծութեան մէջ էր։ Մարդիկ խաչակնքում էին, տեսնելով Գարիբալդիին, կանայք ու երեխաները բոյրներ էին յղում „անխոցելի և անպարտելի Հերոսին“, որ նրանց աչքում խորհրդանիշ էր ազատագրուող Հայրենիքի...

Մեծ երազի իրականացումը մօտ էր արդէն։ Պէտք էր նւաճել Պալերմօն։ Ռազմիկը հնչեցրեց նոր թեւաւոր ռազմախօսք — *Od a Palermo od al Inferno!* (կամ դէպի Պալերմօ կամ դէպի դժոխք) և սլացաւ իր կամաւորներով դէպի Սիցիլիայի մայրաքաղաքը։ Նոր խոչընդոտներ, Գարիբալդիի ամենախիզախ թռիչքներից մէկն էր այդ։ Պալէրմօն ամուր բերդաքաղաք էր, պաշտպանւած բազմաթիւ զօրքերով։ Իսկ հայդուկների պարտգլուխը ունէր միայն իր տրամադրութեան տակ իր „Հազարի“ ճնացորդները և մի երկու հազար սիցիլեան կամաւորներ, մեծ մասամբ անփորձ և վատ զինւած։

Ցաղթանակը ցնորք էր թւում... Եւ սակայն այդ ցնորքն էլ իրականացաւ, շնորհիւ Հրամանատարի դիւային հմտութեան։ Թախեելով բուրբօնեան զօրքերի հետ, Գարիբալդիին սկսեց կամաց-կամաց յետ նահանջել. ապա ինքը մի ապշեցուցիչ ճարպկութեամբ, առանց թշնամուց նկատւելու, փախուստ տւեց իր զօրքի մեծ մասի հետ, թողնելով կուռ դաշտում իր թիկնապահների մէկին. վերջինս շարունակեց նահանջը փոքրաթիւ զինւորներով. թշնամին, համոզւած, որ իր առջև

գարիբալդեան ամբողջ բանակն է ջարդ ու փշուր, շտապեց յաղթութեան փողը հնչեցնել, Բուրբոնեան կառավարութիւնը հանգստացաւ, պալէրմոն այլ ևս ապահով էր համարում „կարմիր շապիկաւորների“ վտանգից։

Բայց ահա հեռևեալ օրն իսկ, գիշերւայ ժամը երեքին, նոյն գարիբալդեանները, որին ջարդուած ու անհետացած էին համարում, վերստին ծառացաւ իր լեգէոնով պալերմոյ պարիսպների առջև և ուժգին, գրոհ տուեց դէպի ներս։ Ռազմագիտական հնարքը պսակուեց կատարեալ աջողութեամբ։ Դիմադրութիւնը դարձեալ, հարկաւ, ուժեղ էր թշնամու կողմից, կռիւը չափազանց անհաւասար էր, բայց խիզախ հայդուկը նահանջել չգիտէր։ Սուինային մի կատաղի ճակատամարտից յետոյ լէգէոնաւորները ներս խուժեցին։ Հնչեց ահազանգը. բնակիչները քնած էին դեռ. արթնանալով, նրանք տեսան գարիբալդեաններին և մի խելագար ցնծութիւն տիրեց ամբողջ քաղաքին.. Եկել էր, վերջապէս, „նա“... Հկել էր ազատարար հրեշտակը, որին սպասել էին ազի արցունք թափելով այնքա՜ն երկար տարիներ... Տղամարդիկ շտապեցին միանալ Լէգէոնին. կանայք նետում էին կահկարասիքը պատուհաններից և իջնում էին բարրիկադներ կանգնեցնելու, որովհետև կռիւը դեռ նոր էր սկսւում։ Բուրբոնեան զօրքը դեռ կոնգուն էր, կանգուն էին և նաւահրմն ու մի շարք ամրոցները։

Մի քանի օր տևեց պատերազմը։ Թշնամին նեղն ընկնելով, վառեց քաղաքը։ Ոչինչ, սակայն, չէր վհատեցնում ազատութեան զինուորներին։ Ընկան Լէգէոնի մի շարք խմբապետներ, թեթև վիրաւորուեց և ինքը Գեներալը. բայց նա անդուլ շարունակում էր իր թռիչքները, ղեկավարում էր կռիւը, սիրտ էր տալիս կամաւորներին։ Բարրիկադները քանդւում էին և վերստին կառուցւում։ Ծերերն ու մանուկները անգամ այս

կամ այն կերպ ժամանակցում էին ազատութեան պատերազմին կանայք պատնէշների եռևից թափահարում էին իրենց սպառնական բռունցքները թշնամու դէմ և աղաղակում.

— „Թշուառականնե՛ր, դուք կուզէիք մեր ծամերից բարձեր շինել ձեր կանանց համար, այժմ հասել է վայրկեանը, երբ պէտք է դուրս քշենք ձեզ“։

Մի քանի օրւայ արիւնահեղ կռիւներից յետոյ Թըշնամին ստիպւած եղաւ զինադադար խնդրել և յունիս 6-ին հեռացաւ քաղաքից։ Պալերմօն ևս ճնշց գարիբալդեաններին... Քանի՛ ցնցող յաղթանակներ — ընդամենը մէկ ամսւայ ընթացքում...

Անսահման էր ժողովրդի բերկրանքը՝ բռնակալութեան մեկնումի օրը։ Ո՛րպիսի սրտառուչ ցոյցեր գարիբալդեաններին հասցէին։ Ամեն ոք ուզում էր տեսնել անզուգական Հերոսին, խանդավառութիւնն ու գուրգուրանքը հասնում էին պաշտամունքի։

Շուտով „կարմիր շապիկաւորները“ գրոհ տւին դէպի բուրբօնեան այլ միջնաբերդեր, մին միւսի եռևից առան Միլաձձօ և Մեսսինա։ Այն ժամանակ Գեներալը որոշեց արշաւել դէպի կալաբրիա։ Նրա բանակը ստւարանում էր հետզհետէ կամաւորներ գալիս էին անդադար, մանաւանդ հիւսիսային Իտալիայից։ Այնուամենայնիւ, Կալաբրիայի վրայ արշաւելիս Գարիբալդին ունէր միայն ընդամենը 15,000 զօրք .. ընդդէմ 100,000 բանակի, որ սպասում էր նրան Կալաբրիայում։ Բախտը, սակայն, ժպտում էր ամենուրեք յաղթական Հրամանատարին։ Այդ նահանգն ևս. շատ չ՛անցած, խոնարհւեց նրա առջև, բուրբօնները այնտեղից էլ քշւեցին։ Լէգէօնաւորների շեշտակի գնդակների առջև ոչինչ չէր դիմանում և միւս կողմից էլ բուրբօնների իտալացի զօրքերը քանի գնում վարակւում էին նոյն գարիբալդեան

Հայրենասիրութեամբ լքուած էին իրենց շարքերը, երբեմն նոյնիսկ անցնուած էին Լէգէօնի կողմը։ Այդպիսով, ամբողջ Հարաւային Իտալիայում Գարիբալդիի արշաւը ծայրէ ի ծայր մի յաղթական թափօր էր ժողովուրդների միահամուռ ցնծութեան մէջ... Եւ ամենուրեք հնչում էր—ուրախ ու առնական շեշտերով—իտալացի յեղափոխականների վսեմ ռազմերգը։

Si scopron le tombe, si levan i morti
I martiri nostri son tutti risorti.

Բացուում են շիրիմները, ոտքի ելնում մեռելները,
Մեր բոլոր նահատակները կեանք են առնում վերստին։

***


Մնում էր Հռոմը, արքայանիստ նապօլը։ Այնտեղ էր հաստատուած բռնաւորը — Ֆրանսուա II — մի ողբալի խամաճիկ, որ խելակորոյս դիմումներ էր անում պետութիւններին, օգնութիւն էր հայցում նրանցից։ Ապարդիւն, սակայն։ Իրաւ է, բոլոր պետութիւնները, բացի Անգլիայից, թշնամական աչքով էին դիտում Գարիբալդիի նւաճողական արշաւանքը, սակայն ոչ մի քայլ չէին անում՝ նրա առաջն առնելու համար։ Անգլիան չէր թագցնում իր հակակրանքը նապօլի իշխանին և իր բուռն համակրութիւնը Գարիբալդիին ու Իտալիայի միութեան գաղափարին։ Պապը ջերմ պաշտպան էր բուրբոնեան գահճի, բայց նա էլ անզօր էր Գարիբալդիի դէմ, որի եռանդը կանգնած էր ամբողջ մտածող ու զգացող Իտալիան. ինքը պիէմոնտի կառավարութիւնը առհարկի չէզոքութիւն պահպանելով հանդերձ, անուղղակի խրախուսում էր Հազարի արշաւանքը։

Եւ ճարահատ՝ վերջին բուրբոնը հրաժարական ետ ա հ-

մ ա ն ա դ ր ո ւ թ ի ւ ն։ Նա կամենում էր այդպիսով փրկել գէթ ճնացորդը իր ահագին իշխանութեան։ Այդ հնարքն էլ չ'օգնեց։ Այնքան էին խաբել ժողովրդին նրա հայրը և նա ինքը, որ ոչ ոք չհաւատաց սահմանադրութեան նոր խոստումներին։ Այն ժամանակ թագակիր խրտուիլակը դիմեց վերջին հնարքին. նա ստորացաւ իր ահաւոր ախոյեանի առջև, սկսեց թախանձել և աղերսել Գարիբալդիին, առաջարկեց նրան դրամ, յիսուն հազար զօրք և իր ամբողջ նաւատորմը՝ Աւստրիայի դէմ պատերազմելու համար (նա ինքը ջերմ բարեկամ էր հաբսբուրգեան վիապետութեան)։ Գարիբալդին արհամարհեց այդ անպատիւ առաջարկը։

Իտալական հայրենասիրութիւնը և Սիուեթեան գաղափարը շարունակում էր իր նւաճումները թշնամու զօրքերի մէջ, գեներալներն ու բարձր պաշտօնեաներն անգամ լքում էին բուրբօններին և անցնում ազատութեան ռազմիկների շարքերը։ Այնուամենայնիւ գեռ մնում էր 50.000-ի չափ հաւատարիմ զօրք, բայց երկչոտ տիրանը չխիզախեց այլևս շարունակել կռիւը։ 1860 թ. սեպտեմբերի 6-ին նա առաւ իր գանձերը և փախաւ Գաէթա։

Թագաւորի այդ գահավէժ փախուստի օրն իսկ՝ նապոլը յօժարակամ անձնատուր եղաւ Գարիբալդիին։ Այդպէս վերջացաւ հազարի արշաւանքը։ Բոլոր նւաճած հողերը միացան Վիկտոր Էմանուէլի արքայական դրօշակի տակ։ Գեներալը ուղղեց իր „սիրելի նապոլիտանցիներին“ մի թռուցիկ, որով ողջունում էր դարաւոր բռնակալութեան անկումը և Իտալական միացեալ գերդաստանի հիմնարկումը։ Ապա քիչ յետոյ հայդուկային դիւցազն պարտգլուխը, որ արդէն ամբողջ հարաւային Իտալիայի միահեծան դիքտատորն էր, ժառանգել ձի նաւած ու կարմիր շապիկը հագած և սկսեց



ROME - Monument de Garibaldi.

ԳԱՐԻԲԱԼԴԻԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԸ ՀՌՈՄՈՒՄ

թափօր անել գլխաւոր փողոցներով։ Տեսարա՜ն էր... Ամբողջ քաղաքը ոտքի վրայ, հրավառութիւն, պարեր ու խրախճաններ և բոլոր աչքերը յառած դէպի կարմրագեստ ձիաւորը, դէպի Հայդուկի քրիստոսանման կերպարանքը, որ դանդաղ շարժւում էր խուռներամ բազմութեան մէջից, աջ ու ձախ ողջոյններ ու համբոյրներ շռայլելով... Հարիւր հազարաւոր ժողովուրդը գառանցում էր բերկրանքի գինովութեան մէջ և անհաշիւ արձագանքներով հնչում էր նոյն գոռ, ոգեժաշունչ ազազակը.

— „*Evviva Garibaldi!*“...

ՎԵՆԵՏԻԿ ԵԻ ՀՌՕՄ.

Եւ դարձեալ „Միութեան“ գործը տակաւին չէր վերջացած։ Ամբողջ Հարաւը նուաճել էր, մօտ տաս միլիօն իտալացիներ ազատագրել էին բռնակալութեան լծից, բայց Հռօմը դեռ ճնում էր դուրս վիճաբեալ Հայրենիքից — Հռօմը, հին, պանծալի մայրաքաղաքը, իտալական քաղաքակրթութեան վիթխարի շտեմարանը։ Դուրս էր ճնում և Վենետիկը, որ դեռ պատկանում էր Աւստրիային։

„Հռո՛մը պէտք է լինի միացեալ Իտալիայի մայրաքաղաքը“ — բացականչում էր Կավուր *) պիէմոնտեան պարլամենտում, ընդհանուր խանդավառութեան մէջ։ Իսկ Գարիբալդին ասում էր „Թո՛ղ պապը ճնայ Հռօմի մէջ, իբրև կաթոլիկ եկեղեցու գլուխ, բայց պէտք է խլել նրանից աշխարհիկ իշխանութիւնը և հարկադրել Ֆրանսիային յետ կոչելու զօրքերը։ Եթէ պիէմոնտեան

*) Ով վերտին առաջնորդել էր նախարարապետի պաշտօն։

կառավարությունը կարող է այդ անել սոսկ դիւանագիտական միջոցներով, թող անէ. բայց շաապելու է. եթէ ուշանայ, ես իմ սրով պիտի լուծեմ խնդիրը"... Մառձինին արդէն յորդորում էր Գիներալին՝ հաւաքել իր Լէգէօնը և արշաւել պապի դէմ։

Պիւրին չէր սակայն։ Միապետական, կաթօլիկ Ֆրանսիան, որքան էլ բարեկամ Իտալիայի միութեան, չէր թոյլ տալիս բռնանալ պապի իրաւունքների վրայ։ Պէտք էր սպասել բարեյաջող վայրկեանի։

Գարիբալդին հանեց Դիքտատօրի շապիկը, յանձնեց իր նաճած հողերը Վիքտօր Էմանուէլին և գնաց հոնգատանալու կապրերա։ Այդ անյայտ կղզին դարձաւ այնուհետև մի ճշմարիտ ուխտավայր։ Ուխտի էին գալիս Հերոսին աշխարհի բոլոր ծայրերից։ Բոլոր նրանք, որ երազում էին ազատ օրեր բռնակալութեան տակ հեծող իրենց ժողովրդի, հայրենիքի համար, բոլոր նրանք, որոնք նոյն բռնաւոր ուժերի դէմ յիմում էին դաւադրական, յեղափոխական միջոցների՝ իրենց իղձերն իրագործելու համար, գալիս էին հարցնելու Գարիբալդիի կարծիքները, խորհուրդները...

1861 թ. փետրուար 18-ին գումարուեց առաջին անգամը համիտալական պարլամենտ Տուրինում, որ հրաւիրեց Վիքտօր Էմանուէլին միացեալ Իտալիայի թագաւոր։ Այդ պարլամենտում բազմած էր և Գիներալը։ Տեղի ունեցան բուռն ընդհարումներ նրա դեմոկրատիկ պահանջների և կավուրի ու բուրժուական մեծամասնութեան հայեացքների միջև։ Վերջինը կուզէր միանգամ ընդմիշտ լուծել գարիբալդեան „Լէգէօնը"։ Ժողովրդական հերոսը չար նախանձի առարկայ էր շատերի համար *)։ Քիչ յետոյ կավուր մեռաւ, իսկ գա-

---

*) Միւս կողմից, Գարիբալդին երբէք չէր մոռանում, որ

բիբալդին նորէն բռնեց կապրէրաի ճանապարհը։ Ճաղթական մի թափօր էր նրա ուղևորութիւնը Իտալիայի մի ծայրից միւսը։ Մինչ արիստօկրատ, պահպանողական տարրերը ամենուրեք վիքտօր Էմանուէլ թագաւորին էին խունկ ծխում, ժողովուրդը, աշխատաւոր ընդհանրութիւնը գնահատելով իր ճշմարիտ հերոսներին, գոչում էր—„կեցցէ՛ Գարիբալդի, կեցցէ՛ Մաձինի“։

Պէտք էր աւարտել ազատութեան գործը։ Երկու մեծ ահվիրաները շարունակեցին իրենց յեղափոխական աշխատանքը։ Մաձինին հիմնեց վենետիկի շրջանում գաղտնի կօմիտէներ՝ ապստամբութիւն կազմակերպելու նպատակով։ իսկ Գարիբալդին, հակառակ պաշտօնական Իտալիայի վարանումներին, հրապարակ նետեց մի նոր ռազմական կարգախօս՝

— „*Roma o Morte!*“։

— „Հռո՛մը կամ Մահ“։

Ի։ վերստին գումարեց կամաւորների լեգէօնը։ 2500 զինուորներով նա նետուեց Կալաբրիայից դէպի պապական իշխանութեան սահմանները, գնում էր քշելու նապօլէօն III-ի զօրքը, տապալելու պապի աշխարհիկ բռնապետութիւնը և միացնելու Հռօմը Իտալիային։ Այս անգամ, սակայն, մեծ Հայդուկը ստիպուեցաւ կանգ առնել կէս-ճանապարհին։ Այդ նոր ձեռնարկը գրեթէ պատերազմի կոչ էր, ուղղուած միապետական և կղերական Ֆրանսիային։ Ուստի և իտալական կառավարութիւնը շտապեց առաջն առնել։ Տեղի ունեցաւ մի ցաւալի միջադէպ։ Երբ Գարիբալդին իր կամաւորներով

իր ծննդավայր Նիցցան յանձնել էր Ֆրանսիային։ Նա դեռ ատամներ էր կրճտացնում դրա համար և մեղադրում էր թագաւորին ու կաւուրին։

հասել էր Ասպրօմօնտի բարձունքներին, նա յանկարծ շրջապատեց Վիքտոր Էմանուէլի վաշտերով։ Մի քանի հրացաններ պարպեցին երկուստեք։ Գարիբալդին վիրաւորուեց ոտքից (1862 թ. օգոստ. 29-ին) և գերի տարուեց Սպեցիայի բերդը։ Մի քանի ամիս յետոյ ազատ արձակուեց, բայց պաշտօնական Իտալիայի այդ վարմունքը աւելի ևս դառնացրեց գարիբալդեաններին սիրտը։ Բանտը դարձաւ մի նոր ուխտատեղի Հերոսի անթիւ երկրպագուների համար և Էւրոպայի բոլոր ծայրերից, մասնաւորապէս Լօնդօնից, ազատամիտ, ռամկավարական շրջանները խանդավառ ուղերձներ յղեցին մեծ կալանաւորին։ Լօնդօնի մէջ կայացաւ նոյնիսկ բողոքի մի հսկայ միթինգ։

Բանտից նորէն — դէպի Կապրէրա... վէրքը բուժելու համար։ Բայց անգործութիւնն ու ձանձրոյթը խեղդում էին Հայդուկին։ Նա երազում էր նոր ու նոր ճակատամարտներ։ Անկարող լինելով մասնակցելու լեհական ապստամբութեան, որ պայթել էր 1863-ին ցարիզմի դէմ, նա գրում էր իրախուսական նամակներ ապստամբութեան պարագլուխներին. մի շարք գարիբալդեաններ նետուել էին դէպի Վարշաւա։ Քիչ յետոյ Կապրէրաի Առիւծը կակիծով իմացաւ, որ տարաբախտաբար լեհաստանը նորէն ջարդուած ու արիւնոտուած՝ խոնարհւել էր դեսպօտի առջև։

Վէրքը բուժելուց յետոյ՝ ուղևորուեց դէպի Լօնդօն։ Գնում էր իր երախտագիտութիւնը յայտնելու բազմաթիւ անգլիացի համակիրներին, բրիտանական ժողովրդին ու կառավարութեան, որոնք սկզբից ի վեր այնքան քաջալերել էին Իտալիայի ազատութեան ռազմիկներին և մասնաւորապէս իրեն Գարիբալդիին։

Անցնելով Լօնդօնում նա գտաւ ջերմ, խանդավառ ընդունելութիւն։ (1864 թ. ապրիլի 11)։ Բոլոր կու-

սակցութիւնները, հասարակութեան բոլոր խաւերը բուռն կեցցէներով դիմաւորեցին „Մարդկութեան Առաքեալին“: Երբէք մի օտարական չէր արժանացել այնքան ցոյցերի ու ծափերի ազատասէր Անգլիոյ մայրաքաղաքում:

Լօնդօնի մէջ հանդիպեց Մաձձինիին, ծանօթացաւ Ֆրանսիացի, ռուս ու այլ հռչակաւոր աքսորականների հետ — Լուի Բլանի, Լեդրիւ-Ռօլլէնի, Հերցենի և այլն: Ալէքսանդր Հերցէն, ծանօթ ռուս յեղափոխականը *), մի օր ճաշի հրաւիրեց երկու մեծ իտալացիներին, մի շարք ուրիշ աքսորականների հետ: Երբ հասաւ „կենացների“ վայրկեանը, Մաձձինին առաջինը ոտքի հլաւ և ասաց հետևեալը.

„Իմ բաժակը նուիրում եմ ապրելի ազատութեան, համերաշխութեան, նուիրում եմ այն մարդուն, որ իր սխրագործութիւններով կենդանի մարմնացումն է այդ գաղափարների,—Ջիւզեպպէ Գարիբալդիին... Նուիրում եմ, վերջապէս, Պարտքի սրբազան կրօնին, յանուն որի մենք պիտի կռուենք մինչև գերեզման“:

Գարիբալդին պատասխանեց հետևեալ բաժակաճառով.

„Աչատեղ կայ մի մարդ, որ ամենամեծ ծառայութիւնները է մատուցել իմ երկրին և ազատութեան գաթին: Երբ ես տակաւին երիտասարդ էի և ապրում էի աոանձնութեամբ— փնտրում էի մի մարդ, որ ղեկավարէր ու խրհուրդներ տար ինձ: Ես այն փնտրում էի, ինչպէս ծարաւը ջուր: Այդ մարդուն ես գտայ: Նա միակն էր, որ պահպանում էր սրբազան հուրը, նա միակն էր, որ արթուն էր մնում այն ժամանակ, երբ ամենքը քնած էին: Նա մնաց միշտ իմ բարեկամը, մի սիրով ու անձնազոհութեամբ դէպի իր հայրենիքը և ազատութեան գաթը: Այդ մարդն է Ջիւզեպպէ Մաձձինին: Իմ վարպետ կենացը!“...

***

*) Տես. Գրքիս մէջ նրան նուիրած գլուխը:

Վրայ հասաւ 1866 թուականը, նոյնպէս հարուստ քաղաքական անցքերով։ Պրուսսիան քեմ էր նեռուում, իբրև զինուորական կուռ ու կազմ մի պետութիւն և պատրաստւում էր արշաւելու Աւստրիայի դէմ։ Իտալական նորածին պետութիւնը փոխադրել էր իր մայրաքաղաքը Տուրինից Ֆլօրենցիա և ուշի ուշով հետևում էր անցքերին։ Մի նոր ծրագիր կազմուեց — դաշնակցել Պրուսսիայի հետ և ընդհանուր ուժերով հարուածել Հաբսբուրգեան միապետութիւնը։ Ծրագիրը յղացել էր արդէն 1861-ին նոյն կաւուրի դիւանագիտական ուղեղը։ Եւ նա շուտով դարձաւ իրականութիւն։ 1866 ապրիլ 8-ին Բերլինում կնքուեց գաղտնի դաշինք, որով Պրուսսիան ու Իտալիան խոստանում էին փոխադարձ աջակցութիւն Աւստրիայի դէմ պատերազմելու համար։ Եւ յունիս 20-ին պատերազմը յայտարարուեց։ Իտալական կանոնաւոր զօրքը — մօտ 220,000 բանակ — վիքտոր Էմանուէլի գերագոյն հրամանատարութեան տակ խայտառակ պարտութիւն կրեց և մի վայրկեան Իտալիան յայտնուեց տագնապալի վիճակում, նոր աւստրիական արշաւանքի սպառնալիքի տակ... Բարեբախտաբար, դաշնակից Պրուսսիան յաղթանակեց, ջարդ տալով աւստրիացիներին Սադովայում։ Յաղթական Պրուսսիայի դէմ իր մայրաքաղաքը փրկելու համար, Աւստրիան որոշեց մօտ քաշել իր զօրքերը Իտալիայից և չուզենալով վէնետիկը ուղղակի գիջել պարտուած Իտալիային, միջնորդ հրաւիրեց Նապոլէօն III-ին։ Վերջինը, տեսնելով որ վիքտոր Էմանուէլի զօրքը իր ձեռքով չպիտի կարողանար նուաճել վէնետիկը, ընդունեց Աւստրիայի առաջարկը։ Պրագաի խաղաղութեան դաշինքի համեմատ՝ վէնետիկը դրուեց Նապոլէօն III-ի տրամադրութեան տակ, որ և իր կողմից շնորհեց վիքտոր Էմանուէլին։

Միակ իտալական զօրավարը, որ պատուով ելաւ այդ պատերազմից — դարձեալ Գարիբալդին էր։ Նա կազմել էր մի հոյակապ ծրագիր—նուաճել վենետիկի հետ նաև Տրենտն ու Տրիեստը—և պիտի կարողանար իրագործել մի խոշոր մասը այդ ծրագրի, եթէ հայրենի կառավարութիւնը չհակառակէր նրա թռիչքները։ Ժողովրդական հերոսի աստղը շատ էր բարձրացել, նրա հմայքը շատերի աչքերն էր կուրացրել... պաշտօնական Իտալիան չէր մարսում նրան և ամեն տեսակ խոչընդոտներ էր դնում նրա ազատական գործի առջև։ Այդ պատերազմի մէջ նրան տուին երրորդական, չորրորդական դեր։ Մի անյայտ գեներալ, պալատական մի ողորմելի խամաճիկ աւելի ձայն ու դեր ունէր, քան ամբողջ հարաւային Իտալիայի նուաճողը, անպարտելի և անզուգական „Դիկտատորը“։ Նրան ասացին. „շարժուիր, երբ հրաման կը գայ պալատից“. և նա հնազանդուեց, հակառակ իր կամքի։ Եկաւ, վերջապէս, պաշտօնական „ազգանշանը“, Գարիբալդին չուեց նորէն իր Կապրերայից, առաւ հետը իր Լէգէօնը, իր դիւցազն Բիքսիօին և իր որդի Մենօտտիին ու գնաց դէպի Տրիեստ, ուր նա ծրագրել էր նաւով արշաւել դէպի Տրիեստ, ուր հանել իտալական ու սլաւ ազգաբնակութիւնը Աւստրիայի դէմ, ապա բարձրանալ ու նուաճել ամբողջ վենետիկեան շրջանը։ Յանդուգն ծրագիր, ինչպէս գարիբալդեան բոլոր ծրագիրները։ Բայց կառավարութիւնը ընդդիմացաւ. նա դրկեց Գարիբալդիին Տիրոլի լեռները։ Հերոսը դարձեալ հնազանդուեց։ Մեկնելուց առաջ նա տուեց զինուորական կենտրօնին մի շարք խորհուրդ-հրահանգներ, որոնք սակայն անտես առնուեցան, ի դժբախտութիւն Իտալիայի...

Եւ մինչ կանոնաւոր զօրքը գահավիժում էր պարտութիւնից պարտութիւն, անկումից անկում՝ գարիբալդեան Լէգէօնը Տիրոլի մէջ, անհամար խոչընդոտներով

հրջապատված, ջարդ էր տալիս աւստրիացիներին և տա-
նում էր փայլուն յաղթութիւն Բէզէկկայում։
Այդ կռիւները սուղ նստեցին Լէգէօնի հրամանատա-
րին. նա ստացաւ ծանր վէրք և այլ ևս չէր կարող ձի
նստել. տանում էին նրան կառքով։ Բէզէկկայի ճակա-
տամարտից յետոյ Գարիբալդին պատրաստւում էր
մտնել Տրենտ, բայց հէնց այդ միջոցին հրաման ստա-
ցաւ յետ նահանջելու... Կանոնաւոր զօրքը ջարդւել էր
արդէն և այլ ևս անօգուտ էր արշաւել դէպի Տրենտ։
Դարձեալ կսկիծը սրտում՝ մեծ Հայրենասէրը համա-
կերպեց։

***

Այնուհետև հին առիւծը աւելի եռանդով առաջ
տարաւ Հռոմի նւաճման պրօպագանդը և այնուհետև
աւելի կատաղութեամբ հնչեց գարիբալդեան կար-
գախօսը՝

— *Roma o Morte!*

Բայց իտալական կառավարութիւնը դեմ էր անմի-
ջական ձեռնարկների և հսկողութեան տակ էր պահում
կապրէրաի հերոսին։ Ցեղի ունեցան մի շարք դաւա-
դրութիւններ ու կռիւներ՝ Հռոմը պապից խլելու հա-
մար։ Ցիշատակելի է մասնաւորապէս Կայրօլի եղ-
բայրների հերոսական ձեռնարկը։ 70 քաջերով նրանք
մտան պապական պետութեան սահմանները, ուր ծագել
էին խռովութիւններ։ Բայց գարնեցին պապի վաշտե-
րին, որոնք ջարդեցին գրեթէ բոլորին։

Փորձեր եղան ուժանակով օդը հանելու պապական
զօրանոցը. բոլորը ապարդիւն։ Երիտասարդութիւնը —
մանչիներ ու գարիբալդեաններ — եռում էին կա-
տաղութեամբ. նրանք չէին կարող հաշտւել Հռոմի ան-

ջատ գոյութեան գաղափարի հետ, աւելի ևս չէին կարող հանդուրժել, որ պապի միջնադարեան բռնակալութիւնը յարատևէ XIX դարավերջի ազատաշունչ մթնոլորտում։ Եւ նրանք անդադար կոչում էին Գարիբալդին հեռաւոր ու ակամայ բերդարգելութիւնից։

Եւ ահա մի գիշեր, Ռազմիկը փոքրիկ մակոյկով փախաւ կապրէրայից, եկաւ Տօսկանիա, ուսկից պատրաստւեց կամաւորների հետ վերստին արշաւել դէպի Հռոմ։ Այդ փախուստը փոթորիկ հանեց պալատում, կառավարութեան ու ամբողջ երկրի մէջ. նախարարապետը հրաժարական տւեց, չկամենալով իր վրայ առնել գալիք անցքերի պատասխանատւութիւնը... Չէին ուզում գրգռել Նապօլէօն III-ին, որ կղերականների ճնշման տակ, յաժառաքար ընդդիմանում էր Հռոմի միացման։ Եկաւ Գարիբալդին Ֆլօրենցիա և բուռն կերպով շեփորեց պատերազմի անհրաժեշտութիւնը Հապշտապ գումարեց մի նոր լէգէօն, անցաւ պապական հողերը և երկու անգամ ջարդ տւեց պապի բանակին։ Սակայն վերջինի ետևը կանգնած էր Ֆրանսիական զօրքը... Այդտեղ էր մեծագոյն խոչընդոտը։ Գարիբալդեան կամաւորները, ընդհանրապէս վատ զինւած, անկարող եղան երկար դիմադրելու և Ռազմիկը յետ նահանջեց։ Նա նորէն գերի էր իտալական կառավարութեան, որը նորէն „աքսորեց“ նրան կապրէրա (1867 թ.) *)։

***

*) Վերջացաւ Հերոսի իօլական կարիերը։ Այնուհետև մի անգամ միայն պատերազմի դաշտ նետւեց — Ֆրանս-պրուսական մեծ հրդեհի միջոցին։ „Մարդկութեան ապեստր“, թոյլերի, ճնշւածների ասիվիրան չէր կարող հանդուրժել,

վերջապէս, դէպքերը իրենք եկան լուծելու „գոր-
ծեան հանգոյցը“: Ֆրանս-պրուսական պատերազմի
շնորհիւ վերացաւ այն մեծ խոչընդոտը — ֆրանսիական
սպառնալիքը — որ չէր թոյլ տալիս Հռօմի միացումը
իտալական հայրենիքին: 1870-ի ֆրանսիական առաջին
պարտութիւններից յետոյ, Նապոլէօն III-ը յետ կոչեց

որ բիսմարկեան կոպիտ սանդալների տակ տրորուէր ու անէա-
նար Դանտոնների հայրենիքը — յեղափոխական Ֆրանսիան:
Եւ ծերուն Գարիբալդին իր սիրելի Մենոտտիի հետ, իր կարմ-
րագգեաց լէգէոնով պատերազմից Ֆրանսիական զօրքերի մէջ,
ընդդէմ գերմանացիների կուռեց սովորական յանդգնու-
թեամբ, վարեց փայլուն ճակատամարտ Դիժօնի մօտ:

Վերջին ժեստն էր, կարապի երգը... Ապա վերստին դէպի
կապրերա: Հիւանդ էր և վաղուց տառապում էր: Ապրեց
այնտեղ մինչև կեանքի վերջին օրերը: Պարապում էր երկ-
րագործութեամբ, վարում էր պարզ, նահապետական կեն-
ցաղ: Հիւանդութիւնը հետզհետէ ծանրացաւ և 1882-ի
յունիս 2-ին վերջ տուեց հսկայի կեանքին: Իտալիան սուգ
հագաւ, նրա հետ ամբողջ մտածող և տառապող երկրա-
գունդը: Իտալական հայրենիքը, շշմոլոր ու պապանձւած,
մի վայրկեան չէր հաւատում մահուան բօթին. Գարիբալդին
թուում էր անմահ, Գարիբալդին պէտք է ապրէր, քանի դեռ
կան այս արիւնոտ երկրագնդի վրայ բռնաւորներ ու ստրուկ-
ներ, հալածական ժողովուրդներ և պայքարող բժխտաններ...
Ապա ողբի մի հսկայական բառաչիւն ծայրէ ի ծայր ցնցեց
Ապենինեան թերակղզին, անցաւ հարիւրաւոր քաղաքներն ու
կղզիները, ուր շարունակում էին խուռնկ ծխել լէգենդական
Գարիբալդին: Ֆրանսիական պարլամենտը փակեց նիստը ի նշան
սգի, Հիւսիսային Ամերիկան, Անգլիան, Ունգարիան, Շվէյ-
ցարիան բերին իրենց պաշտօնական ժամանակցութիւնը Իտա-
լիայի Վշտին:

իր զօրքերը Հռօմից՝ Իտալիային սիրաշահելու և նրա աջակցութիւնը ստանալու համար Գերմանիոյ դէմ։ Իսկ երբ Սեդանում Նապօլէօնը գերի բռնուեց և Ֆրանսիայի մէջ յայտարարուեց Հանրապետութիւն, այն ժամանակ Հռօմի հարցը ինքնին արդէն լուծուած էր։ 1870-ի սեպտեմբեր 20-ին վիքտօր Էմանուէլի զօրքը առանց դիմադրութեան հանդիպելու, հանդիսաւոր թափօրով մտաւ Յաւիտենական քաղաքը։ Պապութիւնը զրկուեց իր աշխարհիկ իշխանութիւնից, որ վայելել էր աւելի քան հազար տարի։

Ազատութեան և Միութեան գաղափարը իր վերջին հանգրւանն անցաւ և — իրագործուեց, վերջապէս, այն հոյակապ Իդէալը, որ գուրգուրել էին իտալացի հայրենասէրները՝ Դանտէից մինչև Գարիբալդի։

(ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐԻ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

ՆԱԽԱԲԱՆ . . . . . 3—5

I

ՄԵԾ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ

Յեղափոխութեան նախերգանքը. — Պատճառներ. — Երրորդ դասակարգի պատմական վերելքը. — Ազնւականութիւն եւ կղեր.—«Աստւածային» միապետութիւն.—Սոցիալօգիական անկարկ.—Տնտեսական պատճառները եւ «իդէալօգիան».—Սահմանադիր ժողով. — Մարդկային Իրաւունքների Հռչակումը.—Ժողովրդի գոռը եւ Բաստիլի խորտակումը.—Ապստամբութիւն գիւղերում — Առանձնաշնորհեալների զոհը. — Թագաւորի փախուստը. — Օրէնսդիր ժողով. — Ռէակցիա —Դաշնադիր ժողով.—Մօնտայն եւ Ժիրոնդ.—Թագաւորի դատը եւ գլխատումը. — Վանդէ եւ տրտա-

Էջ

ին աբեաւաճիմ. — Տերror. — Ռոբեսպիէռի դիմաստոռութիւնը.— Գահավիժում.—Ռէակցիան յաղթական.—Բօնապարտ.—Ի՞նչ տեց Մեծ Յեղափոխութիւնը. . . . . 6—91

II

ՍՕՑԻԱԼԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ԱՌԱՋԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏ ՔԱՐՈԶԻՉՆԵՐ

Գրակխուս Բաբեօֆ. — Գասակարգային պայքարի ազդարարումը.—«Հաւասարներու» հռովարտակը.—Կոմմունիզմ եւ Տերror. — Բարոզչի ճանապարհները. — Մեծ ուտոպիաները.— Սէն-Սիմօն եւ իր դպրոցը.—Անճանաչէն եւ Բազար.—Սոցիալիզմը իբրեւ ապագդ.—Շարլ Ֆուրիէ եւ ֆուրիէրիզմ. . . . . 92—116

III

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԻՎԱՅՐՈՒՄՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՔԱՌԱԴԱՐԵԱԿ (1800—1830 թ.)

Նապոլէօն Բօնապարտ. — Վերելք եւ գահավիժում. — Ազգային-ազատագրական շարժումները Գերմանիայում. — Կեօրներ եւ Ֆիխտէ.—Էմբրոսացման ոգին ուրիշ երկիր-

Լ.Ջ

ներում.—«Սրբազան Դաշինակցութիւն».—Համաեւրոպական ժանդարմը.—Հալածանքը յեղափոխական Յռաստանի դէմ. — Եւրոպան ռէակցիայի ճանկերում. — Ազատութեան բռնիչը Արեւելքում. — Յունաստանի ապստամբութիւնը. — Կռիւներ եւ սրտմիկ միջամտութիւն. — «Սրբազան Դաշինակցութիւնը» խախտած — «Փէկսերիսցիներ» ցոյցը.—Պարիզը նորէն ապստամբ. — Յուլիսեան յեղափոխութիւն եւ երկրորդ հաստատութիւն.—Լեհաստանի ապստամբութիւնը . . . . . 117—164

IV

ՓԵՏՐՈՒԱՐԵԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՆՐԱ ԱՆՄԻԱՊԱՐՁՈՒՄՆԵՐԸ

Դասակարգերի կռիւ. — Բլանկի եւ բլանկիզմ. — հաստատականներ եւ սոցիալիստներ. — Լամարտին. — երկրորդ հաստատութիւն. — Ազգային արհեստանոցների պատմութիւնը. — Բուրժուազիա եւ պրօլետարիատ. — Յունիսեան ջարդեր. — Ռէակցիա եւ նորէն միապետութիւն.— Նապօլէօն III. — Ապստամբութեան հրդեհը Իտալիայում եւ Աւստրիայում. — Ազգային շարժումը Գերմանիայում.—Յէէնի եւ Կօշուտ.—Ռէակցիա եւ արիւն . 165—195

V

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Սոցիալիզմը 1848-ի յեղափոխական մթնոլորտում. — Proլետարիատի կուիւը Ֆրանսիայում եւ Անգլիայում.— Չարտիզմ. — Մասսային ընթոսացում եւ ռէակցիա.— Չարտիստական բողոքի էութիւնն ու պատմական նշանակութիւնը. — Սոցիալիզմի եւ Անարխիզմի բէորեիկոսներ. — Պրուդոն, Շտիրներ, Կարլ Մարքս.— Պրուդոնի դիրքը սեփականութեան եւ բուրժուական կարգերի նանդէպ. — Բողոք Աստուծոյ դէմ.— Մարդկութեան դարաւոր տառապանքների վրէժը. — Շտիրների բողոքը ընդդէմ բոլոր «յեղինակութիւնների». — Կոմմունիստական Մանիֆեստ . . . . . 196—211

VI

ՂՐԻՄԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ
ԵՒ
ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսական դաւերը Արեւելքում. — Անգլիա եւ Ֆրանսիա՝ Թիւրքիոյ նովանաւորի դերում. — Ղրիմի պատերազմը եւ նեղեւանքները.—Յարձգմը տազնապի մէջ —Ազատատենչ գրականութիւն եւ նեբրին ռէֆորմներ. — Յեղափոխական խմորում — Մտաւորականութիւն եւ Չռնգուած. — Ռուս «ինթիլիգենտ» մտայնութիւնը. — Հերցեն եւ «Կոլոկոլ».—Չերնիշեվսկի եւ իր նահատակութիւնը . . . 212—244

VII

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԸ

Ալֆիէրի եւ բռնակալութեան պրօբլեմը. — Ֆրանսիական Յեղափոխութեան ազդեցութիւնը. — Յոյսեր եւ յուսախաբութիւններ. — Կարբօնարիզմ.—Իտալիան աւստրիական լծի տակ. — Յեղափոխական գրականութիւն. — Մանձինի. — Խաւեր եւ խյրտումներ.—Պիէմօնտի դերը.—Կավուր եւ Նապօլէօն III. — Ֆրանս-իտալական դաշնակցութիւն եւ պատերազմ. — Գարիբալդի. — Թափառումներ եւ արկածներ. — Հազարի արշաւանքը. — Վէնետիկ եւ Հռոմ.—Կապրէրա . . . . . 245—334

ՀԵՂԻՆԱԿԻ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

---

1. Վերածնուղ հայրենիքը և Մեր Դերը (պատկերազարդ), 3 ֆրանկ։
2. Հոսանքները, 3 ֆրանկ։
3. Հայկական Շարժման Նախապատմութիւն (պատկերազարդ), հատոր *I*, 3 ֆրանկ։
4. Հայկական Շարժման Նախապատմութիւն (պատկերազարդ), հատոր *II*, 3 ֆրանկ։
5. Բողոքը Նորագոյն Պատմութեան Մէջ (պատկերազարդ), հատոր *I*, 4 ֆրանկ։
6. Սօցիալիզմը և Սօցիալական Շարժումը *XIX* Դարում, Վերներ Զօմբարտի (թարգմ. գերմաներէնից), 1 ֆրանկ։
7. Կրօն և Գիտութիւն, 1 ֆրանկ։
8. Համաժողովրդական բանակ, 30 սանտիմ։
9. Ազգուստ Բէբէլ (մահուան առթիւ), 30 սանտիմ։

ԳԻՆԸ	Աբոնամենտի	4 ֆր.
	Թիւրքիա	15 դրուշ.
	Ծուռուսացի	1 ռուբլի 50 կ.
	Ամերիկա	80 ցէնթ: